Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1 И
79

Մ. Բ. ՎՈՅԼՈՖՍՈՆ ՏԵՎ Գ. Ս. ԳԱԿ

146.4
Կ-81

11 JUL 2009

ՈՒՐՎԱԳԾԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

1007
31289
146.4 | Կոշեվոն.
Վ-81 | ուրվագծեր
պատմական մասեր
ի[illegible]

Մ. Ֆ. ՎՈԼՓՈՆ ԵՎ Գ. Մ. ԳԵԿ

ԼՄԻ
Վ-79

ՈՒՐՎԱԳԾԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ

1007
31289

ՁԵՌՆԱՐԿ ԿՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ, ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ-ԼԵՆԻՆՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

586

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

12.08.2013

2527

Պետհրատի տպարան
Հրատարակ. 1947
Գլավլիտ 6995 (բ)
Պատվեր 6251
Տիրաժ 10000

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ—Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. Մանուկյանի
ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Թարգմ. Հ. ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆ Խմբագր. Ա. ԲԶՆՈՒՆԻ
Սրբագրեցին՝ ՀԸԿ. ՍԱՒՈՒԿՅԱՆ ՅԵՎ ՀԱՐ. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Հանձնված է արտադրութ.ան 5 դեկտեմբերի 1931 թ. Ստ. Ֆ. Ե
Ստորագրված է տպագրվելու 7 ապրիլի 1932 թ.

ԳԼՈՒԽ VII

§ 41. ԻՆՉՈ՞Վ Է ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՔԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ Է

Մարդկային վողջ պատմությունը, բացի նրա զարգացման ամենասուակ-ջին աստիճաններից, իրենից ներկայացնում է դասակարգերի կատաղի պայ-քար. դասակարգերի, որոնք պատմական զարգացման տարբեր աստի-ճաններում կազմում են հենց մարդկային հասարակությունը: Ստրուկ-ները պայքարում էին ստրկատերերի, ճորտ գյուղացիները՝ ֆեոդալների, բանվորները՝ կապիտալիստների դեմ և այլն: Այդ պայքարը հետևանք է այն բանի, որ մարդկային մի խմբակ, մի դասակարգ շահագործում եր մյուսին,—ստրկատերը չահագործում եր ստրուկին, ֆեոդալը՝ ճորտ գյուղացուն, կապիտալիստը՝ վարձու բանվորին: Հասարակական դասա-կարգերի հակացողությունը հենց յենթադրում է չահագործման հակացո-ղություն. մարդկային վորոչ խմբակների կողմից—մյուսների աշխատանքի յուրացում:

«Ինչ է դասակարգն ընդհանրապես—ասում է Լենինը 1920 թվ. յերի-տասարդության III Համառուսական համագումարում.—«Դա այն է, որ հասարակության մի մասին թույլ է տալիս յուրացնել մյուս մասի աշխա-տանքը»: Վորպեսզի հասարակության մի մասը կարողանա յուրացնել մյուս մասի աշխատանքը, անհրաժեշտ է յերկու գլխավոր պայման.—1) հավելյալ աշխատանքի գոյություն, 2) չահագործող դասակարգերի ձեռքին վորոչ ուժ, վորով նրանք կարողանան հարկադրել չահագործվողներին, վորպեսզի վերջիններս իրենց հավելյալ աշխատանքը հանձնեն նրանց՝ չահագործող-ներին:

Առաջին պայմանը ստեղծվում է աշխատանքի արտադրողականության բարձրացումով, յերկրորդը՝ արտադրության միջոցների մասնավոր սեփա-կանությամբ:

ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐՈՇ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քանի դեռ աշխատանքի արտադրողականությունը,—ասում է Մարքսը,—չի հասել վորոշ աստիճանի, բանվորի տրամադրության տակ չի մնում ժամանակի այն ավելորդը, առանց վորի անհնար է հավելյալ աշխատանքը, ասյա և անհնար է կապիտալիստի գոյությունը: Բայց և միաժամանակ անհնար են նաև ստրկատերերի, ֆեոդալական բարոնների, մի խոսքով խոշոր սեփականատերերի վորևե դասակարգի գոյությունը... Միայն այն ժամանակ, յերբ մարդիկ իրենց աշխատանքով արդեն քիչ են յեկել նախնական անասնական վիճակից, յերբ նրանց աշխատանքը վորոշ աստիճանով հան-րայնացել է, միայն այդ ժամանակ են ստեղծվում այն պայմանները, վորոնց շնորհիվ մի մարդու հավելյալ աշխատանքը մյուսի գոյության պայման է դառնում»:

Ուրեմն դասակարգեր առաջանալու համար անհրաժեշտ է արտադրողա-կան ուժերի զարգացման վորոշ աստիճան, հատկապես այնպիսի աստիճան, վոր շնորհիվ մարդն իր ամենակարևոր կարիքները բավարարելուց հետո ունենում է ազատ, ավելորդ ժամանակ, վորը կարելի յե հարկադրել նրան գործադրել ուրիշների օգտին:

Քանի դեռ նախամարդի ամենապրիմիտիվ (հասարակ) գործիքների ողնությամբ (սրածայր ճողերը, սրած քարեր փայտյա կոթերով) ձեռք էին բերում այն, ինչ-որ բնությունը տալիս էր նրանց պատրաստի, կամ գրեթե պատրաստի ձևով (պտուղները, խխունջները, կենդանիները և այլն), իհարկե խոսք չէր կարող լինել չհագործման մասին, հետևապես և վոչ մի դասակարգ չէր կարող գոյություն ունենալ: Սակայն մարդկային պատմության այդ յերկարատև ժամանակաշրջանում, վորի մասին պիտի ասել մենք քիչ տեղեկություններ ունենք, տեղի չէ ունեցել մարդու արտադրողական ուժերի զարգացում, թեև չափազանց դանդաղ կերպով: Կամաց-կամաց առաջանում են նախնական անասնապահությունը և յերկրագործությունը: Հետզհետե մարդիկ սովորում են գործել սկզբում չափազանց հասարակ, իսկ հետագայում ավելի բարդ գործվածքներ, բնակարաններ են շինում, ամաններ են պատրաստում, կերակուր յեփում և այլն: Յերկրագործությունը հնարավորություն է տալիս մարդկանց պաշար պատրաստել զանազան հացահատիկային մթերքներից և բանջարեղեններից, ընտելացրած կենդանիների համար ոգտագործում են զանազան արմտիքներ, բույսերի թելիկներից գործվածքներ են պատրաստում և այլն: Աչխատանքի տեխնիկական բարժանումն ավելի և ավելի բարձրացնում է աչխատանքի արտադրողականությունը, իսկ արտադրողական ուժերի նման աճի հիման վրա առաջ են գալիս անասնապահական և յերկրագործական ցեղեր: Սրան զուգընթաց առաջանում են կանոնավոր փոխանակության սկզբնական ձևերը:

Աչխատանքի հասարակական բաժանումը կատարված փաստ դարձավ իհարկե վոչ միանգամից, այլ շատ յերկարատև ժամանակի ընթացքում:

Մարդու արտադրողականության բարձրանալը հնարավորություն ըստեղծեց հավելյալ աչխատանքի, վորի բացակայությունը չէր թույլ տալիս մարդու կողմից մարդու չհագործում: Այժմ նման շահագործման բոլոր տրվյալները կան· անհրաժեշտ է գտնել միայն բանվորական ուժ: Ցեվ այնպիսի բանվորական ուժ, վորը կարելի չէր չհագործել, ձեռք էր բերում այն ղինված ընդհարումների ժամանակ, վորոնք տեղի էին ունենում զանազան ցեղերի միջև՝ վորսի, արտատեղինների և հողագործության համար: Այդ նախնական պատերազմները հանդիսանում էին անսպառ աղբյուրներ այն բանվորական ուժի, վորին հաղթանակողները հարկադրում էին աչխատել իրենց ոգտին: Ռազմագերիներին սկսեցին ստրուկներ դարձնել:

Այսպիսով արտադրողական ուժերի աճման և աչխատանքի հասարակական բաժանման հիման վրա առաջացավ և մարդկային հասարակության դասակարգերի բաժանումը—ստրուկներ և ստրկատերեր, չհագործողներ և չհագործվողներ: Սրան զուգընթաց առաջանում, զարգանում և ամրանում է արտադրական միջոցների մասնավոր սեփականությունը:

Արտադրողական ուժերի հետագա զարգացման և այդ զարգացմամբ պայմանավորված արտադրական հարաբերությունների հիման վրա առաջանում էն այդ հարաբերություններին համապատասխան հասարակական դասակարգեր: «Ստրկության հետ... առաջացավ հասարակության առաջին խոշոր բաժանումը դասակարգերի»,—ասում է Ենգելսն իր «Ընտանիքի, սեփականության և պետության ծագումը» գրքի մեջ: Ստրկությունն,—ասում է նա հետո,—ներկայացնում է իրենից չհագործման առաջին բնորոշ ձևն անհրաժեշտ աչխարհի համար, դրան հետևում է ճորտատիրական իրավունքը միջնադարում և վարձու աշխատանքը նոր ժամանակների համար»:

Շահագործման ձևերը փոխվում էին, փոխվում է հասարակության դասակարգային կառուցվածքը, սակայն մնում էր այն, ինչ վոր ընդհանուր է յուրաքանչյուր դասակարգային հասարակության համար.— ուրիշների աչխատանքի յուրացումը, վորպես տիրապետող դասակարգերի կողմից արտադրական միջոցների յուրացման հետևանք:

Տարբեր դասակարգերի ունեցած հարաբերությունն արտադրական մի-

ջոցներին, վորոշում էր հենց նրանց վիճակը հասարակական արտադրության և բաչխման մեջ: Իմանալով այդ, մենք հետագայում կարող ենք մեզ պարզել, թե հասարակական դասակարգերը և նրանց փոխհարաբերությունները հասարակական տարբեր ձևերում իրենցից ի՞նչ են ներկայացնում:

§ 42. ԴԱՍԱԿԱՐԳԵՐ—ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՄԲԱԿՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՐԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ՎՈՐՈՇԱԿԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ ԲՌՆԱԾ ԻՐԵՆՑ ՏԵՂՈՎ

Մարքսի ուսմունքի համաձայն, մարդկային հասարակության դասակարգերի գլխավոր տարբերությունը հանդիսանում է այն տեղը, վորը գրավում են այդ դասակարգերը հասարակական արտադրության մեջ, այն հարաբերությունը, վոր նրանք ունենում են դեպի արտադրության միջոցները, վորից և րղխում եյին տիրելու-յենթարկվելու հարաբերությունները—չհագործման հարաբերությունները:

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Վ. Ի. Լենինն իր «Մեծ նախաձեռնություն» հոդվածի մեջ տվել է դասակարգերի հետևյալ բնորոշումը.—«Դասակարգեր կոչվում են մարդկային այն խոշոր խմբերը, վորնք տարբերվում են՝ հասարակական արտադրության պատմականորեն վորոշակի սիստեմի մեջ բռնած իրենց տեղով, դեպի արտադրության միջոցներն ունեցած իրենց հարաբերությամբ (մեծ մասամբ որենքով ձևակերպված ու ամրապնդված), աչխատանքի հասարակական կազմակերպության մեջ ունեցած իրենց դերով, հետևապես և հասարակական հարստության ստանալու միջոցներով ու այդ հարստության այն բաժնի չափերով, վորը նրանք ստանում են:

Դասակարգեր, դա՝ մարդկանց այն խմբերն են, վորոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աչխատանքը՝ չնորհիվ հասարակական տնտեսության վորոշ ձևի մեջ իրենց բռնած տեղերի տարբերության»: Դասակարգերի Լենինյան բնորոշումը, դասակարգը կապում է արտադրական հարաբերությունների հետ, այն չափով, վոր չափով այդ հարաբերությունները կրում են պատմական և հասարակական բնույթ («Հասարակական արտադրության պատմականորեն վորոշակի սիստեմի մեջ»): Արտադրության յուրաքանչյուր պրոցեսի հողի վրա չեն առաջանում դասակարգեր, այլ վորոշ, արտադրության ձևի պատմականորեն կազմավորվող պրոցեսի հողի վրա: Ցեվ տվյալ հասարակության այս կամ այն դասակարգի բնույթը ձևակերպում է համապատասխան հասարակության զարգացման պրոցեսի պատմական այս կամ այն աստիճանի: Դասակարգը, հետևապես դիալեկտիկական յերևույթ է,—փոփոխվող, զարգացող, ծագող և անհետացող:

ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Հասարակական արտադրության մեջ ստրկատերերը գրավում եյին բոլորովին այլ տեղ, քան ստրուկները: Ստրկատերերն այդ արտադրության մեջ հրամանատարական դեր եյին խաղում: Նրանց եյին պատկանում արտադրության բոլոր միջոցները: Ստրուկը յենթարկվողի դեր եր խաղում միայն: Նա ինքն աչխատավոր անասունների հետ հավասար՝ կազմում եր տիրոջ սեփականությունը: Արտադրության վոչ մի միջոց նրա սեփականությունը չեր կազմում: Սակայն ստրկատիրական հասարակության մեջ, բացի սըրտատերերից ու ստրուկներից, կային նաև հասարակական այլ խմբեր: Հին Հունաստանում, օրինակ, կային ազատ մարդիկ, վորոնք արհեստով եյին զբաղվում: Նրանցից չատերը մանր ապրանք արտադրողներ եյին և աչխատում եյին իրենց արհեստանոցներում առանց ուրիչի աչխատանքը չհագործելու, քանի վոր նրանք ստրուկներ ձեռք բերելու համար միջոցներ չունեյին: Այս արհեստավորները հասարակական արտադրության մեջ այլ տեղ եյին գրավում, քան ստրկատերերը և ստրուկները: Արհեստանոցների տերը, ինչպես և ստրկատերը համարվում եյին ազատ մարդիկ:

Ստրկատիրական հասարակության մեջ (օրինակ Հունաստանում և Իտալիայում) կային նաև մանր հողատեր-գյուղացիներ, վորոնք այն ժամանակվա հասարակության ազատ բնակչությանն եյին պատկանում: Նրանք ևս հասարակական արտադրության մեջ գրավում եյին հատուկ տեղ պարապելով գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ: Մենք չենք զբաղվի ստրկատիրական հասարակության մեջ գոյություն ունեցող մյուս դասակարգերով (օրինակ Հունաստանում և Հռոմում մեծ դեր խաղացող առևտրականների դասակարգով), քանի վոր բերած օրինակներն էլ բավական են համոզվելու համար, վոր այդ հասարակության մեջ հասարակական դասակարգերը տարբերվում եյին իրարից հասարակական արտադրության մեջ գրաված իրենց տեղով և արտադրության միջոցների նկատմամբ իրենց ունեցած հարաբերությամբ:

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

Ֆեոդալական Յեվրոպայի ամբողջ ազգաբնակչությունը բաժանված եր խիստ առանձնացած դասակարգերի—դասերի: Ֆեոդալական հասարակության հիմնական դասակարգերն են հանդիսանում նախ՝ ֆեոդալները—խոշոր հողատերը, «ազնվազարմ» մարդկանց դասը, վորոնք վոչ մի կերպ չեյին թողնում մուտ գործել իրենց շարքերը մյուս, ստորին դասի ներկայացուցիչներին, և յերկրորդ՝ մանր գյուղացիական ամբողջ մասսան (ֆեոդալական հասարակության ստորին դասը), վորն իր աշխատանքով կերակրում եր թե՛ իրեն, և թե՛ իր սենյոր-ֆեոդալին: Ֆեոդալական գյուղացու հողը, վորի վրա նա աշխատում եր, համարվում եր սենյորի սեփականություն: Ֆեոդալները դա հրամանատար շահագործող դասակարգն եր, վոր գրավել եր հողերն ու քաղաքական իշխանությունը: Ֆեոդալների այդ դասակարգի դեմ, միջնադարում, կանգնած եր գյուղացիական դասակարգը: Նա՛ յենթակա, շահագործվող դասակարգ եր: Միջնադարյան քաղաքների ազդեցիկ դասակարգն եյին կազմում արհեստավորները: Նրանց դիրքը ևս ֆեոդալիզմի տարբեր շրջաններում փոխվում եր: Սակայն սրանց բնորոշ նշանը՝ ձեռքի մանր արտադրությունն եր վոչ բարդ արտադրական միջոցների ոգնությամբ, վորոնք կազմում եյին նրանց սեփականությունը: Ֆեոդալական հասարակության մեջ արհեստավորները հատուկ դաս եյին կազմում:

Առևտրական կապիտալի զարգացման զուգընթաց, միջնադարյան քաղաքներում առաջացավ ու աճեց առևտրականների խոշոր դասակարգ, վորոնց հիմնական զբաղմունքն առևտուրն եր, առևտրականներն իրենք վոչինչ չեյին արտադրում, նրանք ոգտվում եյին տարբեր տեղերի արտադրության գների մեջ յեղած զանազանությունից և կիրառում եյին լայն կերպով կոփելու սիստեմը: Այդ դասակարգը, վոր առաջացավ առևտրական կապիտալիզմի շնորհիվ քայքայվող ֆեոդալիզմի շրջանում, դարձավ արտադրության նոր՝ կապիտալիստական ձևի համբավաբերը: Առևտուրը քայքայում եր ֆեոդալական հասարակության նատուրալ կարգը և ոգնում եր նրա ապրանքային տնտեսության փոխանցվելուն: Ֆեոդալական հասարակության խորքում առաջացան նոր—կապիտալիստական արտադրության ձևերի հիմքերը. առաջացան յերկու նոր դասակարգեր, վորոնք կապիտալիստական հասարակության մեջ հիմնական դասակարգեր դարձան.—կապիտալիստների դասակարգը և վարձու բանվորների դասակարգը:

Մի շարք հեղափոխությունների միջոցով կապիտալիստների դասակարգը գրավեց իշխանությունը և զանազան յերկրներում ու տարբեր ժամանակ դարձավ ներկա-կապիտալիստական հասարակության տիրապետող դասակարգը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ, ՆՐԱ ԴԻՐՔԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ԴԵՊԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆեոդալական հասարակության արտոնությունների և ճորտատիրական կարգերի փոխարեն, բուրժուազիան ստեղծեց իր ազատ մրցման, ապրանքա-

տերերի իրավահավասարության և վարձու բանվորների շահագործման կարգը և այլն: Աշխատավորներին արտադրության միջոցներից անջատելը, գյուղացիական հոծ մասսայի և արհեստավորության քայքայումը, ստեղծեց մարդկանց մի խոշոր դասակարգ,—ներկայիս պրոլետարների դասակարգը, վորը միայն բանվորական ուժ ունի: Իրավաբանորեն պրոլետարն ազատ է համարվում: Նա կարող է և՛ աշխատել, և՛ չաշխատել, կարող է, մի խոսքով, վարվել այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Սակայն այդ միայն ըստ բուրժուական հասարակության գրված օրենքների: Իսկ իրականում, կյանքում այդ իրավական ազատությունը փաստորեն լոկ տնտեսական ստրկություն է:

Պրոլետարն արտադրության վոչ մի միջոց չունի: Իր բանվորական ուժը վաճառելով, նա մթերքներ է արտադրում այն արտադրական միջոցների ոգնությամբ, վորոնք պատկանում են կապիտալիստին: Այնուհետև, կապիտալիստական հասարակության մեջ բանվորը գրավում է՝ կապիտալիստի,—արտադրության միջոցների տիրոջ նկատմամբ, յենթարկվողի դիրք: Միևնույն ժամանակ հենց ինքը բանվոր դասակարգն է ստեղծում ամբողջ հավելյալ արժեքը, վորը կապիտալիստների շահույթի հիմնական աղբյուրն է դառնում:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընդհակառակն՝ կապիտալիստական հասարակության արտադրական միջոցների հիմնական մասսայի սեփականատերը հանդիսանում են կապիտալիստները և հրամանատարական բարձրունքներն են գրավում: Նրանք են ստանում բանվոր դասակարգի ստեղծած ամբողջ հավելյալ արժեքը:

Բայց այն ժամանակ, յերբ քանի գնում, աճում է բանվոր դասակարգի դերը հասարակական արտադրության մեջ, վորովհետև առանց նրա մասնակցության վոչ մի մեքենա չի կարող գործել, կապիտալիստական դասակարգի դերը արտադրության մեջ որ ավուր դառնում է միանգամայն ավելորդ:

Յեթե արտադրության կապիտալիստական ձևի զարգացման սկզբնական աստիճաններում կապիտալիստը հանդես եր գալիս վորպես արտադրության կազմակերպիչ, ապա ներկայումս նրա այդ կազմակերպչական դերն ավելի և ավելի իր վրա յե վերցնում տեխնիկական պերսոնալը: Պրոլետարական հեղափոխության միջոցով իր ձեռքն առնելով պետական իշխանությունը և դառնալով խոշոր արտադրության տերը, բանվորությունը, ինչպես այդ ցույց է տալիս Խորհրդային Միության օրինակը, ցուցաբերեց ավելի մեծ շնորք ու տաղանդ, և անհամեմատ ավելի լավ կազմակերպեց արտադրության պրոցեսը, քան կապիտալիստները:

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՄԵԽԱՆԻՔԱԿԱՆ ՎՈՉ ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ, ԲՈՒԽԱՐԻՆՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Դասակարգերի սխալ բնորոշում է տալիս ընկ. Բուխարինը: «Դասակարգերն իրենցից ներկայացնում են ամենից առաջ մարդկային խմբակներ, վորոնք միավորված են իրար հետ ընդհանուր պայմաններով և ընդհանուր դերով արտադրության պրոցեսի մեջ—այստեղից բղխող բաշխման պրոցեսի համար բոլոր հետևանքներով»:

Արտադրության պրոցեսի մեջ միավորված մարդկային խմբակներ գոյություն ունեյին նաև նախապատմական շրջանում, յերբ դեռ դասակարգեր գոյություն չունեյին. այդպիսիները կան կապիտալիզմի ժամանակ և գոյություն կունենան թե սոցիալիզմի, թե կոմունիզմի ժամանակ, յերբ դասակարգեր գոյություն չեն ունենա և յերբ «տերը» կլինի ամբողջ հասարակությունը: Ընկ. Բուխարինի բնորոշումը հետևապես իր մեջ չի ընդգրկում դասակարգերի առաջացման և զարգացման պատմական մոմենտը: Այդ բնորոշումը դիալեկտիկական չէ, այլ մեխանիկական, նատուրալիստական, վորով-

*) Մարքս, Գործեր, հատոր XIII, էջ 7—Խմբ.։

ՏԱՍՆԵՐԿՈՐԴ ԳԼՈՒԽ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԸ ՈՒ ՆՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 42. Հասարակական գոյացման հասկացությունը

Մարդկային հասարակության պատմության մեջ մենք տեսնում ենք տարբեր տեսակի հասարակական կազմակերպություններ, որոնք միմյանցից տարբերվում են իրենց կենսագործունեության եղանակով, իրենց նյութական կյանքի արտադրության եղանակով։ Նախնադարյան հասարակությունը փոխարինվում է ստրկատիրականով, ստրկատիրականը՝ ֆեոդալականով, ֆեոդալականը՝ կապիտալիստականով, կապիտալիստականը՝ սոցիալիստականով։ Հասարակության պատմության մեջ հայտնի են նաև այլ տեսակի հասարակական կազմակերպություններ։

Ինչպե՞ս պետք է հասկանալ հասարակական կազմակերպությունների այդ բազմազանությունը։ Ինչպե՞ս է առաջացել այդ բազմազանությունը։ Ինչպե՞ս է զարգանում հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու գործընթացը։ Ինչպե՞ս է առաջանում հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Ինչպե՞ս է առաջանում հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Ինչպե՞ս է առաջանում հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։

Մարդկային հասարակության պատմության մեջ հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։

Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հասարակական գոյացման հասկացությունը մարդկային հասարակության պատմության մեջ հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։

§ 43. ՆԱՄԱՆԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հասարակական գոյացման հասկացությունը մարդկային հասարակության պատմության մեջ հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։ Հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը առաջանում է հասարակական կազմակերպությունների մի տեսակը մյուսով փոխարինելու անհրաժեշտությունը։

ֆեոդալական, կամ կապիտալիստական հասարակության, տիրապետող դասակարգը կովում է կատաղի կերպով ճնշված դասակարգի ազատագրության համեն մի փորձի դեմ: Այդ եղոխաներից յուրաքանչյուրի բովանդակությունը կազմում է հենց այդ եղոխայի հիմնական դասակարգերի պայքարը: Յուրաքանչյուրն այդ հիմնական դասակարգերից զանվում է այնպիսի դրության մեջ, որ նրանց շահերը հակադրվում են իրար.—այն, ինչ ձեռնտու, շահավետ է մի դասակարգին, միանգամայն անշահաբեր է զառնում մյուսի համար: Սարկաստիրական հասարակության ամրացման ամեն մի փորձ, հավասարազոր եր ստրուկների ճնշված դրության ամրացման: Սարկությունը կարող է վերանալ միայն այն դեպքում, յերբ կվերանային ստրկատիրական հասարակության գոյության հիմունքները: Դա ճիշտ է նաև ֆեոդալական եղոխայի համար: Ֆեոդալիզմի ժամանակ գյուղացիների, որպես ճնշված դասակարգի, դրությունը կարող եր փոխվել միայն այն դեպքում, յերբ կվոչընչանար արտադրության այն ձևը, որի վրա հենված եր հենց ֆեոդալիզմը, այսինքն՝ ֆեոդալական հասարակական կարգերի վոչնչացումով և այն՝ բուրժուի փոխարինելով:

Պրոլետարիատը կապիտալիստական հասարակության մեջ ազատագրության չի կարող հասնել: Նա այն ձևերի միայն այն ժամանակ, յերբ կապիտալիստական արտադրության ձևը կվոչնչանա, յերբ կապիտալիզմը կփոխարինվի հասարակական մի նոր կարգով: Այդ պատճառով յուրաքանչյուր եղոխայում պայքարող հիմնական դասակարգերի շահերը միանգամայն հակադիր են: Այդ եղոխաներից յուրաքանչյուրի դասակարգային հասարակության վոչնչացել և միայն արտադրության ձևի ամբողջական փոփոխությունը վոչնչացել է միայն արտադրության ձևի ամբողջական փոփոխությամբ, արտադրության ձևի, վոր հետևյալ հասարակական դասակարգերի գոյության հիմքն եր կազմում: Դա տեղի չե ունենում այն ժամանակ, յերբ արտադրողական ուժերի զարգացումը հասնում է այն աստիճանի, վոր նրանք տիրապետող հասարակական կարգի հանդեպ բռնում են անհաշտ հակասական դիրք: Սակայն այս դասակարգերի անտագոնիզմի տեղը բռնում է՝ արտադրության ձևի փոփոխության հետ միաժամանակ, նոր դասակարգերի անտագոնիզմը, և դասակարգային պայքարն սկսվում է նոր ձևով: Յուրաքանչյուր պատմական եղոխայում բացի այս հիմնական դասակարգերի պայքարից ծավալվել է մի չընդհատվող պայքար տվյալ հասարակության մյուս դասակարգերի միջև:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՄԵՆ ՄԻ ՊԱՅՔԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ Է

Սակայն ամեն մի դասակարգային հասարակության մեջ հավելյալ մթերքի հիմնական մասան բաժին է զառնում այն դասակարգին, վորն այդ հասարակության մեջ տիրապետող դիրք և զրավում և վորի ձեռքին է զրավում պետական իշխանությունը: Այդ պատճառով ամեն մի դասակարգային պայքար—քաղաքական պայքար է: Յուրաքանչյուր դասակարգ ձգտելով փոխել իր դրությունը հասարակության մեջ, ձգտում է իր ձեռքը գցել քաղաքական, պետական իշխանությունը և նրա ուղնությամբ ամրացնել իր տնտեսական տիրապետությունը: Նշանակում է տնտեսական պայքարը չատ անխուսափելիորեն վերածվում է քաղաքական պայքարի հետ: Քրանսական բուրժուր կերպով կապված է քաղաքական պայմանների համար, վորոնք պետք էին ճանապարհը մաքրելին կապիտալիստական ձևի արտադրության զարգացման համար, իր ձեռքն առավ պետական իշխանությունը, վոչնչացրեց իրեն խանգարող ֆեոդալական հասարակության մնացորդները և ստեղծեց բուրժուական պետություն: Ռուսաստանում 1917 թ. պրոլետարիատը խլեց բուրժուազիայից պետական իշխանությունը, հաստատեց իր իշխանությունը—պրոլետարիատի դիկտատուրան—և սկսեց կատուցել նոր, սոցիալիստական հասարակական կարգեր:

Ինչպես տեսանք վերև բերվածներից, դասակարգերն առաջանում և կազմակերպվում են դարերի ընթացքում: Տվյալ դասակարգերի մեջ մտնող բոլոր խմբերը միատեսակ դրության մեջ չեն զտնվում: Նրանք բոլորը միատեսակ չեն զիտակցում դասակարգի շահերը և պայքարի ճանապարհը: Բանի դեռ դասակարգը կամ նրա նշանակալից մեծամասնությունը չի հասկացել դասակարգի խնդիրները և զիտակցության ու գործունեության ընդհանուր ձև չի ստեղծել,—կնշանակի մենք գործ ունենք մի դասակարգի հետ, վորն «ինքն» է, մի դասակարգի հետ, վոր դեռ չի ձևակերպվել, չի ճանաչել իրեն, չի ստեղծել իր տեսությունն, իր իդեոլոգիան, իր կուսակցությունը, իր կազմակերպությունը: Միայն զարգացման վորոշ աստիճանում և դասակարգը զառնում դասակարգ «իր համար»—նա յուրացնում է վորոշ իդեոլոգիա և ստեղծում է իր կազմակերպությունները: Բանվոր դասակարգը Եվրոպայում ձևակերպվեց 19-րդ դարում, իսկ Ռուսաստանում՝ 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբներին:

§ 44. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՑԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Կապիտալիստական հասարակությունը բաժանվում է յերկու հիմնական միմյանց թշնամի դասակարգերի—բուրժուազիայի և պրոլետարիատի: Դեպի ո՞ւր են ձգվում մյուս դասակարգերը և մինչև կյանքի խմբերը:

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ճնշված բոլոր դասակարգերը կարող են իրենց ազատագրությունը զանել միայն պրոլետարիատի զեկավարությամբ:

Գյուղացիությունը, ինչպես մենք տեսանք, իր հիմնական մասայով կապիտալիզմից տուժում է, քայքայվում և մուրացկի դրության է հասնում: Նա տուժում է ֆեոդալիզմի մնացորդներից, վորովհետև բուրժուազիան, թեև չի ցանկանում կալվածատիրական դասակարգին ոչնտա վճարել, սակայն և չի համարձակվում վոչնչացնել կալվածատիրական սեփականությունը և հողերն հանձնել պետության, չնայած վոր հողերի ազգայնացումը միանգամայն ձեռնտու յե արդյունաբերական կապիտալին:

Բուրժուազիան միշտ վախենում է, վոր հողերի ազգայնացմանը կարող է հետևել զործարանների ազգայնացումը: Գյուղացիական հոծ մասսայի ազգատացում, քայքայում և պրոլետարիզացիա—այսպես և ճակատագիրը այդ միջանկյալ դասակարգի:

Գյուղացիությունը միացած չե խոշոր տնտեսությամբ, այլ կոտորակված է մանր, մեկուսացած տնտեսավարությամբ: Գյուղացին, վորպես իր արտադրության միջոցների սեփականատեր, ձգտում է դեպի բուրժուազիան, յերազում է իր փոքրիկ սեփականության ամրացման ու զարգացման մասին: Դրա հետևանքն այն է լինում, վոր նա իրեն չահազործող կապիտալի դեմ պայքարելիս հանդես է բերում տատանում և անվճռականություն:

Պրոլետարական հեղափոխության առաջին չրջանում պրոլետարիատը կարող է հույս զնել միջակ գյուղացու, այսինքն հիմնական մասայի միայն չեզոքության վրա: Հետզհետե միայն: պրոլետարիատի զեկավարությամբ կապիտալի դեմ մղվող պայքարի ընթացքում, հենված գյուղական չքավորության վրա, միջակ գյուղացիությունն ավելի և ավելի համոզվում է պրոլետարական զիկտատուրայի առավելությունների մեջ, զառնում է պրոլետարիատի զաչնակիցը, իսկ հետագայում, կանդնելով իր տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղու վրա, զառնում է պրոլետարական դիկտատուրայի իրական, հաստատուն հենարանը:

Բացի գյուղացիությունից, կապիտալիստական հասարակության մեջ կան մի շարք այլ միջանկյալ խմբակներ, որոնք տարբեր կերպով են տուժում կապիտալիզմից. սակայն գյուղացիության պես անընդունակ՝ իրենց ուժերը հավաքելու, և կապիտալիզմի դեմ դուրս գալու: Իր դասակարգային դրության մեջ միայն պրոլետարիատն է ընդունակ առաջ գնալ մինչև վերջը, մինչև կապիտալիզմի տիրապետության լիակատար վոչնչացումը: Դեռ 1897 թվին, երբ ռուս մարքսիստ հեղափոխականների առաջ կանգնած էր ինքնակալության վոչնչացումը, Լենինը «Ռուս սոցիալ-դեմոկրատների խնդիրները» գրել է.—«Միայն պրոլետարիատը կարող է առաջամարտիկ լինել քաղաքական ազատության և դեմոկրատիկ հիմնարկությունների, քանի վոր, նախ՝ քաղաքական ճնշումը պրոլետարիատի վրա անդրադառնում է ավելի ուժեղ, չզանելով այդ դասակարգի դրության մեջ վոչ մի կորրեկտիվ, մի դասակարգի, վորը վոչ բարձրագույն իշխանության մեջ մուտք ունի, վոչ անդամ կարգի, վորը վոչ բարձրագույն իշխանության մեջ մուտք ունի, վոչ անդամ չինովնիկության և վոչ էլ ազդեցություն ունի հասարակական կարծիքի վրա: Իսկ յերկրորդ՝ միայն պրոլետարիատն է ընդունակ մինչև վերջը տանել քաղաքական և հասարակական կարգի դեմոկրատիզացիան, վորովհետև այդպես դեմոկրատիզացիան, այդ կարգը բանվորության ձեռքը կտա»:

Գլխավորել բոլոր ճնշված դասակարգերին և նրանց ոգնությամբ վոչնչացնել դասակարգային հասարակությունը—այդպիսին է պրոլետարիատի պատմական դերը:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԼԻԲԵՐԱԼ ՑԵՎ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դասակարգային պայքարն առաջինը Մարքսը չե բացել, այլ նրանից առաջ՝ բուրժուական տնտեսագետներն ու պատմաբանները: Սակայն դասակարգային պայքարի բովանդակությունը, ինչպես և նրա ձևը, միանգամայն տարբեր են հասկանում հեղափոխական մարքսիստները ու բուրժուական տեսաբանները: Բուրժուական տեսաբանները բանվորական չարժման ներն ու բուրժուական տեսաբանները: Բուրժուական տեսաբանները բանվորական չարժման ուժեղ ճնշման տակ պատրաստ են ճանաչել դասակարգային պայքարի «օրինականությունը»: Սակայն դասակարգային պայքարը նրանց կողմից հասկացվում է վորպես բացառապես տնտեսական պայքար, վորպես մանր բարելավումների պայքար, վորը կապիտալիզմի չահերին չի խանգարում և չի խախտում կապիտալիստական տիրապետությունը:

«Լիբերալիզմը,—ասում է Լենինը,—յերբ բանվորական չարժումը մի քիչ ամրացել է, չի համարձակվում բացառել դասակարգային պայքարը, բայց աշխատում է այն նեղացնել, սեղմել, ներքինացնել դասակարգային պայքարի հասկացողությունը: Լիբերալիզմը պատրաստ է ճանաչել դասակարգային պայքար նաև քաղաքականության բնագավառում, սակայն՝ մի պայմանով, վոր նրա չրջանակի մեջ չմանի պետական իշխանության կառուցումը:

Դժվար չե հասկանալ, թե բուրժուազիայի դասակարգային ինչ չահերից են բղխում դասակարգային պայքարի այդ լիբերալ առավաղումը»:

Այդպիսի լիբերալ ուղղություն մենք գտնում ենք և բանվորական չարժման մեջ, որինակ, հանձինս անգլիական տրեդ-յունիոնների: Նրանց յերկար ժամանակ ոտար եր վորևե կուսակցության ղեկավարությունը: Նրանք նպատակ եյին դրել տվյալ միության անդամների տնտեսական դրությունը բարելավել և իրենց ծրագրերի մեջ խուսափում եյին բանվորական չարժման վերջնական նպատակների—հասարակության վերակառուցման «անհաճո» պարագրաֆից: Անգլիական պրոֆմիության անդամների հսկայական մասսան սովորաբար ընտրություններին ժամանակ ձայն եր տալիս հոդուտ, այսպես կոչված, բանվորական կուսակցության, վորի մեջ մտնում են անգլիական պրոֆմիությունների վողջ մասսան և վորը, ըստ եության իր առաջ չի դրել պրոլետարիատի կողմից իշխանության գրավման և սոցիալիզմի իրագործման խնդիրը:

Ուրիշ բան է մարքսիզմի հասկացողությամբ—դասակարգային պայքարը: Մարքսիստները համար տնտեսական պայքարն անխուսափելի կերպով հանդիսանում է քաղաքական պայքար: Բայց դա պետք է հասկանալ վոչ այնպես, ինչպես հասկանում եյին ռուսական մարքսիզմի ոպորտունիստական ներկայացուցիչները—«էկոնոմիստները»: Նրանք պատկերացնում եյին, վոր տնտեսական պայքարը, հենց նրանով, վոր տնտեսական է, ուրեմն և քաղաքական է: Դրանով նրանք առաջարկում են բանվոր դասակարգին մեծ ուշադրություն դարձնել տնտեսական պայքարի վրա: Այդ պատճառով նրանք ամեն կերպ դովաբանում եյին բանվորական չարժման տարերայնությունը—այդ չարժման տարերային պրոցեսը: Լենինն արդեն ցույց է տվել, վոր տնտեսական պայքարը կարող է դառնալ քաղաքական միայն այն ժամանակ, յերբ բանվորական չարժման տարերային պրոցեսի մեջ կմտցվի գիտակցություն, յերբ այդ չարժումը կընթանա քաղաքական կուսակցության ղեկավարության տակ: Տնտեսական պայքարն ավտոմատ կերպով քաղաքականի չի վերածվում: Տնտեսական պայքարը կարող է բանվոր դասակարգին տանել տրեդ-յունիոնիզմի ճանապարհով, անմիջական կարիքների համար պայքարելու ճանապարհով, մի ճանապարհով, վոր զուրկ է հեղափոխական նպատակներից:

Վորպեսզի տնտեսական պայքարը բարեփոխական իմաստով, ներառվի դասակարգային պայքարի սիստեմի մեջ, անհրաժեշտ է բանվոր դասակարգին կազմակերպել կուսակցության մեջ, այդ կուսակցությանը տալ պրոլետարիատի հեղափոխական տեսությունից՝ մարքսիզմից ընդհանուր որենքներից բղխող քաղաքական ծրագիր: Լենինի տեսակետով մարքսիստը միայն նա յե, ով վոր ընդունում է դասակարգային պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության իմաստով: Այդ տեսակետից Լենինը վերածնեց 19-րդ դարի կեսերի խոշոր հեղափոխական ցնցումների ժամանակների Մարքսի և Ենգելսի հեղափոխական մարքսիզմը: Մարքսիզմի հեղափոխական իդեան, ինչպես այդ ընդունում եր Մարքսը, վոչ թե դասակարգային պայքարն եր, վորքան պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու զորավարը, նրա դիկտատուրայի հաստատումը: Մարքսի ոպորտունիստ ժառանգներն ամեն կերպ խեղաթյուրեցին Մարքսի ուսմունքը: Նրանք մասամբ լռում եյին, մեծ ու փոքր ուշադրություններով աշխատում եյին ներքինացնել Մարքսի ուսմունքի հեղափոխական բովանդակությունը: Առաջին հերթին նրանք աշխատում եյին կոծկել դասակարգային պայքարի հեղափոխական-մարքսիստական բնույթը: Նրանց համար դասակարգային պայքարը դառնում եր անտեսական գրության անմիջական բարելավման պայքար, բայց վոչ պայքար՝ իշխանության համար, սոցիալիզմի համար:

§ 45. ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պրոլետարիատի կողմից իշխանության գրավումով դասակարգերը չվերացան Խորհրդային Միության մեջ: Պրոլետարիատի դիկտատուրայի—պետության գոյության սուկ փաստ, վորը հանդիսանում է տիրապետող դասակարգի—Պրոլետարիատի ապարատը, վկայում է այն մասին, վոր Խորհրդային Միության մեջ դասակարգեր կան: Դասակարգերի հարաբերությունները, Խ. Միության մեջ արմատապես փոխվել են: Ցեթե առաջ ցարական Ռուսաստանում տիրապետող դասակարգերն եյին կալվածատերերն ու կապիտալիստները, իսկ ամենազուրկը, ճնշվածը բանվոր դասակարգը, ապա այժմ տիրապետող դասակարգ դարձավ պրոլետարիատը: Գյուղացիությունն առաջ անցոլիկ դասակարգ եր, ֆեոդալական հասարակությունից անցած և դատապարտված այլասերման, կործանման, եկսպրոպրացիայի, վերացման: Պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ գյուղացիությունը (բացառությամբ կուլակության) հանդիսանում է հիմնական դասակարգ և պրոլետարիատի դաշնակից, իսկ կոլխոզ մտածները դառնում են խորհրդային իշխանության և պրոլետարիատի հենարանը: Թեև պրոլետարիատի և գյուղացիության չահերը միատեսակ չեն, թեև նրանց մեջ գոյություն ունի պայքար այն մտքով, վոր պրոլետարիատը վերացնում է գյուղացիության մանր-ապիտալիստական տենդենցները, սակայն նրանց մեջ չկա չահագործման, ինչպես, չհենթարկվելու հարաբերություններ, չկա հիմնական չահերի հակադրություն: Պրոլետարիատը և գյուղացիությունը Խորհրդային Միության մեջ հանդիսանում են հիմնական դասակարգեր՝ այն մտքով, վոր նրանց մեջ չեզած հարաբերությունը բնորոշում է անցոլիկ չրջանի ամբողջ ընթացքի շարժումը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՑԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԱՅՔԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ցեղնելով այն բանից, վոր պրոլետարիատի և գյուղացիական հիմնական մասսայի մեջ գոյություն չունի չահագործման հարաբերություն, և ոպորտունիստները չեզրակացնում են,

վոր Խորհրդային Միության յերկու հիմնական դասակարգերի միջև պատերազմ վոչ մի վտանգ չկա և վոր «բանվորների ու գյուղացիների դաշինքն ապահովված կլինի, այսպես ասած, ինքնահոսով» (Ստալին)։

Գյուղացիությունը (դրա մեջ և կուլակային գյուղացիությունը) պետք է ներառնի սոցիալիզմի մեջ, այդ պատճառով վոչ մի կարիք չկա գյուղի տարբեր դասակարգերի համար հատուկ քաղաքականություն սահմանել, և դասակարգային պայքարի համար ել հող չկա։ Նման հասկացողությունը հակասում է լենինյան ըմբռնման, վորն ընդունում է, թե պատերազմն անհրաժեշտ չէ, բայց հնարավոր է, քանի վոր գյուղացիությունն իրենից ներկայացնում է տատանվող դասակարգ, վորը վորոշ հանգամանքներում կարող է դնալ բուրժուազիայի և նրա լրտյունների հետևից։ «Հետևապես պատերազմը բանվորության և գյուղացիության միջև, —ասում էր ընկ. Ստալինը 16-րդ կուսհամագումարում տված իր զեկուցման մեջ,—անհնար չէ, սակայն նա բոլորովին պարտադիր չէ, քանի վոր մեր կարգում հնարավորություն կա այդ պատերազմի առաջն առնել և ամրացնել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Իսկ ի՞նչ է պահանջվում այդ բանի համար, վոր այդ հնարավորությունը վերածենք իրականության։ Վորպեսզի պատերազմի առաջն առնելու հնարավորությունը վերածենք իրականության, հարկավոր է ամենից առաջ թաղել ինքնահոսի տեսությունը, արմատախիլ անել կապիտալիզմի հիմքերը, կազմակերպելով կոլտնտեսություններ, կուլակության շահագործական տենդենցների սահմանափակման քաղաքականությունից անցնել կուլակությունը՝ վորպես դասակարգի լիկվիդացիայի քաղաքականության»։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պրոլետարիատը—դա՝ վարձու բանվորների դասակարգն է։ Եթե այդ ինդրի մեջ խորանանք, ապա մենք կտեսնենք, վոր պրոլետարիատ այն մրցքով, ինչ մտքով այդ կատեգորիան հասկացել ենք կապիտալիստական տնտեսության մեջ, Խորհրդային Միության մեջ չունենք։ Կապիտալիստական հասարակության մեջ աշխատավարձը հանդիսանում է բանվորական ուժի այն գինը, վորի (աշխատավարձի) տատանումը կախված է պահանջից և առաջարկից։ Մեզ մոտ սակայն աշխատավարձը պահանջով և առաջարկով չի վորոշվում, այլ մեր ունեցած միջոցներով, մեր գործարանների և ֆաբրիկանների արտադրողականության բարձրացումով, բանվորական մասսայի նյութական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու՝ պրոլետարական պետության հնարավորությունների ընդլայնումով։ Բանվորական պետության և բանվոր դասակարգի միջև չկա և չի կարող լինել այն հարաբերությունները, վորը գոյություն ունեցել կապիտալիստական հասարակության մեջ, պրոլետարիատի և կապիտալիստների միջև։ Վարձելու հարաբերություն մենք այստեղ ունենք ըստ ձևի, բայց վոչ ըստ բովանդակության, իսկ ինքը բանվորական ուժը չի կարող ապրանք համարվել։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լենինի արտահայտությամբ, բուրժուազիային Խորհրդային Միության մեջ թույլ եր տրվել մասնակցել տնտեսության մեջ, վորոշ պայմաններով, բանվորական պետության խիստ հսկողության տակ։

Բուրժուազիայի մեջ են մտնում՝

1) Քաղաքային բուրժուազիա («Նեպմանները»),
2) Գյուղական բուրժուազիա (կուլակությունն) և
3) կոնցեսիոներները—ոտարերկրյա կապիտալի ներկայացուցիչներ։

Նեպմանների տրամադրության տակ գտնված ձեռնարկությունների, ինչպես և նեպմանական արտադրանքի չափը չափազանց աննշան է։ Գյուղում կուլակը տիրապետում է արտադրության միջոցներին։ Դա նույնիսկ վերագնում է նրա անձնական աշխատունակությանը, և նա չհագործում է վարձու աշխատանքը։ Նա վորպես վաչխառու, բարձր տոկոսով փող տալով հագործում է չքավորին և միջակին, վորպես առևտրական նրանց քերթում է և բարձր գներով ծախում, վորպես գործիքներ մատակարարող՝ նա վերցնում է նրանց բերքի մի մասը և այլն։ Համատարած կոլեկտիվացման ռայոններում, կուլակն ապակուլակացման յենթարկելով, զրկվեց արտադրության միջոցներից։ Վոչ համատարած ռայոններում կուլակությունը յենթարկվեց հետագա սահմանափակումների այն չափով, վորչափով նա զրկվեց կապալով հող վերցնելու և բանվորներ վարձելու իրավունքից։

Ինչ վերաբերում է կոնցեսիոն արդյունաբերությանը, ապա պետք է ասել, վոր նա մեզ մոտ խոշոր գեր չի խաղացել։ Կոնցեսիոն կապիտալը ներկայումս չափազանց թույլ է։

Այսպես ուրեմն.

Արդյունաբերական բուրժուազիան մեզ մոտ թույլ է, խիստ կերպով թուլացել է առևտրական բուրժուազիան և արագ լիկվիդացիայի պրոցեսումն է գտնվում կուլակային բուրժուազիան գյուղում։ Չարդացման վոչ բարձր մակարդակի վրա յե մնացել մեզ մոտ կոնցեսիոն արդյունաբերությունը։

ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹՅԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՊՐՈԼԵՏԱՐԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՑԵՎ ԱՋ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Կուլակության իդեոլոգ-բուրժուական պրոֆեսոր—վնասարար կանտրադյեվը—մեր բուրժուազիայի թուլության փաստից յեզրակացնում է, վոր կուլակի աճը վտանգավոր չէ սոցիալիզմի համար։ Մեր կուլակը, ամերիկյան ֆերմերների համեմատությամբ, չնչին մեծություն է, զաճաճ, վորին կարելի յե բոլորովին հաշվի չառնել։ Խորհրդային Միության մեջ, փաստորեն բուրժուազիայի չհերը պաշտպանող այդ ըմբռնմանը մոտ եր ընկ. Բուխարինը, վորը բացատրում եր մեզ մոտ կուլակային վտանգը և յենթադրում, վոր մանր գյուղացիությունից զարգացող կապիտալիզմի վտանգը չափազանցված է, վորովհետև գյուղացիական մանրիկ անտեսությունից մինչև կապիտալիզմը չատ խոշոր հեռավորություն կա։ Նման ըմբռնումն ապորտունիստական է, քանի վոր, փոքրացնելով, կամ նույնիսկ ժխտելով կապիտալիզմի զարգացման վտանգը մեզ մոտ, դրանով թմրեցվում է պրոլետարական պետության զգոնությունը, կոչ է անում նրան թուլացնել դասակարգային պայքարը և նույնիսկ զիջումներ կատարել կապիտալիստական տարրերին։

1. Այդ տեսակետը նկատի չի առնում, վոր կապիտալը-կապիտալ է անկախ իր մեծությունից, «վորովհետև կապիտալը՝ վորոշ մարդկանց միջև հարաբերություն է, հարաբերություն, վորը նույնն է մնում համեմատվող կատեգորիաների զարգացման և՛ մեծ և՛ փոքր աստիճանում»*)։ Մոլոր կապիտալիստը, կամ «չնչին» կապիտալիստը, միևնույնն է՝ կապիտալիստ շահագործող է։

2. Այդ տեսակետը բոլորովին անտեսում է այն փաստը, վոր մեր կապիտալիզմի թուլությունը պայմանավորված է պրոլետարական պետության՝ նրա դեմ մղած դաժան պայքարով, և վոր յերթե չլիներ այդ պայքարը, կապիտալիզմը մեզ մոտ փարթամորեն կծաղկեր։

3. Այդ տեսակետն ամբողջովին հակասում է Մարքսի կողմից հիմնավորված դրույթին, վոր պարզ ապրանքային տնտեսությունից ածում է ապրանքա-կապիտալիստական տնտեսություն։ Հակասում է նույնպես լենինյան այն բազմաթիվ պնդումներին, վոր ռուսական կապիտալիզմն «ածում է մանր գյուղացիական տնտեսությունից» և նրանով ել «պահպանվում»**)։ Մեզ մոտ հետևապես գոյություն ունի բուրժուազիա և բուրժուազիայի պրոբլեմ։ Բուրժուազիան չի հանդիսանում Խորհրդ. Միության հիմնական դասակարգերից մեկը, բայց նա դեռ չի անհետացել—դեռ կան չջախջախված կուլակային տարրերը. դեռ կապիտալիստական տարրեր կան քաղաքում։ Մյուս կողմից, դեռ գյուղացիական ամբողջ մասսան կոլեկտիվացման չի յենթարկվել, դեռ մի չարք ռայոններում մանր, անհատական գյուղացիական տնտեսություններն գերակշռում։ Եթե գյուղատնտեսությանը թողնենք ինքն իրեն, և յեթե պրոլետարական պետությունն այդ տնտեսության զարգացման պրոցեսի մեջ անհրաժեշտ և վճռական միջամտություն չկատարի, բուրժուազիան կարող է ածել և դառնալ մեծ ուժ։

---

*) Լենին, «Ինչ բան է «ժողովրդի բարեկամները»... էջ 128 հրատ. 1-ին։

**) Լենին XVIII հատ. էջ 33, հրատ. 2-րդ։

ՏՐՈՑԿԻԶՄԸ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԿՈՂ ԻԴԵԱԼԻԶՄԸ ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Ցեթե աջ օպորտունիզմը հանդիսանում ե կուլակային ագենտուրան կուսակցության մեջ և գրեթե անտեսում ե բուրժուազիայի գոյությունը մեր մոտ, ապա տրոցկիզմն ու մենշևիկող իդեալիզմը (հանձինս հատկապես ընկ. Կարեվի) բուրժուազիային բացարձակացնում և դարձնում են մեզ մոտ վճռական սոցիալիստական ուժ և հաշվի չեն առնում գյուղացիությունը վորպես Խորհրդ. Միության հիմնական դասակարգերից մեկը: Տրոցկիզմը չի հույսում գյուղացիության վրա, վորպես Խորհրդ. Միության հասարակության հիմնական դասակարգի: Կարեվն իր «Հոկտեմբերյան հեղափոխությունը և պատմական մատերիալիզմը» հոդվածի մեջ գրում ե.—«Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ—անցողիկ շրջանի համար գոյություն ունի միայն մեկ հիմնական դասակարգ—պրոլետարիատ, վորը վոչնչացնելով և, վերամշակելով մնացած բոլոր դասակարգերը, վերամշակում և վոչնչացնում ե ինքն իրեն վորպես պրոլետարիատի»: Այդ՝ ինարկե հակասում ե Լենինի, Ստալինի և մեր ամբողջ կուսակցության ըմբռնումին,—վոր Խորհրդ. Միության մեջ գոյություն ունեն յերկու հիմնական դասակարգ—պրոլետարիատ և գյուղացիություն: Ընկ. Կարեվը գիտե, վոր պրոլետարիատի հետ միասին գոյություն ունեն և ուրիշ դասակարգեր, սակայն նա նրանց առանց խտրության մի ամբողջ ե համարում և պրոլետարիատին ճշմարիտ բանակին ե վերագրում: «Անցողիկ շրջանի համար պատմականորեն վորոշակի արտադրական հարաբերությունների սիստեմի մեջ մնում և մասնակի կերպով վերամշակվում են և՛ ուրիշ, նախկին հասարակական-տնտեսական ֆորմացիաներից մնացած դասակարգեր: Նրանց բախտը և զարգացման ուղիները վորոշվում և անցողիկ շրջանի հասարակության կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարի ընդհանուր դինամիկայով: Պրոլետարիատի հարաբերությունը նրանց նկատմամբ, դասակարգային պայքարի հարաբերություն ե»: Ընկ. Կարեվը տարբերություն չի դնում գյուղացիության կապիտալիստական և միջակ-չքավորական խավերի միջև, դա՝ տրոցկիզմի բռնած դիրքն ե, վորի համար մնում ե պրոլետարիատի և գյուղացիական հիմնական մասսայի դաշինքի ժխտումը:

Ընկ. Կարեվը խոսքով ընդունում ե միայն մեկ հիմնական դասակարգի գոյությունը, սակայն Խորհրդային Միության մեջ սոցիալիզմի ու կապիտալիզմի միջև տեղի ունեցող պայքարին նա նայում ե վորպես՝ յերկու հիմնական ուժերի—պրոլետարիատի և նեպմանական բուրժուազիայի—պայքարի: Մեր ժամանակակից խորհրդային իրականությունը, գրում ե նա իր «Մարքսիստական քննադատություն և մարքսիզմի քննադատություն» հոդվածի մեջ, հիմնականում յերկու իրար հակադիր ուժերի—կապիտալիզմի և սոցիալիզմի կռիվն ե: Սոցիալիստական սկզբունքի կրողը հանդիսանում ե պրոլետարիատը, նրա կուսակցությունը, վորը ղեկավարվում ե Մարքսի և Լենինի ուսմունքով: Կապիտալիստական սկզբունքի կրողը հանդիսանում ե նեպմանական բուրժուազիան իր ներկա և հնարավոր չափով, բաղկացած իր գիտակից և անգիտակից ագենտներից և պնակալեզներից: Սրանք են հիմնական վորոշիչ ուժերը»: Այսպիսով անցողիկ շրջանի հասարակության վորպես հիմնական ուժերը վոչ թե հանդիսանում են պրոլետարիատն ու գյուղացիությունը, ինչպես սովորեցրել են Մարքսը, Ենգելսը և Լենինը, այլ պրոլետարիատն ու բուրժուազիան, ինչպես սովորեցնում ե Տրոցկին...: Այստեղից ե բխում Խորհրդային Միության մեջ դասակարգային պայքարի հակալենինյան ըմբռնումը, այստեղից ե կապիտալիստական հասարակության դասակարգային հարաբերությունների մեխանիկական փոխադրությունը դեպի պրոլետարիատի դիկտատուրայի եպոխան, այստեղից ե և տրոցկիստական մոտեցումը մեր յերկրի սոցիալիստական շինարարության խնդրին, այստեղ, վոր չեն կարողանում ըմբռնել, թե գյուղացիությունը հանդիսանում ե պրոլետարիատի անհրաժեշտ դաշնակիցը, բայց վոչ միշտ պրոլետարիատի հավատարիմ արբանյակը»:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ՄՈՒՏՔ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԸ

Այսպիսով Խորհրդ. Միության մեջ մենք այժմ ունենք նույն դասակարգերը, ինչ վոր Նեպ-ի սկզբին այսինքն և՛ պրոլետարիատ, և՛ չքավոր-միջակ գյուղացիություն և կուլակային-նեպմանական բուրժուազիա: Ցեթե մենք միայն համեմատենք այս դասակարգերի հարաբերական ուժերը և

նրանց ներկա տնտեսական կշիռն այն դրության հետ, ինչ վոր մենք ունեյինք Նեպի սկզբներում, ապա մենք կհամոզվենք, վոր Նեպի 10 տարիների ընթացքում (և գրեթե խորհրդային իշխանության 14-րդ տարին) մեր յերկրում կատարվել ե հսկայական դասակարգային տեղաշարժ, վորը հետևանք ե մեր յերկրի տնտեսական բազիսի մեջ առաջացած նշանակալից փոփոխության: Տաս տարի առաջ մենք ունեյինք քայքայված արդյունաբերություն (վոր տալիս եր նախապատերազմյան արտադրանքի 18%-ը) և աղքատացած, նվազած գյուղատնտեսություն (նախապատերազմյանի 60%-ը տվող): Նեպի առաջին տարիներին կապիտալիստական տարրերն ուժեղանում եյին, մանավորապես՝ առևտրի ասպարեզում (մանրավաճառի մոտ 2/3-ը և ամբողջ ապրանքաշրջանառության 1/3-ից ավելին):

Վերականգնման շրջանում, յերբ մեր արդյունաբերությունն աճեց վոչ միայն քանակապես, այլև փոխվեց վորակով, վերակազմվեց սոցիալիստական հիմունքով, կապիտալիստական տարրերի դերը քաղաքում շատ աննշան դարձավ: Տնտեսության վերականգնումը գյուղում ավելի դանդաղ եր ընթանում, քան թե քաղաքում (միայն 1929 թ. հացահատիկների կուլտուրայի ցանքադաշտը հասավ մինչպատերազմյանի 98,2%-ին, իսկ արտադրանքը նախապատերազմյանի 94,4%-ին), այդ տնտեսությունը զարգանում եր պարզ ապրանքային արտադրության զարգացման հիման վրա: Պարզ ապրանքային տնտեսությունը ծնում ե կապիտալիզմ, կուլակություն: Այդ պատճառով կուլակի սահմանափակման և դուրս մղման մեր քաղաքականությունը կարող եր տանել և տանում եր կուլակության զարգացման պրոցեսի դանդաղեցման (լավագույն դեպքում կանգ առմանը): Տրոցկիստները դեռ 1927 թվին եյին առաջարկում ապակուլակացման քաղաքականությունը, սակայն մեր կուսակցությունը, մարքսիստական-լենինյան կուսակցությունը չեր կարող և չգնաց տրոցկիստական այդ արկածախնդրական ճանապարհով. չի կարելի բռնի կերպով փոխել արտադրական հարաբերությունները, յերբ դրա համար դեռևս գոյություն չունի համապատասխան բազիս: Այդպիսի բազիս, այդպիսի նյութական հիմք 1927 թ. չկար: Սոցիալիստական սեկտորը գյուղում թույլ եր և ավելի քիչ ապրանքային հաց եր տալիս, քան կուլակայինը*), 2. Մեր արդյունաբերությունը դեռևս բավարար չափով ուժեղ չեր և հնարավորություն չուներ գյուղատնտեսությանը մեքենաներ մատակարարել: Միայն 1929 թ., յերբ կոլխոզ-սովխոզային սեկտորն այնքան ուժեղացավ, վոր հնարավոր յեղավ կուլակային արտադրությունը փոխարինել կոլխոզ-սովխոզային արտադրությամբ, կուսակցությունը համատարած կոլեկտիվացման հիման վրա անցավ սահմանափակումների քաղաքականությունից կուլակության՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիայի քաղաքականության:

Կուսակցությունն արագ կերպով լիկվիդացիայի յենթարկեց այն ձախ-տրոցկիստական խոտորումը, վորը տեղի ունեցավ 1930 թվի սկզբին, և վորն արտահայտվեց հարկադրական կարգով կոլխոզներ ստեղծելու և արտելից՝ կոմունա թռչելու մեջ և այլն, մոռացության տալով այն, վոր մեզ մոտ ապակուլակացումը տարվում ե համատարած կոլեկտիվացման հիման վրա: Կուսակցությունը միևնույն ժամանակ ամենավճռական կերպով կռվեց և կռվում ե աջ օպորտունիստների դեմ, վորոնք առաջարկում եյին վոչ միայն կոլխոզշինարարության տեմպերն իջեցնել, այլ և իրականացնել այդ շինարարությունն առանց ջախջախելու կուլակային տնտեսությունը, առանց դասակարգային պայքարի:

Աջերը պատկերացնում են սոցիալիստական շինարարությունը կապիտալիստականի կողքին: Նման ըմբռնումը նշանակում ե պարզ կերպով անձնատուր լինել կապիտալիզմի առաջ: Վերևի ասածներից պարզ ե, վոր դա-

*) Տես ընկ. Ստալինի ճառը մարքսիստ-ագրարնիկների կոնֆերենցիայում:

1007
3/289

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍԽՀ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ռակարգային տեղաշարժերի դիալեկտիկան վոչ միայն բերեց կապիտալիստական տարրերի հսկայական թուլացում, այլև պրոլետարիատի ուժեղացում, ինչպես և հաշիվ սոցիալիստական արդյունաբերության ուժեղացման, այնպես ել և հաշիվ մի[illegible]ների դզալի մասայի՝ գաշնակիցներից—պրոլետարիատի հենարանի վերածվելով: «Ա[illegible]յսօրից պարզ է,—ասում է ընկ. Ստալինը XVI կուսհամագումարի իր զեկուցման եզրափակման խոսքի մեջ,—վոր մենք արդեն դուրս ենք յեկել անցողիկ շրջանից նրա հին իմաստով և թևակոխել ենք ամբողջ ճակատով բացարձակ, ուղղակի սոցիալիստական շրջանը: Պարզ է, վոր մենք արդեն մտել ենք սոցիալիզմի շրջանը, վորովհետև սոցիալիստական սեկտորն այժմ իր ձեռքին է պահում ամբողջ ժողովրդական տնտեսության բոլոր լծակները, թեև դեռևս մենք հեռու չենք դտնվում սոցիալիստական հասարակության լրիվ կառուցումից ու դասակարգային տարբերությունների վոչնչացումից:

46. ՀՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՍԱՆ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԸ

Պրոլետարական հեղափոխության առաջադրած սոցիալիզմի կառուցման խնդիրը պրոլետարիատը չի կարող լուծել, յեթե նա չքավոր-միջակ գյուղացիության ներս չքաշի խոշոր տնտեսության, հանրային տնտեսության պատյան մեջ: Այդ պատճառով պրոլետարիատը շահագրգռված է վոչ թե նրա ապրատացումով, քայքայմամբ, ունեցվածքի գրավումով, այլ նրա տնտեսական ավելի բարձր ատիճանի բարձրացումով: Դրա համար պրոլետարիատը պետք է կոլեկտիվացման հիմունքներով վերակազմի գյուղացիական տնտեսությունը:

ԳՅՈՒՂԻ ՄԻԱՍԱԿԱՑՆԱՑՈՒՄԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Այն բոլորն, ինչ վոր ասացինք գյուղացիության մասին, չի վերաբերում վոչ կուլակին և վոչ էլ գյուղացիության կապիտալիստական վերնախավերին, այլ միջակին և չքավորին: Միջակ ասելով, սկսի հասկանալ այնպիսի գյուղացի, վոր ունի արտադրության այնքան միջոցներ (հող և տնտեսական գործիքներ), վորն անհրաժեշտ և անմիջականորեն իր և իր ընտանիքի աշխատանքային սպառողության համար: Այդպիսի գյուղացին կամ բոլորովին չի ոգտվում վարձու աշխատանքով, կամ ոգտվում է ամենաանչնչին չափով, այնքան, վոր այդ չի ազատում նրան անձնական աշխատանքից:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, սկզբնական շրջանում «յերկրագործության կենտրոնական դեմքը» (Լենինի արտահայտությունը) միջակն եր: Կալվածատիրական հողերի բռնի գրավումը, չքավորական կոմիտեների քաղաքականության հետևանքով ապահովակացումը, 1919 թվին դյուղը միջակացրին: «Գյուղական չքավորության կազմակերպության, նրանց հետ, առաջին կարգի անհրաժեշտության միջոցներ և գյուղատնտեսական գործիքներ մատակարարելու» մասին 1918 թ. հուլիսի 11-ի դեկրետով կազմակերպվեցին չքավորական կոմիտեներ (комбеды), վորոնք այն ժամանակ գլխավորում եյին դասակարգային պայքարը գյուղում, բաժանում եյին հաց, անասուններ և այլն: Յերբ վոր մայրվից պարենմատակարարումը, չքավորական կոմիտեներն ոգնում եյին կազմակերպելու հացի հավաքը, բացում եյին հացի թափառողները և այլն:

*Վոչ վոք Լենինի պես չեր հասկանում, Թե պրոլետարական պայքարի հաջողության համար, վո՞րքան կարևոր և, այդ պայքարի տեսակետից, ազգային հարցի ճիշտ լուծումը: «Լենինիզմն ապացուցեց,—գրում և ընկ. Ստալինը,—իսկ իմպերիալիստական պատերազմն ու հեղափոխությունը Ռուսաստանում հաստատեցին, վոր ազգային հարցը կարող և լուծվել միայն կապված պրոլետարիատի հեղափոխության հետ և այդ հողի վրա, վոր արևմուտքում հեղափոխության հաղթանակի ճանապարհն անցնում է դաղութային ազատագրական չարժումների և կախման վիճակի մեջ գտնվող յերկրների հեղափոխական դաչինքով՝ ընդդեմ իմպերիալիզմի: Ազգային հարցը պրոլետարական հեղափոխության ընդհանուր հարցի մի մասն և, պրոլետարական դիկտատուրայի մի մասը»:**)*

Լենինը գրում ևր.—«Դեն չպետք ամեն տեսակի ֆեոդալական ճնշում, ազգային ամեն տեսակի հարստահարություն, ազգերից մեկի կամ լեզուներից մեկի բոլոր արտոնությունները, այդ բոլորը պրոլետարիատի՝ վորպես դեմոկրատական ուժի անպայման պարտականությունն և, պրոլետարական դասակարգային պայքարի անպայման ոգուտը, վորը (դասակարգային պայքարը) մթագնվում ու հետ և մնում չնորհիվ ազգային վոխադարձ զժտու-

*) Լենին, Ազգային հարցի մասին քննադատական ակնարկները, հ. XIX, եջ 4. հր. I.
**) Ստալին, «Լենինիզմի հիմունքները», եջ 121. Գետհրատ, 1926 թ.:

թյունների։ Բայց աջակցել բուրժուական նացիոնալիզմին, այս խնդրո սահմանափակ, պատմականորեն վորոշ չրջանակի մեջ դրված սահմաններից դուրս, կնշանակի դավաճանել պրոլետարիատին և անցնել բուրժուազիայի կողմը։ Այստեղ կա մի սահման, վորը հաճախ շատ է նրբանում, այդ մոռանում են Բունդի և ուկրայնական նացիոնալ–սոցիալիստները»։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻԶՄ–ԼԵՆԻՆԻԶՄԻ ԴՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ազգային խնդրում հեղափոխական մարքսիզմ–լենինիզմն ի՞նչ դրական ծրագիրը ունի։ Հետ մղելով կուլտուրական–ազգային ավտոնոմիան, իրենց կողմից բայլևիկները ի՞նչ են նրան առաջարկում։ Ընկ. Լենինի կազմած և ՌՍԴՐԿ կենտկոմի ու կուսակցական աչխատավորների 1913 թվի ամռվա խորհրդակցության կողմից ընդունված բանաձևն առաջադրում է ազգային–տերիտորիալ ավտոնոմիայի պրոլետարական սկզբունք, այսինքն՝ ինքնիշխարհության ամենալայն իրավունք, հիմնված հեղափոխական պրոլետարիատի կողմից ազգի ինքնորոշման հայտարարության իրավունքի վրա։ Բանաձևն ընդունում է, վոր՝ «ինչ չափով հնարավոր է ազգային խաղաղություն կապիտալիստական հասարակության մեջ, վորը հիմնված է շահագործման, չահի և առևտրության վրա, այդ չափով էլ այդ նվաճումը հնարավոր է միայն հետևողական, մինչև վերջը դեմոկրատական, պետական, հանրապետական կազմի մեջ, վորն ապահովում է բոլոր ազգերի և լեզուների իրավահավասարությունը, պետական պարտադիր լեզվի բացակայությունը, բոլոր տեղական լեզուներով դպրոցներում դասավանդում, ըստ վորում պետք է սահմանադրության մեջ մտցվի հիմնական որենք, վորի համաձայն ազգերից մեկն ու մեկի վորևե առավելությունն ու արտոնությունը, կամ ազգային փոքրամասնության իրավունքների վոտնահարումը հայտարարվում է անվավեր։ Դրա հետ միասին անհրաժեշտ է հատկապես չրջանային լայն ավտոնոմիա և միանգամայն դեմոկրատական տեղական ինքնավարություն, վորոնց (ինքնավար և ավտոնոմ չրջանների) սահմանները պետք է վորոշել հենց իրեն տեղական ազգաբնակության մեջ–տարված տնտեսական ու կենցաղային պայմանների և բնակչության ազգային կազմի հաշվառված հիման վրա»։ Այս բանաձևն ընդունում է, վոր հեղափոխական սոցիալ–դեմոկրատիան պետք է պաչտպանի «ցարական միապետության տակ ճնշված ազգերի ինքնորոշման իրավունքը, այսինքն՝ անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը»։

Իրավունքը, նախապատվությունը և բանաձևը, չպետք է չփոթել այս կամ այն ազգի անջատման նպատակահարմարության հետ։ Ընդհակառակը, Լենինը համարում էր, վոր կենտրոնացած խոշոր պետությունը խոշոր պատմական քայլառաջ և միջնադարյան կարտվածությունից դեպի ամրողջ աչխարհի ապագա սոցիալիստական միասնությունը, և առանց նման պետության (անխախտորեն կապված կապիտալիզմի հետ), չկա և չի կարող լինել այլ ճանապարհ դեպի սոցիալիզմ։ Սակայն այդ կենտրոնական պետությունը պետք է կառուցվի դեմոկրատական կենտրոնացման սկզբունքի վրա, վորը «վոչ միայն չի բացառում չրջանների տեղական ինքնավարությունն ավտոնոմիայի հետ միասին, հատուկ տնտեսական և կենցաղային պայմաններով, բնակչության ազգային հատուկ կազմով, այլ, ընդհակառակը, անհրաժեշտ կերպով պահանջում է և՛ այս, և՛ մյուսը»։

Դեմոկրատական կենտրոնացումը հիմնված է կամավոր յունիարիզմի վրա.—ազգային ինքնորոշման խնդրում նա նշանակում է անջատումից ու ինքնուրույն պետություն կազմելուց կամավոր հրաժարում և ոլյալ ազգության կողմից, ոլյալ պետության սահմաններում մնալու նպատակահարմարության ճանաչումը։ Դրա հիմքում դրվում են այն ոբյեկտիվ գործոնները, վորոնք յերաչխավորում են արտադրողական ուժերի զարգացումը և կենցաղային ու ազգային առանձնահատկությունների հաչվառումը։ Ի տիրի այլոց վոչ մի բուրժուական պետություն չի կարող այդ պահանջն իրագործել, վորովհետև կապիտալիստական հասարակությունը՝ քայքայող ներքին հակասություններ և նրա տիրապետող դասակարգը չարունակ ազգությունների միջև հրահրում են փոխադարձ զայրույթ։ Միայն պրոլետարական պետությունն ընդունակ յերալ այդ խնդիրը լուծել։

Ազգային ինքնորոշման լոզունգը բղխում է Մարքսի և Ենգելսի դամունքներից։ Նրանք պրոլետարական պայքարի սիստեմի մեջ առան ճնշված ազգությունների ազատագրության պայքարը և արտահայտվեցին հոգուտ Իրլանդիայի, Լեհաստանի և այլ յերկրների ինքնուրույն պետական գոյության, վորոնք գտնվում էին կապիտալիստական յերկրների՝ մետրոպոլի հպատակության մեջ։ Յերկրորդ Ինտերնացիոնալը թեև Լոնդոնի կոնգրեսում ընդունեց (1896 թ.) ազգերի ինքնորոշման լոզունգը, բայց այդ բացատրվեց, վորպես լավագույն դեպքում, ճնշված ազգերի քաղաքական ավտոնոմիա ձևով ընդունելու իրավունք։ Նույնիսկ ցիմերվալդովցիներն առաջադրելով ազգային ինքնորոշման լոզունգը, վորպես հակապատերազմական կամպանիայի լոզունգներից մինը, կոչ չեին անում պրոլետարիատին ամենահեղափոխական ձևով, ճնշող պետությունից անջատվելու ձևով պայքարելու հանուն ազգերի ինքնորոշման։

Ազգային ինքնորոշման այդ ձևի լոզունգը միայն առաջադրեցին բայլևիկները, դարձնելով այն պրոլետարական դիկտատուրայի և քաղաքացիական պատերազմի կարևորագույն լոզունգներից մեկը։

1919 թվին 8–րդ կուսհամագումարում ընդունած Համկոմկուսի ծրագիրը պարունակում է վ. ի. Լենինի ձևակերպումով մի կետ ազգային ինքնորոշման մասին։

§ 52. ՏԱՐԱԶԱՑՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ ՑԵՎ ԼԵՆԻՆՑԱՆ ԳԻԾԸ

ՏԱՐԱԶԱՑՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՆՉ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային ինքնորոշման լոզունգը դիմադրության եր հանդիպում ինչպես բուրժուական և մանր–բուրժուական քաղաքագետների (մասնավորապես լիկվիդատորների), այնպես էլ մի քանի բայլևիկական տեսաբանների ու գրողների կողմից։ Ռոզա Լյուքսեմբուրգը նույնիսկ առաջարկում եր ՌՍԴՐԿ ծրագրից հանել իններորդ կետը, վորն ընդունում եր «ինքնորոշման իրավունքը՝ պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգություններին»։ Լենինն ապացուցում եր, վոր «այդ իրավունքի ճանաչումը բոլորովին չի բացառում վոչ պրոլետարական, վոչ ռևոլյուցիոն անջատման, և վոչ էլ բուրժուական նացիոնալիզմի մերկացման դեմ»։ Մինչդեռ միանգամայն անվիճելի յե, վոր այդ իրավունքի բացատրումը ձեռնտու յե ամենածայրահեղ վելիկոռուսական նացիոնալիզմի համար։ Ռոզա Լյուքսեմբուրգի ծիծաղելի սխալի մեկը հենց նրա մեջ է կայանում, վոր մարդիկ, ազգություններին ճնշող բուրժուական նացիոնալիզմի ձեռնտու խաղից վախենալով, խաղում են հոգուտ վոչ միայն բուրժուազիային, այլև ազգություններին ճնշող սևհարյուրակային նացիոնալիզմին»։

ՏԱՐԱԶԱՑՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՑԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ՝

Տարաձայնություններ տեղի ունեցած 1917 թվի ապրիլյան կոնֆերենցիայում և մանավանդ 8–րդ կուսհամագումարում։

Լենինի առաջարկության համաձայն ձևակերպած ազգերի ինքնորոշման իրավունքի ծրագրի կետի դեմ համագումարում առաջադրվեց յերկու առաջարկություն։ Մեկն ընկ. Պյատակովի, վորը պահանջում եր ամրողջապես հանել այդ կետը ծրագրից, վորովհետև հազարների ինքնորոշման այդ լոզունգը, վոր մեր կուսակցության կողմից տարվում է շատ վաղուց, ցույց տվեց գործնականում, սոցիալիստական հեղափոխության ժամանակ, վորպես բոլոր հակահեղափոխական ուժերին միավորող լոզունգ։ Պյատակովն ապացուցում եր, վոր պրոլետարիատի չահերը պահանջում են տնտեսական լրիվ միասնություն, այլ վոչ ազգերի չերտավորում։ Ընկ. Բուխարինի առաջարկությունը պահանջում եր ազգերի ինքնորոշման լոզունգը փոխարինել բոլոր ժողովուրդների աչխատավորության ինքնորոշման լոզունգով, վորովհետև ճանաչել ազգային ինքնորոշում՝ նշանակում է ճանաչել, վոր գոյություն ունի «ինչ վոր միասնական հազգային կամք», վոր ազգն իրենից ներկայացնում է ինչ վոր միասնություն։ Լենինն ապացուցում եր, վոր աչխատավորության ինքնորոշման պահանջը վերևից ոևալ չի ասում, վորովհետև ճնշված ժողովուրդները դեռևս բավարար չափով չերտավորված չեն դասակարգերի։ Հենց ազգային ինքնորոշումը, արտաքին ճնշումից ազատագրվելն ավելի կաչկռցի դասակարգային չերտավորմանը։ Վճռական կերպով նա հանդես յեկավ Պյատակովի առաջարկության և միասնության դեմ, ինչի մեջ եր վոր այդ միասնությունը կայանա և առհասարակ զոռով կապած, կպցրած միասնության դեմ։ Այդ միասնության դրշակի տակ վելիկոռուսական չովինիստներն անց են կացնում ազգային ճնշման քաղաքականություն։ Տնտեսական միասնությունն ոգտակար է աչխատավորությանը, բայց նա պետք է ձեռք բերել վոչ թե ուժով, այլ ագիտացիայով, պրոպագանդով, կամավոր միության։

ԸՆԿ· ԲՈՒԽԱՐԻՆԻ ՎԱՑՍ-ԴԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ, ՄԵԽԱՆԻՍՏԱԿԱՆ ՀԱԿԱԼԵՆԻՆՅԱՆ ԳԻԾԸ ՑԵՎ ԵԿԼԵԿՏԻԶՄԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐՈՒՄ

Ազգային խնդրում լենինյան դծի դեմ յեղած ինչպես աջ հակաճառությունների, այնպես էլ «ճախ» հակաճառությունների մեջ մենք հանդիպում ենք մարքսիստական դիալեկտիկայի ամբողջական բացակայության: Աջերը—Բաուերը, Շպրինգերը, լիկվիդատորները, բունդովցիները և այլն, հասկանում էին պրոլետարիատի ազգային ծրագրերը մոտավոր ինչ որ ինտերնացիոնալիզմի դեմ բան, մոտավոր ըստ էության ինտերնացիոնալիզմը մոռանալու բացատրություն: «Ձախերը»՝ Լյուքսեմբուրգը, Բուխարինը, Պյատակովը և այլն, հասկանում էին պրոլետարիատի ինտերնացիոնալիզմը մոտավոր բանվորական չարժման ազգային ծրագրի ըստ էության բացատրում: Բուխարինյան ըմբռնողությունը տարբերվում է Լյուքսեմբուրգի, Պյատակովի ըմբռնումից միայն իր եկլեկտիկականությամբ, մոտավորապես ինչ է նշանակում բոլոր ժողովուրդների աշխատավորության ինքնորոշում, յեթե մոտ յերկու տարբեր սկզբունքների եկլեկտիկական չփոթում՝ դասակարգային և ազգային: Բուխարինը չի կարողանում ըմբռնել հակադրությունների միասնության լենինյան հասկացողությունը, չի հասկանում, որ ազգային հարցը սեռ կերպով կապված է դասակարգային պայքարի և պրոլետարիատի դիկտատուրայի հետ, և փոխանակ դիալեկտիկական հակադրությունների միասնության, նա առաջարկում է տարբեր սկզբունքների մեխանիկական խառնուրդ, վերցրած մասնակի կերպով, մի քիչ...

Ինտերնացիոնալիզմի և ազգային քաղաքականության միջև յեղած դիալեկտիկական կապի անըմբռնողությունից բուրժուա և անհրաժեշտության, պատահականության, ձևի և բովանդակության, դիալեկտիկայի մեխանիստական անըմբռնողության հետ: Այստեղ ևս մենք ունենք ազգային ձևի բացասում, թեև պրոլետարիատի ինտերնացիոնալ կուլտուրայի ստեղծումը պրոցեսը, որը պատմական անհրաժեշտություն է, կարող է մինչև կոմունիզմ ընթանալ միայն ազգային ձևով, միայն ազգային կեցության ձևով: Բանի դեռ գոյություն ունեն պետություններ, ազգային լեզուներ և այլն՝ «ինտերնացիոնալ կուլտուրան ազգային չի, սիրելի բունդիստ,—պատասխանեց Լենինը բունդովից Լեբմանին, որը մեղադրում էր բայշևիկներին այն բանի մեջ, թե նրանք ժխտում են ամեն տեսակի ազգային կուլտուրա: Վոչ վոչ այդ չի ասել: Վոչ վոչ «մաքուր», վո՛չ լեհական, վո՛չ հրեական, վո՛չ ռուսական, և այլն կուլտուրա չի հաստատել:)*

Արդեն ինտերնացիոնալիզմ (միջազգայնականություն) հասկացողությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն ազգեր և հետևապես ազգային հատուկ պայմաններ, որոնց մեջ կատարվում է պրոլետարիատի և աշխատավոր մասսաների սոցիալիստական միասնական կուլտուրա, ապա և ազգային գոյության հասնելու անհրաժեշտ պրոցեսը:

ԼԵՆԻՆՅԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐՈՒՄ

Ազգային խնդրի լենինյան հասկացողությունը տարբերվում է Յերկրորդ Ինտերնացիոնալի տեսաբանների հասկացողությունից ոչ միայն դրված պահանջների բնույթով, այլև այդ պահանջների իրագործման ճանապարհներով ու միջոցներով: Յերկրորդ Ինտերնացիոնալի համար, նախ և առաջ, «ազգային հարցը պարփակվում է ոգովորաբար այնպիսի խնդիրների խախտ չրջանակի մեջ, որոնք մեծ մասամբ վերաբերում են կուլտուրական ազդեցություններին» (Ստալին):

Յերկրորդ Ինտերնացիոնալը, ըստ էության, չի զբաղվել գաղութային հարցով: Յերկրորդ՝ ճնշված ազգությունների հարցին Յերկրորդ Ինտերնացիոնալը մոտենում է վորպես իրավական խնդրի: «Ազգային իրավահավասարության հանդիսավոր հայտարարություն, ազգերի հավասարության» մասին արած բազմաթիվ ազդարարությունները, ահա թե ինչով նրանք զբաղվում Յերկրորդ Ինտերնացիոնալի կուսակցությունները, սովորելով այն փաստը, որ «ազգերի հավասարությունն իմպերիալիզմի ժամանակ, յերբ ազգերի մի խումբը (փոքրամասնությունը) ապրում է ի հաշիվ մի այլ խումբ ազգերի շահագործման, հանդիսանում է ծանր ճնշված ազգերի հասցեին» (Ստալին):

Լենինիզմն ազգային հարցը կապեց պրոլետարիատի դասակարգային պայքարի հետ և այդ պայքարը վոչ միայն ճնշված ժողովուրդների, վոչ միայն «ներքին», յեվրոպական, այլև Արևելքի գաղութային և կիսագաղութային ժողովուրդների ազգային-ազատագրական չարժումների հետ:

«Դրանով իսկ ազգային հարցը մասնակի, ներքին, պետական հարցից վերածվեց ընդհանուր և միջազգային հարցի, դարձավ իմպերիալիզմի լծից կախված յերկրների և գաղութների ճնշված ժողովուրդների ազատագրության համաչխարհային հարց» (Ստալին):

Լենինն ընդունում էր, վոր սոցիալական հեղափոխությունն անխուսափելի է առանց ազգային հարցի լուծման: «Մտածել, թե հնարավոր է սոցիալական հեղափոխությունը,—գրում էր Լենինը,—առանց փոքր ազգությունների ազատամարտությունների Յեվրոպայում և գաղութներում, առանց մասը բուրժուազիայի հեղափոխական պոռթկումների, առանց անգիտակից պրոլետարական ու կիսապրոլետարական մասսաների չարժումների՝ ընդդեմ կալվածատերերի, ընդդեմ յեկեղեցական, միապետական, ազգային և այլն ճնշումների, մտածել այդպես,— նշանակում է հրաժարվել սոցիալական հեղափոխությունից... Ով սպասում է «մաքուր» սոցիալական հեղափոխության, նա յերբեք նրան չի հասնի, նա հեղափոխական է խոսքով, և չի հասկանում իսկական հեղափոխությունը»:

Լենինը և բայշևիկները համարում էին, վոր պրոլետարիատի ազգային ծրագրի դնվածը կետը—բոլոր յերկրների պրոլետարիատի մերձեցման պահանջները և ճնշված ժողովուրդների աշխատավոր մասսաների հետ և միացյալ պայքարը՝ տապալելու համար կապիտալիստներին, կալվածատերերին և իմպերիալիստական բոլոր հարստահարիչներին: Գրավոր տարիատ պետք է ամենաակտիվ կերպով ազնի ճնշված յերկրների հեղափոխական-ազատագրական չարժումներին: Այդ պարտականությունն ամենից առաջ ընկնում է մետրոպոլիայի պրոլետարիատի վրա, որովհետև հենց այդ յերկրի իմպերիալիզմի դեմ է կռվում այս կամ այն ճնշված յերկիրը: Կոմինտերնի կուսակցություններն ամենուրեք գաղութային յերկրներում պետք է աջակցեն պրոլետարական և կոմունիստական տարրերի ազդեցության լայնացման և ամրացման՝ ազգային-ազատագրական չարժումների վրա: Նրանք պետք է կռվեն բուրժուա-ազգայնական տարրերի ազդեցության հետ, բայց և միևնույն ժամանակ մի չարք յերկրների ազգային-բուրժուազիայի հետ բլոկ կազմելու գնով պետք է գնալ մի վորոշ ետապ, մինչև այն ժամանակ, յերբ նա պատրաստ է բանվորների և գյուղացիների հետ միասին կռվել իմպերիալիզմը խորտակելու համար:

---

*) Լենին, հ. XIX, եջ 40, I հրատ.

§ 53· ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պրոլետարիատի դիկտատուրան ազգային սոբստվենի ճնշումները, հրեական ջարդերը, հայ-թուրքական կոտորածները, լեհերի, ուկրաինացիների, բելոռուսների և այլն ամենակոպիտ ռուսացման յերկիրը դարձրել է այն միակ յերկիրը, ուր ազգային հարցը լուծված է հեռավոգական դեմոկրատիզմի վոգով: Վոչ մի կապիտալիստական յերկրում ինքնորոշման լոզունգը չի իրականացվել, թեև նա 1918 թվի հեղափոխության չարժիչ ուժերից մեկն էր:

Միայն Խորհրդային Միության մեջ և նա ամբողջությամբ իրագործված: 1917 թ. նոյեմբերի 3-ի Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիայի մեջ հայտարարված էր ժողովուրդների ազատ միավորումների անհրաժեշտությունը՝ լրիվ ինքնորոշման սկզբունքների հիման վրա:

Քաղաքացիական պատերազմների չրջանում կազմակերպվեց մի քանի առանձին հանրապետություն, բայց հենց վոր քաղաքացիական պատերազմը վերջացավ և հեղափոխական դրոշակին սկսեց փողփողալ Խորհրդային բոլոր յերկրների վրա, նրանք անմիջապես մտան Խորհրդային Մեծ Միության մեջ: 1922 թ. կազմակերպված Խորհրդային Միությունը միացնում է դաշնակից հանրապետություններ, ավտոնոմ հանրապետություններ, ավտոնոմ մարզի ազգային չրջաններ, ռայոններ և գյուղխորհուրդներ: Միությունը վոչ միայն «ճանաչում է այդ ազգային կազմավորումները, այլև նրանց աջակցություն և ցույց տալիս,*

---

*) Սկզբունքով Խորհրդային Միությունը մի պետություն է, վոր սահման չունի, վորովհետև ամեն մի յերկիր, ուր պրոլետարական հեղափոխություն է կատարվում, չի կարող չմտնել Խորհրդային Միության մեջ՝ նորհրվ նոր ստեղծվող պետության պրոլետարական բնույթի:

հնարավորություններ է ստեղծում նրանց ազգային կուլտուրայի և արտադրողական ուժերի զարգացման։ Խորհրդային իշխանությունը ձգտում է վոչնչացնել անհեթական փաստական անհավասարությունը։

Տնտեսական և կուլտուրական շինարարությունը բոլոր հանրապետություններում և մարզերում, ինդուստրացում, կոլեկտիվացում, տնտեսական հատուկ միջացառումներ՝ համապատասխան զանազան մարզերի կլիմայական, աշխարհագրական, կենցաղական և այլ առանձնահատկությունները. այսպիսի չեն բոլոր ժողովուրդների իրական հավասարեցման միջոցները։ Այդ միջոցները նրանց բարձրացնելու չեն այն աստիճանին, վոր հնարավոր կլինի հաջող կերպով սոցիալիզմ կառուցել։

Այսպիսով, Խորհրդային Միությունն իրագործում է ազգային կուլտուրայի լենինյան ֆորմուլան։ Մենք այստեղ ունենք,—ինչպես ասում է ընկ. Ստալինը 16-րդ կուսհամագումարի իր զեկուցման մեջ,—մի յերկրում, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ ազգային կուլտուրաների (և լեզուների) ծաղկումը, վորպեսզի պայմաններ նախապատրաստենք մի ընդհանուր սոցիալիստական կուլտուրայի մեջ անեացնելու և ձուլելու (և մի ընդհանուր լեզու) նրանց սոցիալիզմի հաղթության ժամանակ ամբողջ աշխարհում»։

Տնտեսական, կուլտուրական և կենցաղային պայմանների մեծ բազմազանության միջով ժողովուրդները կրարձրանան մինչև սոցիալիստական կուլտուրա, վորը հանդիսանում է միասնական։ Բարձր տեխնիկան և արտադրության կոլեկտիվ միջոցները կհարթեն տեղական և կենցաղային տարբերությունները։ Անգրագիտության լիկվիդացիան և նախադպրոցական ու դպրոցական ուսումը, վորը հնարավոր և ամենից հաջող կերպով կտարվի միայն մայրենի լեզուներով, կպատրաստեն ժողովուրդներին համաչափարհային կուլտուրական կապին —մի ընդհանուր լեզվով։

Արդեն հիմա բոլոր հանրապետությունների կոնստիտուցիաները մտցնում են ռուսական լեզուն (վոչ թե նրա համար, վոր նա ռուսաց լեզու յե, այլ նրա համար, վոր «նա պրոլետարական հեղափոխության լեզուն է») դպրոցական պարտադիր առարկաների չարքը։ Այդ ի՛հարկե, չի նշանակում, վոր հատկապես ռուսաց լեզուն կդառնա ընդհանուր լեզու և վոր մինչև սոցիալիզմի հաղթանակն ամբողջ աշխարհում ազգային լեզուները կվոչնչանան (և նույնիսկ նրա՝ հաղթանակից հետո)։ Լենինն ասում էր, վոր ազգային լեզուները դեռ յերկար ժամանակ կմնան, մինչև իսկ համաչխարհային մասշտաբով պրոլետարական դիկտատուրայի հաղթանակից հետո։ Այդ պնդումը ճիշտ է։ Մենք դիտենք, վոր վերնաշենքերը կենսունակ են, նրանք անհետանում են վոչ միանգամից, չնայած վոխվում և բաղխը, վորի վրա նրանք բարձրացած եյին։ Մի յերկրում պրոլետարական դիկտատուրայի պայմաններում և ազգային լեզուները չուտ չեն անհետանա։ Ընդհակառակը, ազգային լեզուներն ու կուլտուրան ծաղկում են այն չափով, վորչափով նրանք հանդիսանում են զենք այնպիսի մասսաների պետության և անհատության կառավարման գործին ներգրավելու համար, վորոնք առաջ յեղել են միայն ճնշման ու չհագործման առարկա։

Այսպիսով, Խորհրդային Միության ազգային հանրապետությունների զարգացման պրոցեսի բովանդակությունն է՝ սոցիալիստական կուլտուրայի կառուցումը։ Այն ձևը, վորի մեջ այդ պրոցեսը կատարվում է, ազգային կուլտուրան է։

ԹԵՌՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴՐՈՒՄ—ՄԵՆԱՊԵՏԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄ ՑԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ

Ազգայնական թեքումները, վորոնք մեզ մոտ գոյություն ունեն, և վորոնց դեմ մենք կռվում ենք, ունեն իրենց սոցիալական արմատները (ինչպես այլ թեքումը) հանձինս մեզ մոտ մնացած կապիտալիստական և մանր-բուրժուական (կապիտալիստականին ձգտող) տարրերի։ Վելիկոռուսական շովինիզմը ծագում է ցարական՝ վոչ-վելիկոռուս ժողովուրդների ճնշման քաղաքականությունից և վելիկոռուս ժողովրդի անցյալում ունեցած արբապետող դիրքից։ Այդ շովինիզմը՝ պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, վորը պատժում և ամեն մի հակահեղափոխական արտահայտություն, չի կարող բացահայտ կերպով արտահայտվել։ Նա արտահայտվում է զանազան թաքնված ձևերով։ Նա արտահայտվում է հնացած ամենալկեսվյան ձևով իր «ազգային բայշևիզմի» մասին ուսմունքով։ Նա արտահայտվում է ազգային հանրապետություններում ապրող ռուս ինժեներների, պրոֆեսորների, ապեցների դժգոհության մեջ, ուղղված նոր ազգային կուլտուրաների զարգացման ձեռնարկումների (վորոնց վրա նրանք նայում են վորպես «ստորինի») և վելիկոռուսական «բարձր»

կուլտուրան «սեղմելու» դեմ։ Այդ «սեղմումը» նրանք տեսնում են այն պահանջի մեջ, թե պետական աշխատավորները պետք է դիտենան «ժողովրդական այն մասսաների լեզուները, վորոնց մեջ նրանք ապրում են և աշխատում»։ Այդ շովինիզմը մտնում է նաև կուսակցության չարքերը, ուր ծածկվում է «ինտերնացիոնալիզմի» չքեղ, բոսորագույն ֆրազներով։

Վելիկոռուս շովինիզմի թեքման եյությունը նրա մեջ է կայանում, ասում է ընկ. Ստալինը 16-րդ կուսհամագումարի իր զեկուցման մեջ, վոր նա ցանկանում է ազգային լեզուների, կուլտուրայի, կենցաղի տարբերության վրայից անցնել, ձգտում է նախապատրաստել ազգային հանրապետությունների ու մարզերի լիկվիդացիան, ձգտում է խախտել ազգերի իրավահավասարության սկզբունքը և պահպանել անել կուսակցության քաղաքականությունը՝ ապարատի, մամուլի, դպրոցների և այլ պետական ու հասարակական կազմակերպությունների գծով»։

Այդ հետադեմ (ըստ եյության հակահեղափոխական) զաղափարները պարուրվում են այն «ինտերնացիոնալիստական» նկատառումներով, թե ի՞նչ կարիք կա պահել և նույնիսկ զարգացնել ազգային կուլտուրաները, քանի վոր մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրա յե և սոցիալիզմի հաղթանակ։ Դեռ ավելին։ Ի՞նչի համար են առանձին ազգային հանրապետություններն ու մարզերը, ավելի լավ չե՞ ունենալ մեկ լեզու (վելիկոռուսական!!) և մեկ հանրապետություն (ինչո՞վ և սա տարբերվում չովինիստական «միասնական անբաժան Ռուսաստանի» լոզունգից)։

Ընդամեն նրանք հիմնվում են Լենինի վրա, թե նա կողմնակից եր ինտերնացիոնալ կուլտուրային։ Մենք արդեն դիտենք, վոր Լենինն ընդհանուր լեզվի մասին խոսում եր միայն ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթությունից հետո (և այն ել վոչ մինդամից)։ Մենք տեսանք, վոր Լենինը բոլորովին չեր մտածում, ասանց ազգային, անցնել ինտերնացիոնալ կուլտուրային։ Մեզ համար պարզ է, վոր «պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կուլտուրային։ Մեզ համար պարզ է, վոր ձգտումը նպաստել և բացասել Խորհրդային Միության վոչ-ազգային կուլտուրաների բացասումը նշանակում և բացասել վելիկոռուս ժողովուրդների կուլտուրական վերելքի անհրաժեշտությունը։ Այդ նշանակում է բացասել այդ ժողովուրդների համար ընդհանուր պարտադիր ուսումը և հանձնել նրանց հետագա նացիոնալիստների հոգեկան տարկության» (Ստալին)։

«Մեզ համար պարզ է, վոր մեկ լեզվի պահանջը—վելիկոռուսական—մոտեցնում է մեր [redacted] ինտերնացիոնալիստներին, ռեֆորմիստներին և ռենեգատ Կաուցկուն, վորը պնդում եր, թե պրոլետարական հեղափոխությունն Ավստրիայում կտաներ մի ընդհանուր ձևավորման—գերմանական!—լեզվին և չեխերի գերմանացման։ Մեզ համար պարզ է, վոր տեղական նացիոնալիզմին թույլատրելու վերաբերվելու վախը (իսկ խոսքը վերաբերում է, վոր տեղական նացիոնալիզմին [redacted] մեր ուկլոնիստներին [redacted] ազգամիտ լինել և ազգային կուլտուրային) վաստորեն ստիպում է մեր [redacted] կատեգորիական չովինիզմի հանդեպ, ինչպես մի ժամանակ նրանք (Լյուքսեմբուրգը, Սիմկովսկին և ուրիշները) բուրժուական նացիոնալիզմի վախից, ջուր եյին [redacted] սեհատրյուրակային չովինիզմի ջրաղացին»։*)

Ինչո՞ւմն է տեղական նացիոնալիզմի եյությունը։ «Տեղական նացիոնալիզմի թեքման եյությունը,—ասում է ընկ. Ստալինը 16-րդ կուսհամագումարի իր զեկուցման մեջ,—կայանում է նրանում, վոր ձգտում են առանձնանալ ու պարփակվել իրենց ազգային կեղևի չրջանակի մեջ, նրանում, վոր ձգտում են կոծկել դասակարգային հակասությունները իրենց ազգի ներսում, նրանում, վոր ձգտում են պաշտպանվել վելիկոռուսական չովինիզմից սոցիալիստական շինարարության հոսանքից հետանալու ճանապարհով, այն ձգտման մեջ, վոր չեն ուզում տեսնել այն, ինչ մտեցնում, միացնում և Խորհրդային Միության ազգությունների աշխատավոր մասսաներին, և տեսնում են միայն այն, ինչ վոր կարող է բաժանել մեկը մյուսից»։

Այդ թեքումը սնվում է ազգային հանրապետությունների և մարզերի բուրժուազիայի չհեղով, ձգտելով իրագործել բուրժուական նացիոնալիզմի պահանջները և իր ազդեցությունը թողնելով ազգային կոմկուսների մանր-բուրժուական խավերի և անկայուն տարրերի վրա։

ՊԱՅՔԱՐ ՑԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Կուս. 16-րդ համագումարն ընդունեց, վոր «ավյալ [redacted] պահում գլխավոր վտանգը ներկայացնում է մեծապետական թեքումը, վորը փորձում է ռևիզիայի յենթարկել լենինյան ազգային քաղաքականության հիմունքները, և ինտերնացիոնալիզմի դրոշակի տակ սպրդում

*) Լենին, Մեր ծրագրի հիմնավորումը, հ. 19։

է անցյալում տիրող վելիկոռուսական ազգի մեռնող դասակարգերի ձղտումը՝ հետ վերցնել իրենց կորցրած արտոնություններըն»: Երբ հետ մնայմամանակ համագումարն ընդգծեց, որ անհրաժեշտ է վճռական պայքար մղել և «տեղական նացիոնալիզմի թեքման դեմ, որը հուլացնում է Սոբհրդային Միության ժողովուրդների միասնությունը և ծառայում բնաեր-վենցիայի ոգուն»:

Ազգային հարցում յերկու ճակատի վրա պայքարը հիմնվում է այն վտանգի կուսակցական դիալեկտիկական ըմբռնման վրա, որը ներկայացնում են բայլևիզմի ազգային քաղաքականությունից կատարված թեքումները:

Տվյալ ետապում գլխավոր վտանգը—մեծապետական թեքման վտանգն է, որպես լինինյան գծի ավելի նրբացած խեղաթյուրում: Նա հեղափոխական ինտերնացիոնալիստական ֆրազեոլոգիայի տակ թագցնում է ազգային ճնշման ամենահետադիմ էությունը:

Ազգային խնդրում յերկու ճակատի վրա պայքարն արդեն վաղուց դարձել է կուսակցության լոզունգը, որովհետև արդեն վաղուց են կուսակցության մեջ յերևացել հոսանքներ, որոնք իրենց հիմքում ունեն ազգային հարցի մենշևիկական ըմբռնողությունը և այդ պատճառով էլ յերկու թեքումների վտանգը չեն նշմարում: Դեռ մինչև կուսակցության 8-րդ համագումարը, Բուխարինի, Պյատակովի և Բեվզենկի բուչի կողմից ստորագրված ազգային հարցի վերաբերյալ թեզիսների մեջ, ազգերի ինքնորոշման լենինյան լոզունգը հայտարարվում էր ուտոպիական, վնասակար և ընդգծվում էր, որ կռվել մեծապետական ազգի բանվորական մասսաների չովինիզմի դեմ, ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչման գծով, այդ միևնույնն է, թե կռվել այդ չովինիզմի դեմ, ճնշված հայրենիքի կոմունիզմի պաշտպանության իրավունքի ճանաչման ճանապարհով»:

8-րդ համագումարում Բուխարինի և Պյատակովի բռնած դիրքը Լենինն անվանեց ապորտունիստական, որովհետև նա չեշտում էր բացառապես տեղական նացիոնալիզմի վտանգը, բայց լուռության էր մատնում, նույնիսկ թագցնում մեծապետական չովինիզմը, որն արտահայտվում էր վելիկոռուս կոմունիստների քաղաքական գործունեության մեջ: Նրանք աշխատելով ազգային հանրապետություններում, առաջ էին բերում տեղերում ազգայնական տրամադրությունների մի մեծ ալիք: 10-րդ կուսհամագումարը ընդունեց, որ թեքումը դեպի մեծապետականություն, կալոնիզատորականությունը «հատուկ վտանգ և հատուկ վնաս է»: Միաժամանակ համագումարը դատապարտեց յերկու թեքումներն էլ՝ որպես «վնասատար և վտանգավոր կոմունիզմի նպատակի համար»:

12-րդ համագումարում նորից հարց բարձրացավ ազգային հարցում յեղած թեքումների վերաբերյալ: Նշանակալին այն է, որ տեղական նացիոնալիզմի վտանգն այն ժամանակ ժխտում էր հենց Բուխարինը, որին առաջ ճանաչում էր միայն այդ վտանգը: Ռակովսկու հետ միասին նա առաջարկում էր ազգային հարցի բանաձևից դուրս հանել տեղական նացիոնալիզմին վերաբերող կետը: Այդ, ի միջի այլոց, չափազանց բնորոշ է մեխանիտական ըմբռնողության համար, որը տեսնում է՝ կամ մեկ հակադրությունը, կամ մյուսը, և ի վիճակի չէ նրանց միասնությունը դանել: Ընկ. Ստալինը բաց արեց, պարզեց չովինիզմի դեմ պայքարի այդ միակողմանիությունը և պարզ կերպով դրեց յերկու ճակատի վրա պայքարելու անհրաժեշտությունը: «Մենք չենք կարող յերկու ճակատի վրա կռիվ չմղել,—ասում էր ընկ. Ստալինը 16-րդ համագումարում, իր ճառի մեջ,—որովհետև յերկու ճակատի վրա կռիվ մղելով միայն՝ մի կողմից մեծապետական չովինիզմի դեմ, որ զլխավոր վտանգն է հանդիսանում մեր շինարարության աշխատանքներում, մյուս կողմից՝ տեղական չովինիզմի դեմ, հնարավոր կլինի հաջողություններ հասնել, քանի որ առանց այդ յերկու կողմ պայքարի, չի ստացվի վոչ մի զոդում բանվորների և դյուղացիների, ռուսների և ազգությունների միջև»:

Այսպիսով, այն միաբանությունը, որը յերևան յեկավ 16-րդ կուսհամագումարում և որով ընդունվեց ազգային հարցում յերկու ճակատի վրա պայքար մղելու լոզունգը, հենանք եր կուսակցության լենինյան ղեկավարության յերկարատև պայքարի, հանուն պրոլետարական դիկտատուրայի ազգային քաղաքականության միակ ճիշտ գծի, ընդդեմ մարքսիզմ-լենինիզմի տրոցկիստական և այլ ոպորտունիստական խեղաթյուրումների:

Յերկու ճակատի վրա պայքարի լոզունգը և հենց այդ լոզունգի իրականացումը տալիս է պրոլետարական դիկտատուրայի և նրա կուսակցության քաղաքականության մեջ դիալեկտիկական մեթոդի լավագույն կիրառման որինակները կուսակցության և նրա դեկավարության կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ VII ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

ՄԱՐՔՍ ՅԵՎ ԵՆԳԵԼՍ.—Կոմունիստական մանիֆեստ գլ. I և II.
ՄԱՐՔՍ.—Կապիտալ հատ. I գլ. 8, 12, հատ III գլ. 20, 52.
ՄԱՐՔՍ.—Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում (1870—1871 թ. թ.).
ԵՆԳԵԼՍ.—Անտի-Դյուրինգ, Մ.-Վ. 1930 թ.
ԵՆԳԵԼՍ.—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը գլ. 5, 6, 9.
ԵՆԳԵԼՍ.—Անտի-Դյուրինգ, հատված յերկրորդ գլ. II բնության տեսությունը էջ 146—153 գլ. IV էջ 161—170. պետհրատ 1928 թ. կ. Մարքսի «քաղաքատնտեսության քննադատության չուրջը» գրքի ուկնկիան գլ. II: «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գլ. V. աթենական պետության կազմվելը էջ 41—48. գլ. VI: Հռոմեական ցնդը և հռոմեական պետությունը էջ 49—53. գլ. IX. բարբարոսությունն ու քաղաքակրթությունը էջ 76—82. Ուկրյնական պետհրատ 1921 թ.: Ազրարային խնդրի մասին կոմինտերնի II կոնգրեսի բանաձևը (10 էջ):
ԼԵՆԻՆ.—Նարոդնիկականության տնտեսական բովանդակությունը և նրա քննադատությունը պ. Ստրուվեյի գրքում. յերկ. Ժողով. I հրատ. հատ. II.
ԼԵՆԻՆ.—Ի՞նչ բան և ժողովրդի բարեկամները. հատ I. I-ին հրատ. էջ 113—115. յերկ. ժող. հատ. I 107—109, 127, 117—227.
ԼԵՆԻՆ.—Ազրարային հարցը Ռուսաստանում 1908 թ. վերջին Յերկ. ժող. I-ին հրատ. հատ. II. 613—614.
ԼԵՆԻՆ.—Ի՞նչ անել.
ԼԵՆԻՆ.—Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում. Յերկ. ժող. I-ին հրատ. հատ. III. էջ 129—486, 488—489.
ԼԵՆԻՆ.—Տեղերի օքստեմը—մարքսն ու սարկացումը մերնայի-ինջոցով. յերկ. ժող. I հրատ. հատ. XII. 2-րդ մաս էջ 406—408.
ԼԵՆԻՆ.—Նոր տվյալներ կապիտալիզմի զարգացման օրենքների մասին՝ հողագործության մեջ: 1913 թ. յերկ. ժող. I-ին հրատ. հատ. IX էջ 238—239, 253—255, 258, 259—260.
ԼԵՆԻՆ.—Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում. Նախարան 2-րդ հրատարակության յերկ. ժող. I հրատ. հատ. III.
ԼԵՆԻՆ.—Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապը. յերկ. ժող. I հրատ. հատ. XIII. էջ 304—306, 468—470.
ԼԵՆԻՆ.—«Զախության» յերեխայական հիվանդությունը կոմունիզմի մեջ յերկ. ժող. հատ. XVII.
ԼԵՆԻՆ.—Ի՞նչպես վերա Զատուլիչը սպանում և լիկվիդատորներին. յերկ. ժող. I հրատ. հատ. XII, մաս 2-րդ:
ԼԵՆԻՆ.—Յերկ. ժող.. հատ. XIX (Հոդվածներ ազգ. հարցի չուրջը)
ՍՏԱԼԻՆ.—Լենինիզմի հիմունքների մասին.
ՍՏԱԼԻՆ.—Զեկուցում ազգային հարցի մասին X կուսհամագումարում.
ՍՏԱԼԻՆ.—Մարքսիզմը և ազգային հարցը.
ՍՏԱԼԻՆ.—Զեկուցում ու յեզրափակման խոսք Համկոմկուսի XVI համագումարում.
ՊԼԵԽԱՆՈՎ.—Պատմության մեջ անհատի դերի հարցը. յերկ. ժող. հատ. XVIII.

ԳԼՈՒԽ XIII

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ—ԼԵՆԻՆՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՄԲ

§ 54. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ—ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՆԱՇԵՆՔՆ Է ՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԸ

Վերը պարզեցինք մենք, վոր «իրավական ու քաղաքական վերնաշենքը» (Մարքս)՝ վորոշ բաղխի ժամանակ առաջացող կարևոր վերնաշենքերից մեկն է, վորը ձևավորում ու ամրապնդում է այն արտադրական հարաբերությունները, վորոնց հիման վրա առաջացել է ինքը: Պետությունը, այսպիսով, իր ձևերով ու բնույթով համապատասխանում է այն բազխին, վորի վրա հիմնվել է նա, այն արտադրական հարաբերություններին, վորոնք առաջացրել են նրան:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՑԵՎ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բուրժուական վիկլիստիաններն ու պատմաբանները պետությունը պատկերացնում էին վորպես հասարակական կարգերի մի կազմակերպություն, վորն ունի հարկադրական իշխանություն: Ստրուվեն հատատում եր (դեռ այն ժամանակ, յերբ նա լեգալ մարքսիստ եր), վոր պետության, իբրև «կարգերի կազմակերպության» բնորոշ հատկանիշը՝ կայանում է նրա հարկադրական իշխանության մեջ: Իսկ դեռևս Մարքսն է մատնանշել իր «Գոթի ծրագրի քննադատության» մեջ, վոր պետություն ասելով պետք եհասկանալ «կառավարչական մեքենա, կամ պետություն, այն չափով, ինչ չափով նա աշխատանքի բաժանման միջոցով կազմում է հասարակությունից առանձնացած մի որգանիզմ»:

Հետևապես, էականն այն չէ, վոր պետությունը ներկայանում է, իբրև մի հարկադրական ապարատ, վորքան ա՛յն, վոր նա, ինչպես Ենգելսն է ասում, մի իշխանություն է՝ անջատված ժողովրդի մասսայից: Լենինը հակաճառելով Ստրուվեյին՝ ապացուցում է, վոր հարկադրական իշխանությունը չի էականը, վորը կարող է ամեն տեսակի հասարակության մեջ էլ լինել), այլ այն, վոր «մի վորոշ դասակարգի պատկանող մարդկանց ձեռքումն է կենտրոնանում իշխանությունը»:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ — ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՍԱՅԻՑ ԱՆՋԱՏ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է

*Այսպիսով պետությունը (հասկանալի չէ խոսքը սլրոլետարական պետության մասին չէ, վորը իրականացնում է դիկտատուրան բնակչության չահադործող փոքրամասնության վերաբերմամբ) մի իշխանություն է՝ հակադրված ժողովրդի մասային: Պետությունը պարտադիր չէ ամեն տեսակի հասարակության համար: Այնպիսի հասարակության մեջ, ուր չկան դասակարգեր, ուր չկա տիրապետող դասակարգ՝ հակադիր հասարակության ճնշված ու չահադործվող դասակարգերին՝ կարիք չկա իշխանության, թեև այդպիսի հասարակության մեջ էլ գոյ ե և հարկավոր լինի հարկադրական իշխանություն՝ կարդ հաստատելու նպատակով: «Այն համայնքին, վորի ներսում կարգի կազմակերպության գործին հերթով հսկում են նրա բոլոր անդամները, պարզ է, վոր վոչ վոք չի կարող պետություն անվանել» *): Ժողովրդի մասսային հակադիր իշխանությունը կարող է և պետք է դոյություն ունենա միմիայն*

*) Լենին, Экономическое содержание народничества.

դասակարգային հասարակության մեջ: Պետությունը, պետության զանազան ձևերը համապատասխանում են միմիայն դասակարգային հասարակության արտադրական հարաբերություններին: Պետություն յեղել է վոչ բոլոր ժամանակներում: Նախնական հասարակության ու տոհմային կարգի ջրջանում պետություն չկար:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ — ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է ՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԸ

Պետությունը,—ասում է Ենգելսը «ընտանիքի, մասնավոր նախիականության ու պետության ծագման» մեջ)—դարդացման վորոշ աստիճանի հասած հասարակության արդյունքն է: Պետության գոյությունն ապացուց է, վոր հասարակությունն ինքն իրեն խճճվել և մի անլուծելի հակասությամբ, բաժան բաժան յեղել անհաշտելի հակադրություններով, վորոնցից ազատվել չի կարող նա: Ու վորպեսզի այդ հակադրությունները, դասակարգերն իրենց հակասական տնտեսական չահերով, չվոչնչացնեն ապարդյուն կռվի մեջ թե՛ իրար, և թե՛ հասարակությանը՝ սրա համար ել անհրաժեշտություն և հանդիսացել ուժը, այն ուժը, վորը ըստ յերևույթին, հզոր և յեղել հասարակությունից ու մեղմել և բաղխումները, սահմանել նրանց վորոչ «կարգերի սահմաններում:*

Ու այդ ուժը, վորն առաջ և յեկել հասարակության միջից ու իրեն վերադասել նրանից, վոր հետանում ու ոտարանում նրանից, դա պետությունն է: Դասակարգային հասարակության մեջ պետությունն անհրաժեշտ ու անխուսափելի յե—դա հասարակությունը քայքայող դասակարգային կառավարությունների անհաշտության արդյունքն է: Պետությունը գործում է բռնությամբ (ճնշելով կեղեքված դասակարգերի բոլոր տեսակի դիմադրությունները), խաբեբայությամբ, անպարոյականացմամբ և այլն, միմիայն դոյություն ունեցող արտադրական հարաբերությունների պահպանման համար: Վորոշ արտադրական հարաբերությունների չնորհիվ (բավանդակությամբ) առաջացած պետությունը ընդունում է այնպիսի ձև, վորի մեջ զարդանում են հետագայում այդ նույն արտադրական հարաբերությունները: Պետությունը չահադործողների հասարակական—տնտեսական կազմի մի պասիվ ստեղծագործություն չե, այլ նա դասակարգային տիրապետության ամենահզոր գենքերից մեկն է և հանդիսանում:

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԱՃՈՒՄԸ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՃՆՇԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Թեև պետության այս կամ այն ձևի առաջացումը համապատասխանում է վորոշ արտադրական հարաբերությունների, վորոնք իրենց հերթին համապատասխանում են արտադրողական ուժերի վորոշ դրության, սակայն վորոշ մոմենտից սկսվում է հակասությունը արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների միջև— մի հակասություն, վորը քանի դնում, լայնանում է և ստեղծում լրիվ ճեղքված նրանց մեջ: Նույնիսկ կապիտալիզմի զարդացման ամենալավ ժամանակներում, յերբ նա իսկապես տնտեսական դրության համար խոշոր քայլ եր արել դեպի առաջ, յերբ նա արտադրողական ուժերի հսկայական զարդացում եր առաջ բերել և յերբ նա նույնիսկ լայն մասսաների գիտակցությամբ ապատարար չափ եր համարվում,— նույնիսկ այն ժամանակ կային մարդկային ահագին մասսաներ, վորոնք սաստիկ տուժել եյին կապիտալիզմի զարդացումից (քայքայված արհեստավորներ, հողազուրկ գյուղացիներ և այլն): Այս խավերը հաճախ ապստամբվում եյին և համենայն դեպս մշտական վտանգի ու տագնապի աղ-

*) Թե այստեղ և թե չարունակության մեջ քաղվածքներ առած են բերված քան Լենինի «Պետության և հեղափոխության»-ից:

բյուջե եկին կազմում գոյացող հարուստահարվող դասակարգի համար: Հարքատերերը վախ ու սարսռանք ավելի չաս հիմք ունեն այն ժամանակ, երբ առաջացած արտադրական հարաբերությունները սկսում են արդեն արգելք հանդիսանալ արտադրողական ուժերի զարգացմանը, երբ հասարակության տիրապետող դասակարգը դառնում է հետադիմական: Այդ ժամանակ հասարակության մեջ այդ դասակարգին ու նրա սահմանած հասարակական կարգերին զսմաղրող ավելի մեծ ուժեր են առաջանում:

ԹՄԲԵՑՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հարստահարող դասակարգերը, ինչպես մենք տեսանք, ինքնպահպանության հարաբերությունների պաշտպանման, պահպանման ու ամրացման համար ոգտվում են մի՛միայն պետության հարկադրական ուժից, այլև իդեոլոգիական ներազդման հնարավոր ուժից, վորպեսզի ժողովրդական մասսաներին նենգեն՝ դոյություն ունեցող հարստահարիչների պետական կարգի աղբարամիտ, աներեր ու անխորտակելի լինելը: Սրանք՝ աշխատավորների հոգեկանի ճնշման միջոցներն են: Սակայն տիրապետող դասակարգը Քիլիսական հարկադրական ուժ գործադրել չի կարող: Նրանց կողմից իդեոլոգիական գործիքի ոգտագործումը լրիվ ու բազմակողմանի կարող է լինել միայն այն դեպքում, երբ պետությունն ամեն կերպ նպաստում է վորոշ իդեոլոգիայի տարածման. կամ հենց ինքն է հասատատում այդ իդեոլոգիան: Ցեկենդեցին, բուրժուական դպրոցը, բուրժուական պետությունն ու արվեստը և այլն — ահա այն բոլորը, վորոնք պետք է դասախարակեն և ուղղեն մասսաներին դեպի այն կողմը, վոր բարենպաստ է՝ տիրապետող դասակարգին ձեռնտու արտադրական հարաբերությունների ամրապնդման համար: Այս բոլոր միջոցները նպաստավորում, հովանավորում և պահպանվում են դրամի չափով բուրժուական պետության կողմից (կամ նրան մերձակից հիմնարկությունների կողմից):

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սեռանճին պետությունները իրենց հարկադրական իշխանությունը կարող են գործադրել մի՛միայն վորոշ տերիտորիալ սահմաններում: Տերիտորիան— յերկրի այն տարածությունը, վոր ըրավված է տվյալ պետության կողմից— զարձել է պետության ամենակարևոր հատկանիշներից մեկը: Իշխելու և հարկադրելու կարմակերպությունը սկզբում և առնում, զոյանում է տոհմային համայնքի քայքայման ու դասակարգային պայքարի յերևան գալու հետ: Պետական կարմակերպության տարրեր ձևերը, տարրեր հիմնարկները, վորոնք առեղծվել են ունևոր դասակարգերի կողմից՝ իրենց անտեսական տիրապետությունն ամրացնելու նպատակով՝ փոփոխվել են, նայած թե վո՞ր դասակարգն է չոզել հասարակության գլուխն անցած: Հին աշխարհի (Հունաստան, Հռոմ, Յեգիպտոս և այլն) սարկատիրական, մինչդաղրի ֆեոդալական պետությունը, բուրժուական պետությունը — այս բոլոր տիպի պետություններն իսկական արյուն ու մարմին են հանդիսացել ու հանդիսանում են այն բոլոր տիրապետող դասակարգերի, վորոնց գործիքն են յեղել դրանք: Սակայն պետությունը բարձր զարգացման և հասել վոչ թե ֆեոդալական շրջանում, այլ՝ կապիտալիստական: Ընդարձակ շրջաններ զրավող լայն փոխանակական հարաբերությունները առևտրական կապիտալի համար անհրաժեշտություն են զարձնում փոքր և չատ ընդարձակ պետությունը: Առևտրական կապիտալի համար միանգամայն անհանելի յեր այն զրությունը, յերբ ամեն մի ֆեոդալ իր կալվածքում համարյա թե մի ինքնիշխան արքա յեր, յերբ հարյուրավոր պահանջներ զոյություն ունեին ու ամեն յերկու մասնական սիրտներ: Սրա համար եր բուրժուազիան, դեռևս ֆեոդալական հասարակության մեջ, կռվում եր մեծ պետություններ կազմելու համար: Արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը, հանդիսանալով ֆեոդալական պետության ու ֆեոդալական հիմնարկությունների ճնշիչ խոչընդոտներին՝ ավելի ևս ուժեղացնում բուրժուազիայի ձգտումը՝ «ազգային» պետություն կազմելու: Մի շարք բուրժուական հեղափոխությունների միջոցով (անգլիական՝ XVII զարում, ֆրանսիական՝ XVIII դ., գերմանական, ավստրիական իտալական և այլն՝ XIX դ.) բուրժուազիան սրբեց— մաքրեց ֆեոդալական պետության վերջին մնացորդները և հիմնավորեց իր իշխանությունը բոլոր կապիտալիստական պետություններում, ու նրանց յենթակա զասակարգին ու կիսազասակարգային յերկրներում: Առանձնակի ազրեսիվ բնույթ և ընդունում բուրժուական պետությունը ֆինանսական կապիտալիզմի ու իմպերիալիզմի շրջանում, յերբ զանազան յերկրների բուրժուազիայի միջև յերկրի բաժանման ու վերաբաժանման պայքարը և սկսվում:

§ 55. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ—ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳՈՐԾԻՔՆ Է

Ներկայումս մենք համարյա թե ամեն տեղ հանդիպում ենք բուրժուական պետությունների: Ռեալ բուրժուական պետության մեջ մենք, ինչպես ասվեց վերը, տեսնում ենք վոչ թե մի՛միայն բուրժուազիա ու պրոլետարիատ, այլև ուրիշ դասակարգեր— խոշոր հողատեսեր, դյուղացիություն և ընդհանրապես մանր բուրժուազիա: Սակայն պետությունը մնում է բուրժուական նրա համար, վորովհետև բուրժուազիան և հանդիսանում տիրապետող դասակարգը, նա յե արտադրության կարմակերպողը և չարունակաբար աճող հավելյալ արժեքը ձևոք ձգողը, (վորի մի մասը նա բաժին և հանում այն չհատ գործոդներին, վորոնք մասնակից չեն արտադրության կարմակերպմանը):

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՓՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ

Իշխանությունն իր ձևերն առնելով, բուրժուազիան չկարողց չջարդել հին պետական մեքենան, այլ միայն ավելի կատարելագործել այն:

«Բոլոր հեղաշրջումները,—ասում է Մարքսը «Լուի Բոնապարտի Բրյումերի 18»-ի մեջ,—կատարելագործելին այդ մեքենան, չջարդելու փոխարեն»: «Բուրժուազիան ամրացնում է այդ մեքենան,—, ասում է Լենինը,— յերկու ամենակարևոր հիմնարկությունների՝ մշտական բանակով և չինովնիկության («բյուրոկրատիայով, ինչպես զարձյալ ասում է Լենինը»): «Բոլոր բուրժուական հեղափոխությունների միջոցով,— ասում է Լենինը «Экон. содерж. народничества»-ում,—վորպեսին չատ չատերն են տեսել յեվրոպական ֆեոդալիզմի անկումից հետո—չարունակ զարգանում, կատարելագործվում, ամրանում է այդ չինովնիկական և ոազմական ապարատը: Մանավորապես մանր բուրժուազիան դրավում է խոշորների կողմից ու յենթարկվում նրան վորոշ չափով՝ այդ ապարատի միջոցով, այդ ապարատը դյուղացիության վերին խավերին, մանր արհեստավորներին, առևտրականներին և այլն տալիս է համեմատաբար հարմար, հանգիստ ու պատվավոր տեղը, վորով նրանք բարձր դիրք են դրավում ժողովրդի մեջ»:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ—ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆ Է

Բուրժուազիան մի դասակարգ չէ, միատեսակ, ընդհանուր շահեր ունեցող: Նա բաժանվում է կապիտալիստների առանձին խմբակների, վորոնք իրար հետ պատերազմական դրության մեջ են գտնվում: Մրցումը, պայքարը՝ արդյունաբերական կապիտալի խմբակների մեջև արդյունաբերականի և կապիտալի այլ տեսակների մեջև, բուրժուազիայի և դեպի կապիտալիստական հասարակության մեջ պահանջված խոշոր հողատերերի ֆեոդալական դասակարգի մեջև — ահա կապիտալիզմի տարերքը: Յեվ այս բոլոր խմբակները, կապիտալիզմի այս բոլոր ազան դասերը ձգտում են դեպի պետական ապարատը, ամեն մեկը նրանցից աշխատելով զարձնել այն իր ապարատը: Բուր-

ժուական պետությունն իր կառուցված-քով պետք է բուրժուազիայի այս բոլորը... Ֆրակցիաների համար քաղաքականության վրա իրենց ազդեցությունն ունենալու պայքարի հնարավորություն ստեղծի: Բուրժուազիան չահագործվողների վերաբերմամբ հանդիսանում է իբրև մի դասակարգ, և նրա պետությունը, անկախ այն բանից, թե պետական իշխանությունն իր ֆրակցիաներից վերի ձեռքին է գտնվում՝ գործում է ամենայն անկնայությամբ նրանց վերաբերմամբ: Պետությունն իր սպասարկությունն ամբողջ բուրժուական (և ընդհանրապես հարստահարողների) աշխարհի համար չի սահմանափակում լոկ կովով, ուղղված դասակարգային հասարակության թշնամի ուժերի դեմ: Նա իր «լրական քաղաքականությամբ» — բարձր մաքսերի, եժան արտահանության, պետական պատվերների, չուկայի համար ընված կովի և այլն— ահագին հնարավորություններ է ստեղծում ամբողջ բուրժուազիայի համար՝ բարձր շահ ստանալու:

§ 56. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՐՊԵՍ ԳՈՐԾԻՔ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Այժմ անտեսության զարգացումը վերևն պետության մեջ արդեն անհնար է, առանց ուրիշ պետությունների հետ սերտ կապ ունենալու, որովհետև կապիտալիզմի արտադրողական ուժերի զարգացումը վաղուց արդեն առաջ է անցել պետական նեղ սահմաններից: Զարգացման այն մակարդակը, որին հասել են արտադրողական ուժերը, պահանջում է կազմակերպված ընդհանուր համաշխարհային տնտեսություն: Բուրժուազիան աշխատում է այդպիսի ընդհանուր համաշխարհային տնտեսության հասնել միակ իրեն մատչելի միջոցով— կովով, թեկուզ նույնիսկ դինյալ իմպերիալիստական պատերազմների միջոցով:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ—«ԻՐ» ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԶԵՆՔՆ Է

Ամեն մի բուրժուական պետություն կոիվ է մղում՝ չուկաներ ձեռք բերելու և հումայթի համար, «ազդեցության չրջանակների» համար, կապիտալը տեղավորելու չրջանների համար՝ հանուն «իր» բուրժուազիայի շահերի: Ամեն մի պետություն ձգտում է ճնշում գործ դնել ուրիշ պետության վրա, ներչնչելով վախ՝ իր ուժով, իր դինվածությամբ, իր անտեսական հզորությամբ և այլն: Իսկ այն դեպքում, երբ բավական չի լոկ «վախի ու հարգանքի» ներչնչումը՝ պետությունը հանում է սուրը պատյանից ու լուծում վիճը զենքով...

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՒ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Շահերի այս կռիվը չտեսնված սրման է հասնում ֆինանսական կապիտալի և իմպերիալիզմի չրջանում: Պետությունը խաղալիք է դառնում կապիտալիստական մի փոքրիկ խմբակի ձեռքին, որոնց մոտ է կենտրոնացած կապիտալի հիմնական մասերը: «Իմպերիալիզմը՝ կապիտալիզմն է, զարգացման այն աստիճանին հասած, երբ ստեղծվեց մենաշնորհների ու ֆինանսական կապիտալի տիրապետությունը, աչքի ընկնող նշանակություն ստացավ կապիտալի արտահանումը, սկսվեց աշխարհը բաժանվել միջազգային տրեստների միջև և վերջացավ ամբողջ տերրիտորիայի բաժանումը կապիտալիստական խոշոր երկրների միջև» (Լենին): Իմպերիալիզմի չրջանում «կապիտալիստական մրցումը չի մեռնում, այլ սրվում է, որովհետև այդ մրցումը տարվում է հզոր միացումներով: Սրա համար էլ իմպերիալիզմից անբաժան են կռիվները չուկաների և հումայթի համար, հսկայական տնտեսական ցնցումները, պատերազմները ու ապատպինման ահագին աճը» (Լենին): Իմպերիալիզմը կապիտալիզմի զարգացման վերջ հետապն է հանդիսանում: «Նա առաջ է յեկել արդյունաբերական կապիտալի զոլման դարաշրջումից,— կարդում ենք մենք Կոմունիստական Ինտերնացիոնալի ծրագրում,—վորպես նրա պատմական չարունակություն»: Ու չարունակության մեջ. «Կապիտալի կենտրոնացման ու համակենտրոնացման օրենքն առաջ բերավ հզոր մոնոպոլիստական միացումներ (քարթելներ, սինդիկատներ, տրեստներ), նորակազմ հսկայական ձեռնարկությունների նոր ձևեր, վորոնք մի ընդհանուր հանդույց են կազմում բանկերի հետ միասին: Արդյունաբերական կապիտալի միացումը բանկերի հետ, խոշոր հաշվապահության կապիտալիստական կազմակերպությունների ընդհանուր սիստեմին դասելը և կապիտալիզմի այդ ձևի մոնոպոլիստական բնույթը՝ ֆինանսական կապիտալի չրջան դարձրին արդյունաբերական կապիտալի չրջանը: Արդյունաբերական կապիտալիզմի «ազատ մրցումը», վոր բռնել եր ֆեոդալական մենաշնորհի և առևտրական կապիտալի մենաշնորհի տեղը՝ ինքը դարձավ ֆինանսական կապիտալի մենաշնորհ: Միևնույն ժամանակ կապիտալիստական մենաշնորհները, առաջանալով ազատ մրցություններից՝ չեն արտաքսում այն մրցությունը, այլ պահպանում են իրենց գոյությունը նրանց վրայից ու նրանց հետ միասին, առաջ բերելով այդպիսով մի չարք առանձնապես սուր ու խոշոր հակասություններ, տարաձայնություններ ու ընդհարումներ»:

Պետությունն այդ չրջանում գործիք է դառնում իմպերիալիստական բուրժուազիայի հետադիմական քաղաքականության: «Պետությունը,— չնոհվի իմպերիալիստական մրցության—իր ուժեղացրած դինվորական ապարատով դարձել է ռազմական մի հրեշ, միլիոնավոր մարդիկ է ոչնչում յոկ նրա համար, վորպիսզի լուծի վիճը, թե ո՞վ տիրապետի աշխարհին՝ Անգլիան, թե Գերմանիան, ա՞յս, թե այն ֆինանսական կապիտալը» (Լենին):

§ 57. ՄԱՐՔՍԸ, ԵՆԳԵԼՍԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՈՒ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետության էության խնդիրը զբաղեցրել է թե՛ հին փիլիսոփաներին, թե՛ չեկեղեցու հայրերին, թե՛ միջնադարյան և թե՛ մանավանդ բուրժուական գիտնականներին: Ընդամեն պետության մասին յեղած բազմաթիվ տեսություններին՝ առաջադրված բուրժուական զանազան գիտնականների կողմից, դրանք բոլորն էլ՝ պետությունը համարում են մի ինչ-վոր անբաժանելի բան ընդհանուր հասարակական կյանքից, ինչ-վոր մի անհրաժեշտություն ամեն մի հասարակության համար:

ՄԱՐՔՍԸ, ԵՆԳԵԼՍԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարքսն ու Ենգելսը պարզեցին պետության դասակարգային էությունը դեռևս «Կոմունիստական մանիֆեստում», գրված 1848 թվի հեղափոխությունից քիչ առաջ, ու զարգացրին այդ ուսումնասիրությունը պետության մասին հետագա մի չարք աշխատությունների մեջ: Պրոլետարիատը,—ասում եյին միջազգային պրոլետարիատի մեծ ուսուցիչները,—հայրենիք չունի և պետք է կռվի պետության դեմ, ու առաջին հերթին «իր» պետության, քանի վոր ամեն մի պետություն (բացի պրոլետարականից, վորը պրոլետարիատի ձեռքին պետք է դասակարգերի ու պետության վոչնչացման գործիք դառնա) աշխատավոր մասսային ճնշելու գործիք է հանդիսանում: Վոչ մի տեղ, վոչ մի խոսք չեն ասում և չեյին կարող ասել Մարքսն ու Ենգելսն այն մասին, թե պրոլետարիատը և աշխատավոր մասսաները պետք է պաշտպանեն բուրժուական պետությունը: Նրանք ուսուցանում եյին, վոր պրոլետարիատը չի կարող գործիք դարձնել բուրժուական պետությունն իր շահերի համար, կռվի գործիք դարձնել աշխատանքի ազատման համար՝ վո՛չ իշխանությունը բուրժուազիայի ձեռքին գտնվելու, և վոչ էլ պրոլետարիատի հաղթության միջոցին, երբ կատարվի բուրժուազիայի ու կհաստատի պրոլետարիատի

դիկտատուրան: «Բանվոր դասակարգը,— գրում էին Մարքսն ու Ենգելսը 1872 թ. «Կոմունիստական մանիֆեստի» առաջաբանում,— չի կարող ուղղակի տիրանալ պատրաստի պետական մեքենայի ու գործի դնել այն իր սեփական նպատակների համար»: Պրոլետարիատն իր հաղթությունից հետո չպետք է «մի ձեռքից մյուսին տա բյուրոկրատական–ադամական մեքենան, ինչպես անում էին մինչև հիմա, այլ ջարդել այդ մեքենան»: Այսօր բոլոր հեղափոխականները կատարելագործում էին այդ մեքենան, փոխանակ ջարդելու, որովհետև նրանք չէին վոչնչացնում դասակարգերը, այլ մի չհադարծող դասակարգի տեղ (կալվածատերերի) դնում էին մի ուրիշը (որինակ՝ բուրժուազիային): Պրոլետարիատը ձգտում է վոչնչացնելու դասակարգերն ու չհադարծումը: Շահադործական տիրապետության ապարատն այս բանի համար անպետք է: Չնայած պետության խնդրի մասին մարքսիստական գրականության առանձնահատուկ պարզությանը, բոլոր գլխին սպորտունիստներն իրենց բուրժուական–ազգայնական հայացքները քողարկում էին մարքսիստական ֆրազեոլոգիայով: Միայն Լենինը մնաց հավատարիմ Մարքսի ու Ենգելսի հեղափոխական ուսմունքին՝ պետության մասին: Նա վոչ միայն հակահարված հասցրեց այս խնդրում մարքսիզմի բոլոր սպորտունիստական խեղաթյուրումներին և վերականգնեց հեղափոխական մարքսիզմն իր սկզբնական անարատության, այլև դարգացրեց այդ ուսմունքն իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների չրջանի գործադրության համար: Մարքսն ու Ենգելսը միայն հիմնավորեցին պրոլետարիատի կողմից բուրժուական պետության ապարատի լիակատար խորտակման անհրաժեշտությունը: Լենինի ծառայությունը վոչ թե միայն այն է, վոր վերականգնեց նա սպորտունիստների կողմից խեղաթյուրված Մարքսի ու Ենգելսի ուսմունքը պետության մասին ու չարունակեց գարգացնել այդ ուսմունքը, այլև այն, վոր ցույց տվավ, թե ա պրոլետարական պետության վո՛ր ձևով պետք է փոխարինել: Հետևապես լենինիզմը մարքսիզմի բարձր աստիճան է հանդիսանում հեղափոխական ուսմունքի մեջ պետության խնդրի մասին:

ԼԱՍՍԱԼՅԱՆ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Պետության խնդրի վերաբերմամբ սպորտունիստական հոսանքը նկատվել է դեռևս բանվորական չարժման վաղ չրջանում: Լասսալը պետությունը համարում էր, վորպես «անհատների միասնականության՝ միևնույն բարոյական ամբողջության մեջ» և հավատում, վոր դա կոչված է ազատության զարգացումը կատար ածելու, զարգացնելու մարդկային ցեղը և ուղղելու նրան դեպի ազատությունը: Նա և նրան հետևողները (լասսալականները) համատում էին, վոր բնականոն պարլամենտական ընարության չնորհիվ կարելի կլինի «դեմոկրատիկ» պետություն ստեղծել, վորը կնպատակի (պետական կարելի կ՚ասենք «դեմոկրատիկ» պետություն ստեղծել, վորը կնպատակի (պետական վարկով) արտադրական բանվորական միությունների, և վոր այս ճանապարհով կհասնեն կոլեկտիվիզմի: Լասսալականները Շվեյցերի դեմոկրատական 60–ական թվականներին հավանություն էին տալիս Բիսմարկի քաղաքականությանը՝ Գերմանիայի միացման խնդրում և անկեղծորեն արտահայտում էին իրենց որգան «Սոցիալ–դեմոկրատի» էջերում հոդուտ Բիսմարկի հետադիմական ծրագրերի: Այդ խիստ բողոք հարուցեց մարքսիստ–սոցիալիստների կողմից, վորոնք համրած էին Լիբկնեխտի (Վիլհելմ) և Բեբելի գլխավորության տակ Գերմանիայի միացմանը դեմոկրատիկ հիման վրա: Չորջը և կողմնակիցները մնացան եղկենախոհականների (մարքսիստների) հետ Գոթայի համագումարում, բայց նրանք մացրին Գոթայի ծրագրի մեջ իրենց հիմնական մտորությունները և կազմեցին գերմանական սոցիալ–դեմոկրատիայի աջ սպորտունիստական թևը: Բանվորական միություններին տրվելիք պետական վարկը մնին և Գոթայի ծրագրի մեջ մացրված լասսալական այն կետերից, վոր ամբողջ մարքսիզմը քննադատության: Այս կետում արդեն խեղաթյուրվում էր պետության իսկական բնույթը: Նորանոր էր համարվում, վոր վոչ–պրոլետարական պետությունը (հետևապես բուրժուականը) կարող է աջակցություն ցույց տալ պրոլետարիատին՝ սոցիալիզմ կառուցանելու գործում: Այսպիսով, գերմանական սոցիալ–դեմոկրատիան հենց սկզբից ընկավ համաձայնողական և հաշտվողական ոպորտունիստական հոսանքների մեջ: Լասսալականներն ու գերմանական սոցիալ–դեմոկրատիայի մյուս տատանվող տարրերը կպմեցին կուսակցության աջ թևը, վորը ճնշում էր գործ դնում կուսակցության վրա և ուղղում նրա ընթացքը հաշտվողական գծով: Ցերկրորդ Ինտերնացիոնալի կուսակցություններին ամենատհսկալի չարիքը — նրանց համբերատարությունը դեպի գաղափարական տատանումներն ու իդեոլոգիական թերությունները — սկսեց քայքայել 2–րդ Ինտերնացիոնալի ամենալավ ու ամենաուժեղ կուսակցություններից մեկին այն ժամանակ, յերբ վոչ վոք (նույնիսկ գերմանական սոցիալ–դեմոկրատիան) չէր կռահում նրա մեջ թաղնված քայքայիչ ուժերը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՑԼԱՆԴԱԿՈՒՄԸ՝ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՏԵՍԱԲԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Պետության խնդրի մասին սոցիալ–դեմոկրատական թերության ամենանշանավոր դոկումենտներից մեկը Երֆորդյան ծրագիրն է հանդիսանում, վոր ընդունվեց գերմանական սոցիալ–դեմոկրատիայի կողմից 1891 թվին և «որինակ գործած ամբողջ Ցերկրորդ Ինտերնացիոնալի համար» (Լենին): Այս ծրագիրն ազատվեց լասսալական մի չարք մտորություններից, բայց պետության, ամեն տեսակի պետության դասակարգային բնույթի մասին վորոշակի պարզությամբ չարտահայտվեց այդ ծրագիրը: Իսկ քաղաքական պահանջները, վոր ձևակերպվեցին «նվազագույն–ծրագրի» մեջ՝ Ենգելսի խիստ քննադատությանը յենթարկվեցին: Նա ծրագրի տենդենցն ոպորտունիստ անվանեց, «վորպեսզի կուսակցությունը Գերմանիայի ներկա որինական կարգը բավական համարի ծրագրի բոլոր պահանջների խաղաղ ճանապարհով իրականացման համար»: Գերմանական սոցիալ–դեմոկրատիան դեռ այն ժամանակ հույս ուներ խաղաղ աշխատանքի՝ կիսատարսլյուտ պետության չրջանակներում: Նա դեռ այն ժամանակ մոռացել կամ լուրթյան էր տվել Մարքսի ու Ենգելսի ուսմունքը պետության դասակարգային բնույթի մասին: Նա մոռացել էր այդ, չնայած մեծ ծերունու — Ենգելսի համառ հիչեցումներին: Լենինն իր «Պետություն և հեղափոխություն» գրքում կանգ է առնում հետևյալ բավական բնորոշ փաստի վրա: Ենգելսը գրում էր Բեբելին դեռևս 1875 թ. Գոթայի ծրագրի լուսնդի առթիվ՝ «ազատ պետության» մասին, վոր «ազատ ժողովրդական պետության մասին խոսելն անմտություն է: Քանի վոր «ազատ ժողովրդական պետության կարիք ունի, նա այդ կարիքն ազատության համար չունի, այլ իր հակառակորդներին ճնշելու համար: Իսկ յերբ հնարավոր է դառնում ազատության մասին խոսելը, այն ժամանակ պետությունը, վորպես այդպիսին, դադարում է գոյություն ունենալ»: Բեբելը պատասխանեց. «Մի անդամայն համաձայն եմ» (Ենգելսի նամակը նա հրապարակեց ստանալուց միայն 36 տարի հետո — 1911 թ.), բայց նա իր «Մեր նպատակները» գրքույկում, լույս տեսած 1886 թ. գրում է. «Պետությունը՝ պետք է դասակարգային տիրապետության վրա հիմնված պետությունից դառնա ժողովրդական պետություն»: Դասակարգային պետությանը հակադրվում է ժողովրդական (այսինքն՝ վոչ–դասակարգային) պետությունը: Ուրեմն պետությունը կարող է լինել նաև վոչ–դասակարգային: Վորքան հետու չի սա Մարքսի ու Ենգելսի այն հանգամանքից, վոր ամեն մի պետություն դասակարգային է: Զարմանալի չէ, ուրեմն, վոր հայտնի ոպորտունիստ Բերնշտեյնը, վորը հատատում է, թե «չարժողությունը՝ ամեն ինչ է, իսկ նպատակը՝ վոչինչ, ծագրում էր մարքսյան հանգամանքը պետության մասին և առաջարկում էր աշխատակցել բուրժուական պետության հետ: Ենգելսը, կասես թե նախազգաց այդ անհումը, յերբ գրում էր նա Երֆուրտի ծրագրի նախագծի առթիվ (վորը սարգ չէր արտահայտում պետության հետ աշխատակցելու կողմնակացության ոգին):

«Մյս խոչոր նկատառումների մոռացումն արվա բոլշևիկյան շահերի պատճառով, այս՝ բոլշևիկյան հաջողությունների հետևից ընկնելը և պայքարը նրանց համար, առանց հաշվի առնելու չարունակության հետևանքները, այս՝ ապագա չարժումների զոհաբերումը ներկայի համար, դուրս առաջանում է «աղնիվ» դրդապատճառներից, սակայն սա ոպորտունիզմ է, իսկ աղնիվ ոպորտունիզմը, պետք է ասենք, բոլոր մյուսներից վտանգավոր է»:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիան իր կուսակցական համագումարներում դատապարտում էր Բերնշտեյնի և մյուսների չափազանց անկեղծորեն արած հայտարարությունները, բայց նա վոչ թե միայն թողնում էր դրանց իր չարքերում, այլև ինքը գործնականում չեղվում էր դեպի պետության «նվաճումը խաղաղ ճանապարհով»: Ռեյխստագի ընտրությունների հաջողությունը չչմեղցնում են նրան, և մշակում է նա այնպիսի մի ռազրային ծրագիր, որը մի զիջում է մանր-բուրժուական հասկացողության և դյուղացիության ձգտումներին, բայց վորը կարող է իր կողմը քաշել դյուղացիության ճայնն ընտրությունների ժամանակ: Բուրժուազիայի դասակարգային պետության պաշտպանության խնդան (այն դեպքում, յերբ հարձակվում են նրա վրա) բավական արագ թափանցեց գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ուղեղը, նույնիսկ և նրա այն առաջնորդների ուղեղները, վորոնք «ձախ» եյին համարվում և դուրս եյին գալիս Բերնշտեյնի տիպի հայտնի ոպորտունիստների դեմ: Կաուցկին չեր ժխտում, վոր պետությունը դասակարգային տիրապետության որգան է, բայց նա ամեն կերպ լռության եր տալիս այն խնդիրը, թե ինչ պետք է անի պրոլետարիատն իր ձեռքն անցած պետական մեքենան:

Կաուցկին բոլորովին չհասկացավ այն տարբերությունը, վոր կա բուրժուական պարլամենտարիզմի, վորը միացնում է դեմոկրատիան (վոչ ժողովրդի համար) բուրժուազիայի (ժողովրդի դեմ) հետ և պրոլետարական դեմոկրատիզմի միջև, վորն իսկույն միջոցներ ձեռք կառնի, վորպեսզի բյուրոկրատիզմն արմատապես վոչնչացնի, և վորը կարող կլինի այդ միջոցները հասցնել մինչև վերջ, մինչև բյուրոկրատիզմի վոչնչացումը, մինչև ժողովրդի համար լիակատար դեմոկրատիա մտցնելը:

Մասամբ լռում, մասամբ ժխտում եյին պետության դասակարգային հահազործողական եյությունը Յերկրորդ Ինտերնացիոնալի մյուս կուսակցությունների առաջնորդները (Գեդը, Ժորեսը և ուրիշները — Ֆրանսիայում, Վանդերվելդեն — Բելգիայում, Ստաունինգն ու Բրանտինգը — Սկանդինավյան յերկրներում, Պլեխանովը — Ռուսաստանում և այլն):

Ավելի անկեղծ ոպորտունիստները մտնում եյին բուրժուական կառավարության կազմի մեջ (Միլլերան և ուրիշները): Այստեղից մի քայլ է մնում տեսականորեն հրաժարվել մարքսիստական այն ըմբռնողությունից, վոր ընդունում է պետությունը, վորպես դասակարգային տիրապետության կազմակերպություն: Մաքս Ադլերը պետության մեջ տեսնում է գիտակցության «հասարակական ձև, վորտեղ հասարակայնանում և մարդկանց հոգեկան կյանքը: Մի ուրիշ ոպորտունիստ, վոր իրեն մարքսիստ է անվանում, Կունովը պետությունը համարում է «մարդկանց միացյալ կարգերը, միասին գործելու համար» և այլն:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՊԵՍ ԳՈՐԾԻՔ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՇՏԱՑՄԱՆ

Ոպորտունիստները չեն կարող չընդունել այն փաստը, վոր պետությունը գոյություն ունի այնտեղ, վորտեղ կան դասակարգեր: Այս փաստն արդեն չափազանց ակնբախ է: Սրա համար էլ նրանք աշխատում են այս փաստը մեկնել միանգամայն հակառակ Մարքսի ու Ենգելսի ըմբռնողությանը: Սա չի խանգարում նրանց անվանել իրենց մարքսիստներ, հենվել նույնիսկ Մարքսի վրա ու քողարկվել նրանով: Այս առթիվ Լենինն ասում է. «այժմ Մարքսի ուսմունքի հետ պատահում այն, ինչ պատահել է պատմության ընթացքում շատ հեղափոխական մտածողների ու ճնշված դասակարգերի առաջնորդների ուսմունքների հետ, ազատության համար մղած իրենց պայքարի ընթացքում»: Նրանց մահից հետո փորձեր են արվում դարձնել նրանց անվնաս սրբապատկերներ, այսպես ասած, սրբերի կարգը դասել, վորոշ փառք հատկացնել նրանց անվանը՝ ճնշված դասակարգերին մխիթարելու ու հիմարացնելու համար, ամբացնելով հեղափոխական ուսմունքի բովանդակության, բթացնելով նրան, անմեղ դարձնելով այն: Մարքսիզմի նման «մշակման» մեջ համաձայն են այժմ բուրժուազիան ու բանվորական չարժման մեջ գտնվող ոպորտունիստները: Նրանք պատկերացնում են այնպես, վոր պետությունը դատում է դասակարգային հաշտեցման որգան: «Ըստ Մարքսի,— ասում է Լենինը,— պետությունը դասակարգային տիրապետության որգանն է, մի դասակարգի մյուսին ճնշելու որգանը, «կարգ» հաստատողը, վորն օրինականության և տալիս ու ամրացնում ճնշումը, մեղմացնելով դասակարգերի ընդհարումը: Մանր-բուրժուական քաղաքագետների կարծիքով, կարգը հենց դասակարգերի հաշտեցումն է, և վոչ թե մի դասակարգի ճնշումը մյուսի կողմից. մեղմել ընդհարումները՝ նշանակում է հաշտեցնել, և վոչ թե խլել ճնշված դասակարգերից վորոշ միջոցները, ճնշողներին տապալելու համար տարվող կռվի ձևերը»: Առանձնապես պաշտպանում եյին այդ ըմբռնումն ոպորտունիստները — մենշևիկներն ու եսերները — Փետրվարյան հեղափոխությունից հետո, 1917 թ.: Նրանք ամեն կերպ աշխատում եյին բուրժուական-դեմոկրատական պետությունը, վորն ուղում եյին ստեղծել գոյություն ունեցողի փլատակների վրա, դարձնել դասակարգերի հաշտեցման որգան, «հեղափոխական դեմոկրատիայի» (բանվորների ու դյուղացիների) և ցենզավոր տարրերի (խոշոր հողատերերի) իրար հետ մերձեցման որգան: Նրանց կարծիքով բանվորների ու գինվորների պատգամավորների խորհուրդները, պետք ձգտով բանվորների ու գինվորների պատգամավորների խորհուրդները, պետք է աշխատակցեին բուրժուական պետությանը և հետևապես ամրապնդեին այն: Կազմկոմ կառավարությունը պետք է դեմոկրատիայի ներկայացուցիչների մասնակցությամբ բարձրացներ աշխատավոր մասսայի աչքում բուրժուական պետության հեղինակությունը:

ՀԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԽՈՐՏԱԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՒՄՆ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Ցեվ այս բոլորը հաճախ քողարկվում եր մարքսիզմով ու հեղափոխական ֆրազներով: Ժխտելով, կամ, ամենալավ դեպքում, մթագնելով պետության դասակարգային բնույթը և համարելով այն դասակարգերի հաշտեցման որգան, ոպորտունիստները չկարողացան ճիշտ հեղափոխական-մարքսիստական դիծ վերցնել նաև պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու համար:

Պլեխանովը (այն չրջանում, յերբ նա վերջնականապես թաղվել եր ոպորտունիզմի ճահճի մեջ, 1917 թ.) նույնպես պրոլետարիատի դիկտատուրան պատկերացնում եր, վորպես պարլամենտարիզմի նման մի բան:

Նույնն եյին անում և մյուսները:

ՄԱՐՔՍԻ ԴԻՐՔԸ ՀԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄ

Ցերկրորդ Ինտերնացիոնալի տեսական-ոպորտունիստները, նույնիսկ չարտահայտվեցին հին բուրժուական մեքենայի խորտակման անհրաժեշտության մասին: Իսկապես, ինչպես խորտակել այն մեքենան, վոր գործիքն եր հանդիսանում ոպորտունիստական սրտերին այնքան սիրելի դասակարգերի հաշտեցման համար: Միանգամայն անձեռնմխելի թողնելով Գերմանիայի բոլոր սոցիալ-դեմոկրատական կառավարությունները պետական-բյուրոկրատական մեքենան: Անձեռնմխելի թողնելով այդ մեքենան «ձախ բլոկը», «տական մեքենան: Անձեռնմխելի թողնելով այդ մեքենան «ձախ բլոկը», «սոցիալիստների» գլխավորմամբ, յերբ նա Ֆրանսիայում իշխանության գլուխն անցավ: Չի խորտակվում այդ մեքենան նաև այսպես կոչված «բանվորական կառավարության» կողմից Անգլիայում և այլն: Ընդունելով բուրժուազիայի

ՀԱՐՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՂԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՊԱՏԱՐԱԳԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆ

Ընկեր ուսուցիչ, ես ուզում եմ քեզ հարցնել մի քանի բան։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է ուսումնասիրել պատմությունը։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է ուսումնասիրել պատմությունը, որպեսզի ես կարողանամ ինքնուրույն աշխատել։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է ուսումնասիրել պատմությունը, որպեսզի ես կարողանամ ինքնուրույն աշխատել։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է ուսումնասիրել պատմությունը, որպեսզի ես կարողանամ ինքնուրույն աշխատել։

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Ընկեր ուսուցիչ, ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։

§ 23. ՊԱՏՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Ընկեր ուսուցիչ, ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Ընկեր ուսուցիչ, ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։ Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես պետք է հավաքել պատմական նյութերը։

դա ին հասարակության, վորի դլուխն եյին անցել նրանք: Ռեալ հասարակությունը պարունակում է թե՛ հին ձևերի մնացորդները և թե՛ նորերի սաղմերը: Ռեալ հասարակությունը յուրատեսակ է ու բազմատեսակ: Այս է նրա էությունը: Ռեալ հասարակությունը յուրատեսակ և ու բազմատեսակ: Այս է պատճառը, վոր թույլ է տալիս պետական ձևերի բազմապիսությունն: Վերցնենք և՛ դեսպոտիզմը (բնական տնտեսության շրջանում), և՛ քաղաքային հանրապետությունները (փոխանակության զարգացման շրջանում): Նույնն է և բուրժուազիան: Նրա շահերին համապատասխանում եյին կառավարության տարբեր ձևերը — և՛ աբսոլյուտիզմը (հոդուտ առևտրական կապիտալի մինչև պարերում), և՛ սահմանադրական միապետությունը (Անգլիա), և՛ կիսապարլամենտարիզմը (Գերմանիայի մինչև պատերազմը), և՛ բուրժուական հանրապետություն (Ֆրանսիա) և այլն:

ՊԱՐԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ

Բուրժուական պետությունը կապիտալիստական յերկրների մեծ մասում դլխավորապես ունի պարլամենտական դեմոկրատիայի ձև: Սա կառավարական այնպիսի ձև է, վորի օրենսդրական իշխանությունը պատկանում է պարլամենտին, ժողովրդական ներկայացուցիչների ժողովին, իսկ կատարողական իշխանությունը, վոր պատասխանատու է պարլամենտի առաջ, պատկանում է այն քաղաքական կուսակցության կոմմանդիտներից կամ գլխավոր կոլեգիայից, վորը մեծամասնություն է կազմում պարլամենտում: Գերագույն իշխանությունը՝ սահմանադրական միապետության մեջ՝ թագավորին և, հանրապետությունների մեջ՝ նախագահը:

Ավելի հետևողական պարլամենտական դեմոկրատիա յե հանդիսանում դեմոկրատական հանրապետությունը, այսինքն՝ այնպիսի հանրապետությունը, վոր ունի ընդհանուր ընտրողական օրենքի հիման վրա ընտրված պարլամենտ: Պարլամենտարիզմն ակիզը և առնում այն բոլոր յերկրներում, ուր իշխանության գլուխ անցնում եր արդյունաբերական բուրժուազիան, նախ՝ Անգլիայում, հետո Յեվրոպայում ու Ամերիկայում: Ամենարարձր Ծաղկման վիճակի հասավ նա 60-ական թվականներին (արդյունաբերական կապիտալիզմի զարգացման դագաթնակետը): Ֆինանսական կապիտալի զարգացման շրջանում պարլամենտարիզմն աստիճանաբար դնալ անկումն է, թեքվում, և իմպերիալիստական պատերազմների ու պրոլետարական հեղափոխությունների շրջանում բոլորովին քայքայման և հասնում:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԻ ՓԱՍՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական քաղաքագետները (նրանց հետ նաև սոցիալ-համաձայնողականները) դովաբանում են. 1) «իշխանության բաժանումը» — որենսդրականների, կատարողականի և դատականի («իշխանությունների համերաշխության»), 2) այն, վոր իբր թե պարլամենտն ամբողջ ազդության կամքի արտահայտողն է: Մինչդեռ իրապես յերկրի կառավարողը կատարողական իշխանությունն է՝ կազմված հմուտ քաղաքագետներից (մեծ մասամբ հենց մլեւնուշն, կամ թե, հերթով հաղթանակ տանող այս կամ այն կուսակցության մարդկանցից) և վոր իր տրամադրության տակն է պետական ապարատը (վորը չի դեկավարվում վոչ պարլամենտի և վոչ ժողովրդի կողմից): Պառլամենտական յերկրներում կազմվում են քաղաքագետների ոլիգարխիաներ, վոր ամբապետող կուսակցություններին պատկանող անձնավորություններից, վորոնք և դրավում են մինիստրական պոստները: Կատարողական իշխանությունը ճնշում դործ դնելու բոլոր միջոցներն ունի թե՛ ապարատի և թե՛ սրա միջոցով՝ ընտրությունների վրա: Պարլամենտները՝ Ամերիկայում, Ֆրանսիայում և նույնիսկ Անգլիայում ավելի չուտ դառնում են պարադի հիմնարկություններ, քան թե պետության բախտը անորինողներ:

Ավելի ռեալ արտահայտություն չե «ազդի կամքը»: Ամենից առաջ ազդի կամ ասելը՝ Ֆիկցիա յե*): Ի՞նչ միասնական կամքի մասին կարելի յե խոսել, յերբ այդ ամբողջության մեջ կան մեկ-մեկու թշնամի դասակարդեր, վորոնք պարլամենտի պատերի հետևում մահացու հարվածներ են տալիս մեկ-մեկու: Ի՞նչ ընդհանուր կամք կարող են ունենալ չահագործվողներն ու չահագործողները: Նույնիսկ առանձին դասակարդերն ու խմբերը չեն կարողանում իրենց իսկական կամքն արտահայտել ընտրությունների ժամանակ: Մարդկանց ահագին բազմություն փաստորեն զրկված է ընտրական իրավունքից: Ֆրանսական «դեմոկրատական հանրապետության» մեջ, ՀԱՄՆ «դեմոկրատիայում», չվեյցարական հանրապետության մեջ ընտրական իրավունքը պատկանում է «ամբողջ» բնակչությանը. բայց «ամբողջ» բնակչությունից դուրս են նետվում կանայք, բանվորության նշանավոր մասը, բանակի ու նավատորմի զինվորները և այլն: «Ամբողջ բնակչությունը» — բոլորը չե, այլ նրա միայն մի մասը, այն ել արտոնյալ մասը: Բոլոր բուրժուական սահմանադրություններն ընտրական իրավունքից զրկում են կայուն բնակատեղի չունեցողներին, այսինքն՝ վորոչ տեղ վորոչ ժամանակամիջոց չապրողներին: Այս սահմանափակումը բաժին է ընկնում գլխավորապես բանվորությանը, վորը դործ վորոնելու նպատակով թափառում է մի տեղից մյուսը:

Բայց ընտրողների և այն մասը, վոր իրավունք ունի և մուտենում է քվեարկություններին (սովորաբար ընտրողների աչքի ընկնող քանակը չի մասնակցում ընտրություններին), մեծ մասամբ պարզ չեն հասկանում հակասական հրավերներն ու կուսակցական ծրագրերը և այլն: Մասսան չի մասնակցում պետական ամենօրյա կառուցմանը, նա միայն քվեարկում է մի քանի տարին մի անդամ, և պարմանալի չե, վոր չի հասկանում նա քաղաքականությունը: Յեթե այս բոլորին ավելացնենք, վոր բուրժուազիան ահագին միջոցներ ունի թե՛ կաշառելու և թե՛ վախեցնելու ընտրողներին (պաշտոնից զրկելու սպառնալիքով և այլն), վոր նրա տրամադրության տակ է ընտրական ապարատը, վոր նրա ձեռքին է մամուլը, դպրոցը, յեկեղեցին և այլ հոդեկան ներազդման բոլոր միջոցները, այս բոլորից պարզ կլինի, վոր «ազդի կամքը» հեշտությամբ դառնում է բուրժուազիայի կամք:

ԼԵՆԻՆԻ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՊԱՐԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻՆ

Կոմինտերնի մեջ մտնող կուսակցությունները բուրժուական պարլամենտներում մասնակցելուց չեն հրաժարվում: Լենինն ամենավճռական ձևով դեմ է արտահայտում անարխո-սինդիկալիստներին ու «ձախ կոմունիստների» հակապարլամենտական տակտիկային: Այդ տակտիկան կառանձնացնել կոմունիստներին մասսայից և կդրկել նրանց տրիբունայից, վորտեղից նրանք կարող են մերկացնել բուրժուական պետության մեքենայությունները: Սակայն կոմունիստները յերբեք պարլամենտն ինքնանպատակ չեն համարում և չեն ոպատում նրանից աշխատավոր մասսայի համար վոչ մի դրական նվաճում: Նրանք պարլամենտը համարում են մասսաներին ճնշելու դործիք, վորովհետև պարլամենտը դասակարդային հասարակության պետական կազմակերպություն է և հանդիսանում, և այդ հասարակությունը կառավարում է բուրժուազիան:

Իսկ ոպորտունիստները պարլամենտը ինքնանպատակ են համարում, Դեռ ևս Լասալը և նրա հետևորդները (իսկ մինչ նա— Լուի Բլանը) մեծ հույսեր եյին դնում ընդհանուր ընտրողական իրավունքի վրա: II Ինտերնացիոնալը սոցիալ-համաձայնողականները չարունակ պրոլետարիատի դասակարդային կռիվը փոխադրում են պարլամենտական կռվի ու պարլամենտական մեքենայությունների: Սոցիալ-համաձայնողականների խոշոր ազդեցությամբ դառնում է բուրժուազիայի կամք:

*) Ֆիկցիա—նշանակում է կեղծիք, սուտ պատկերացում:

թյունը Ցեվրոպայի պարլամենտական կյանքի վրա և նրանց մասնակցությունը մի շարք կառավարությունների մեջ չափից նույնիսկ ամենաչնչին դրական հետևանքներ ալխատավոր մասսայի համար: Մասսաների հավատը դեպի պարլամենտ ու սոցիալ-համաձայնողականների առաջնորդները քանի գնում, քայքայվում է:

§ 59. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ ՑԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ

Բուրժուազիան մինչև կառավարել է մարակի ու «քաղցրեղենի» ոգնությամբ: Այն դարաշրջաններում, երբ նա իրեն հաստատ էր զգում՝ կառավարում էր «ձեռնոցներով», խաբում էր դեմոկրատական «քաղցրեղենի» ոգնությամբ: Այն չրջաններում, երբ նրա տիրապետությունն սկսել է տատանվել՝ նա մինչև անդավաճան կերպով դիմել է բացարձակ ճնշման, մարակին, բացարձակ դիկտատուրայի, հրաժարվելով դեմոկրատական խաղալիքներից:

Պարլամենտարիզմը սկսեց այլասերվել դեռևս մինչև պատերազմը: Իսկ համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո պարլամենտարիզմի ճգնաժամը քանի գնաց, խորացավ: Բուրժուազիայի համար դեմոկրատական պարլամենտն արդեն դադարում է մասսաների ճնշման ու չշմեկնող դործիք լինելուց և բարձրացող հեղափոխությունների կանխելուց: Կոմունիստական հեղափոխության դեմ կռվելու և բանվորական չարժումներին վերջ տալու համար, երբ այդ չարժումներն այլևս չէլին զսպվում համաձայնողականների աղդեցությամբ՝ բուրժուազիան սկսում է պարլամենտարիզմից դուրս ուրիչ միջոցներ փնտռել: Բուրժուական հասարակության վերկության Ֆունկցիան իր վրա չե առնում Ֆաշիզմը:

ՖԱՇԻԶՄԻ ԱՌԱՋԱՆԱԼՆ ՈՒ ՁԵՎԱԿԵՐՊՎԵԼԸ

Ֆաշիստական եր կուչվում սկզբում պատերազմից հետո Իտալիայում առաջացած քաղաքական այն չարժումը, որ ղեկավարում եր իտալական սոցիալիզմի ռևոլյացիոն Մուսսոլինին: Սկզբում այդ չարժման մեջ միացած եյին ծայրահեղ չավինիզմն ու դեմագոգիան, որոնք ուղղված եր հարուստների, յեկեղեցու և բազավորի դեմ: Սակայն չուտով Ֆաշիստները հրաժարվեցին նույնիսկ խոսքով պայքարելուց կապիտալի, մոնարխիայի և յեկեղեցու դեմ: Ֆաշիզմը քաղաքական կռվի գործիք դարձավ ընդդեմ բանվոր դասակարգի և դյուղացիության: Ֆաշիստները բուրժուական պետության հովանավորության և կապիտալիստների ուժեղ աջակցության չնորհիվ ձեռք բերին ռազմական հզոր կազմակերպություն և զարձան, կարծես թե, պետության պետության մեջ:

1922 թվին նրանք հեղաշրջման միջոցով իրանց ձեռքը ձգեցին իշխանությունը և սկսեցին կառավարել յերկիրն արյունոտ տերրորի ոգնությամբ՝ անխնա վոչնչացնող կռիվ հայտարարելով բանվորական ու դյուղացիական կազմակերպություններին: Պետության «դեմոկրատական ձևերը տեղի տվին Ֆաշիստականին—բացարձակ բռնության, հոգուտ արդյունաբերական և Ֆինանսական կապիտալների: Ֆաշիստները կարողացան ստեղծել համեմատաբար լայն կազմակերպություն խոշոր բուրժուական տարրերի ղեկավորության, կազմված մանր բուրժուական և ապազասակարգայնացած տարրերից և մասամբ հետամնաց բանվորներից:

Ֆաշիզմն իր համար յերկրպագուներ և աջակցողներ զտավ համարյա բոլոր խոշոր կապիտալիստական յերկրներում: Ֆաշիզմը զարձավ միջազգային յերևույթ: Նրա մեթոդներն են— բռնություն իր քաղաքական հակառակորդների դեմ, սպանություններ, բնակարանների ու չենքերի ավերում (պրոֆխուրթյունների, բանվորական կոոպերատիվների, աշխատանքի բրաանների): Ֆաշիզմի ուսմունքն է— դեմոկրատիզմի, լիբերալիզմի և հավասարության լիակատար ժխտումը: Ինքը՝ Ֆաշիստական կազմակերպությունը կառուցված է վոչ թե ընտրողական, այլ վերից ցած նշանակելու հիման վրա: Իտալիայում Ֆաշիստական կուսակցությունն ու նրա միլիցիան բուրժուական դիկտատուրայի հիմքն են կազմում:

ՖԱՇԻԶՄԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՈՎԱՆ

Ֆաշիզմի սոցիալական արմատները թաղված են խոշոր բուրժուազիայի շահերի մեջ, այն բուրժուազիայի, վոր կռվում է իր տիրապետության համար իմպերիալիստական պատերազմների և պրոլետարական հեղափոխությունների ու պղտատմրությունների չիկացած մթնոլորտում: Դրա համար ել Ֆաշիզմի գլուխն ամենուրեք խոշոր բուրժուազիան է կազմում: Սակայն Ֆաշիզմն իր համար անդադար հող է գտնում նաև մանր բուրժուազիայի այն խավերում, վորոնք կապիտալիզմի զարգացման ընթացքով վոչնչացման են դատապարտված և վորոնք հիասթափված են դեմոկրատիայի և պարլամենտարիզմի վրկարար դերից: Ֆաշիզմը բուրժուազիայի դասակարգային կամքի կատարողներ է գտնում և՛ սոցիալիստական տականքներում՝ այն է՝ ապազասակարգայնացած տարրերի և պրոլետարիատի հետամնաց չերտերի մեջ, վորոնք գառնորեն հիասթափված են հեղափոխությունից, իրենց նախկին առաջնորդներից, դեմոկրատիայից և այլն: Ֆաշիստական կուսակցությունները, հետևարար խոշոր բուրժուազիայի կուսակցություններն են հանդիսանում, վորոնք հենվում են մանր բուրժուազիայի ապազասակարգայնացած և հետամնաց տարրերի և մասամբ պրոլետարիատի վրա:

ՖԱՇԻԶՄԸ ՑԵՎ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՀԱՄԱՐՅԱ ԲՈԼՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Բուրժուազիայի բացարձակ Ֆաշիստական դիկտատուրան կամ Ֆաշիստական մեթոդները՝ միացած սոցիալ-դեմոկրատիայի կոալիցիոն մեթոդի հետ՝ մենք ներկայումս հանդիպում ենք բոլոր կապիտալիստական յերկրներում: Բացարձակ Ֆաշիստական դիկտատուրա մենք տեսնում ենք Հունգարիայում, Բուլղարիայում, Լեհաստանում, Լիտվայում թեև դա այստեղ հենվում և վոչ այնքան Ֆաշիստական կուսակցության և միլիցիայի վրա (ինչպես Իտալիայում), վորքան՝ զորքի և վոստիկանության վրա: Փոքրիկ կապիտալների սիստեմը, անդրկուլիսյան ոլիգարխիական խմբակներ կազմելը, ժողովրդական ներկայացուցչության դերի կեղծումը կամ նրան արհամարհելն ու նույնիսկ հայհոյելը,*) դեմոկրատական ազատությունների կրճատումը կամ միանդամայն վոչնչացումը— այս բոլորը ամենատարածված յերևույթ է Յեվրոպայում և Ամերիկայում: Բուրժուազիան չարունակ պարլամենտական սիստեմից անցնում է այս Ֆաշիստական մեթոդներին, վորոնք նրան անկախ են զարձնում վոչ միայն հուսալի կուսակցական կոմբինացիաներից: Սկսել կլիներ կարծել, թե բուրժուազիայի բացարձակ դիկտատուրան հնարավոր է միայն Ֆաշիստական ձևով, և այդպիսով, մինչև վոր Ֆաշիստները պետական հեղաշրջում չատաչացնեն, մինչև վոր իշխանությունն իրենց ձեռքը չառնեն, բուրժուազիայի բացարձակ դիկտատուրա դոյություն ունենալ չի կարող: Սրա յայտուն որինակը Գերմանիան է: Մի շարք նկատառումներով մինչև վերջին ժամանակներս գերմանական բուրժուազիային ձեռնտու չէր իշխանությունը Ֆաշիստների ձեռքը տալը: Այնուամենայնիվ բուրժուազիան իր բացարձակ Ֆաշիստական դիկտատուրան հիմնում է, իրականացնելով «դեմոկրատական» կառավարության արատակարգ դեկրետների միջոցով:

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոմինտերնի ծրագիրը Ֆաշիստական մեթոդն այսպես է բնորոշում. «Սա անմիջական դիկտատուրայի մեթոդն է, իդեալոգիապես քողարկված «համազգային իդեայով» և «սլրոֆեսիաներին» ներկայացուցչությամբ (իսկ յերբեմն իրապետող դասակարգի խայտաբղետ խմբակների), մի մեթոդ և յերբահասուկ սոցիալիստական դեմագոգիայի միջոցով մանր բուրժուական

*) Հիշենք թեկուզ այն, վոր մարշալ Պիլսուդսկին լեհական սեյմն անվանեց պռոֆեսիոնելների ժողով:

ինտելիգենտական և այլ մասսաների դժգոհությունն ոգտագործելու (անոթի-ութեմխիզմը, մանակի յելույթները վաչխատուական կապիտալիզմի դեմ, պարլամենտական դատարկախոսությունների դեմ վրդովվելը, Կորրուպցիան—մեծաձույլ և վճարովի ֆաշխատական խմբեր, պետական ապարատի և չինովնիկության հերարխիա ստեղծելու ձևով): Սրա հետ միասին ֆաշիզմը ձգտում է սոդոսկել բանվորական միջավայրը, դրավելով ավելի հետամնաց բանվորներին, ոգտագործելով նրանց դժգոհությունը, սոցիալ-դեմոկրատների պասսիվությունը և այլն: Ֆաշիզմի գլխավոր նպատակն է ջարդել հեղափոխական բանվորության ավանգարդը, այսինքն պրոլետարիատի կոմունիստական չերտերը և նրանց կադրային կազմը: Սոցիալական դեմագոգիայի կոչերով և ակտիվ սպիտակ տերրորի կոմբինացիան՝ միացած ծայրահեղ իմպերիալիստական ագրեսիվ քայլերին արտաքին քաղաքականության բնագավառում՝ ֆաշիզմի բնորոշ գծերն են հանդիսանում: Ոգտագործելով բուրժուազիայի համար առանձնապես կրիտիկական չրջանները, հակակապիտալիստական Ֆրազեոլոգիան՝ ֆաշիզմն իր ձեռքում ամրացնելով պետական իշխանության գեկը, ավելի ու ավելի յե իրեն հայտնաբերում, վորպես խոշոր կապիտալի տերրորիստական դիկտատուրա, իր ճամբին կոլցնելով հակակապիտալիստական խաղալիքները»:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՁՆԵԼԸ

Բուրժուազիան ամբողջովին չի հրաժարվում «դեմոկրատիայից» և պարլամենտարիզմից: Ժամանակ առ ժամանակ նրան ձեռնտու յե և այդ մեթոդներից ոգտվելը: Աշխատավոր մասսաների մեջ նրա ամենաազդեցիկ ապենտները սոցիալ-դեմոկրատիան և հանդիսանում: Բուրժուազիան ոգտագործում է սոցիալ-դեմոկրատիային, կոալիցիա յե կազմում նրա հետ, սոցիալիստական-սոցիալ-դեմոկրատական կաբինետների մեջ է մտցնում, թույլ է տալիս «բանվորական» կառավարության կազմել և այլն: Սակայն և սոցիալ-դեմոկրատիան և բուրժուական դեմոկրատիայի ձևերը թույլ են տրվում այն չափով, ինչ չափով նրանք կատարում են բուրժուազիայի կամքը:

Շարունակ «ինքը սոցիալ-դեմոկրատիան կապիտալիզմի համար ավելի կրիտիկական մոմենտներին հաճախ ֆաշիստական դեր է կատարում» (Կոմինտերնի ծրագիրը): Բավական է հիշել 1929 թ. մայիսին բանվորների ցնդաեռների ծրագիրը: Բավական է հիշել, որ կատաբելին սոցիալ-դեմոկրատները սոցիալ-հաշտարումը և այն դերը, որ կատարեցին սոցիալ-դեմոկրատները Յերզեբելի գլխավորությամբ այդ նողկալի գործում: Բուրժուական դեմոկրատիան սոց-դեմոկրատիայի գուդինով ներկված չատ հեչտությամբ անցնում է ֆաշիզմին ու նրա մեթոդներին: Բուրժուական պետությունը փոխվում է Ֆաշիստականի, բայց բուրժուազիան վոչ միշտ դեմոկրատիային պահպանում է հայտարարում և դահընկեց, այլ ոգտվում է «խաղը մոթոդով» հեղափոխության հաջաիոդական ընթացքը դանդաղեցնելու համար:

ՀԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉՈՐՊԵՍ ԱՐԳԵԼԱԿ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՑԵՎ ՆՐԱ ԽՈՐՏԱԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչքոր մենք ասացինք վերն, ապացուցում է, վոր բուրժուական պետությունը դարձել է հետադիմական և արտադրողական ուժերի զարգացմանն արգելոզ: Նրա իմպերիալիստական քաղաքականությունը տանում է դեպի անխուսափելի պատերազմներ, դեպի ապատպինման ուժեղացում, վոր հզոր կայական միջոցներ է կլանում և ապարդյուն կերպով բանվորական ուժ է վատնում:

Կապիտալիստական մոնոպոլիաների ախրապետությունը, վոր բարձրացնում է չուկայի գները և չի դրդում դեպի մրցում՝ տեխնիկայի մակարդակը բարձրացնելու համար, տանում է դեպի կապիտալիզմի նեխումը, արտադրության կանգ առումը և պիտավորյալ կրճատումը:

Բուրժուական պետությունը գործում է հակառակ տնտեսական զարգացմանը, և նա պետք է վոչնչանա: Պետական իշխանությունն, ըստ Ենգելսի,

կարող է ոգտել կամ «արհնաչափ տնտեսական զարգացման վոդուն ու ուղղությանը համաձայն— այս դեպքում ընթացքն արագանում է և պետությունն ամրանում է, կամ թե պետությունը գործում է հակառակ տնտեսական զարգացմանը— այդ դեպքում նա վաղ թե ուշ անխուսափելիորեն պետք է վոչնչանա»:

Այս պատմական խնդիրը՝ կապիտալիզմի և բուրժուական պետության խորտակումը՝ կլուծի համաշխարհային պրոլետարիատը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ VIII ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

Մարքս, Նկատողություններ գերմանական բանվորական կուսակցության ծրագրի վերաբերմամբ («Գոթթայի ծրագրի քննադատությունը»), 1923

Մարքս, Քաղաքացիական կռիվը Ֆրանսիայում, Մ.—Լ. 1930.

Ենգելս, Անտի-Դյուրինգ, Մ.—Լ. 1930.

Ենգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը:

Լենին, Պետություն և հեղափոխություն, հ. XIV, մ. 2, ցանկալի յե ծանոթանալ ամբողջ գործին. պարտադիր են I և IV գլուխները:

Լենին, Ժողովուրդներին ազատության ու հավասարության յոզուզներով խաբելու մասին, հ. XVI, յեր. 202–209.

Լենին, Դիկտատուրայի խնդրի պատմության մասին Հ. XVII յեր. 349–367.

Լենին, Թեղիսները՝ բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին, հ. XVI, յեր. 33–35.

Ստուչկա, Ուսմունք պետության մասին գլ. I, յեր. 9–12, Պետհրատ, 1926.

Լենին, Պրոլետարական հեղափոխություն և renegat Կաուցկին, գլ. «Ինչպես Կաուցկին Մարքսին գարձրեց հասարակ լիբերալ». հ. XV, յեր. 415–424. գլ. «Սոցիալական կոնստիտուցիան», յեր. 449–456.

Լենին, Հիմնադիր ժողովի ընտրություները և պրոլետարիատի դիկտատուրան, հ. XVI, յեր. 447–450.

Կիրպոտին, Կուռվը պետության մասին, «Մարքսիզմի դրոշի տակ» № 12, 1924 թ. յեր. 174–181.

Ստալին, Լենինիզմի խնդիրները Մ.— 1929.

Ստալին, Աչ թևքման մասին, Մ.—Լ. 1930.

Ստալին, Բանվորագյուղացիական կառավարության մասին:

ԳԼՈՒԽ IX

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ
(ումառևճ հեղափոխության մասին)

§ 60. ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՑԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՑԵՂԱԾ ԿՈՆՖԼԻԿՏԸ ՎՈՐՊԵՍ ԱՄԵՆ ՄԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

Հասարակության զարգացման մեջ հասարակական վերջ ֆորմացիաներ կործանվում են և նրանց փոխարինում էն այլ ֆորմացիաներ: Այդ զարգացումը հասարակական ձևերի փոխարինումն է:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՑԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

*Ինչո՞ւ և ի՞նչպես է կատարվում մի ձևի փոխարինումը մյուսով, հասարակական մի կառուցվածքի փոխարինումը մի ուրիշով: Այս հարցին Մարքսը պատասխանում է իր «Քաղաքատնտեսության քննադատության» առաջաբանում, այսպես. «Հասարակության նյութական արտադրողական ուժերն իրենց զարգացման վերջ աստիճաններում հակասության մեջ են ընկնում գոյության ունեցող արտադրական հարաբերությունների, կամ, ինչպես իրավաբանորեն ասում են, դուրքային հարաբերությունների հետ, որոնց ներսում նրանք մինչև այժմ գործում էին: Արտադրողական ուժերի զարգացման ձևերից այդ հարաբերությունները դառնում են նրանց կապանքները: Այդ ժամանակ սկսվում է սոցիալական հեղափոխության դարաշրջանը: Տնտեսական հիմքի փոփոխումով ավելի կամ պակաս արագությամբ ձևափոխվում է նաև նրա ամբողջ հսկայական վերնաշենքը»: Այստեղից պարզ է, որ հասարակական ձևերի փոխարինումն առաջանում է հակասություններով, որ ծագում են վերջ մոմենտներում, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև: Արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի դումարը կազմում է բուլիսը. նշանակում է. խոսքը վերաբերում է բուլիսի ներսում եղած հակասություններին: Իսկ երբ բուլիսը փոխվում է, այն ժամանակ, ինչպես մենք դիտենք, փոխվում է, նաև վերնաշենքը: Չպետք է կարծել, որ բուլիսի ամեն մի փոփոխմանը անմիջապես հետևում է վերնաշենքի փոփոխումը կամ արտադրողական ուժերի զարգացման մեջ եղած յուրաքանչյուր փոփոխության անհապաղ պետք է առաջացնի արտադրական հարաբերությունների պայթում: Վորպեսզի մի ձևից մյուս ձևը կործանում կատարվի, անհրաժեշտ է հակասությունների երկարատև աճում և կուտակում:

§ 61. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱԽՈՐԴՈՂ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԲՈԼՈՐՈՂ ԹՌԻՉՔՆ Է

Հասարակական մի ձևից, դեպի մյուսը խիստ անցում կատարվում է, ինչպես մենք դիտենք, փոփոխությունների երկարատև աճման հետևանքով, վորոշ եվոլյուցիայի և զարգացման վորոշ ընթացքի հետևանքով:

ԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՑԵՎ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Զարգացման մարքսիստական ըմբռնողությունը վոչ մի դեպքում չպետք է չհոթել բուրժուական վուլգար «զարգացման տեսության» հետ, որ ընդունում է, թե վոչ հասարակությունը, վոչ բնությունը թռիչքներ չեն անում: Նախկին լեգալ մարքսիստ Ստրուվեն «Պնոսեոլոգիայի» (իմացության տեսության) հիման վրա աշխատում է ապացուցել, վոր հեղափոխությանն անհնարին է, վորովհետև «վոչ մի այն բնությունը թռիչքներ չի սիրում, այլև քանականությունը թռիչքներ չի տանում»: Բնության, հասարակության և դիտակցության (մտածողության) մեջ զարգացումն այդ տեսակետից «անընդհատ աստիճանականություն» է: Այս տեսությունը համապատասխանում է բուրժուազիայի ռեակցիոն շրջանի տրամադրություններին: Այդ շրջանում մի նպատակամատ բորշ է բուրժուազիայի վախը թռիչքների, խիստ անցումների և հեղափոխությունների հանդեպ: Բնդհչտենի և մյուսների նման ոպորտունիստներն այդ ըմբռնողությունից հետու չեն գնացել. նրանք պատկերացնում են, վոր բանվոր դասակարգի խնդիրների լուծումը կարող է կատարվել բուրժուական կարգերի շրջանակներում, բարենորոգումների, աստիճանական փոփոխությունների և վոչ թե թռիչքների, սոցիալիստական հեղափոխության միջոցով:

Աստիճանականավորները չեն կարող հերքել, վոր բնության և հասարակության մեջ խոր փոփոխություններ են կատարվում: Սա չափազանց ակնբաղա է և այդ ահաճ վիստի մոտով լուռությամբ չես անցնի: Սակայն նրանք այդ փոփոխությունները պատկերացնում են վորպես քանակական փոփոխություն. այս կամ այն հատկությունների քանակն աստիճանաբար աճում է և առեղծում տարբեր դրությունններ: Այսպիսով յեթե դուք ցանկանում եք բացատրել, թե ի՞նչպես ծագեց և կազմակերպվեց կապիտալիզմը, ըստ այդ ըմբռնողության, դուք պետք է պատկերացնեք, վոր վաղ ժամանակներից է վեր յեղել և կապիտալիզմը, բայց այն ժամանակ նա յեղել է փոքրիկ և ահա նա աճել ու աճել է, դառել մեծ կապիտալիզմ, արդի կապիտալիզմը: Կամ թե չէ «յեթե դուք ցանկանում եք բացատրել պատերազմի ծագումը,— ասում է Պլեխանովը,—այն ժամանակ ուղղակի յերևակայեցեք մանրապետական պետական կազմակերպություն, վորն իր ծավալում աստիճանաբար փոփոխվելով, վերջապես արիվատելին իր դոյությունն զդալ է տալիս»:

ՀԵԳԵԼՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դեռևս Հեգելը ծաղրել է աստիճանականության տեսությունը: «Ցերը ուզում են հասկանալ վորևե բանի ծագումը կամ վոչնչացումը, ասում է նա իր «Տրամաբանության գիտության» մեջ, այն ժամանակ սովորաբար այդ պիսի ծագումն ու վոչնչացումն աստիճանականության պատկերացման միջոցով են բացատրում: Սակայն կեցության փոփոխությունները կատարվում են վոչ միայն մի քանակը մի ուրիշ քանակի փոխելու միջոցով, այլև վորակական տարբերությունները քանակականի փոխելու միջոցով և ընդհակառակը. մի փոխանցում, վոր ընդհատում է աստիճանականությունը և մի յերևույթի տեղ գնում մի ուրիշ, վորակապես նրանից տարբեր յերևույթ:

Աստիճանականության ուսմունքի հիմքում կա այն պատկերացումը, վոր ծագումն իրականության մեջ արդեն գոյություն ունի, բայց աննկատելի չի միայն իր փոքրության չնորհիվ: Ճիշտ այդպես էլ խոսելով վոչնչացման աստիճանականության մասին, յերևակայում են, թե տվյալ յերևույթի անկեցությունը կամ այն նոր յերևույթը, վոր պետք է բռնի նրա տեղը, արդեն գոյություն ունի, չնայած առայժմ դեռ աննկատելի չե... Բայց այսպիսով ծագման և վոչնչացման մասին ամեն մի հասկացողություն վերանում է... Ծագումը կամ վոչնչացումը բացատրել փոփոխման աստիճանականությամբ, դա նշանակում է ամբողջ դործը վերածել ձանձրալի տավտոլոգիայի և պատկերացնել ծագողը կամ վոչնչացվողը պատրաստի ձևով:

ԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Եվոլյուցիայի մեջ մարքսիստական ըմբռնողությունն է տալիս ճիշտ գիտական բացատրությունն: Այս ըմբռնողությունը հանգում է նրան, վոր քանակական փոփոխություններն աստիճանաբար կուտակվելով, անցնում են վորակականի և այդ անցումները կատարվում են թռիչքներով. այլ կերպ չի էլ կարող կատարվել: Այսպիսով զարգացումը կատարվում է հակադրու-

թյունների պայքարի միջոցով: Նրա յուրաքանչյուր ստադիան (սատիճանը) նախորդի բացառումն է և բացառում է հետևյալ սատիճանով:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՉՔ Է, ՎՈՐ ԲՈԼՈՐՈՒՄ Է ՆԱԽՈՐԴՈՂ ԵՎՆԵՑՈՒՑԻՈՆ ԶՈՐԳԱՑՈՒՄԸ

Հեղափոխությունը հասարակական մի ձևից դեպի մյուսը կատարվող թռիչքն է, այն ձևից, որը դառել էր «արտադրական ուժերի զարգացման համար կապանքներ» դեպի այն ձևը, որի մեջ այդ նոր ուժերը («կուսակցված փոփոխությունները») կարող են և ազատ զարգանալու չեն: Այստեղ նոր ձևը բացառում է հինին: Վերոհիշյալ սատճներից պարզ է, որ ոչ մի հեղափոխություն չի կարող կատարվել, եթե նրան չնախորդի որոշ եվոլյուցիոն պրոցես: Սակայն նույնքան էլ պարզ է, որ որոշ եվոլյուցիոն պրոցես անխուսափելիորեն տանում է դեպի հեղափոխություն: Բուրժուական հեղափոխությունները Անգլիայում (XVII դարում), Ֆրանսիայում (XVIII դարի վերջում), Գերմանիայում և այլ երկրներում (XIX դարի կեսերին) չէին կարող տեղի ունենալ, եթե պատմական փոփոխությունների կողքին՝ մի կողմից տիրող ֆեոդալական դասակարգերը չկորցնեին իրենց տնտեսական հզորությունը և չդրկվեին արտադրության կազմակերպության մեջ զեկավարող դերից և մյուս կողմից՝ եթե բուրժուազիան ձեռք չբերեր այդ հզորությունն ու դերը: Նույնը և պրոլետարական հեղափոխության հետ է լինում: Նա չենթադրում է կապիտալիզմի զարգացման որոշ ընթացք, իսկ նախ կապիտալիզմի զարգացումն անխուսափելիորեն պետք է տանի դեպի պրոլետարական հեղափոխություն:

§ 62. ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԻ ՑԵՎ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՑԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թե ի՞նչ է եվոլյուցիան և հեղափոխությունը և ի՞նչպիսի փոխհարաբերություն կա նրանց միջև, տեսականորեն չափազանց հետաքրքիր հարց է, ու նրա լուծումից էլ կախված է բանվորական շարժման կենսական հրատապ խնդիրների գործնական դրույթը: Մարքսիզմը հասարակության զարգացման ընթացքը հետազոտելիս, եվոլյուցիայի և հեղափոխության հետ, վորպես մի ամբողջություն: Եվոլյուցիայի և հեղափոխության միջև, վորոնք հակադրություններ են, գոյություն ունի դիալեկտիկական միասնականություն:

ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՑԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ոպորտունիստները բացառում են նույնիսկ հեղափոխության հնարավորությունը և աշխատավոր մասսաներին առաջարկում են սատիճանաբար բարելավումների, դասակարգային համագործակցության և դասակարգային համագործակցությունների ուղին: Կամ չնայած խոսքով ընդունում են հեղափոխությունը, բայց թողնում են հեռավոր ապագային, կարում են ժամանակակից իրականությունից: Պրոլետարիատի գործի համար հեղափոխության այդպիսի «ճանաչումը» ավելի վտանգավոր է, քան նրա բացառումը, վորովհետև պրոլետարական լայն մասսաների դասակարգային ինքնապիտակցության վորոշ մոմենտներում և վորոշ սատիճաններում կարող է նրանց վրա չհնազանդություն ունենալ և մասամբ էլ ունի: Մարքսիստները կռվում են ինչպես հեղափոխության նշանակության բացասման, այնպես էլ նրա կեղծ ճանաչման դեմ:

Հեղափոխական մարքսիստները միշտ և բոլոր դեպքերում չեն արտահայտում բարենորոգումների (ռեֆորմների) դեմ: Ոպորտունիստ-ռեֆորմիստն էլ բարենորոգումների կողմնակից է, ապա ի՞նչ տարբերություն կա ռեֆորմիստի և հեղափոխական մարքսիստի միջև: Ռեֆորմիստը մի հասարակարգից մյուսն անցնելու հարցի լուծումը տեսնում է ռեֆորմների վոչ հեղափոխության մեջ: Ռեֆորմիստը բարենորոգումների մեջ տեսնում է սոցիալական խնդիրների լուծման «խաղաղ», «անվնաս» ուղին, իսկ հեղափոխական մարքսիստը (լենինիստը, վորովհետև միայն լենինիստներն են մինչև վերջը հետևողական, հեղափոխական մարքսիստները) պիտե, վոր յուրաքանչյուր ռեֆորմ «մի ղիշում է, վոր անում են կատավարող դասակարգերը, վորպեսզի խանգարեն, թուլացնեն կամ հանգցնեն հեղափոխական պայքարը» (Լենին):

§ 63. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՐՑԵԿՏԻՎ ՑԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Հեղափոխությունը բոլորում է եվոլյուցիայի պրոցեսը, եվոլյուցիայի, վորն սատիճանաբար կուտակում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև յեղած անլուծելի հակասությունները:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՐՑԵԿՏԻՎ ՑԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՖԱԿՏՈՐՆԵՐԸ (ԳՈՐԾՈՆՆԵՐԸ)

Սակայն հեղափոխությունն ավտոմատ կերպով չի կատարվում: «Պետական իշխանության անցումը մի դասակարգից մյուսի ձեռքը, վոր հեղափոխության «սատչին, գլխավոր, հիմնական հատկությունն է,— չի կատարվում սպասումների, վորը բոլորում է իշխանության համար պայքարող հեղափոխական դասակարգի պայքարը: Սուբյեկտիվ մոմենտները, մտած հեղափոխական դասակարգի պայքարը,—դասակարգի ներգործականության ու գիտակցականության մոմենտները,— տվյալ ոբյեկտիվ պայմաններում վճռական դեր են խաղում: Գիտակցելով հեղափոխության անհրաժեշտությունը, գիտակցելով պայքարի նպատակն ու միջոցները, հեղափոխական դասակարգը գործում է և գործում է ճիշտ սուբյեկտիվ զարգացման ընթացքի ուղղությամբ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՎՈՐՊԵՍ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆ

Այստեղ հսկայական նշանակություն է ստանում պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը: Նրա կազմակերպող և զեկավարող աղդեցությունից է կախված պայքարի հաջողությունը: Վորքան ճիշտ է կուսակցության տակտիկան, այնքան ավելի արագ են հասնում պայքարի նպատակներին, այնքան ավելի արագ է կատարվում հեղափոխությունը: Կուսակցությունը հեղափոխական դասակարգի ճեռքով իշխանությունը գրավելուց հետո, կազմակերպում է նրա աշխատանքը. վերակազմելով արտադրական հատուկ արդեն հասած զարգացումը: Բոլորին հայտնի չե, թե բոլշևիկյան կուսակցությունը, միապետության և կապիտալիզմի դեմ աշխատավոր մասսաների և պրոլետարիատի մղած մեծ պայքարում ինչպիսի հսկայական դեր է խաղացել: Բոլորն էլ գիտեն, թե սոցիալիզմի շինարարության մեջ ինչպիսի հսկայական դեր է նա խաղում: Մյուս կողմից էլ սուբյեկտիվ ֆակտորը, — կուսակցության,— մեծ նշանակության որինակ կարող է ծառայել գերմանական սոցիալ-դեմոկրատիան, պայքարի և հեղափոխության արգելման գործում. նա ամեն ինչ արեց, վորպեսզի փրկի կապիտալիստական տեխնիկան և բուրժուական հասարակությունը այն մոմենտներին, երբ նրանց սպառնում էր պրոլետարական հեղափոխությունը: Նա, սոցիալ-դեմոկրատիան, ամենակարևոր ֆակտորներից մեկն է, վոր յերկարացրեց բուրժուական կարգերի գոյությունը Գերմանիայում:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՍԻՏՈՒԱՑԻԱ

Վորպեսզի հեղափոխությունը հաջող լինի, ըստ Լենինի արտահայտության, անհրաժեշտ է վորոշ հեղափոխական սիտուացիա, այսինքն պատմական պարագաների վորոշ համախմբում, վորոնք տվյալ մոմենտում ամենահավանական են դարձնում հեղափոխության հաջողությունը: Լենինը նշում է հեղափոխական հաջող սիտուացիայի յերեք գլխավոր հատկություն՝ 1) տիրող դասակարգերի համար իրենց պետությունն անփոփոխ պահպանելու անհնար լինելը (տիրող դասակարգի համար ճգնաժամ, վոր ստեղծում է այդ դասակարգի համար անհաղթելի դժվարություններ), 2) ճնշված դասակարգերի թշվառության և կարիքների սովորականից ավելի սրումը և 3) մասսաների ակտիվության պտի բարձրացում. այն մասսաների, վորոնք խաղաղ պարագաներում թույլ կային տալիս իրենց ազատ թալանելու: Այսպիսով հեղափոխական սիտուացիայում մենք ունենք ինչպես օբյեկտիվ ֆակտորների (ճնշված դասակարգերի դրության վատացումը և տիրապետող դասակարգերի կողմից պետության անտեսությունը վարելու դժվարությունները), այնպես էլ սուբյեկտիվ ֆակտորների (մասսաների ակտիվության բարձրացումը) զուգակցումը: Հեղափոխության մոմենտին մենք ունենք այն բոլոր ֆակտորների սինտեզը, վոր ազատում, արագացնում և իր ավարտմանն է հասցնում հեղափոխությունը:

§ 64. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Պրոլետարական հեղափոխությունը բոլորում է բուրժուական հասարակության էվոլյուցիան: Պրոլետարական հեղափոխությունն, ավելի քան միայն հեղափոխություն, հանդիսանում է պատմության լոկոմոտիվը (ինչպես անվանում էր Մարքսը հեղափոխությանը): «Հեղափոխությունը ճնշվածների և չահագործվողների տոնն է, ասում է Լենինը: Վոչ մի ժամանակ մասսան քնդունակ չի հասարակական կարգերի այնպիսի ակտիվ ստեղծողը դառնալ, ինչպես հեղափոխության որոք: Այդպիսի ժամանակներում ասպիճանական պրոգրեսի նեղ քաղքենիական չափի տեսակետով նա ընդունակ է հրաշքներ կատարելու». Պրոլետարական հեղափոխությունն ավելի շատ մասսաներ է ներգրավում պայքարի մեջ, քան իր ժամանակին բուրժուական հեղափոխությունները են դրավել: Պրոլետարական հեղափոխությունը կարող է և պետք է դրավել վոչ միայն պրոլետարական մասսաներին, այլև գյուղացիության և մանր բուրժուազիայի աչխատավոր մասսաներին, վորոնք տանջվում են կապիտալիզմի յերկաթե կրունկի տակ: Ահա թե ինչու Ռուսաստանում, մի յերկրում, վորտեղ կա գյուղացիության մեծ մասսա, վորտեղ հնդուստրիալ պրոլետարիատը, համեմատած կապիտալիստական առաջավոր յերկրների հետ, կազմում է աննշան մասսա (բայց չափազանց կոմպակտ, կազմակերպված և հեղափոխական), պրոլետարական հեղափոխությունը կարողացավ վոչ միայն քաղաքների բանվոր աղքատնակությանը, այլև գյուղի, զորանոցների և ֆրոնտի լայն մասսաներին հանել կապիտալիզմի և ֆեոդալիզմի ամբողջությունների դեմ մեծ կռվի, մեծ արչավանքի: Ահա թե ինչո՞ւ պրոլետարական հեղափոխությունը հակատակ բոլոր տեսակի սոցիալ-համաձայնողականների վանհատուններին, փայլուն հաղթանակ տարավ:

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՈՊՈՐՏ. ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից սոց.-դեմոկրատիան ժխտում է, վորևե հեղափոխության անհրաժեշտությունը սոցիալիզմին անցնելու համար, վորովհետև կապիտալիզմն իբր թե տալ է «կազմակերպված կապիտալիզմի» և «տնտեսական դեմոկրատիայի» փաղը, վոր խաղաղ ճանապարհով է սոցիալիզմի մեջ:

*Ոպորտունիստական խառնակիչները և չաբլատանները (անգլիական ֆաբիանները, ռուս սոցիալիստ-հեղափոխականները, կաուցկին, Ռենները, Բաուերը, Միլյուզային կոոպերատիվ Ալյանսի կոոպերատիվ բյուրոկրատները և ուրիշները) արտադրության և չրջանառության միջոցների համայնացման պրոցեսը, վորպես սոցիալիզմին հասնելու պրոցես, սիրով նմանեցնում են կապիտալիզմի մի ժամանակ արտադրության միջոցների վորոշ մասերը (վորոշ հողամասեր, առանձին յերկաթուղագծեր և այլ տրանսպորտային միջոցներ, քաղաքային անտեսության վորոշ հոդվածներ և այլն) բուրժուական պետության, մունիցիպալիտետների կամ հասարակական կազմակերպությունների ձեռքը հանձնելուն: Սոցիալիզացիայի այս չափով հակացողությունն ոպորտունիստներին հարկավոր է նրա համար, վորպեսզի դրծեն այնպես պատկերացնեն, վոր կապիտալիզմի չրջանակներում էլ կատարվում է վոչ միայն տարերային «համայնացման» պրոցես, (վորի տակ հասկացվում է կապիտալիստական կենտրոնացում, վոր արտադրության կարևորագույն միջոցները տալիս է վոչ թե ամբողջ հասարակության, այլ կապիտալիստական բարձունքների ձեռքը), այլև կազմակերպված «համայնացման» պրոցես: Այս դեպքում մոռացվում է, վոր այս կամ այն միջոցները բուրժուական պետության ձեռքը տալով, ուժեղացնում են այդ պետությանը, վորպես բուրժուական տիպետության ապարատ և սովորաբար այդ կատարվում է բուրժուազիայի խմբերիալիստական կան քաղաքականության նպատակներով, վոր մունիցիպալիտետները կապիտալիստական յերկրներում բուրժուազիայի դասակարգային չահերի ամենահուսալի հենարանն են: Այսպես են գնահատում ոպորտունիստները պրոլետարական հեղափոխությունը մեր յերկրում: Այստեղ ավելի, քան ուրիշ հարցերում ոպորտունիզմն այլասերվում է ամենաստոր ռեֆորմության: Ոպորտունիստական առաջնորդները, վորոնք բուրժուական պետություններում «սոցիալիզմն» իրագործելու հնարավորության յերաչքներն են տարածում և ամեն կերպ պաշտպանում են այդ բուրժուական պետության դեմ: Ամենանամոթ խոսքերով ստեղծված միակ պրոլետարական պետության դեմ: Ամենանամոթ ռեֆորմ կաուցկին նույնիսկ կոչ է անում զինված կռվի ԽՍՀՄ-ի, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ: Սակայն «ձախ» սոցիալ-դեմոկրատներն էլ (Ռեններ, Բաուեր և ուրիշները) հետ չեն մնում կաուցկուց, պնդելով, վոր «բայշևիկական փորձերը» (այսինքն սոցիալիզմի չհնարավոր պետության չրջանակներում: Այդ տեսակետից պրոլետարական հեղափոխությունը վոչ միայն հարկավոր չե, վոչ միայն քիչ նշանակավոր է, այլև վնասակար է: Ռեններն և ուրիշները նույնիսկ ասում են, թե հեղափոխությունը կործանում է արտադրողական ուժերը) (և վոչ թե ազատում նրանց, ինչպես Մարքսն ու Ենգելսն են պնդում) և այդ անհնար է դարձնում սոցիալիզմի հաղող հասունանալը:

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՌՆՍՏԱՎՐԱՑԻԱՅԻ ԻԴԵՈԼՈԳՆԵՐԻ ԸՄԲՌՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կապիտալիստական ռեստավրացիայի և վնասարարության մեր իդեոլոգները պրոլետարական հեղափոխությունը գնահատում են այնպես, ինչպես միջազգային ռեֆորմ ոպորտունիզմի լավերից նրանց հակահեղափոխական յեղբայրները: Վնասարար-մենչևիկ Ֆին-Ենոտայևսկին օրինակ՝ զանում է, վոր խորհրդային եկոնոմիկայի մեջ արժեքի օրենքը նույնպես և գործում, ինչպես կապիտալիստական տնտեսության մեջ և պրոլետարիատին մնում է անելու միայն այն, «ինչ չարեց բուրժուազիան իր պատմական միսիայում): Հետևաբար խորհրդային եկոնոմիկայի և կապիտալիստականի մեջև վոչ մի վորակական տարբերություն չկա: Մի ուրիշ վնասարար—մենչևիկ Բազարովն ավելի հեռու չե գնում: Նա վոչ միայն բանում է, վոր մեզ մոտ գործում են նույն օրենքները, ինչ վոր կապիտալիստական հասարակության մեջ, այլև հաստատում է, վոր խորհրդային եկոնոմիկայի համար ճգնաժամները (թերարտադրության և ապրանքային սովի անխուսափելի ձևով) միշտ սպասվող ուղեկիցներ են, մինչդեռ կապիտալիզմի համար ճգնաժամները (գերարտադրության) ժամանակավոր են և ներքնվելու յենթակա:

Հետևաբար խորհրդային պլանային տնտեսությունը մի քայլ հետ է... Բազարովն այդ «օրենքը» հետևցնում է այն նախադրյալներից, վոր արտադրողական-ուժերի զարգացումը

*) Ֆին-Ենոտայևսկի, տեսական տնտեսության վիճելի հարցերը:

մեզ մոտ, դանդաղում է և իրը թե չի յել կարող հասնել մեծարունակ պահանջին՝ աճումին։ Ընդսմին լուրության է մասնվում այն փաստը, որ մատակարարման դժվարություններն առաջանում են վորոշ դարաշրջանում վոչ թե մեր տնտեսության տարերային զարդացումով, այլ նրանով, վոր մեր միջոցների մաքսիմումը պլանային կերպով ներդնում ենք ծանր արդյունաբերության մեջ, և հետևաբար այդ դժվարությունները կվերանան (և արդեն սկսում են մեղմանալ), յերբ ծանր արդյունաբերության ուժեղացումը հնարավորություն տա թեթև արդյունաբերությանն արագ զարդանալուց։ Պլանային տնտեսությունը վնասարարները հասկանում են վորպես չուկայի տարերային պրոցեսներին մի պասսիվ լրացում։ Պլանային հեռանկարները պետք է յեղրակացվեն «չուկայի տենդենցների հաշվառումից» (Բուրովսկի և ուրիշները)։ Այսպիսով պլանը յենթարկվում է չուկայի տարերային զարգացմանը, իսկ այդ վերջինն անխուսափելիորեն տանում է դեպի կապիտալիզմի զարդացումը։ Սա միանդամայն հակասում է պլանի կուսակցական ըմբռնողությանը, վոր ձևակերպել եր Ստալինը XV կուս. համագումարում այսպես. «Մեր պլանները վոչ թե պլան-պրոգնոզներ, պլան-յենթադրություններ են, այլ պլան-դիրեկտիվներ են, վորոնք պարտադիր են ղեկավարող որգաններ համար, և վորոնք վորոշում են մեր տնտեսության զարդացման ուղղությունն ապագայում»։ Կապիտալիստական ռեստավրացիայի այդ իդեոլոգներն, առաջին տարիները հույս ունեյին, վոր խորհրդային կարգերը կվոխվեն կապիտալիստականի։

Ըստ Ռատոբյալովի և ուրիշների կարծիքի, նեպն այն «նորմալ» ուղին է, վորով «նացիոնալ-բայշևիկները գնում են դեպի «առողջ կապիտալիզմը»։ Այստեղից յեղրակացվում է, վոր արտաքին առևտրի մենաշնորհի և ինդուստրացման բարձր տեմպերի դեմ պայքարի քաղաքականությամբ կարելի յե և պետք է արագացնել կապիտալիզմի ռեստավրացիան։

ԳՐՈՂԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՈՒԽԱՐԻՆՅԱՆ ՑԵՎ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Պրոլետարական հեղափոխության բնույթի հարցում լենինիզմը խեղաթյուրող կոնցեպցիաներ ունեն Բուխարինը, Տրոցկին և զանազան ոպորտունիստական մաքերի այլ տեսաբանները։ 1917 թվին Բուխարինը կանգնած եր, ինչպես մենք արդեն ասել ենք, տրոցկիստական դիրքերի վրա և պրոլետարական հեղափոխությունը պատկերացնում եր վորպես միայն պրոլետարիատի գործ։ Հետագայում, նեպի սկզբում, յերբ լույս տեսավ նրա «Պատմական մատերիալիզմի տեսությունը» գիրքը, նա գծեց հեղափոխության հետևյալ սխեման. հեղափոխությունն իր զարդացման ընթացքում անցնում է չորս փուլ՝ իդեոլոգիական (հին իդեոլոգիայի և հոգեբանության կրախը), քաղաքական (իշխանության գրավումը պրոլետարիատի ձեռքով) «տնտեսական» և վերջապես «տեխնիկական»։ Սրանից յեղրակացվում է, վոր յերբ բոլորովին վերջանում է մի փուլը, սկսվում է մյուսը և վոր այդ մյուսի մեջ չենք հանդիպում անցած ստադիայի տարրերին։ Որինակ՝ քաղաքական հեղափոխության մեջ մենք արդեն իդեոլոգիական խնդիրների չենք հանդիպի։ Մեխանիկական այսպիսի ըմբռնողությունը վոչ մի ընդհանուր կապ չունի Մարքսի ըմբռնողության հետ, վորն ասում եր, թե «հեղափոխությունն անհրաժեշտ է վոչ միայն նրա համար, վոր չի կարելի այլ միջոցով տապալել տիրապետող դասակարգին, այլև այն պատճառով, վոր տապալող դասակարգը կարող է միայն հեղափոխության մեջ մաքրվել հին հասարակության ամբողջ կեղտից· վոչ ել լենինի ըմբռնողության հետ, վորը պնդում եր, թե «աշխատավորների մեծամասնության համակրանքի և պաշտպանության համար պրոլետարիատի մղած դասակարգային պայքարը չի վերջանում քաղաքական իշխանության նվաճումով, այլ շարունակվում և այդ պայքարը, իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելուց հետո յել, միայն այլ ձևերով։

Ըստ Բուխարինի, պարզվում է, վոր քաղաքական հեղափոխության հետ վերջանում են պրոլետարիատի քաղաքական պայքարի խնդիրները։ Սա միանդամայն հակասում է պատմական իրականության դիալեկտիկային։ Իշխանություն գրավելուց հետո հեղափոխական դասակարգն ստիպված է պայքարելու բշնամի դասակարգերի հետ՝ իշխանությունը պահպանելու, ամրապնդելու (քաղաքացիական կռիվ) իր կատարած հեղափոխության վոդով տնտեսական միջոցառումներ անցկացնելու համար։ «Տեխնիկական հեղափոխությունն» առաջ է քաշում տնտեսական, քաղաքական և իդեոլոգիական խնդիրներ և վոչ թե վերացնում... Դրա համար ել բուխարինյան սխեմայի մեջ հրաչալի կերպով ամփոփվում և պրոլետարիատի դիկտատուրայի և նրա խնդիրների ալ ոպորտունիստական ըմբռնողություն»։ Իսկապես յերբ «քաղաքական հեղափոխությունը» միանդամայն ապահովում է իշխանության գրավման մեն-

մենով, ապա պրոլետարիատի դիկտատուրան չի հանդիսանալ պրոլետարիատի պայքարի շարունակությունն այլ ձևերով, պայքարի, վոր սրվում է սոց. չինարարության վորոշ ստադիաներում։ Բուխարինյան սխեմայի մեջ նույնպես հարմար է դասավորվում ՝ՍՀՄ-ի ոպորտունիստական յերկու դասակարգերի տեսությունը», վոր քարոզում են Բուխարինը և ուրիշները։ Ցերբ արդեն պրոլետարիատի «քաղաքական հեղափոխությունն» իր գործը վերջացնում է բուրժուազիայի հետ, այն ժամանակ մնում են միայն պրոլետարիատը և գյուղացիությունը (ներառյալ նաև կուլակը, վորը խաղաղ ներաճում է սոցիալիզմի մեջ)։ Բուխարինին անմատչելի յե զոդման, վորպես հակադրությունների միասնություն, լենինյան ըմբռնողությունը, դաշինքը գյուղացիության հետ և պայքար նրա սեփականատիրական տենդենցների դեմ։ Այստեղից է բղխում Բուխարինի ըմբռնողությունն ամբողջ ժողովրդական տնտեսության («տնտեսական» և «տեխնիկական հեղափոխության») սոցիալիստական վերակառուցման մասին, վորպես խաղաղ պրոցեսի, վոր հոսում է մարող կարգերի ներաճման և այլ պայմաններում։ Այստեղից են մյուս բոլոր ոպորտունիստական յեղրակացությունները, վորոնց մասին մենք խոսեցինք դրքի զանազան մասերում։

Տրոցկիզմի համար պրոլետարական հեղափոխությունը մի հեղափոխություն է, վոր կատարվում է գյուղացիության կամքի և ձգտումների հակառակ կամ վորը (յեթե նա պատմական պատահականությունների ուժով կատարվել է գյուղացիության ողնությամբ) անխուսափելիորեն պետք է պրոլետարիատի և գյուղացիության լայն մասսաների միջև ընդհարում առաջացնի։ Տրոցկիստական մոտեցումը դեպի պրոլետարական հեղափոխությունը և նրա մեջ ունեցած գյուղացիության դերը, ինչպես նաև բուխարինյան մոտեցումը մեխանիստական է, սխեմատիկ և վոչ դիալեկտիկ։ Տրոցկին ել, ինչպես նաև Բուխարինը, չի ըմբռնել հակադրությունների միասնականությունը և վերջնում է միայն մի հակադրություն, Բուխարինի հակառակը։ Բուխարինը տեսնում է միայն գյուղացիության յեղած դաշինքը, բայց նրա հետ պայքար չի տեսնում։ Իսկ Տրոցկին տեսնում է միայն պայքար, բայց պրոլետարական հեղափոխության մեջ, միլյակ գյուղացիության հետ ունեցած դաշինքը չի հասկանում, Բուխարինը գյուղացիության մեջ տեսնում է միայն աշխատավորին, Տրոցկին՝ միայն սեփականատեր-ապրանքարտադրողին։ Բուխարինը ՝ՍՀՄ-ի տնտեսական սիստեմի մեջ պրոլետարիատի կողքին տեսնում է միայն գյուղացիությունը, իսկ բուրժուազիային չի տեսնում։ Տրոցկին պրոլետարիատի կողքին տեսնում է միայն բուրժուազիային, բայց չի տեսնում այն տարբերությունները, վոր կան ՝ՍՀՄ-ում միլյակ-չքավոր գյուղացիության և բուրժուազիայի դրության և շահերի միջև։

Բուխարինի համար դասակարգային պայքարը, իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելուց հետո, վերջանում է կամ համենայն դեպս «հանդչում է»։ Տրոցկու համար այդ շարունակվում է նաև գյուղացիության հետ, վորովհետև հեղափոխությունից հետո միայն պրոլետարիատը «խորը ներխուժում է մասնավոր սեփականության չրջանը»։ Կարծեք առաջ քեր ծայրերից են մտնենում ընկ. Բուխարինը և Տրոցկին, սակայն յերկուսն ել քանի վոր ծայրերից են մտնենում ընկ. Բուխարինը և Տրոցկին, սակայն յերկուսն ել քանի վոր պնում են վոչ-դիալեկտիկ, վոչ-մարքսիստական-լենինյան ուղիով, ուստի հանդում են նման վոչ-դիալեկտիկ, վոչ-մարքսիստական-լենինյան եզրակացությունների։ Պրոլետարական հեղափոխությունը Տրոցկու համար ոպորտունիստական յեղրակացություններ։ ՝ՍՀՄ-ը դառնում է համաչխարհային կապիտալիստական սիստեմի մի մասը, ինդուստրիալիզացիայի քաղաքականությունը պետք է լինի գյուղացիության հաշվին։ Բայց վորովհետև կուսակցությունը չղնաց գեր-ինդուստրիալիզացիայի տրոցկիստական ուղիով, վորը կարող է տանել ամբողջ ժողովրդական տնտեսությունը դեպի կործանում, այլ բարձր տեմպեր վերցրեց, յերբ պատրաստ եր համապատասխան նյութական բազա, դրա համար այդ տեմպերը հայտարարվում են ուժից վեր, «ավանտյուրիստական» և այլն։ Տրոցկին, ինչպես և Բուխարինը հանդում են «մարող կորագծի տեսության։ Գրոլետարական հեղափոխության չըմբռնելը, մի հեղափոխության, վոր վճռում է բոլոր աշխատավորների խնդիրները, ինչպես նաև պրոլետարիատի դիկտատուրայի չըմբռնելը, վորպես բոլոր աշխատավորների պայքարի և չինարարության պրոլետարական ղեկավարելը, վորպես բոլոր աշխատավորների պայքարի և չինարարության պրոլետարական ղեկավարություն, վոր ուղղված է դեպի սոցիալիզմի կառուցումը, ահա այդ չըմբռնելը տրոցկիզմին հանգեց պրոլետարական հեղափոխության և ՝ՍՀՄ-ի աշխատավոր մասսաների դեմ պայքարի և հասցրեց բնական հակահեղափոխության։

ԱՋ—«ՁԱԽ» ԲԼՈԿԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վոչ-դիալեկտիկ և հակալենինյան ե նաև աջ-«ձախ» բլոկի տեսությունների մոտեցումը պրոլետարական հեղափոխությանը և նրա խնդիրներին: Այդ տեսաղանների մոտեցումը եկլեկտիկ ե, նրանք վերցնում են մեկ Բուխարինից, մեկ՝ Տրոցկուց: Բուխարինից նրանք վերցնում են նրա «փուզերի տեսությունը»: Այդ պատճառով էլ Շատկինը սոցիալիզմի չրջան մուտք գործելը և դասակարգային պայքարի սրման փաստն անհամատեղելի չե դանում, իսկ Լոմինաձեն կարծում ե, վոր քանի դեռ անցողիկ չրջանի վերջին ետապը չի վերջացել, ուստի դեռ վաղ ե սոցիալիզմի մասին խոսելը: Սոցիալիզմի չրջանը մուտք գործելու դիալեկտիկան, վոր ձևակերպեց ընկ. Ստալինը XXI կուսահամագումարում, վորպես սոցիալիզմի ծավալուն շինարարության և դասակարգային կատաղի պայքարի հակադրությունների միասնականության, մնաց աջ-«ձախ» տեսաբանների համար անհասկանալի, վորովհետև, ինչպես և՛ ընկ. Բուխարինը, նրանք գտնում են, վոր առաջ պիտի վերջանա մի չրջանը (դասակարգային պայքարի չրջանը), հետո նոր, անմիջապես սկսվի մյուսը (սոցիալիզմի չրջան): Տրոցկուց վերցրել են այն ըմբռնողությունը, վոր ԽՍՀՄ-ը համաչխարհային կապիտալիզմի մի մասն ե: Սիբցովը և Լոմինաձեն գտնում են, վոր մեզ մոտ կարող են լինել ճգնաժամեր, վորոնք բղխում են անցողիկ չրջանի անտեսության հարաբերական անարխիկ և անպլանային լինելուց: Գյուղացիության նկատմամբ Բուխարինից վերցրել են «հարստացե՛ք» լոզունգը, իսկ Տրոցկուց՝ բարձր գների լոզունգը և այլն: Աջ-«ձախ» բլոկը վերջին հաշվով հանգում ե նաև ոպորտունիստական յեղրակացություններին, վորոնց հասան Բուխարինն ու Տրոցկին:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Ե ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՑԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Պրոլետարիատը տապալում ե բուրժուազիայի դասակարգային տիրապետությունը, վորպեսզի կառուցի առանց չահագործման և առանց պետության անդասակարգային հասարակություն: Դրա համար պրոլետարիատը ստիպված ե իշխանությունն իր ձեռքը վերցնելու: Այդ իշխանությունը պետք ե նրան վոչ թե նրա համար, վոր հասարակության բոլոր մյուս դասակարգերի չահագործումը կդադարեցնի, այլ նրա համար, վորպեսզի վոչնչացնի հենց այդ չահագործումը, վորպեսզի վոչնչացնի դասակարգային արտադրական հարաբերությունները: Այս ճանապարհին պրոլետարիատը ստիպված ե հսկայական դժվարություններ հաղթահարել:

Պրոլետարիատի դիկտատուրայի այնպիսի յերկրում, ինչպիսին մեր յերկիրն ե, մնում ե ժամանակավորական մանր անտեսությունների մի հսկա մասսա. մեզ մոտ մինչև կոլեկտիվացումը 25 միլիոնից ավելի գյուղացիական անտեսություն կար, վոր ապրանքային հարաբերությունների ժամանակ սոցիալիզմի չինարարության համար զդալի վտանգ ե ներկայացնում: Այդ անտեսություններն, առանց պրոլետարական դիկտատուրայի, առանց պրոլետարական պետության աջակցության և դեկավարող ներգործման, կարող են դնալ, ինչպես կապիտալիստական յերկրներում, կապիտալիստականուղիով, իսկ սա նշանակում ե գյուղի չերտավորում, կուլակության և կապիտալիստական մյուս տարրերի՝ մասնավաճառական և փոխատու-վաշխառուական կապիտալի ուժեղացում: Հետևաբար պետությունը պրոլետարիատին պետք ե ինչպես պրոլետարիատի դասակարգային թշնամիներին ճնշելու, այնպես էլ ձայրահեղ բարդ պայմաններում սոցիալիստական չինարարության խնդիրները լուծելու համար: Այսպիսով պրոլետարիատի պետությունը կազմակերպում ե և՛ պայքար, և՛ չինարարություն: Այդ յերկու խնդիրների մեջ սերտ կապ կա: Սրան իլյուստրացիա կարող ե ծառայել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը՝ համատարած կոլեկտիվացման բազայի վրա և վերջինի հիման վրա կուլակության, վորպես դասակարգի վերացումը:

Առանց դիկտատուրայի և դասակարգային պայքարի պրոլետարիատը չեր կարող լուծել այն բոլոր մեծ խնդիրները, վոր սոցիալիստական հեղափոխությունն առաջադրել եր նրան և նրա հետևից գնացող աշխատավոր հասարակությանը: «Դիկտատուրան պետք չի լինի, յերբ վերանան դասակարգերը: Նրանք չեն վերանա առանց պրոլետարիատի դիկտատուրայի» (Լենին):

§ 65. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՁԵՎ

Դեռ Մարքսը «Կոմունիստական Մանիֆեստում» ասել ե, վոր դասակարգային պայքարը, վորի մասին գիտեին դեռ բուրժուական և մինչմարքսյան մտածողներն ու տեսաբանները, տանում ե պրոլետարիատին դեպի իշխանության գրավումը և իր դիկտատուրայի հաստատումը:

ԼԵՆԻՆԻԶՄԸ ՎՈՐՊԵՍ ՄԱՐՔՍԻԶՄԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՐՑՈՒՄ

II Ինտերնացիոնալի տեսաբանները, ինչպես մենք տեսանք, կամ պարզ կերպով ժխտում եյին պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը սոցիալիզմի իրագործման համար (կային նաև այնպիսիները, վորոնք սոցիալիզմի անհրաժեշտության էլ եյին կասկածի տակ առնում) կամ էլ չհարժարվելով «պրոլետարիատի դիկտատուրա» բառաառարկ

ման ապարատ են, որ փոխարինում է հեղափոխությամբ կործանված բուրժուական հին ռազմաբյուրոկրատական մեքենային: «Այդ ապարատը,—առում է Լենինը,—մասսաների և ժողովրդի մեծամասնության հետ այնպիսի սերտ և անքակտելի կապ է ստեղծում, այդ կապն այնքան հեշտ է կրկնվում ու նորոգվում, որ նման բան նախկին պետական ապարատում չի եղել»: Այդ ապարատը կապված է դանազան պրոֆեսիաների հետ, այդ ապարատը կապված է կուսակցության, պրոֆմիությունների, պրոլետարական հասարակական ինքնագործունեության, բոլոր կազմակերպությունների, ֆաբրիկի, գործարանի, գյուղի և ընդհանրապես աշխատավորության մասսայական կազմակերպությունների և մասսայական ինքնագործունեության հետ: Հոկտեմբերյան իշխանության ժամանակ աշխատավորները չեն ընտրում հոգս կամ հինգ տարին մի անգամ, այլ իսկապես իրագործում են իրենց իշխանությունը և իրենց կամքն ամեն օր, ինչպես ժողովրդական տնտեսության, այնպես էլ պետական վարչության բոլոր ասպարեզներում: «Մեր կառավարությունը ըստ իր բնույթի, իր ծրագրի և տակտիկայի, բանվորական պրոլետարական, կոմունիստական կառավարություն է» (Ստալին): Այդ պետությունն առաջադրում է իրեն պրոլետարիատի խնդիրները, ղեկավարվում է պրոլետարիատի և նրա կուսակցության կողմից. նա կառուցում է այնպիսի տնտեսություն և հասարակայնություն, որը մարմնացնում է պրոլետարիատի ձգտումները՝ վերացնելու ամեն տեսակի շահագործում և դասակարգային տիրապետություն: Բայց «մեր կառավարությունն իր ծրագրով, իր աշխատանքով լինելով պրոլետարական, դրա հետ միասին բանվորագյուղացիական կառավարություն է» (Ստալին), վորովհետև գյուղացիության հիմնական մասսայի արմատական շահերն ամբողջությամբ գուգադիպում են պրոլետարիատի շահերին և այդ պատճառով էլ ամբողջապես անդրադառնում են պրոլետարիատի և խորհրդային կառավարության ծրագրի մեջ:

§ 66. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Պետությունը դասակարգային տիրապետության ապարատ է և տիրող դասակարգերի ձեռքին գործիք՝ ճնշելու չհագործվող դասակարգերին: Ուստի պարզ է, վոր յերբ վերանան դասակարգերը, կվերանա նաև պետությունը: «Այն ժամանակվանից,—ասում է Ենգելսը «Անտի-Դյուրինգում»,—յերբ վոչ մի հասարակական դասակարգ չի լինի, վորին պետք լինի պահել ճնշման մեջ, այն ժամանակվանից, յերբ կվերանան դասակարգային տիրապետությունը, առանձին գոյության համար մղած պայքարը, վոր առաջանում է արտադրության մեջ յեղած այժմյան անարխիայի չնորհիվ, յերբ կվերանան սրանից հետ միասին ընդհարումներն ու եքսցեսները (ծայրահեղություններ), վորոնք բղխում են հենց այդ պայքարից, ահա այդ ժամանակվանից ճնշելու վոչինչ չի լինի և կարիք էլ չի լինի ճնշելու համար պետության մեջ հատուկ ուժ պահելու: Առաջին ակտը, վորի մեջ պետությունը դուրս է գալիս վորպես ամբողջ հասարակության ներկայացուցիչ,—հասարակության անունից արտադրության միջոցների տիրապետելը,—միևնույն ժամանակ նրա, վորպես պետության վերջին ինքնուրույն ակտն է: Այն ժամանակ պետական իշխանության միջամտությունը հասարակական հարաբերությունների մեջ դառնում է ավելորդ և ինքն իրեն վերանում: Մարդկանց վրա իշխող կառավարությանը տեղը կբռնեն իրերի վրա արած կարգադրությունը և արտադրության պրոցեսի ղեկավարությունը:

Պետությունը չի «վերացվում, այլ մահանում է»:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՆՀՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

Ինչպես մենք տեսանք, պրոլետարիատի դիկտատուրան աշխատավորության համար ամենալրիվ, իսկական դեմոկրատիայի տիպն է, վորովհետև նա լայն մասսաներին իսկապես գրավում է պետության տնտեսության վարչության մեջ: Անցողիկ շրջանում պրոլետարական պետության գոյությունը պատմականորեն անհրաժեշտ է, վորովհետև դեռ գոյություն ունեն դասակարգեր և դասակարգային պայքար, վորը ժամանակ առ ժամանակ,—սոցիալիստական չինարարության ուժեղացման համեմատ,—նույնիսկ սրվում է: Սոցիալիզմին և կոմունիզմին անցնելու շրջանում էլ դեռ ճնշումն անհրաժեշտ է, բայց արդեն «չահագործվողների մեծամասնության ճնշումը չահագործողների փոքրամասնության վրա»: Հատուկ ապարատ, ճնշման համար հատուկ մեքենա. «պետության» դեռ անհրաժեշտ է, բայց այդ արդեն անցողիկ պետություն է, դա արդեն իսկական իմաստով պետություն չէ, վորովհետև յերեկվա վարձու ստրուկների մեծամասնության ճնշումը չահագործողների փոքրամասնության վրա, համեմատաբար այնքան հեշտ, հասարակ և բնական գործ է, վորն ավելի քիչ արյուն կպահանջի, քան ստրուկների, ճորտերի, վարձու բանվորների ապստամբության ճնշումը և նա մարդությանն ավելի էժան կնստի:

Պետությունն ազգաբնակության ճնշող մեծամասնության վրա տարածվող դեմոկրատիայի հետ համատեղելի չէ, ուստի և ճնշման համար հատուկ մեքենայի կարիքն ոչսում է և վերանում*):

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՎՈՉՆՉԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Խորհրդային կարգերի պայմաններում սրվող դասակարգային պայքարը (վոր սրվում է սոցիալիստական չինարարության աճող ուժին՝ կուլակի, նեպմանի և կապիտալիստական դանազան տարրերի կողմից դիմադրության հետևանքով), անխուսափելիորեն տանում է դեպի պրոլետարական պետություն, դեպի տնտեսության սոցիալիստական տարրերի հաղթանակը: Դասակարգային պայքարը տանում և դեպի չահագործող դասակարգերի թուլացումը: Վերջին հաշվով նա տանում է դեպի դասակարգերի և չահագործման վերացումը: Սրա հետ էլ կապված է պետության մահացումը: Այն հիման վրա, վոր պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը պետք է մահանա, «ձախ» ուկլոնիստները յեղրակացրել են, վոր համատարած կոլեկտիվացումը տանում է դեպի իշխանության որգանների վերացումը դյուղում: Այս տեսակետը վոչ մի կապ չունի մեր կուսակցության քաղաքականության հետ: Հենց դասակարգերի սրված պայքարի պայմանները և կուլակների ամրապնդումը պահանջում են պրոլետարական դիկտատուրայի ուժեղացում: Յեվ կենտկոմի դեկտեմբերյան պլենումը խորհուրդների արմատական վերակառուցման և խորհրդային ապարատից ոպորտյունիստներին հեռացնելու լոզունգը տվեց:

§ 67. ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԸ ՅԵՎ ԱՆՑՈՒՄԸ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ ՈՒ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ

Պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ պետության մահացման պրոցեսը կատարվում է սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարում: Այդ պայքարը թափանցում է խորհրդային տնտեսության բոլոր չորքարում: Այդ պայքարը թափանցում է գտնում կյանքի բոլոր բնագավառներում, ինչպես նաև իդեոլոգիական ֆրոնտում՝ դրականության, գեղարվեստի, գիտության, կրոնական և հակակրոնական տրամադրությունների մեջ և այլն: Դեպի սոցիալիզմ առաջ տանող պրոցեսը դասակարգային սրված պայքարի և պրոլետարական դիկտատուրայի ուժեղացման պրոցես է, վորովհետև նա արտադրության ավելի ու ավելի միջոցներ և տնտեսական ավելի ու ավելի ուժեր է կենտրոնացնում հասարակության աշխատավորության ներկայացուցչի՝ պրոլետարական պետության ձեռքը: Այդ պրոցեսը պրոլետարական տնտեսական ուժեղացման պրոցես է, իսկ այդ պետությանն անցողիկ չրջանում,—պրոլետարիատի դիկտատուրայի չրջանում,—պրոլետարիատի դասակարգային տիրապետության գործիքն է: Սակայն այդ պրոցեսը մի կողմից ժամանակ պետության մահացման պրոցես է, վորովհետև այն ամենատում, յերբ

*) Լենին, պետություն և հեղափոխություն:

պրոլետարական պետությունը հասնում է իր առաքելական մաքսիմալ հզորությանը, երբ իր ձեռքն է կենտրոնացնում ժողովրդական տնտեսության կենսական բոլոր ներվերը, դասակարգեր չեն լինի և պետության կարիք էլ չի լինի: Ճիշտ նա, ասինքն պետությունը, ըստ Ենգելսի արտահայտության, վմահանա:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻՑ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԱՆՑՈՒՄԸ ԱՌԱՆՑ ԲՈՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ԲԱՑԻ Վ.ՈՉ ԱՌԱՆՑ ԿԱՏԱՂԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ

Պրոլետարիատի դիկտատուրայի պետությունն ստանիճանարար կմեռնի, բայց ամենևին չի տապալվի, ինչպես պրոլետարական հեղափոխությամբ տապալվեց բուրժուազիայի պետությունը: Սոցիալիզմին անցնելը բռնի հեղափոխության ձևով չի կատարվելու, մտնում է պետությունը, որ յուրաքանչյուր բաղաքական հեղափոխություն պետական իշխանության անցումն է մի դասակարգից դեպի մյուսը, իսկ երբ վոչնչացված են դասակարգերը, այն ժամանակ այդպիսի անցման մասին խոսք լինել չի կարող: «Կոմունիզմի ժամանակ հասարակությունը կանցնի անդասակարգային արտադրական հարաբերությունների: Կոմունիստական հասարակությունը ճնշման վոչ մի ապարատի կարիք չի զգա: Թե ինչպես բուրժուային տնտեսության զարգացման պրոցեսը, առանց բռնի հեղափոխության, տանում է դեպի սոցիալիզմ, այդ մասին մտ որևիակ կարող է ծառայել դյուղատնտեսության կոլեկտիվացումը: Չի կարելի սոցիալիզմ կառուցել առանց ներդրավելու հասարակական տնտեսության, սոցիալիստական շինարարության մեջ 24–25 միլիոն դյուղացիական տնտեսություններ: Գյուղում այդ սոցիալիստական շինարարությունը գնում է առանց մոբիլ բռնի ուժի, առանց ստիպողականության, գնում է գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման ուղիով, որ բարձրացնում է գյուղատնտեսության արտադրողական ուժերը և նրա հասարակական ձևը: Այդ պրոցեսը կատարվում է գյուղացիական տնտեսությունների միացման միջոցով: Կոոպերացիան դեպի սոցիալիզմը տանող ուղին է, առանց քաղաքական հեղափոխության, սոցիալիզմին անցնելու պրոցեսը: Սակայն դասակարգային հասարակության կոմունիստականի վտխվելը խաղաղ պրոցես չէ, կապիտալիստական տարրերը սոցիալիզմի մեջ ներքաշման պրոցես չէ, ինչպես այդ կարծում են ոչ ոպորտունիստները: Ընդհակառակը, տնտեսության սոցիալիստական տարրերի ուժեղացման և աճման պրոցեսն անխուսափելիորեն կապված է ավելի կատաղի դասակարգային պայքարի հետ:

Հետևաբար սոցիալիզմին անցնելու պրոցեսը դիալեկտիկական պրոցես է, հակադրությունների պայքարի պրոցես, որը կվերջանա հասարակական մի ձևից մյուսին անցնելով, մի ձևի, որ բացառում է այդ հակադրությունները:

§ 68. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՎՈՐՊԵՍ ՀԻՄՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՑԵՎ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ

ՍՈՑԻԱԼԻԶՄ ՑԵՎ ԿՈՄՈՒՆԻԶՄ

Տնտեսական բարձր վիճակի հիման վրա,—որը հետևանք է պրոլետարական պետության դեկավարությամբ կատարվող արտադրողական ուժերի զարգացման,—բարձրանում է կոմունիստական հասարակությունը:

Այդ հասարակությունը վորոշակի զարգանում է, չնայած ազատված է դասակարգերից, բայց դեռ ազատված չէ դասակարգային տիրապետության և դասակարգային պայքարի հետքերից: Այդ զարգացման պրոցեսում Մարքսն իր «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ, նրանից հետո Լենինը «Պետություն և հեղափոխություն» դրքում, ինչպես և VI կոնգրեսում ընդունված կոմինտերնի ծրագիրը տարբերում են երկու աստիճան՝ առաջին—կամ ստորին աստիճան,—սոցիալիզմի ստադիա և բարձր աստիճան՝ կոմունիզմի ստադիա: Սոցիալիզմի ստադիայում կոմունիստական հասարակության տնտեսությունը,—ասում է կոմինտերնի ծրագիրը,—դեռ նոր է դուրս գալիս կապիտալիստական հասարակություններից, մանավանդ, բարոյապես, և մտավորապես ծածկված հին հասարակության խաղերով: Սոցիալիզմի արտադրողական ուժերը դեռ այնքան զարգացած չեն, վոր ապահովեն աշխատանքի մերքեզների բաշխումն ըստ կարիքի· նրանք բաշխում են ըստ աշխատանքի: Աշխատանքի բաժանումը, այսինքն աշխատանքային վորոշ ֆունկցիաների կցումը մարդկանց վորոշ խմբերին, դեռ չի վերացվել և առանձնապես, դեռ չի վոչնչացած մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրությունը: Չնայած դասակարգերը վոչնչացվել են, բայց դեռ կան հասարակության հին դասակարգային բաժանման մնացորդները, հետևաբար և պրոլետարիատի պետական իշխանությունը, սախպողականության, իրավունքի մնացորդները: Այսպիսով մնում են անհավասարության վորոշ հետքեր, վորոնք դեռ չեն մեռել: Չի վոչնչացրած և դեռ ամբողջությամբ չի վերացած քաղաքի և գյուղի հակադրությունը: Բայց հին հասարակության այդ բոլոր մնացորդները չեն պաշտպանվում հասարակական վոչ մի ուժով: Կապված լինելով արտադրական ուժերի զարգացման վորոշ մակարդակի հետ, նրանք վերանում են, երբ կապիտալիստական հասարակակարգի կապանքներից ազատագրված մարդկությունն արագ տեմպով սկսում է բնության ուժերին, վերազատիրակում լինելն իրեն կոմունիզմի վոգով և սոցիալիզմից անցում է դեպի լրիվ կոմունիզմը:

Լրիվ կոմունիզմը կամ կոմունիստական հասարակության բարձր ֆազը մենք կունենանք այն ժամանակ, երբ կոմունիստական հասարակության արտադրողական ուժերի զարգացումը հնարավորություն կտա «ամբողջ մարդկային մասսաների բարեկեցությունը բարձրացնելու, նյութական արտադրության հաղացրած ժամանակը մաքսիմալ կրճատելու և հետևաբար պատմության մեջ չտեսնված կուլտուրական ծաղկման: Առաջին անգամ բոլոր և ամեն տեսակի պետական սահմանները վոչնչացած, առաջին անգամ միացած մարդկության այդ նոր կուլտուրան, կապիտալիզմին հակառակ, կհենվի մարդկանց մեջ յեղած սերտ և հաստակ փոխհարաբերությունների վրա: Ոչ մի այլ կուլտուրան ընդմիշտ կթագե ամեն տեսակի մխիթիկա, կրոն, նախապաշարմունք ու անտիսպաշտություն և ուժեղ ազդակ կտա ամենահաղթ գիտական իմացության զարգացմանը:

Մարքսն իր «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ այսպես և վորոշում կոմունիզմի բարձր ստադիան.

«Կոմունիստական հասարակության բարձր ֆազում, երբ կվերանա մարդուն սորկացնող աշխատանքի բաժանմանը յենթարկվելը, դրա հետ էլ կվերանա ֆիզիկական և մտավոր աշխատանքի հակադրությունը. երբ աշխատանքը կդադարի կյանքի համար միայն միջոց լինելուց և կդառնա կյանքի առանքը կղազարի կյանքի համար միայն միջոց լինելուց և կդառնա կյանքի առանձնատուկին պահանջը, երբ առանձին ահատների բազմակողմանի զարգացման հետ կաճեն նաև արտադրողական ուժերը և հասարակական հարստության բոլոր աղբյուրներն առատորեն կհոսեն, այն ժամանակ միայն կարելի կլինի հաղթահարել բուրժուական իրավունքի նեղ հորիզոնը, և հասարակությունը կարող է իր դրոշակի վրա գրել՝ յուրաքանչյուրն ըստ իր ընդունակության, յուրաքանչյուրին ըստ իր կարիքների»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ IX ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

Մարքս և Ենգելս—Կոմունիստական մանիֆեստ.
Մարքս—Քաղաքտնտեսության քննադատությունը (Ներածություն).
Մարքս— Գոթայի ծրագրի քննադատությունը.
Ենգելս—Անտի-Դյուրինգ.
Լենին—Պետություն և հեղափոխություն.
Լենին—Պրոլետարական հեղափոխությունը և renegat Կաուցկին.
Լենին—Ռեֆորմիզմ և հեղափոխական մարքսիզմ.
Լենին—Պրոլետարիատի դիկտատուրան վորպես դասակարգային պայքարի նոր ձև.
Ստալին—Լենինիզմի հարցերը.

ԳԼՈՒԽ X

ՈՒՄՄՈՆՔ ԻԴԻՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

§69. ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԲԵՎ ԻԴԵՈԼՈԳԻԱՆԵՐ, ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

«Իրավունքը՝ դա հասարակական հարաբերությունների մի սիստեմ է (կամ կարգ), որը համապատասխանում և ուրույն դասակարգի շահերին և պահպանվում է նրա կազմակերպված ուժի միջոցով»· այսպիսի պաշտոնական քնորոշում է տվել իրավունքի մասին ՌՍՖՍՀ Արդժողկոմը 1919 թ.:

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎՈՐՊԵՍ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՐՈՑԵՍ

Սակայն իրավունքը գոյություն ունի նաև վորպես մի վորոշ իդեոլոգիական պրոցես: Իրավունքը վորպես ձև գոյություն ունի միայն իրավագետ գիտունների գլուխներում, տեսություններում, այլև ամեն մի իրավական ակտի մասնակցողի գլխում: Այդ պատճառով էլ Մարքս ու Ենգելսի իրավունքը համարում էին իդեոլոգիական ձևերից մեկը, հասարակական գիտակցության ձևերից մեկը:

Իհարկե, վերին աստիճանի անճիշտ կլիներ իրավունքը պատկերացնել վորպես սոսկ իդեոլոգիական պրոցես, սոսկ «մաքուր իդեոլոգիա»: Պրոֆ. Ռեյսները հենց այդ մտքով էլ արտահայտվել է· «Մարքսիստը, դրում էր նա (Вестник Соцакадемии» № 1–ում,–կարող է ուսումնասիրել իրավունքը, վորպես սոսկ ընդհանուր իդեոլոգիայի տեսակետներից մեկը»: Ավելի անհեթեթ ու աղաղակող է բուրժուական տեսաբանների այն պնդումը, թե իրավունքը բղխում է «հավերժական գաղափարից», «ներքին խթանից», «բնածին գաղափարից» և այլն: Այս իդեալիստական պնդումը մխանգամայն հերքվում է իրավունքի զարգացման պատմությամբ: Իսկ ինչո՞ւ բուրժուական տեսաբաններն այդպիսի համառությամբ պնդում են իրավունքի գաղափարի «ապրիորիությունը», նրա գերդասական ծագումը: Նրա համար, վոր բուրժուազիան ամենից ավելի չահագրգռված է հենց իրավական ձևերի անխախտությամբ, վորովհետև իրավական իդեոլոգիան խոշոր դեր է խաղում ապրանքակապիտալիստական հասարակության մեջ: Ֆեոդալի և ճորտ գյուղացու կամ սարկաւորդ և սարկի հարաբերությունները համեմատաբար պարզ էին. նրանք համենայն դեպս յերկար ժամանակ վաղորոք վորոշվում էին: Այլ բան է բուրժուական հասարակությունը. այնտեղ կատարվում են միլիոնավոր իրավաբանական առուծախի գործարքներ, այնտեղ չահագործողների (կապիտալիստների) և չահագործվողների (բանվորների) հարաբերությունը ապրանքային գործարքների ձև է ընդունում: «Բուրժուական հասարակության մեջ ապրող մարդը, դրում է ընկ· Ադորատսկին՝ իր «Պետության մասին» գրքում, մշտապես դիտում է վորպես իրավունքների և պարտավորությունների սուբյեկտ: Նա կատարում է անհամար իրավաբանական հետևանքներ, վորոնք առաջ են բերում ամենաբարմացան իրավաբանական հետևանքներ: Այս պատճառով էլ վոչ մի հասարակություն այնպես կարիք չի ունեցել իրավունքի գաղափարին (և հենց ամենօրյա գործնական պահանջի համար) և չի հասցնում այդ գաղափարն այնպիսի մանրադնին մշակության, չի զարգանում այդ գաղափարն ամենօրյա չրջանառության անհրաժեշտ մի գնեք, ինչպիսին բուրժուական հասարակությունն է: Այս հանգամանքը պարզորեն ցույց է տալիս, վոր իրավունքի «ընդհանուր գաղափարների, աբստրակտ հիմունքների պաշտպանությունը՝ բուրժուական իդեոլոգիայի և բուրժուական

կարգերի հիմունքների պաշտպանության մի ձևն է: Պրոլետարիատը չի ճըղռում իրավունքն ամբողջովին· դրա համար էլ նա իրավունքը չի համարում մի ինչ վոր հավերժական ու անելիք բան: Վերացնելով չահագործումը, դասակարգերը, պետությունը, նա կվերացնի նաև իրավունքը:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ

Բարոյականությունը մեր ըմբռնումով «բարու» և «չարի», «արդարացիի» և «անարդարացիի», և առհասարակ պարտավորությունների մասին յեղած գաղափարների ու նորմանների դումարն է, վոր մեկ պետական որենքներով հաստատված չէ, բայց և այնպես կարգավորում է մեր հասարակական վարքագիծը: Բարոյականությունը պարունակում է վոչ միայն պատվերներ, այլև մարդկային գործողությունների գնահատանքի հատուկ ձև: Խոսքը վերաբերում է այն նորմաններին, վորոնց հետևելու յեռ մարդու կամքն ու գործունեությունը հավանություն գտնելու համար: Բարոյականությունն այն ընդհանուր բանն ունի իրավունքի հետ, վոր նա, ինչպես և իրավունքը, սահմանում է մարդու վարքն ու գործունեությունը կարգավորող վորոշ նորմաներ, հատուկ պատվերներ (դրա համար էլ եռիկան տարբերում էին հոգեբանությունից, վորի առարկան նույնպես ի միջի այլոց մարդու կամքն ու գործունեությունն էր, ինչպես նորմատիվ գիտությունը, նկարագրային գիտությունից): Ինչպես և իրավական հասկացողությունների սիստեմը, գաղափարների և նորմաների եռիկական սիստեմը համապատասխանում է վորոշ, պատմականորեն առաջացած հասարակական հարաբերությունների սիստեմին: Ենգելսը հավասարապես համարում է իրավունքն էլ, բարոյականությունն էլ մի կողմից «կարծիքներ և զգացողություններ», մյուս կողմից՝ «հասարակական հարաբերություններ»:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

Ինչո՞ւմն է բարոյականության տարբերությունն իրավունքից: Բարոյականությունը, նախ, այնպիսի նորմաներ ու հասկացողություններ է բովանդակում, վոր պետությունն հարկադրական ձևով չի պաշտպանում· պետությունը չի հարկադրում բարեգործության անել, մինչդեռ նա հարկադրում է մուրհակը վճարել: Գծծությունը, ինչպես և չոայլությունը, մշտապես յեղել են եռիկական (բայց վոչ իրավական) գնահատանքի առարկաներ: Սակայն գծծությունը յերբեք չի յենթարկվել որենքի չափավորող ներգործության: Գծծությունը սպառնացել է բուրժուային միայն սպառողական, բայց վոչ արտադրական չահերին, հետևապես և վոչ կապիտալիստական կուտակմանը և բուրժուազիայի հարաճուն տոնեսական գերիչխանությանը:

Վերի ասածներից հետևում է, վոր բարոյական պատվերների չրջանը շատ ավելի լայն է, քան իրավական չրջանը: Բարոյական չրջանը պարունակում է այնպիսի պատվերներ, վորոնք իրավական չրջանը: Սակայն պետությունը բնավ անտարբեր չի մնում վորոշ բարոյական նորմաների պահպանելու, դաստիարակելու խնդրի նկատմամբ: Դպրոցի, եկեղեցու և այլ հոգեկան ներգործության միջոցներով պետությունը ձգտում է վորոշ բարոյական նորմաներ դաստիարակել, մշակել: Բուրժուական բարոյականությունն իդեոլոգիական ամենաուժեղ գենքերից մեկն է աշխատավոր մասսաներին սանձահարելու համար: Բուրժուան իր «բարոյական հասկացողությունները» թելադրում է մանր բուրժուային և պրոլետարին:

Վերջապես բարոյականության յերրորդ տարբերությունն իրավունքից այն է, վոր նա կարող է տարբեր լինել վոչ միայն տարբեր ժամանակաչրջաններում, (իրավունքն էլ նույնպես տարբեր է լինում տարբեր ժամանակաչրջանում), այլև միևնույն ժամանակաչրջանում՝ —տարբեր դասակարգերի մեջ, մինչդեռ իրավունքը ավյալ ժամանակաչրջանում կարող է լինել միայն մեկն–ընդհանուր, ամմանված ավյալ հասարակության տիրող դասակարգի կողմից: Բարոյա-

կանությունը կարող է արտահայտել նաև ճնշված դասակարգի տեսակետը: Պրոլետարի համար, որինակ, անբարոյականությունն է չարեկիրթներության, իսկ կապիտալիստն անբարոյականությունն է համարում պայմանագրի «սաղատությունը», աշխատանքի ապատությունը» խախտելը (այսինքն արդելել չարեկիրթներին իր բանվորական ուժը ծախելու ի մեռա բանվոր դասակարգի և նրա վիճակի բարվոքման համար մղվող պայքարի): Ասենք այստեղ ել էի կարելի ասել, թե անանցանելի միմ կա բարոյականության և իրավունքի միջև, որովհետև չնայած բարոյական տարբեր տեսակետների տարբերի գոյության, կարելի չե գտնել յերկուսի համար ընդհանուր յելակետներ, որոնք պայմանավորված են հասարակական հարաբերությունների տվյալ սիստեմով:

§ 70. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վորքան վոր բարոյականությունն ընդգրկում է անմիջապես ուժով չգոտեպնդված, այլ վոր-ոշ հասկացողություններից բղխող պատվերներ, այնքան ավելի պարզորեն և հանդես գալիս վորպես իդեալոգիա, վորպես հասարակական գիտակցության մի ուրույն ձև, քան իրավունքը, թեև իրավունքն ել, ինչպես տեսանք, վորոշ հասարակական հարաբերություններ արտացոլող դասակարգերի գործարն է: Պարզ է, վոր անմիջապես պատմական ուժով չգոտեպնդված բարոյական նորմաները միայն այն դեպքում են եյական ուժ դառնում, յերբ նրանք տպավորվում են մասսաների գիտակցության մեջ, իրրև անսասան հասկացողություններ, յերբ նրանք դառնում են գերիշխող իդեալոգիա:

Զարմանալի չէ, ուրեմն, վոր դասակարգային հասարակության տեսաբաններն ու փիլիսոփաները միշտ ձգտել են եական բնագավառում ավելի, քան իրավունքի բնագավառում, ապացուցել բարոյական դատաստանների հավերժականությունը, աներերությունն ու անսասանությունը:

ՀՆԱԴԱՐՅԱՆ ՑԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

Մարդկային վարքագծի չափանիշ հարցը ծագել է և սկսել է զարգանալ դեռ հին դարերից: Արդեն հին-արևելյան կրոններում և ուսմունքներում պատահում են հարցեր այն մասին, թե ինչ է բարին ու չարը: Բարոյականության հարցերում յեվրոպական մչակույթի հիմնադիրները կարելի յե համարել հին Հունաստանի մտածողներին: Սոփեստների հասմար բարոյականության և արդարության խնդիրը լուծվում եր այն մտքով, վոր «մարդն է բոլոր իրերի չափանիշը» (Պրոթագոր) և անհատը չպետք է թույլ տա իր բնական իրավունքի սահմանափակումը հասարակական նորմաներով: Այս գաղտնի ինդիվիդուալիզմը համապատասխանում եր V դարում (նախքան մեր դարաշրջանը) առաջացած ապրանքային տնտեսությանը և հին հունական քաղաքի կապիտալիստական հարաբերություններին: Այդ ըմբռնման դեմ դուրս յեկավ Սոկրատը, բնատնտեսությամբ խարխլված հնի ներկայացուցիչը. «Առաքինությունը» նա նույնացնում եր «գիտելիքների հետ»:

Սոկրատի աշակերտը՝ արիստոկրատ-ազնվական Պլատոնը դուրս եր բերում բարոյականության եությունը դասակարգերի գերբնական աչխարհից: Իսկ Արիստոտելը, վոր արտահայտիչն եր հին հունական առևտրական կապիտալի ամենածագումնած չրջանի չահերի և համաչխարհային կայսրություն ստեղծելու ձգտումներին, բարոյականությունը հանում եր վոչ միայն գիտելիքներից, այլև «վոսկի միջուկը» ընծրող «բնական կամքից». բարձրագույն նպատակը յերջանկությունն է (եվդեմոնիզմ): Մասնակիներն հանում է հին բարոյականությունը հատուկ «բարոյական օրենքից», վոր առաջ է գալիս բնության ճիշտ ճանաչողությունից և նրա անհրաժեշտության յենթարկվելուց:

Եսիկյան մասներալիստական ուսմունքը, հիմք ունենալով մարդու բնությունը, նրա հաճույքի ու յերջանկության պահանջը, ծագել եր դեռ հին դարում (Եպիկուրի ուսմունքը), բայց ժխտվել եր ֆեոդալական գիտակցության կողմից: Միջնադարյան աչխարհայացքի հիմքում դրված եր Պլատոնի նեոպլատոնյան դասալիստական փիլիսոփայությունը, վոր առաջ եր յեկել հին հասարակության անկման չրջանում: «Իսկական յերանելությունը, ըստ Պլատոնի, ապատագրվելն է չարության պղտոր մարմնի պահանջներից:

Ցեխնեցական-ֆեոդալական հասարակությունը, վոր կառուցված եր նատուրալ, կիսանատուրալ, ճորտային և սեմի-պատրիարխալ տնտեսության վրա, չեր կարող ասկետիզմից բացի այլ բարոյական բարձր նպատակ առաջարկել աչխատավոր մասսաներին: Միայն մյնչև դարերի վերջում, վերածննդյան ժամանակաշրջանում սկսում են հանդես գալ բուրժուական իդեոլոգներ, վորոնք հիմնավորում են բարոյականությունը «բնական բանականությամբ» և դնում են նրա աղբյուրներն անհատական եզոիստական պահանջների մեջ (ինդիվիդուալիստական բուրժուական բարոյականություն):

Եպիկուրի ուսմունքը (փոքր ինչ փոփոխված ձևով) վերստին կենդանացավ բուրժուական մատերիալիստների ուսմունքներում:

ԿԱՆՏԻ ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՏԻԿԱՆ

Բուրժուական ինդիվիդուալիստական բարոյականության ամենահատակ արտահայտությունը տվել է Կանտն իր ուսմունքի մեջ «ազատ կամքով» ոժտված ավտոնոմ անձնավորության և «կատեգորիկ իմպերատիվի» մասին*), վոր հանդիսանում է ներքին օրենք ամեն մի մարդու համար: Ավտոնոմ նույնարժեք անձնավորության գաղափարը միանդամայն համապատասխանում է ապրանքա-կապիտալիստական հասարակության հիմնական օրենքին (արժեքի օրենքին), վորովհետև այդ հասարակության մեջ ապրանքա-արտադրողը պետք է «դեկավարվի սոսկ տնտեսական մերկ հաշվով, հակառակ դեպքում արժեքային հարաբերությունը չի կարող դրսևորվել իրրև հասարակական անհրաժեշտ հարաբերություն: Փոխանակողը պետք է իրավունքատեր լինի, այսինքն՝ ավտոնոմ լուծում տալու հնարավորություն ունենա, վորովհետև նրա կամքը պետք է գանվի իրերի մեջ: Վերջապես փոխանակողը մարմնացնում է սպրոնքորեն նույնարժեք մարդկային անձնավորության հմունքը, վորովհետև փոխանակության մեջ աչխատանքի բոլոր տեսակները հավասարվում են մեկը մյուսին և հանդում են արտրակտ մարդկային աչխատանքին»**):

Անձնավորության ավտոնոմությունը համապատասխանում է տնտեսական ազատության բուրժուական ըմբռնմանը՝ իրրև չուկայի ազատություն, ապրանքատարտադրողի ազատության և ապրանքի տնօրինման գործում: Իսկ կանտյան կատեգորիկ իմպերատիվը, վոր փոխակերպում է անձնական արարքներն ընդհանուր օրենքի, միանգամայն համապատասխանում է այն դրության, թե ապրանքա-կապիտալիստական հասարակության մեջ ապրանքատիրոջ «ազատությունը» (ձեռք բերելու և վաճառելու ազատություն) փոխակերպվում է փոխանակման պրոցեսում ընդհանուր օրենքին՝ արժեքի օրենքին: Կանտյան էթիկան

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՏԻԼԻՏԱՐ, ԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ֆրանսիայում, ուր որբժուազիան հեղափոխական եր, եռիկական ուսմունքները մատերիալիստական բնույթ ստացան: Եպիկուրյան ուսմունքը զարդացրին Հասենդին (17-րդ դարում) և մատերիալիստները (18-րդ դարում)՝ Լամետրին, Հոլբախը, Հելվիցիին: Զաֆավոր անգլիական բուրժուազիայի մոտ, վոր 18-րդ դ. հեղափոխությունից հետո անցել եր կապիտալիստական կուտակման իր ուղին՝ խաղաղ զարդացման պայմաններում, եռիկան կառուցվում է բնական եղոլիզմի և ուտելետարիզմի հիմունքներով*): Հորբսի և Լոկկի եռիկայի հիմքը (արտացոլելով կապիտալիստական կուտակման եյությունը), կազմում է այն բանական նախապատվությունը, վոր տրվում է անմիջական բավականությանը հանդես ապագա իսկական հաճույքի: Բանական եվդեմոնիզմի**) ամենահետևողական տեսակետ անց է կացնում ուտիլիտարիստ Բենտամը, վոր ստեղծել է իր տեսակի «մարդկային յերջանկության և ապերջանկության թվաբանությունը»: Ադ. Սմիտն ու Ռոմը բարոյական գործողությունների աղբյուրը տեսնում են «բարոյական զգացմունքի մեջ»,— «համակրանքի զգացմունքի մեջ» եղիստական զգացմունքների հետ զուգընթաց: 19-րդ դարի եռիկական ուտիլիտարիզմի ամենախոշոր ներկայացուցիչ հանդիսանում է Միլլը, վոր «ոգուտը» համարում է բարոյական վարքագծի վերջնական նպատակը:

Բացի եռիկայի մետաֆիզիկական տեսություններից, վոր բարոյական մոտպատակները քննում եյին վորպես մշտական, պատմությունից դուրս մի բան, գոյություն ունեցող նաև եվոլյուցիոն տեսությունից: Լեյբնիցն ուսուցանում եր, վոր ամենաբարձր առաքինությունն ու յերջանկությունն ամեն մի եյակի կատարելագործման ձգտումի հետևանքն է: Ֆիխտեյի, Հեգելի և Շելլինգմաների մոտ ինդիվիդուալ զարդացումը զուգադիպում է համաշխարհային ունիվերսալ զարդացմանը. այս՝ ըստ Ֆիխտեյի ու Շելլինգմաների կատանում է նրանում, վոր բարոյական աշխարհակարգը հաղթահարում է բնության կարգը, իսկ Հեգելի մոտ՝ էթիկական զարդացման իրագործումն է պատմության մեջ համաշխարհային բանականության միջոցով: Բարոյականության եվոլյուցիոն կենսաբանական տեսությունը զարդացրել է 19-րդ դ. յերկրորդ կիսում Հերբերտ Սպենսերը. նա համարում է բարոյական այն վարքագիծը, վորը նպաստում է ցեղի զարդացմանը, ժառանգականությամբ ամրացնելով բարենպաստ հատկանիշները: Մասամբ Սպենսերին է հարում նաև Դյուռն: Ֆրանսիական կապիտալի և իմպերիալիզմի յերջանում առաջ և գալիս Նիցշեյի եռիկան, վոր «նույնարժեք անձնավորության» տեղ դնում է «հոտային մարդկանց» վրա բարձրացող «գերմարդկանց» կուլտը: Այստեղ արտացոլվում է կապիտալիստական իմբակի առաջնության, վոչ միայն աշխատավոր աշխարհի, այլև ամբողջ կապիտալիստական աշխարհի նկատմամբ:

Ամփոփելով բարոյականության բուրժուական տարբեր ըմբռնումները, կարող ենք բացել հետևյալ դրույթները սահմանել. 1) Նրանք բարոյականությունը համարում են պարտադիր (վոմանք անփոփոխ) հատկություններ մարդկային բնության. 2) Նրանք կանդնած են ինդիվիդուալիստական տեսակետի վրա. ամենահետևողականները՝ կանտը, պակաս հետևողականները՝ անգլիական ուտիլիտարիստները, վորոնք անձնական չահը պարզորեն նույնացնում են հասարակականին. 3) Նրանք բարոյական զարդացումը չեն դուրս բերում սոցիալական զարդացումից:

*) Եգոիզմը (լատինական «յես» բառից) — յեսասիրություն է, ձգտում է միայն իր շահերը պաշտպանելու: Ուտելետարիզմն այն ուսմունքն է, վոր մարդկային գործունեության հիմքում դնում է միայն ոգուտ ստանալու ձգտումը:

**) Եվդեմոնիզմ կամ եվդայմոնիզմ հունարեն բառից է. նշանակում է յերջանկություն, եռիկական ուսմունք, վոր կյանքի վերջնական սկզբունքը կամ նպատակն ընդունում է յերջանկությունն: Եվդեմոնիզմի մի ենսակ է ղեպնիզմը, վոր յերջանկությունը գտնում է անհատական հաճույքի մեջ: Համարյա ամբողջ հին հունական եռիկան եվդեմոնիական բնույթ եր կրում:

§71. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՔՍ–ԼԵՆԻՆՅԱՆ ԸՄԲՌՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Իսկ ի՞նչ ես է հասկանում մարքսիզմը բարոյականության պրոբլեմը: Ամենից առաջ նա բարոյականությունը չի համարում մարդկային բնության պարտադիր հատկանիշը և չի հանում բարոյական դաղափարներն այդ բնությունից:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՍԻՔՆ Է

Մարքսիզմը չի ընդունում վոչ բարոյական զգացմունքների անփոփոխությունը, վոչ հավերժական բարոյական ճշմարտություններ, վո՛չ անփոփոխ բարոյական որենք: Բարոյականությունը «վերաբերում է մարդկային պատմությանը» (Ենգելս): Բարոյական աշխարհը պատմության և միայն պատմության արգասիքն է: «Զարի և բարու պատկերացումները, ասում է Ենգելսը, խիստ փոխվում եյին ժողովրդից ժողովուրդ, ժամանակաշրջանից ժամանակաշրջան, նույնիսկ հակասելով մեկը մյուսին»*): Ճիշ հակապես միթե՞ վորևե կրոնիրքալ (մարդակեր) ժողովուրդ «բարիք» չի համարում իր թշնամուն ուտելն ու այն ինչ մյուսներն այդ համարում են «չարիք»: Միթե՞ ժամանակից բուրժուազիան բանվորական ուժ «դնելու» իր պատասխանատվությունը չի համարում «չարիք»—բան, վոր մի ժամանակ ֆեոդալ–յոմանը համարում եր «բարիք»: «Դրա համար ել մենք ժխտում ենք, ասում է Ենգելսը, ամեն մի փորձ մեզ հրամցնելու մի վորևե դոգմատիկ բարոյականություն, հավերժական, վերջավորված, անփոփոխելի բարոյական որենքի ձևով, այն պատրվակով, թե բարոյական աշխարհը ևս ունի իր անսոց պատմությունից ու աղգային տարբերություններից դուրս սկզբունքներ: Մենք ընդհակառակը պնդում ենք, վոր մինչև որս գոյություն ունեցող բարոյականության սիստեմները յեղել են վերջին հաշվով արգասիք հասարակության համապատասխան տնտեսական դրության**):

Բարոյականությունը վոչ միայն զարգանում, այլև ծագում է հասարակության մեջ: Ենգելսը խստորեն ջախջախեց Դյուրինգի տեսակետը, վոր պնդում եր, թե բարոյականության աղբյուրները գտնվում են հասարակությունից, պատմության զարդացումից դուրս, մարդուն իրրև կենդանու հատուկ բնազդներում: Հիրավի, յեթե յենթադրենք, թե բարոյականությունը ծագում է հասարակությունից դուրս, բայց զարգանում ու ընդունում է տարբեր ձևեր հասարակության մեջ, կնշանակե ընդունել, վոր բարոյական յեզրույթների հիմքում դրված է մի ինչվոր անփոփոխելի բարոյական աշխարհ (աշխարհն ինքն իրեն),—դա կլինի մարքսիզմին թշնամի կանտիականություն:

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՌԵՎԻԶԻՈՆԻՍՏԱԿԱՆ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐ ԵՏԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՒՄ (ԲԵՐՆՇՏԵՅՆԱԿԱՆՆԵՐ, ԿԱՈՒՑԿԻ, ՊԼԵԽԱՆՈՎ, ԴԵՐԻՐԻՆ)

1890–ական թվականների վերջերի և 1900 թվերի սկզբների ռեվիզիոնիստները (Բերնշտեյն, Շմիդտ, Ստրուվե, Բերդյան և այլն) իրենց ուժերից դուրս եյին դալիս, վորպեսզի «չեկեն» մարքսիզմը կանտյան եթիկայով, վորովհետև կանտյան ուսմունքը, լինելով «ձևական» մարքսիզմը կանտյան եթիկայով, վորովհետև կանտյան ուսմունքը, լինելով վոչ–բուրժուական գրոմխ փիլիսոփայական տարբեր ուղղություններ մեջ և լինելով վոչ–բուրժուական տեղափոխության, այլ բուրժուական լիբերալիզմի (ավելի ճիշտ կապիտալիզմի և ֆեոդալիզմի հաշտեցման) փիլիսոփայություն, ամենից շատ մոտ եր ռեվիզիոնիզմին, վոր ձգտում եր հաշտեցնել մարքսիզմը (պրոլետարիատի ուսմունքը) բուրժուական իդեալոգիաների հետ: Ռեվիզիոնիստներն ընդունում են կանտի բարոյականության որենքը, ընդունում եյին, վոր բարոյական գիտակցությունը, բարու և չարի գաղափարը նախորոք դրված, ապրիորի, ընդհանուր մի բան է: Նրանց «ցիկլումը» մարքսիզմին կայանում եր նրանում, վոր ընդ

*) Ֆ. Ենգելս, Անտի–Դյուրինգ Մ—լ. 1928. եջ 84

**) Նույն տեղը, եջ 85:

դոնում եյին, թե «նյութական բովանդակությունն այդ հասկացողության (այսինքն՝ թե ի՞նչն է բարի և ի՞նչը չար), կախված է հասարակության այս կամ այն պատմական վիճակից: Կաուցկին կարծես զինվեց ռեվիզիոնիզմի և եթիկայի կանտյան ուսմունքի դեմ, բայց քանի վոր դեռ 1900-ական թվերի սկզբից նա տատանվում եր քաղաքական հաշտվողականությամբ դեպի ոպորտունիզմի տեսական եկլեկտիզմը, փաստորեն նա սահեց կանտյան և ռեվիզիոնիստական ռելսերը, եթիկայի ըմբռնման խնդիրներում: Եթիկական ամեն կարգի գիտակցության հիմքում Կաուցկին դնում եր դեռ յերիտասարդության որերից սոցիալական բնազդները, վորոնք հանդիսանում են «նախա-սկիզբներ, և վոչ կուլտուրայի արդասիքներ» և վորոնք առաջացել են մարդկանց մեջ նախքան հասարակական կեցությունը: Այս միտքը Կաուցկին արտահայտել է իր «Եթիկան և պատմության մատերիալիստական ըմբռնումը» գրքում և ուրիշ մի շարք գործերում: Նախնական կոմունիզմը, ըստ այդ տեսության իր գոյությամբ պարտական է մարդու սոցիալական բնազդներին, վոր դեռ չեր փչացել դասակարգային եգոիզմով: Յերիտասարդության հատուկ է «Հոգեկան իդեալիզմ», վորովհետև դեռ նրա սոցիալական բնազդները չեն փչացել: Ծերության հասակում դառնալով բացարձակ ռենեգատ և սոցիալ-ֆաշիզմի անամոթ տեսաբանը, Կաուցկին իր վերջերս լույս տեսած «Պատմության մատերիալիստական ըմբռնումը» աշխատության մեջ ձգտում է ապացուցել, վոր բուրժուական հասարակությունն «ավելի ու ավելի նույնանում է մարդկությանը»: Դրանով մենք վորոշ իմաստով հետ ենք դառնում դեպի զարգացման սկզբնական կետը: Սոցիալական բնազդներն այժմ նորից նետում են ամբողջ մարդկային ցեղը գործի դաշտ, վորի հետևանքով պատերազմը միևնույն ցեղի ազգությունների միջև ավելի ու ավելի նշավակվի իբրև անբարոյական ակտ»: Սոցիալական բնազդների իր այս հեքիաթներով ծեր ռենեգատն ուզում է հանդստացնել հոգուտ կապիտալի, կապիտալիստական Արևմուտքի բանվորներին ու գյուղացիներին հենց այն ժամանակ, յերբ հինգ խոշորագույն պետությունների ռազմական ուժերի պաշեստն ավելի քան կրկնապատկվել է 1914 թ. ռազմապաշեստից, յերբ զինվորական բյուջեները յեռապատկվել են, յերբ իմպերիալիստական յերկրները դարձել են զինվորական լագերներ և յերբ «բուրժուական հասարակությունը դառնալով ցեղակից մարդկությանը» այսոր-վաղը պատրաստվում է այդ մարդկությանը նետելու արյունահեղ սպանդանոցը և յերբ նրա առաքյալ, ռենեգատ Կաուցկին կոչ է անում և որհնում է այդ բուրժուական հասարակության արշավանքի յելնելու ընդդեմ աշխատավորների յերկրի: Իսկապես տեսական ոպորտունիզմն իր դագաթնակետին է հասել իր անորինակ տեսական ամբարտավանությամբ: Կաուցկին եթիկայի իր ըմբռնմամբ աշխատում է «մարքսիստական յերես» ցույց տալ. նա ընդունում է, վոր բարոյական որենքի կողքին, վոր արդյունք է մարդու բնության, գոյություն ունեն բարոյական նորմաներ, վորոնք հանդիսանում են «ուրույն հասարակական պահանջների արդասիքներ»: Կաուցկու այս ըմբռնումը սակայն շատ քիչ է տարբերվում մյուս ռեվիզիոնիստների պնդումներից. վորոնք չե՞ վոր նույնպես ընդունում են բարոյական որենքի «նյութական բովանդակությունը»՝ վորպես պատմության արդասիք:

Կաուցկուն մոտենում է Պլեխանովը, վորը բարոյականության հիմքում դնում է «ձգտում վո՛չ թե դեպի անձնական յերջանկություն, այլ յերջանկությունն ամբողջի՝ ցեղի, ժողովրդի, դասակարգի, մարդկության» ձգտում, վոր բղխում է «ինքնազոհաբերության ալտրուիստ ընդունակությունից, վոր անցնելով սերունդե-սերունդ, ուժեղանում է բնական ընտրությամբ: Թե՛ Պլեխանովի և թե՛ Կաուցկու մոտ բարոյականության հիմքը բնության և վողջ հասարակության մեջ է, իսկ սա հիմնովին հակասում է Մարքս-Էնգելսի ուսմունքին: Պլեխանովի փիլիսոփայական զինակից՝ Լ. Ի. Ակսելրոդը (Օրթոդոքս) ուղղակի գրավել է Կանտի դիրքերը, պնդելով, թե մարդկային ցեղին հատուկ է բարոյական գիտակցությունը, իսկ Պլեխանովի աշակերտ՝ Դեբորինը, վոր վերջերս դարձավ մենշևիկացող իդեալիզմի փիլիսոփայական դպրոցի պարագլուխը, ամբողջապես սողաց դեպի Կաուցկու դիրքերը: Դեռ 1906 թվին նա իր «Մանտիվելի եթիկան և Կանտի սոցիալիզմը» հոդվածում գրում եր, վոր նա ամբողջապես բաժանում է Կաուցկու տեսակետը եթիկայի հարցերում, իսկ վերջերս գրած «Ռեվիզիոնիզմը որթոդոքսիայի դիմակով» հոդվածում բարոյականության աղբյուր հայտարարում է «սոցիալական զգացումները», վոր այս կամ այն չափով հատուկ են հոտային կյանք վարող կենդանուն և վոր վերափոխվում են մարդկային պատմության շրջանում «սոցիալական միտումների և սոցիալական պարտականությունների, վոր դնում է համապատասխան կոլեկտիվն անհատի վրա»: Դեբորինի, ինչպես և Կաուցկու մոտ, բարոյականությունը պատմության արդասիքը չէ, այլ բնության արգասիքն է «գիտակցված սոցիալական բնազդ», ապրիորի, նախորոք մինչ-պատմական կեցությանը դրված ինչ-վոր բան... Կաուցկու հետքից Դեբորինը բարոյական «զգացումները» կամ «բարոյական պարտքը» բարոյական նորմաներից, վորոնց նա համարում է հասարակության պատմական ձևերի արդասիք: Հետևաբար բարոյականության աղբյուրները հասարակությունից դուրս են, իսկ բարոյականության նորմաների աղբյուրները՝ հասարակության մեջ: Այս իդեալիստական դրույթը և բարոյական աշխարհի յերկվությունը, իհարկե, վոչինչ ընդհանուր բան չունի մարքսիզմի հետ. սա ամենահատակ կաուցկիականություն է:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարքսիզմի կաուցկիական աղավաղումը եթիկայի հարցերում մի աղավաղում է, վոր բաժանում են և՛ Պլեխանովը, և՛ Դեբորինը, և հիմնված է պատմության հակամարքսիստական կենսաբանական ըմբռնման վրա:

Կապիտալիստական դասակարգը գիտությունն իրեն ծառայեցնելով, իր ձեռքն է կենտրոնացնում հասարակության համարյա ամբողջ տնտեսական հզորությունը: Արտադրության կազմակերպությունը դնելով գիտական հիմունքների վրա, գործադրելով արտադրության բոլոր կամ համարյա բոլոր պրոցեսների համար հզոր մեքենաներ, սարքավորումներ, կատարելագործված գործիքներ, կապիտալիստական դասակարգը հաղթում է մանր արտադրողների ամբողջ հսկա մասսային:

Միայն խոշոր կապիտալը կարող է օգտվել նոր գյուտերից, միայն նա կարող է գնել թանկագին մեքենաներ և գործիքներ, միայն նա կարող է կառուցել հսկայական շենքեր, միայն նա կարող է կառուցել իրեն անհրաժեշտ լաբորատորիաներ, հետազոտական ինստիտուտներ, միայն նա կա-

րող է վարձատրել գյուտարարական փորձերը: Նա, այդ դասակարգը կարող է առաջ տանել և առաջ է տանում տեխնիկան և գիտությունը, երբ այդ նրան հարկավոր է: Արդյունաբերական կապիտալիզմի շրջանում, որ հենվում է մրցման վրա, ապա ուրեմն ցածր գների վրա, կապիտալիստական դասակարգն ընդհանրապես տեխնիկան առաջ էր տանում, որովհետև դա էժանացնում էր ապրանքների արժեքը և իջեցնում նրանց գները: Իսկ ֆինանսական կապիտալի շրջանում, երբ կապիտալների միացումը որոշ չափով վերացնում է մրցումը, կամ համենայն դեպս ուժեղ կերպով թուլացնում է այն, սկսում են վերանալ տեխնիկայի զարգացման մասին հոգալու կապիտալիստական դասակարգի ձգտումները: Կապիտալիստներն ամեն քայլափոխում գյուտարարության պատենտներ են գնում և թաքցնում իրենց արկղների մեջ, կազմակերպվում են մրցանակների տնտեսություններում վնասարարություն և այլն:

Կապիտալիզմի հետպատերազմյան եկոնոմիկան մի շարք տեխնիկական և ռացիոնալիզատորական նվաճումներ է արել: Սրա համար ոչ միայն բուրժուական տնտեսագետները, այլև սոցիալիստական տեսաբաններն և քաղաքականագետները ի պատիվ կապիտալիզմի ցնծագին հիմներ երգեցին:

Մարքսիզմի կեղծարարները, ինչպես Կաուցկին, Կունովը, Հիլֆերդինգը և ուրիշներն շտապում էին «Մարքսյան "սխեմա»-յի հիման վրա ապացուցել, որ կապիտալիզմը դեռ երկար կապրի, որովհետև նա ընդունակ է հետագա զարգացման: Լենինի կողմից փայլուն կերպով ապացուցած կապիտալիզմի նեխման փաստը ոչ միայն սոցիալ-համաձայնողական տեսաբաններն էին ժխտում, այլև նրան կասկածով էին մոտենում աջ ուկլոնիստները: Մարքսը և Լենինը կեղծվում են կապիտալիստական առաջադիմության փառքի համար:

Տեխնիկական պրոցեսի արգելակումը և մոնոպոլիստական կապիտալիզմի նեխումը ոչ թե հետևանք է կապիտալիզմի ուժերի լրիվ քայքայման և նրա բացարձակ հետադիմության, այլ հետևանք է արտադրողական ուժերի զարգացումը կանգնեցնելու ոչ լրիվ կերպով ծավալելու: Արտադրողական ուժերի զարգացումն ավելի լրիվ և ամբողջությամբ կիրագործվեր, եթե տնտեսական ղեկի մոտ կանգնած լինեյին ոչ կապիտալիստները, այլ սոցիալիստական իշխանությունը:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ

Գիտությունը տիրող դասակարգերի ձեռքին շահագործման և ճնշման, իսկ հեղափոխական դասակարգի ձեռքին ազատագրական մեծ պայքարի գործիք է: Միայն իսկական գիտությունը, այսինքն այն գիտությունը, որ արտացոլում է իրականությունը, կարող է հաջողությամբ այդպիսի դեր խաղալ: Այդպիսի գիտությունը, ինչպես մենք վերևում տեսանք, նյութ են տալիս մարդկության կուտակած գիտելիքների ահագին մասսան, իսկ մեթոդ և սիստեմ տալիս է մարքսիզմը:

Մարքսիզմը «զարգանում է բոլոր երկրների հեղափոխական փորձի և հեղափոխական մտքի հանրագումարից» (ԼԵՆԻՆ): Բայց ծագելով, կազմակերպվելով և զարգանալով որոշ պայմաններում, նա հակառակ ներգործություն է անում մեր ժամանակի բանվորական, դրա հետ նաև ամբողջ հասարակական շարժման վրա: Մարքսիզմը բանվորական շարժմանը տվեց մի տեսություն, որը ծառայում է նրան ոչ պակաս, քան կողմնացույցը ծովագնացին. նա տվեց նրան մի տեսություն, որը «միացնում է խիստ և բարձր գիտականությունը... հեղափոխականության հետ և միացնում է ո՛չ պատահականորեն և ո՛չ էլ նրա համար, որ այդ ուսմունքի հիմնադիրն անձամբ իր մեջ միացնում է գիտնականի և հեղափոխականի հատկությունները, այլ հենց տեսության մեջ միացնում է ներքնապես և անքակտելի-

բեն»:*) Մարքսիզմը պրոլետարիատի դասակարգային պայքարը բեղմնավորեց գիտությամբ: Դասակարգային պայքարի նշանակության մասին խոսել են դեռ մինչև Մարքսը, սակայն նա ապացուցեց, վոր այդ պայքարն անխուսափելիորեն պետք է տանի դեպի սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրա: Նա այդ ապացուցեց գիտականորեն, նա ապացուցեց պրոլետարիատի կողմից իշխանության նվաճման պատմական անհրաժեշտությունը, նա ապացուցեց, վոր այդ բխում է իրականությունից: Մարքսն իր ժամանակի հանգամանքների համաձայն կարող եր միայն հիմնավորել պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, իսկ Լենինը և բոլշևիկյան կուսակցությունն արդեն կարող եյին պրոլետարական հեղափոխության և իշխանության նվաճման ուսմունքն ավելի մշակել և պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը դարձնել փաստ: Պատմությունն ապացուցեց մարքսիզմի և լենինիզմի ճշտությունն ու մեծ արդյունքը՝ նա այդ ապացուցեց մեր յերկրում պրոլետարիատի կողմից իշխանության նվաճման փաստով:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պրոլետարական դիկտատուրան պետք է և կարող է վոչ միայն խորտակել շահագործողների դիմադրությունը, այլև ստեղծել աշխատանքի լավագույն կազմակերպություն, կառուցել ավելի արտադրողական տնտեսություն և անդասակարգային հասարակություն: Առանց գիտության աջակցության անհնար է այդպիսի տնտեսություն և հասարակություն կառուցել: Առանց մարդկության կուտակած և խիստ սիստեմի բերած գիտելիքների և փորձի յուրացման անհնար է արտադրողական ուժերի զարգացումը հասցնել չտեսնված բարձրության: Սոցիալիզմը կարող է կառուցվել միայն բարձր տեխնիկայի հիման վրա, իսկ տեխնիկական պահանջներն առաջացնում են, ինչպես մենք տեսանք, գիտության ուժեղ զարգացում, մյուս կողմից էլ գիտությունը տեխնիկայի զարգացման գործիք է: Սոցիալիզմը չի կարող կառուցվել, յեթե պրոլետարիատը չի օգտագործում կապիտալիզմի տեխնիկական և գիտական բոլոր նվաճումները: Բայց սոցիալիզմ կառուցել, նշանակում է տեխնիկան ու գիտությունը հասցնել նույնպիսի բարձրության, վոր չի տեսել կապիտալիզմը:

Մեծ նշանակություն ունի աշխատանքի գիտական կազմակերպությունը: Կապիտալիզմը նույնպես գիտեր և գործադրում եր աշխատանքի գիտական կազմակերպությունը: Բայց կապիտալիստը բանվորական ուժը՝ գիտականորեն օգտագործում է այդ ուժի աշխատանքային եներգիան ամենամեծ չափերով շահագործելու համար: Կապիտալիստի համար նպատակը վոչ թե մարդն է, այլ նրան շահագործելը: Իսկ սոցիալիզմը պետք է ստեղծի աշխատանքի այնպիսի գիտական կազմակերպում, վորը պաշտպանելով մարդուն, խնայելով նրա ուժերը, պետք է տա արտադրողականության մաքսիմում: Աշխատանքը վոչ միայն չի քայքայի մարդուն, այլև կդառնա նրա համար ստեղծագործական հաճույքի աղբյուր:

§75. ԿՐՈՆԸ ՎՈՐՊԵՍ ԻԴԵՈԼՈԳԻԱ ՅԵՎ ԱՅՆ ՀՈՂԸ, ՎՈՐԻ ՎՐԱ ՆԱ ԾԱԳՈՒՄ ՅԵՎ ԶԱՐԳԱՆՈՒՄ Է

Մենք արդեն խոսել ենք վերնաշենքի և բազիսի կախման և առանձնապես հասարակական գիտակցության և հասարակական կեցության՝ արտադրական հարաբերությունների և նրանց հիմքում գտնվող արտադրողական ուժերի կախման մասին: Մենք պետք է պարզենք, վոր իդեոլոգիան՝ հասարակական գիտակցության ձևը, հասարակական վորոշ հարաբերությունների գաղափարական անդրադարձումը վերջին հաշվով առաջանում են տնտեսական վորոշ պայմանների շնորհիվ: Իդեոլոգիաները միշտ բազիսից չափազանց հեռու չեն լինում, բայց սա չի փոքրացնում նրանց և բազիսի կապը, [illegible]

*) Լենին.

դրսևորումը: Բազիսի այդ հեռավորության ու նյութական պայմանների և իդեոլոգիաների միջև յեղած անտեսանելի կապի բացակայությունը բերում են այն յերևակայության, վոր դիտողը գործ ունի միայն գաղափարական նյութի հետ, վորն ընդունում է առանց քննադատության, վորպես մտածողության ստեղծած, չհետազոտելով, մտածողությունից անկախ, ավելի հեռավոր պրոցեսի հետ յեղած հնարավոր կապը»: Բոլոր իդեոլոգիաներից կրոնն «ամենից հեռու է նյութական հիմքից և ըստ յերևույթին ամենից խորթ է նրան» (Էնգելս):

ԳԵՐԲՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ, ՀԱՎԱՏԸ ԿՐՈՆԻ ՀԻՄՔՆ ԵՆ

Կրոնը, վերջին հաշվով, յուրաքանչյուր կրոն հավատ է դեպի գերբնական ուժերը, վորոնք ընդունակ են միջամտելու իրերի բնական ընթացքին և ուղղություն տալու նրան դեպի ինչ-վոր «նպատակներ»՝ այդ ուժերի կողմից սահմանված (կամ մի վերին ուժ,—աստված. դրանից գործը չի փոխվի): Իրական, «կոպիտ» նյութական աշխարհի կողքին դրվում է աստվածային կամքը, վորը բարձր է այդ աշխարհից: Ի՞նչը կարող է նյութական հիմքից ավելի կտրված, ավելի «բարձր» լինել, քան այս հայացքը: Ֆեոդալական, կալվածատիրա-ճորտատիրական աշխարհի իդեոլոգները կրոնը միշտ պատկերացրել են վորպես «յերկնային», «վոչ այս աշխարհից», «աստվածային» գործ և այլն: Ֆեոդալական հասարակության համար կրոնն ամենագլխավոր իդեոլոգիան եր, վոր իրեն եր յենթարկում հասարակական գիտակցության մնացած բոլոր ձևերը: Այն շրջանում, յերբ բուրժուազիան պայքարում եր աշխարհիկ և հոգևոր ազնվականության դեմ, իր գլխավոր իդեոլոգիան եր դարձրել իրավունքը և յերբեմն կոկետություն եր անում աթեիզմի հետ: Բայց այդ յերկար չտևեց: Հենց վոր պրոլետարիատն սկսեց վոտքի կանգնել և իր դասակարգային պահանջներն առաջադրեց, բուրժուազիան ընկավ իր նախկին հակառակորդի գիրկը, և կրոնը՝ զանազան ուղղումներով, վորը եյությունը չի փոփոխում, դարձրեց իր իդեոլոգիական զենքը: Բուրժուական իդեոլոգները պարզ և բացարձակ չեն ասում, ինչպես միջնադարյան յեկեղեցական փիլիսոփաները, վոր իբր թե յերկու ճշմարտություն գոյություն ունի՝ մի ճշմարտությունը՝ աստվածային և մյուսը՝ մարդկային: Սակայն փաստորեն, գիտական ճշմարտության կողքին, վորը կարող է հիմնվել միայն նյութական աշխարհի ըմբռնողության վրա և վորին ստիպված են վորոնել, վորքան այդ պահանջում են կապիտալիստական շահերը, նրանք դնում են «հոգևոր» ճշմարտությունը, այս աշխարհից դուրս գտնվող «բարձր սկզբնավորությունը»:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՅԵՎ ԿՐՈՆԸ

Միայն պրոլետարիատը, վոր շահագրգռված է ամեն տեսակի դասակարգային տիրապետության վոչնչացմամբ, պատռեց այդ տիրապետության կրոնաիդեոլոգիական քողը: Մարքսիստական գիտությունը, առաջին հերթին պատմական մատերիալիզմը, բաց է անում կրոնի արմատները և հակառակ կրոնի, «յերկնային եյությունը» գտնում է յերկրի վրա, կյանքի նյութական պայմանների հիմքում:

Մարքսիստական գիտությունը հաստատում է, վոր կրոնը, ինչպես և ամեն մի իդեոլոգիա, արտացոլումն է արտադրական ուժերի և դրանցով պայմանավորված արտադրական ուժերի և դրանցով պայմանավորված արտադրական հարաբերությունների վորոշ դրության:

Ցուրաքանչյուր կրոնի հիմքում գտնվում է անիմիզմի, ոգիների ինքնության էությունների անձնավորման կամ չնչավորման այս կամ այն գաղափարակերպությունը: Ցուրաքանչյուր իրի հետև գտնվում է վոգի կամ այդ իրի հոգին: Վոգին կամ հոգին պատկերացնում են վորպես անձնավորություն, վոր ոժտված է կամքով, ունի ցանկություն, նուիրիկ գիտահաճույքներ: Այդ պիտի պրիմիտիվ (նախնական) ձևով է մտածում նախնադարյան վայրենին բնության էությունների և այդ էությունների միջև եղած կապի մասին: Բայց և բարձր աստիճանում էլ բոլոր կրոնատիպիկ սիստեմներն էլ ըստ էության անիմիստական տեսակետից առաջ չեն շարժվել. ցրված քաղաքակրթության անիմիստական տարրերը ներկայացված են (մեծ մաթիվ վոգիների փոխարինումը նրանց կազմակերպված էներարխիայով (մեծ վոգու» գլխավորությամբ), այսպես կոչված միստուլածության սիստեմը, ըստ էության գրությունը չի փոխում: «Անիմիստական մտապատկերներից դուրս կրոն մինչև այժմ չի եղել և չի էլ կարող լինել», ասում է Պլեխանովը իր «Կրոնի մասին» հոդվածում:

Հասարակության զարգացման ամենավաղ աստիճանում հանդիպում ենք կրոնին առասպելի ձևով: Հավաքողական տնտեսության շրջանում մարդու կախումը բնությունից չափազանց մեծ եր, կարելի չե ասել՝ անպարտելի: Այն ժամանակվա մարդու գոյության միջոցների «կենսական բյուջեյում» առաջին, համարյա մեկ տեղը բռնում եյին անդի միջոցները: Այդ կետում մարդը կախում ուներ բուսական և կենդանական միջավայրից, վորովհետև միայն բույսերն ու կենդանիները անմիջապես կարող եյին բնական ձևով կերակուր տալ: Այդ պատճառով մարդն զգում եր իր կապն ու կախումը կենդանական և բուսական աշխարհից: Մարդը նույնիսկ զգում եր կենդանիների զանազանությունը, վորովհետև կենսական միջոցների հայթայթման գլխավոր գործիքները, համարյա բացառապես իրենց սեփական որգաններն եյին, իսկ կենդանիների մոտ այդ որգաններն ավելի ուժեղ եյին և ավելի լավ կազմակերպված, քան մարդունը: Ահա թե ինչո՞ւ անտեսական այդ ցածր աստիճանում (ինչպես վորսորդական կենցաղն եր) ծագեց կրոնական գիտակցության սկզբնական ձևը՝ առասպիլը: Մարդը տեսնում է «վոգիներին», «ասպածնին», հոգոր նախորդներին իրեն ծանոթ այս կամ այն կենդանիների և բույսերին», հոգոր նախորդներին իրեն ծանոթ այս կամ այն կենդանիների և բույսերի մեջ: Սակայն յերբ մարդն սկսեց չափազորձել ընտանի կենդանիներին, այս հանգամանքը մարդու գիտակցության մեջ վոչնչացրեց կենդանիների մարդու հանդեպ ունեցած գերագանցությունը: Ընդհակառակը, այս հանգամանքը ներչնչում է մարդուն գիտակցելու իր գերագանցությունը կենդանական աշխարհի հանդեպ: Մարդն այլևս իրեն կենդանու չի նմանեցնում: «Ցերբ մարդը յեղները լծում է դութանին կամ ձիերը սայլին, ապա այն ժամանակ արդեն դժվար է յենթադրել, վոր մարդը մեծ ձգտում ունի իրեն կենդանու նմանեցնելու»:*) Սա ազդակ է դառնում կրոնի անտրոպոմորֆիզացիային («մարդացնում»): «Վոգիները», «ասպածները», «ասպածային նախորդները» և այլն գտնվում են վոչ թե կենդանական աշխարհում, այլ մարդկային տոհմում: Տոտեմիզմի, կենդանաբուսական անիմիզմի տեղը բռնում է անթրոպոմորֆային անիմիզմը:

ԲԱԳԴԱՆՈՎ-ԲՈՒԽԱՐԻՆՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Նախնադարյան անիմիզմը, ինչպես մենք տեսանք, համապատասխանում է արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակին և անդրադարձնում է իր մեջ մարդու հարաբերությունը դեպի բնությունը: Սակայն գոյություն ունի կրոնի ծագման մի ուրիշ տեսություն: Ա. Ա. Բազդանովը, (իսկ հետո Ն. Ի. Բուխարինը) արտահայտում են այն հայացքը, վոր նախնադարյան անիմիզմն անդրադարձնում է «ավտորիտար հասարակական ձևերը»: «Ավտորիտար» բառը սկիզբ է առնում լատինական բառից, վոր նշանակում է «իշխանություն»: Ավտորիտար համայնքը՝ այն համայնքն է, վորի մեջ արդեն իշխանություն կա—«ավագը տոհմում» կամ «նահապետը»: Հոգին՝ բարձրագույն զեկավարող սկիզբն է, իսկ մարմինը՝ ստորին զեկավարող սկիզբն է, վոր կատարում է բարձր կամքը: Այդ յերկուական ըմբռնությունը («անիմաիկի» յերկվության,—ըստ Բազդանովի արտահայտության) անդրադարձնում է «ավտորիտար հասարակական ձևերի յերկվությունը, արտադրության զեկավարող-կազմակերպողների և նրանց կամքը կատարողների միջև յեղած հարաբերությունը: Այսպիսով, ըստ Բազդանովի դուրս է գալիս, վոր անիմիզմը, նշանակում է նաև կրոնը, յերևան է գալիս արտադրողական ուժերի զարգացման ավելի բարձր աստիճանում, վոր նա արդեն իր ծագման մասնավորում անդրադարձնում է մարդկանց միջև յեղած հարաբերությունները: Գլխավորը քննադատելով Բազդանովի տեսությունը, ցույց տվեց, վոր անիմիզմն առաջացել է մինչև արտադրության ավտորիտար կազմակերպությունը, վոր ստորին և վերնորդական ցեղերը, վորոնք զարգացման ամենաստոր աստիճանում են կանգնած և չգիտեն ավտորիտար կազմակերպությունը, հետևում են անիմիզմին: Նա արդարացի կերպով յենթադրում է, վոր կրոնական գիտակցությունը հետագայում արտացոլում է մարդկանց միջև յեղած հարաբերությունները, վորոնք ծագում են արտադրության ավտորիտար կազմակերպության հողի վրա վորպես արտադրողական ուժերի զարգացման աստիճաններից մեկը և վոչ միակը:

ԿՐՈՆԸ ՑԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՁԵՎԵՐԸ

Արտադրական ուժերի զարգացման ավելի բարձր աստիճանում կրոնն արտացոլում է տոհմային և դասակարգային հասարակության արտադրական հարաբերությունները: Արտադրական հարաբերությունների փոփոխվելուվ փոխվում եր նաև կրոնը: Բարմաստվածությունն արտացոլում է հասարակության այնպիսի կազմություն, յերբ այդ հասարակությունը կազմված եր իրար հետ թուլ կապված բազմաթիվ ցեղերից և տոհմերից, վորոնց գլուխը կանգնած եյին սեփական իշխանները: Միապետական սիստեմն առեղծում է միաստվածության կրոնը: Աստված՝ «յերկնային թագավորն» և, ընդամին դաժան, վրիժառու թաշտավոր է, ինչպես իր յերկրային յեղբայրակիցը: Նա իրեն չրջապատում է նույնպես գանազան աստիճանի հրեշտակներով չքախմբով, ինչպես յերկրային թագավորը չրջապատվում է պալատականներով և ազնվականներով: Բուրժուական լուսավորիչները, այն դարերում, յերբ նրանք դուրս եյին յեկել յեկեղեցու և անտհման միապետության ֆեոդալիզմի դեմ, առաջ եյին քաշում «դեիզմը»,—մի այնպիսի կրոնական ուսմունք, վորը ատհմատիպում եր ատծու հզորությունը բնության օրենքներով («յերկնային պարլամենտարիզմ» ըստ Պլեխանովի արտահայտության): Նույնիսկ աստծու (կամ աստվածների) և մարդկանց հարաբերությունները պատկերացվում են այնպես, ինչպես դասակարգերի հարաբերությունները հասարակության մեջ: Մերկանտիլական կրոնները պատկերացնում են այդ հարաբերությունները վորպես տեր—աստծու և ստրուկների հարաբերություններ («Ես քո ստրուկն եմ, քո ստրուկի վորդին»—ասում է ազոթողն աստուծուն): Ֆեոդալական չրջանի կրոնական պատկերացումների մեջ աստվածը պատկերացվում է վորպես «թագավոր թագավորաց» (սուվերենի և վասալների միջև յեղած հարաբերությունների անդրադարձումը) և այլն:

ԿՐՈՆԻ ԿՈՆԿՐԵՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽՎՈՒՄ Ե ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Կրոնական պատկերացումն արտադրում է հասարակական կեցությունը, վորը վոխվում է արտադրության ձևի փոփոխման ազդեցության տակ:

Այս յեղրակացությանը մենք կհանդենք, յերբ ուսումնասիրենք կրոնի պատմությունն ընդհանրապես կամ մի վորևե առանձին կրոնի, ինչպես որինակ՝ քրիստոնեական, հրեական, մահմեդական, բուդդայական և այլն: Մենք

*) Պլեխանով—Կրոնի մասին:

Նույն անունը կրելով կրոնը պատմական տարբեր դարաշրջաններում փոխում է իր կոնկրետ բովանդակությունը: «Արտադրության ձևի յուրաքանչյուր հեղաշրջման ժամանակ, առում է Մերինգը «Պատմական մատերիալիզմի մասին» գրքույկում,—քրիստոնեական կրոնի հոգևոր բովանդակության մեջ է մտնում և դանդաղորեն կամ արագ հեղաշրջում»: Ցեվ իսկապես, քրիստոնեական կրոնը հարմարվում էր տարբեր հասարակական-քաղաքական կարգերին, նա իդեոլոգիական զորավոր ծածկում էր ամեն տարբեր հասարակական կարգերը. նա օրհնաբանում էր և՛ հին հռոմեական պետությունը, և՛ միջնադարյան Ցվերոպայի ֆեոդալական կարգերը, և՛ քաղաքների համքարական կարգերը, և՛ առևտրական կապիտալը, և՛ արդյունաբերական ազատ ֆինանսական կապիտալի տիրապետությունը: Հրեական կրոնի պատմական դոկումենտներում, աստվածաշնչում և Թալմուդում կարելի է գտնել հասարակական տարբեր սիստեմների արդարացումն ու իդեոլոգիական անդրադարձումը: Նույնը կարելի է գտնել նաև մյուս կրոնների մեջ: Կրոնական զարգացման տարբեր դարաշրջանները միշտ ուղեկցում են դիտակցության զարգացման տարբեր հասարակական կեցության զարգացման տարբեր դարաշրջաններին, իսկ կեցությունն էլ պայմանավորվում է արտադրողական ուժերի զարգացմամբ:

§ 76. ԿՐՈՆԸ ՎՈՐՊԵՍ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՑԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

Պատմությունը դիտե այնպիսի չրջաններ, երբ ճնշված դասակարգերը բաց են թողել կրոնական նոր լոզունգներ և դասակարգային պայքարը տարել են կրոնական քողի տակ: Միջնադարի գյուղացիական ապստամբությունները, սոցիալական խոշոր շարժումները, որ ազատագրական կոմունիզմի լոզունգներ էին առաջադրում, XVII դարի անգլիական հեղափոխության դեմոկրատիկ հոսանքները և այլն, ընթանում էին որոշ չափով կրոնա-կոմունիստական աղանդավորների և հերետիկոսությունների դաղափարական ազդեցության տակ: Սա բացատրվում է նրանով, որ ճնշված դասակարգերը նույնիսկ հեղափոխական չրջաններում չեն թարկվում են տիրապետող դասակարգերի դաղափարական ազդեցությանը:

ՏԻՐԱՊԵՏՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ՑԵՎ ԿՐՈՆԸ

Դասակարգային հասարակության համար կրոնն անխուսափելի չէ: «Քրիստոնյան աչխարհի կրոնական անդրադարձումն, ասում է Մարքսը, ընդհանրապես կարող է վերանալ միայն այն ժամանակ, երբ մարդկանց կյանքի գործնական, ամենօրյա հարաբերությունները կարտահայտվեն իրենց փոխադարձ և բնության հետ իրեղած պարզ և բանական կապերով», այսինքն սոցիալիզմի ժամանակ*: Ինչո՞ւ չի կարելի դասակարգային հասարակությունը պահպանել առանց կրոնի: Վորովհետև այդ հասարակությունը հիմնվում և ճնշման վրա, իսկ «կրոնն, ասում է Լենինը, հոգևոր ճնշման տեսակներից մեկն է, որ կա ամենուրեք ժողովրդական մասսաների վրա, որոնք ուրիշների համար մատնված են, հավիտենական աչխատանքի, կարիքի և մենակության Շահագործողների դեմ չահագործվողների մղած պայքարն անդորրությունը նույնպես անխուսափելիորեն առաջացնում և հալատ դեպի հանդերձյալ կյանքը, ինչպես վայրենու անդորրությունը բնության դեմ պայքարելիս»**:

ԿՐՈՆ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերևում մենք հաստատեցինք, որ հին իդեոլոգիաների ամենաուժեղ ներկայացուցիչներից մեկը «իդեոլոգիական դասերի» չահագրգռվածությունն է՝ պահպանելու այդ իդեոլոգիաները: Վոչ մի իդեոլոգիա այնքան զորեղ

---

* Կապիտալ I, գլ. 1.

** Լենին, սոցիալիզմ և կրոնը:

մարդկային ազատության չունի, վորքան կրոնը: Նախնադարյան կրոնն արդեն իր մեջ պարունակում էր «կրոնական պաչտամունքը կամ, ինչպես ասում են հոլլոը» (Պլեխանով): Պաչտամունքն արտահայտվում է կրոնական վորոչ ազատագրություններով՝ կրոնական ծիսակատարություններ, վոգիներին հմայելու խոսքեր, աստվածների գումը չարժելու համար զոհաբերություններ և այլն: Նախնադարյան հասարակության այն աստիճանում, վորտեղ կա աչխատանքի բաժանում, պաչտամունքը դառնում է վորոչ մարդկանց՝ կախարդների, քրմերի և հոգևորականության գործունեք: Մարդկանց և աստվածների միջև միջնորդի դեր կատարելու համար հոգևորականությունը հավելյալ մթերքից քիչ բաժին չէր ստանում: Բոլոր ժողովուրդների մոտ էլ հոգևորականությունը զինվորական և մյուս վոչ արտադրողական խմբակների հետ միասին բարձր, չահագործող դասակարգերի սկիզբն է դնում: Բոլոր ժողովրդների «ազնվազարմ» դասերը կազմում են հոգևորականությունը և զինվորական բարձր աստիճանավորները: Միջին դարերում Ցեվրոպայի համարյա բոլոր քրիստոնեական հոգևորականությունը չահագործող դասակարգի ամենահարուստ, ամենահզոր խմբակն էր:

Կրոնական ներգործման ապարատը կազմված է վոչ միայն մարդկանցից, այլև իրերից՝ վանքեր և տաճարներ, իրենց բեմերով, կուռքերով, արքեպատակերներով և այլն, յեկեղեցական ունեցվածք, փողեր, հողեր և այլն:

Այս բոլոր կազմակերպությունը՝ յեկեղեցին, պատմության տարբեր չրջաններում յեղել է չափազանց ուժեղ տնտեսական կազմակերպություն և հասարակության տնտեսական հիմքի մեջ ներթափանցելով, զգալիորեն ուժեղացնում էր նրան: Ֆեոդալիզմի չրջանում յեկեղեցին ամենահարուստ հողատերն էր և վոչ պակաս, քան աչխարհական տիրապետողները, յերբեմն նրանցից էլ ավելի դաժանորեն, կեղեքում էր ճորտ գյուղացիներին:

Հին Ռուսաստանի չատ չրջաններում ճորտերը վանքերում ավելի չատ են ենթարկվում, քան աչխարհական կալվածների մեջ: «Հոգևոր» հայրերը և «հայնվոյ» ապտեռները կազմում էին չահագործական միություն, քամելով ճորտական գյուղացուց բոլոր հյութերը: Ցեկեղեցին փող էր տալիս չահով, զբաղվում էր առևտրական գործառնություններով, մասնակցում էր ապտառական թալաններին, նպաստում էր սորուկ գործ ածելու ձևերին ու զինամարքներին, պաչտպանում էր դաղութային կողոպտիչ քաղաքականությունը և իմպերիալիզմը:

ՓՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿՐՈՆԱԿԱՆ ԻԴԵՈԼՈԳԻԱ ՉԻ ՍՏԵՂԾԵԼ

Բոլոր ճնշվող դասակարգերից, վորոնք պատմության զրոչակն են բարձրացրել բռնության ու կեղեքման վրա հիմնված հասարակակարգի դեմ, միայն պրոլետարիատն է, վոր չի ենթարկվում իրեն թչնամի կրոնական իդեոլոգիային: Պրոլետարիատը չի ստեղծում նոր կրոնական սիստեմներ, կրոնա-հերետիկոսական աղանդներ, կրոնական միստիկություններ և այլն, ինչպես անում էին մյուս դարերում գյուղացիությունն ու քաղաքի չքավոր բնությունը: Պրոլետարիատը վոչ միայն չի գիտակավորվում հին կրոնական հաղուստով, այլև պատերազմ է հայտարարում կրոնական դաղափարախոսությանը, իրրև կեղեքող հասարակակարգի ժառանգության: Պրոլետարիատն է բուրժուազիայի այն դենը, վոր յերբեմն նա (բուրժուազիան) իր հերոսական հեղափոխական չրջանում ուղղում էր ֆեոդալական հասարակակարգի, աղնվականության ու հոգևորականության դեմ և վոր նա վոչնչացրեց ու դեն չպրտեց, յերբ արչավող պրոլետարիատի հանդեպ յերկյուղով բռնված նա նետվեց իր նախկին թչնամիների գիրկը: Այդ գործքով՝ մատերիալիզմն է: Լենինը գտնում էր, վոր մենք պետք է հրատարակենք XVIII դարի աթեիստներին և ապատագործենք մինչև անգամ վոչ մարքսիստ գրողների գրականությունը, յեթե նրանք աստվածաչնչի ու մյուս կրոնական լեգենդները հերքող փաստական նյութ են տալիս:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ «ՍՈՑԻԱԼԻԶՄԸ», ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ «ԿՈՄՈՒՆԻԶՄԸ», ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ «ԿՐՈՆԸ» ՑԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ԿԻՎԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանֆեսկոնալ խաբերաները և նրանց հետ միասին քաղքենի ու մանր-բուրժուական քաղաքագետները, վորոնք ամենից շատ դասակարգային պայքարից են վախենում, աշխատում էին պրոլետարիատի վրին կապել նոր, «սոցիալիստական կրոն»։ Քրիստոնեական «սոցիալիստները», սոցիալական հուզայականության» երկրպագուները հրեաներէ չէին նեում, Գանդիականները հնդկաստանում, զանազան ազգային-կրոնական բարեփոխիչները Արևելքի կեղեքված ժողովուրդների մեջ աշխատում են հաշտեցնել հին հավատալիքները նոր հայացքների հետ։ Ճերբեմն յերբեմն նրանց հաջողվում է կրոնական համաձայնության հանել բուրժուազիան պատվաստել ազգաբնակության մանր-բուրժուական տարրերին։ Նրանց պրոլետարիատի հիմնական մասսան չի յենթարկվում այդ քաղցր ու պաշտոնքը միացնել լավագույն սոցիալական ապագայի հույսին։ Առանձնապես քարդ ու խիստ կարևոր խնդիր է պայքար ազատամարտական ուժերի դեմ, վորոնք արծարծում են իրը թե կոմունիստական տենդենցներ, և պայքարն այն ռեվիզիոնիստական ձգտումների դեմ, վորոնք պրոլետարիատի վրին են կապում «սոցիալիստական» կրոնը։ Յարիմի չընդունում տիրապետող դիրք ուներ պրավոսլավ (ուղղափառ) եկեղեցին. «տասը» դավանությունների միայն հանդուրժում էին, իսկ ամեն տեսակ տղաներին և «հերետիկոսություններին» իսկական ոչ-ոչ ոչնչացնում էին, ամբողջ դյուղերով աքսորում էին տաժանակիր աշխատանքի։ Ցարական կառավարությունը իր հայտարարված, սակայն ամենաքիչ ուշադրություն դարձնող հավատի ազատության մասին, Սիբիր, կովկաս՝ մշտական բնակության։ Աղանդավորները ընդհանրապես ավելի քարեկեցիկ էին և անհամեմատ ավելի կուլտուրական՝ մեծամասնություն ունեցող ազգաբնակչության դեմ պայքարելիս նրանք պատրաստ դիմադրություն (վոր արտահայտվում էր վորոշ դեղքերում զինվորական ծառայությունից խուսափելով և յեղակի դեղքերում զինվորական ծառայությունից հրաժարվելով) դենը չէին դնում։ Նրանք վոչ միայն չէին մասնակցում հեղափոխական շարժումներին, այլև դատապարտում էին նրա «բռնի» ձգտումները։ Ներկայումս աղանդավորության ամբողջ մասսան քշնամի է խորհրդային իշխանությանը։ Վերջին տարիներս ՄԳՖՎ որգաններն մի քանի անգամ հակահեղափոխական դավադրությունները, կազմակերպված աղանդավորների ու յեկեղեցականների ձեռքով։ Աղանդավորական և յեկեղեցական կազմակերպությունները հակահեղափոխական աշխատանք էին կատարում վիժեցնելու հացամթերումները, ինդուստրացման փոխառության տարածումը, կռվում էին կոլեկտիվացման անընդհատ անցնելու և խորհրդային իշխանության մյուս միջոցառումների դեմ։ Միշտ և ամենուրեք այս հակահեղափոխությունն առել է պետության դեմ ուղղված մի քաղաքականության դրոշակով։

Սակայն պատահում է այնպես, վոր աղանդավորական հակահեղափոխականության դեմ պայքարը շատ ավելի դժվար ու բարդ է, քան չբղարկված հակահեղափոխության դեմ պայքարը։ Դեռ մոտ ժամանակները բալտիսական դեկավարները խմբերին ուղարկած իրենց հրահանգի մեջ գրում էին—«Անհատականները գրում ու պնդում են, վոր Քրիստոս-փրկիչ վարդապետությունը հարուստ կեղեքող դասակարգերի թիկունքն է։ Բացատրելով անհատվածներին այդ անհեթեթ միտքը, մենք հանձնարարում ենք յեղբայրներին ու քույրերին, ունկնդիրների ուշադրությունը դարձնել հետևյալ մոմենտների վրա։ Հիմուս Քրիստոսը մեծ սոցիալիստ էր, կոմունիստ, հոգևոր հայր և նախակարապետ կոմունիստական կուսակցության։ Նա առաջինն էր, վոր ասաց. «Ով չի աշխատի, չի ել ուտի»։ Քրիստոնեության (Հուդայականության, Բուդդայականության և այլն) կոմունիստական տենդենցների մասին վոչ մեկն յեկեղեցականներն ու աղանդավորներն են խոսում, այլև վերջնականապես ընկած սոցիալ-դեմոկրատիայի շատ առաջնորդներ։

Ռեվիզիոնիստները «հիասթափվելով» պետության բանակցության մեջ եյին փրկություն վորոնում, ապա սկսեցին վորոնել «սոցիալիստական կրոնի», «պրոլետարական հավատի» մեջ և այլն։ Մեղանում այդ բանով հռչակվեցին Սարովին, Բերդյաևը, Բուլգակովը և ուրիշները։ Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ ամառիկ ուժեղացավ մարքսիզմը բարոյագիտական և կրոնական աշխարհայեցողության վոգով վերանայելու հասանքը հետ-պատերազմյան տարիներում։ (Արտուր Բոնուա, Հանս Էբներուրգ, Ալվոն, Գուստավ, Ռադբրուխ, Մաքս Ադլեր և այլն)։ Ռուսական ռեվիզիոնիստական «վարդապետությունների մեջ կարմիր Քելի նման անցնում էր այն միտքը, Քի՝ վոչ միայն կարելի է, այլև անհրաժեշտ է միացնել սոցիալիստական պատգամախոսները կրոնականի հետ, Մարքսին՝ կանտի հետ (Մաքս Ադլեր), բանվորական շարժումը «հոգու ուժի հետ, վորը կհաղթե առանց բռնության» (Արտուր Բոնուա), պրոլետարիատին՝ քրիստոնեության հետ (Ենբուրգ), սոցիալիզմը՝ բարեպաշտության հետ (Գնքաել) և այլն։ Գոյություն ունեն մարդիկ, վորոնք հաճույքով միացնում են սոցիալիզմը կաթոլիկության, և կան մարդիկ, վորոնք ցանկանում են սոցիալիզմը միացնել բողոքականության։

Ինչո՞ւ համար է անհրաժեշտ վճռական և անհնա պայքարն ինչպես յեկեղեցա-աղանդավորական, նույնպես և սոցիալդեմոկրատիայի կողմից կատարված կոմունիստական աշխարհահայացքի այլանդակումների դեմ։

Վորովհետև կոմունիստական աշխարհահայացքի տակ կրոնական հիմք դնելը նշանակում է պրոլետարիատին ու աշխատավոր մասսաներին մոլորեցնել, դուրս բերել այն ճանապարհից, վորով պիտի ընթանա չարժումը դեպի կոմունիզմ։ Այդ նշանակում է աշխատավոր մասսաներին ներշնչել միանգամայն կեղծ, անճիշտ գաղափար, վոր իբր թե քրիստոնեությունը կամ մի ուրիշ կրոն իսկապես քարոզել է կամ նույնիսկ իրականացրել են կոմունիզմը։ Իրապես «նախնական քրիստոնեությունը» «կոմունիստական տենդենցները» սպառնամ մինչդեռ նրանք ընդհանրապես ամբողջությամբ)։ սակայն այդ տենդենցներն էլ չեն իրականացվել ամբողջությամբ)։ Արտադրության միջոցները (դլխավորապես հողը և դյուղատնտեսական աշատանքի պարզ գործիքները) չեյին ընդհանրացված։ «Հավատացյալների համայնքի» ձեռքերում հավաքված հսկայական տարածություններ հողերը փաստորեն յեկեղեցական փեոդալների սեփականություն եյին կազմում և դյուղացիների ամենազաժան չահագործման հիմք եյին դառնում։ Այն ժամանակ, Քի՝ Քրիստոսը «մեծ սոցիալիստ էր, կոմունիստ, կոմունիստական կուսակցության նախակարապետ և հոգևոր հայր» էր—դուտ խաբեություն է։ Առաջին՝ Քրիստոս իսկի էլ չէ եղել, և յերկրորդ՝ ատաստվելական Քրիստոսի ատածների մեջ եղ մենք հանդիպում ենք ամենահակասական կետերի, սակայն դրանք ամենևին չեն դիտվում մանավոր սեփականության. մինչև անգամ հավատացյալների համայնքին քաժանելու խորհուրդը հենց ինքը խոսում է սեփականության ինստիտուտի և հասարակության դասակարգային քաժանման մասին։ Համենայն դեպս Քրիստոսին վերագրված քարոզի մեջ վոչ մի տեղ ակնարկ անգամ չկա աշխատանքի հասարակական կազմակերպության առավել ևս կեղեքված մասսաներին՝ դասակարգային պայքարի անհրաժեշտության, կեղեքողների ու չահագործողների դեմ։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՊԱՅՔԱՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԿՐՈՆԻ ԴԵՄ

Պրոլետարիատը կռվում է կրոնի դեմ վոչ բռնությամբ, վոչ բանտով, վոչ ինկվիզիցիայով վոչ աուտո-դա-ֆեյով*), վոչ տանջանքներով, վոչ պատիժներով։ Դեռ ավելին. պրոլետարիատն իր կուսակցության ծրագրում և իր պետության սահմանադրության մեջ — ԽՍՀՄ-ի սահմանադրության մեջ ճանաչել և իրոնի ազատությունը և բոլոր քաղաքացիներին վերապահել ե հնատարյալ ազատություն՝ դավանելու ուզած կրոնը և կրոնական պաշտամունքը կատարելու։ Պրոլետարիատը և իր կուսակցությունն ու պետությունն այդ բանն անում են վոչ նրա համար, վոր վախենում են բռնությունից, այլ տեղ, ուր բռնությունը տանում է դեպի նպատակ, պրոլետարական հեղափոխության հաղթանակը, պրոլետարիատը վոչ մի վայրկյան նրա առաջ կանգ չէ առնում։ Այստեղ սակայն բռնությունը, հակառակ հետևանքներ կբերեր։ Կրոնը ոչնչացնում է աշխատավորական ահագին մասսաների՝ դյուղացիության, քաղաքի մանր-բուրժուազիայի, պրոլետարիատի հետամնաց խավերի մտքերին։ Ժողովրդական մասսաների վերաբերմամբ մահակի լեզուն իհարկե անտեղի յե։ Ուատի և Ենդելսը դեռ 70-ական թվականներին ծաղրեց Դյուրինգի իրը թե հեղափոխական գաղափարը՝ սոցիալիստական հասարակության մեջ կրոնը արգելելու մասին։ «Ենդելսը պահանջում էր բանվորական կուսակցու-

*) Աուտո-դա-ֆե նշանակում է խարույկի վրա այրել։

թյունից, ասում է Լենինը՝ իր «Կրոնի մասին» հոդվածում, կարողանալ համբերությամբ աշխատել պրոլետարիատի կազմակերպության և լուսավորության գործի համար, գործի, որ տանում է դեպի կրոնի մահացումը»:

Դրա համար էլ պրոլետարական դիկտատուրան վոչնչացրեց բոլոր անտակի ճնշումներն ու խիստ հալածանքները, վորոնց ցարական կառավարությունը և ուղղափառ հոգևորականությունը յենթարկում եյին ժողովրդի ահագին մասսային կրոնական համոզմունքների և ուղղափառ յեկեղեցու դեմ ուղղված կրոնական պրոպագանդի համար: Հոկտեմբերից հետո վոչ մի մոմենտ չի յեղել, յերբ «վորևէ կրոնական կազմակերպության արգելվեյին կրոնական պրոպագանդը, կրոնի պաշտամունքը, «ծեսերի կատարումը» (Յարոսլավսկի): Խորհրդային կառավարության հրատարակած դեկրետը յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց բաժանելու մասին խղճի ազատության մեծագույն ակտն է, վորին չի հասել վոչ մի յերկիր: Ընդհակառակը համարյա բոլոր կապիտալիստական յերկրներում խղճի ազատությունը, վոր հայտարարվել է ձևականորեն սահմանադրություններով, փաստորեն դառնում է դատարկ հնչյուն: Ամերիկայում, օրինակ, ուսուցիչ Սկոպսին մեղադրյալների նստարանին նստեցրին, ամբիոնից մարդու ծագման եվոլյուցիոն տեսության բացատրության պատճառով: Մի շարք նահանգներում դարվինիզմի դասավանդումն արգելված է: Գերմանիայում դատական հետապնդման յենթարկեցին նկարիչ Գ. Գրոսին նրա համար, վոր նա ճիշտ կերպով եր պատկերացրել նկարի վրա քահանայի ամոթալի դերը, վորը (քահանան) օրհնում է պատերազմը: «Աստվածասեր» Անգլիայում «աստվածհայհոյությունը» հավասար է քրեյական ծանր հանցանքի: Լեհաստանում հալածանքի յեն յենթարկվում ուղղափառ յեկեղեցին և կրոնը: Շվեդիայում հալածվում է կաթոլիկությունը և այլն, և այլն:

Այս բոլորից հետո պարզ կդառնա, վոր յեկեղեցականների (պատերների, ռաբբիների, մոլլաների և այլն) արշավանքը Հռոմի պապի առաջնորդությամբ ԽՍՀՄ-ի դեմ «բոլշևիկների յերկրում» խղճի ազատության պաշտպանության դրոշակի տակ ամենասուտ կատակերգությունն է, վոր կարելի յե յերևակայել, վոչ այլ ինչ է, յեթե վոչ ծխի վարագույր, վոր ծածկում է կապիտալիստական յերկրների արշավանքը կառուցվող սոցիալիզմի յերկրի վրա: Չե՞ վոր ԽՍՀՄ միակ յերկիրն է, վորտեղ գոյություն ունի խղճի իսկական ազատություն, և առանց սահմանափակումների: Միևնույն ժամանակ սա միակ յերկիրն է, վորտեղ պետությունը (և վոչ թե միայն ինքնակամ հակակրոնական կազմակերպությունները) հայտարարում է կատաղի պատերազմ ամեն կրոնի, ամեն տերտերականության, բոլոր տեսակի տատանումների դեպի կրոնականության, բնազանցության, սնահավատականության և ամեն յերանգի իդեալիզմ:

Իսկ ի՞նչ ձևերով է տարվում այդ պայքարը: Հասկանալի յե, վոր վոչ հարկադրությամբ: Ընդհակառակը, մեր կուսակցությունը վճռականապես սանձահարել է ամենքին, ով հակակրոնական պայքարում համոզելու փոխարեն բռնություն է գործ դրել, կամ զուտ վարչական միջոցներ: Պրոլետարիատն անողոք կռիվ մղելով կրոնի դեմ համոզմունքի միջոցով, ամենից առաջ այդ պայքարի մեջ է քաշում բնագիտությունը: Կրոնական և փիլիսոփայական կեղծիքից զատված, բնագիտությունն ոգնում է իրոք ճանաչել մեզ շրջապատող աշխարհը և նրան կառավարող օրենքները: Բնագիտությունը մերկացնում է մարդու աստվածային ծագման սխալը: Բնագիտությունը վորոշում է մարդու տեղը կենդանիների աշխարհում և ցույց է տալիս, վոր մարդը հասել է բարձր իշխանության չնորհիվ աշխատանքի և վոչ թե չնորհիվ աստծու կամքի, նախահայրերի վոգիների բարեհաճության: Մյուս կողմից, հասարակական գիտությունները և դասակարգային կռիվը հերքում են հասարակության դասակարգային կազմության հավիտենականության մասին կրոնական կարծիքը: Հասարակական գիտությունները և առաջին հերթին պատմական մատերիալիզմը ցույց են տալիս, վոր հասա-

րակության զարգացումը յենթակա յե վորոշ օրինաչափության, և վոր կրոնական յենթադրությունները բնության ու հասարակության մասին կեղծ են և ծառայում են մասսաների գիտակցության մթագնման և կեղեքման գործին: Պրոլետարիատը, վոր կռվում է կապիտալիզմի դեմ Յեվրոպայում և կապիտալիստական ու նախակապիտալիստական ձևերի մնացորդների դեմ ԽՍՀՄ-ում, ձգտում է ամենից առաջ լայն մասսաների սեփականությունը դարձնել բնագիտությունն ու հասարակական գիտությունները:

Ամեն տեսակի գործնական միջոցները, կենցաղային աշխատանքը, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը, հակակրոնական դաստիարակությունը դպրոցում և մինչդպրոցական հիմնարկներում, հակակրոնական գրականությունը, մեր շինարարության, կապիտալիստական յերկրներում պրոլետարիատի ու աշխատավորների բոլոր տեսական ու գործնական հարցերի դիալեկտիկական-մատերիալիստական լուսաբանությունը, վերջապես արմատախիլ անելը շահագործման բոլոր արմատների, վոր ամեն տեսակի կրոնականության հիմքն է, այս բոլորը պետք է նպաստեն արագորեն վոչնչացնելու բոլոր կրոնական նախապաշարմունքները, վոր արմատացել են մասսաների մեջ կեղեքման ու խավարի բազմաթիվ դարերի ընթացքում: Ընդհանրապես հակակրոնական պրոպագանդը պետք է ունենա բազմատեսակ բնույթ: «Մեծագույն սխալը կլիներ, գրում է Լենինն իր «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» հոդվածում, և մեծագույն սխալը՝ վոր կարող է կատարել մարքսիստը, մտածել, թե բազմամիլիոն ժողովրդական մասսաները՝ ժամանակակից ամբողջ հասարակության ձեռքով դատապարտված խավարի, տգիտության ու նախապաշարմունքի, կարող են դուրս գալ այդ մթությունից միայն զուտ մարքսիստական լուսավորության ուղիղ գծով: Անհրաժեշտ է տալ այդ մասսաներին աթեյիստական (անաստվածական) պրոպագանդի բազմատեսակ նյութ, ծանոթացնել նրանց կյանքի միանգամայն տարբեր բնագավառների փաստերին, մոտենալ նրանց և՛ այսպես, և՛ այնպես, նրա համար, վոր կարողանանք նրանց շահագրգռել, զարթեցնել նրանց կրոնական քնից, ցնցել նրանց միանգամայն տարբեր կողմերից, միանգամայն տարբեր յեղանակներով և այլն»:

§ 27. ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԿՐՈՆԻՆ ՅԵՎ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԿՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Ինչպես պրոլետարական պայքարի մյուս բոլոր հարցերում, նույնպես և կրոնի դեմ պայքարելու հարցում գոյություն ուներ և գոյություն ունի խոր տարբերություն բանվորական շարժման յերկու հիմնական հոսանքների՝ — օպորտունիստական սոցիալ-համաձայնողական և հեղափոխական կոմունիստական կուսակցությունների մեջ: Սոցիալիստական կուսակցությունների բոլոր ծրագրերում կետ կար կուսակցության և պրոլետարիատի վերաբերմունքի մասին դեպի կրոնը: Գերմանական սոցիալ-դեմոկրատական ամենատիպիկ ծրագիրը՝ 1891 թվի Երֆուրտի համագումարում ընդունած (Երֆուրտյան ծրագիր) խոսում է յեկեղեցին պետությունից բաժանելու մասին և կրոնը հայտարարում է մասնավոր գործ: Այն ժամանակվա սոցիալ-դեմոկրատիայի համաձայնողական մասն այդ բանը մեկնաբանում էր այսպես, թե՝ կուսակցությունը և պրոլետարիատը վոչ մի գործ չունեն կրոնի հետ, վորպես մասնավոր գործի»:

Ֆրիդրիխ Ենգելսը կարիք զգաց ապացուցելու, վոր կրոնը պետք է համարել մասնավոր գործ պետության (բուրժուական) վերաբերմամբ և վոչ ամենևին բանվորական կուսակցության: Պրոլետարիատի կուսակցությունը չի կարող և չպետք է մնա անտարբեր այդ հարցի նկատմամբ, նա պետք է իրեն մատչելի գաղափարական ազդեցության բոլոր միջոցներով պայքարի կրոնի դեմ:

[illegible] սրան, Յերկրորդ ինտերնացիոնալի տեսաբաններն ամեն կերպ աշխատում եյին կրոնի դեմ պայքարի նշանակությունը նվազեցնել: Վերին աստիճանի բնորոշ է [illegible]

(Ի հետևորդների մասին պատմություն տես XIX դարի վերջի հեղինակների մոտ)։ Ղևոնդ Ալիշանը 1884 թվին տպագրած «Ծաղիկ հայրենեաց» երկի մեջ գրում է. «Ոչ ոք ասացեալ է զայս ի մեզ, եթե ոչ ի Ղևոնդեայ ուսուցչապետէ մերմէ, որ ի ժամանակս Ներսիսի Շնորհալւոյ ի Հռոմկլա գնացեալ էր ի դեսպանութիւն առ Մանուէլ կայսր Յունաց, եւ անտի ի Կոստանդնուպաւլիս, ուր եւ ի վախճան եհաս»։ Ղևոնդ Ալիշանը ոչ միայն ինքն է ենթադրում, որ Ղևոնդ պատմիչը Ներսես Շնորհալու հետ եղել է Կոստանդնուպոլսում, այլև ուրիշներին է այդ կարծիքը հաղորդում։ Ղևոնդ պատմիչը Ներսես Շնորհալու հետ եղել է Կոստանդնուպոլսում, այլև ուրիշներին է այդ կարծիքը հաղորդում։ Ղևոնդ պատմիչը Ներսես Շնորհալու հետ եղել է Կոստանդնուպոլսում, այլև ուրիշներին է այդ կարծիքը հաղորդում։

ԵՎՍԵԾՄԻՆ ՎԱՍՍԻ ՂԱՐԾՎԱԾՈՒՆ ՅԵՂՈՎ ՎԱՌԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՂՈՒՄՆ ՅՈՒՍՈՎՆԴԱՆ

Ծերը լեզվի դիտո-գործական ձեռագրի հեղինակի Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Ներսես Կլայեցի և ուրիշների անունով կապված գրական-գործակցական հարաբերությունները, որոնք ընդգրկում են 1153 թվից մինչև 1173 թվականները, ամենայն հավանականությամբ ավելի վաղ ժամանակներում են եղել։ Ներսես Շնորհալին 1153 թվին եղել է Կոստանդնուպոլսում, որտեղ նրա հետ միասին գտնվել է նաև Ղևոնդ պատմիչը։ Ներսես Շնորհալին Կոստանդնուպոլսում եղել է ոչ միայն հունական եկեղեցու հետ միության գործի համար, այլև հայ-հունական եկեղեցական հարաբերությունները կարգավորելու համար։ Ղևոնդ պատմիչը Ներսես Շնորհալու հետ եղել է Կոստանդնուպոլսում, այլև ուրիշներին է այդ կարծիքը հաղորդում։ Ղևոնդ պատմիչը Ներսես Շնորհալու հետ եղել է Կոստանդնուպոլսում, այլև ուրիշներին է այդ կարծիքը հաղորդում։

Ծրագրում, Լենինը հարցադրում Մարքսից և Ենգելսից առաջ դնում, նա կարողացավ ընդհանրացնել պրոլետարիատի պահանջները, հիմնավորել այն բանվորական չարժման դերը, հետևաբար, տարածել պրոլետարական տեսության վրա և բացահայտման տարել կրանի տակավորդային հարցերը։

ԱՆԱՐԽԻՍՏՆԵՐԸ ՑԵՎ ՓՐՈՒԴՈՆԻՍՏՆԵՐԸ ԿՐՈՆԻ ԴԵՄ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ

«Մանր-բուրժուական վուսակցություններ՝ բլանկիստներ, անարխիստներ և մյուս նրանք չորհանում կրանի հարցում նկատվում եր մի հոսանք, որն առաջին հայացքից կարող եր տպավորություն ստեղծել, որ նրանք ավելի հեղափոխական են, քան մարքսիստները։ Անարխիստները պահանջում էին կրանի դեմ վճռական պայքար, մինչև իսկ բռնություն։ Լենինը ծաղրում եր տիպիկ «հեղափոխականությունը», որովհետև այդ պայքարը գործնականում չի առնում դեպի կրանի վերացումը կամ նույնիսկ թուլացումը, այլ ասնում է դեպի կրան դարձնի աշխատանք, պրոլետարի և ժողովուրդների համակրանքը դեպի կրոնն ու նրա սպասավորները։ Լենինն արձագանք է բռնում ֆրանսիական մեծ հեղափոխությանը, յերբ կրոնն ակզբում արդիլվեց, իսկ հետո նորից թուլացվեց։ Նա վախենում եր, որ կրոնի դեմ մղած ճնշումները կարող են հարցնել այն անգը, որ քաղաքական համախոհությունների վոխարեն առաջանան կրոնական համախոհություններ, իսկ սրանք կխոչընդոտեն աշխատավոր մասսաների պատրաստության գործը միացնության և նպատակի դեմ։ Կամինտերնն այս տեսակետն ամբողջովին ընդունեց, ճանաչելով դեղեցյան Գործիմի բանաձևում (1923 թ. հունիս)։ «Հիմնականում,— ասված է այդ բանաձևում,—որ զանազան յերկրներում դեռ կան միլիոնավոր բանվորներ, որոնք այս կամ այն չափով կրոնական տրամադրություններ ունեն, հոմանկտանգը պետք է ներգրավվեն նրանց ընդհանուր անտանական և քաղաքական պայքարի մեջ, առ ոչ մի դեպքում չդեկավարել այդ բանվորներին իրենց կրոնական նախապաշարմունքների դեմ»։

Հետևաբար այն է, որ պրոլետարիատը, որ անարխիզմի գաղափարական հիմքն է և տակտիկայում կողմում է անարխո-սինդիկալիզմի տեսության բացասական մասը, կրոնի նկատմամբ միանգամայն հակառակ տեսակետ ուներ. բոլորովին չմիջամտելու կողմնակից՝ վերջինս՝ «որպես մասնավոր գործ» լուծումն տալով պրոլետարիատին, առաջ պրոլետարիատին էին առաջադրում. առ գործով զբաղվել դեմոկրատիայի ոգով։ Մարքսիզմը, որը մերժեց լասալականների բանաձևը («Հիմնական ազատություն») և ընդունեց պրոլետարիատական բանաձևը։

ՄՆԱՑՆԵՎԻԿՈՂ ԻԴԵԱԼԻՍՏՆԵՐԻ ՑԵՎ ՄԵՆԱՆԻՍՏՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿՐՈՆԻ ԴԵՄ

Ընդհանուր վերնայն հասարակությունը և կոմինտերնն ամբողջովին ըմբռնեցին կրոնի վերաբերյալ հասկացողությունը և կիրառում են կյանքում, բանվորական չարժման հեղափոխական պարբերականում ՍՍՀՄ-ում և կապիտալիստական յերկրներում, սակայն կոնկրետ պայքարի չորքերում պահվեցին այնպիսի ընկերներ, որոնք կրոնի վերաբերյալ հարցը լենինիստորեն չեն լուծում։ Այդ ընկերները չարքը պետք է դասել ինչպես դոկտրինականներին,—մենշևիկող ֆետիշիստներին, այնպես էլ մենշևիստներին։ Դոկտրինականները չեյին պնդում, թե կրոնը մասնավոր գործ է, նրանք հակառակ չեյին կրոնի դեմ պայքարելուն, բայց այդ պայքարը նրանք չեյին ասնում, հակակրոնական ֆրոնտում նրանք փաստորեն համաձայն վոչինչ չեն տալիս։ Դոկտրինականների գլխավորության տակ գտնվող «Под знаменем марксизма» ժուռնալում (որն ըստ Լենինի կոտակի պետք է դառնար մարտնչող մատերիալիզմի և մարքսիզմ աբնչիզմի սրգանը) աբնչիզմի և հակակրոնական պրոպագանդի հարցերի վերաբերյալ հոդվածներ համարյա չեն տեղադրվել։ Դոկտրինները ինքը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կրոնական տատանումների մասին (7 տարի առաջ, 1924 թ.) դեկուցում կարդաց, բայց վոչ Դոկտրինը և վոչ էլ նրա աշակերտները վոչինչ չարին, վորպեսզի կրոնի հարցը տեսական տեսանկյունից և փրկիտիական տեսությունը կապկին հակակրոնական պրոպագանդի հետ։ Մարքսիզմ աբնչիզմի համար լուն պայքար չտարվեց, մի պայքար, վոր առանձնապես անհրաժեշտ եր սոցիալիստական արագ չինարարության և գյուղի կոլեկտիվացման տարիների վերացման հետևանքով առաջացած դասակարգային պայքարի տարածման պատճառով։ Վոչ յեկեղեցականների արշավանքը, վոչ տեկտանների տղիտության վոչ էլ մյուս հակահեղափոխական ելույթները նախկին՝ այսպես կոչված «քրիստոնեական

պետության» կողմից անհրաժեշտ տեսական հակահարվածի չհանդիպեցին։ Ամենաշատը կարելի է ասել, որ դեկորինյան խմբակը բոլորովին կտրվել եր մասսաներից և հակակրոնական մասսայական չարժումներից։ Ինչ վերաբերում է մենշևիկներին (Մարտյնովի և մյուսները), նրանք բավական ակտիվ մասնակցություն եյին ցույց տալիս հակակրոնական աշխատանքներում, բայց այդ աշխատանքը նրանք առնում եյին վոչ դիալեկտիկական և մեխանիստական մատերիալիզմի հիմունքով։ Այդ վերջինը բուրժուական հեղափոխականության դարաշրջանում (18-րդ դար) կարևոր դեր խաղաց կրոնի դեմ պայքարելու գործում։ Գրամեսատական հակակրոնական պայքարի դարաշրջանում, յերբ պրոլետարիատը դեռևս և տիպիկ դեմքով, ինչպիսին դիալեկտիկական մատերիալիզմն է, մեխանիստական մատերիալիզմը դարձավ հետադեմ, ռեակցոն գործիք (այն չափով, ինչպես քարե կացինը կիան. գործը, յերբ յերկաթե կացին կա)։ Ավելին, մեխանիստական մատերիալիզմը պրոպագանդիստական բուրժուազիային մտնելու ուղին եր։ Այդ ստորադասիմքի տեսական հիմքը կազմեց մեխանիստական մեթոդոլոգիայի հիմունքով չի կարելի իսկական հեղափոխական մարքսիզմ պայքար մղել կրոնի դեմ։

Հակակրոնական ֆրոնտում արատավոր դիվարին, բայց բացառիկ ակտիվորեն աշխատանքը դեռ ապագայում է...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ X ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

Մարքս — Կապիտալ առաջին հատոր, առաջին գլուխ։
Մարքս — «Քաղաքականտնտեսության քննադատության» առաջաբանը։
Մարքս — Լյուդովիգ Ֆեյերբախ մասին Թեզիսներ. կ. Մարքսի և Ենգելսի ստեղծ. առաջին հատոր, եջ 202։
Մարքս և Ենգելս — Լ. Ֆեյերբախ մասին դերմանական իդեոլոգիայից, նոյն տեղը։
Մարքս և Ենգելս — Նամակներ՝ 1923 թ., եջ 306-314, 336-338, 342-345։
Մարքս և Ենգելս—Ժողովածու, Մարքսի և Ենգելսի մաքերը կրոնի մասին։
Ենգելս — Անտի-Դյուրինգ, 1930 թ.։
Ենգելս — Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը։
Պլեխանով — Կրոնի մասին, յերկերի ժողովածու, հատոր 17։
Լենին — Սոցիալիզմը և կրոնը, հատոր 7, մասն առաջին։
Լենին — Բանվորական կուսակցության վերաբերմունքը դեպի կրոնը, հատոր 13-րդ մասն 1։
Լենին — Դասակարգեր, կուսակցություններ և նրանց վերաբերմունքը դեպի կրոնը՝ հատոր 9-րդ, մասն առաջին։
Լենին — Աշխատավորուհիներին մեջշեվիկյան առնի առթիվ։ Յերկերի ժողովածու, հատոր յերկրորդ, XXV-րդ։
Ստալին — Լենինիզմի հարցերը։

ԳԼՈՒԽ XI

ՄԱՐՔՍԻԶՄ, ԼԵՆԻՆԻԶՄ ՑԵՎ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄ

§ 78. ՄԱՐՔՍԻԶՄԻ՝ ՎՈՐՊԵՍ ԴԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ՝ ՀԱՂԹԱՆԱԿ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ ՑԵՎ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ՀԱՆԴԵՍ ԴԱԼԸ

Մարքսիզմի ուսմունքը վորպես պրոլետարիատի հեղափոխական տեսության՝ զարգացել և ձևակերպվել է 40—60 թվականներին։ Մարքսիզմը վորպես հոյակապ ամբողջության դարձավ հեղափոխական ընդհանրների իրազործության մեջ, խիստ կատարի և անընդհատ պայքարի հիման վրա, վոր տարվում եր բուրժուական և մանր-բուրժուական ինդիվիդուալիստների՝ այլ հեղեղականության, ձախ հեղեղականության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, բլանկիզմի, բանականիզմի, Դյուրինգի պոզիտիվիզմի և այլոցների դեմ։ Մանր-բուրժուական հոսանքների դեմ մղվող կատաղի պայքարը առաջին հանգրվանում ավարտվեց մարքսիզմի դաղափարական հաղթանակով, բնական և առաջին հանգրվանում կազմակերպչական քայքայումով։ Լասալականության դեմ դերմանական բանվորական չարժման մեջ մղվող պայքարը վերջացավ 1875 թ. Գոթայի համագումարում Մարքսի կողմնակիցների (Եյզենախյանների) և Լասալի (լասալականների) մեջ միացման ժամանակ և դերմանական սոցիալիստական կուսակցության կազմակերպական

դեռևս էր մարքսիզմի ուժեղ ազդեցության ներքո և վորը 80-ական թվերի վերջին վերջնականապես ընդունեց մարքսիզմը՝ վորպես պաշտոնական ծրագիր: 80-ական թվերին զանազան կերկերներում կազմակերպված սոցիալիստական կուսակցությունների զգալի մեծամասնությունը մարքսիստական գաղափարներով էր համակված: Բանվորական շարժումն ընդհանրապես հենց միանգամից անցավ մարքսիզմի դրոշի տակ և այդ դրոշակի տակ էլ մնում է մինչև այսօր: 90-ական թվականների մոտ, մարքսիզմի հաղթանակը համարյա թե ավարտված էր: Մինչև իսկ Ցեքսոնիայում և ռոմանական մյուս կերկրներում, վորտեղ առաջ ուժեղ էր պրուդոնիզմը և ամեն տեսակի անարխիստական հոսանքները, բանվորական կուսակցությունները, փաստորեն, իրենց ծրագրերն ու տակտիկական մարքսիզմի հիմունքների վրա էին կառուցած:

Ցերկրորդ Ինտերնացիոնալը, վոր կազմվեց 1889 թ., իր գոյության սկզբում, բանվորական շարժման կարևորագույն ինդիրներում մարքսիստական հողի վրա իսկ հանդիսած: Մարքսիզմը դարձավ բանվորական շարժման գերակշռող իդեոլոգիա, և սրանով էլ նա վճռած էր մի մեծ ուժի, վորին հավիտյան չսոսնձել չի կարող բուրժուական և մանր-բուրժուական աշխարհը:

ՄԱՐՔՍԻԶՄԻՆ ԱՂԱՎԱՂԵԼՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՑԵՎ ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՁԳՏՈՒՄԸ

Համաշխարհային պատերազմին նախորդող վերջին տասնամյակներում մարքսիզմի լայն ծավալումը, վորն ուղեկցում էր կապիտալիզմի արագաթափ զարգացմանը, չկարողացավ և չէր կարող անցնել առանց մարքսիզմի մանր-բուրժուական աղավաղումների և աղճատումների: «Ինչում է, ասում է Լենինը, մարքսիզմի զարգացման յերկրորդ դարաշրջանը, յերբ նրան վիճակված էր պայքարել Բենամի հոսանքների դեմ՝ իր ներսում: Մինչ-մարքսյան սոցիալիզմը ջախջախվեց. սակայն այն տարրերը, վորոնք առաջ անհնարին համամարքսիստական դերը նրին բռնել, այժմ հանդես են գալիս հաղթող մարքսիզմի հողի վրա, վորպես նրա ռեվիզիոնիստներ»: Մարքսիզմի աղավաղման գործում նախաձեռնողները վոչ այնքան բուրժուական տեսաբաններն էին, վորքան Ցերկրորդ Ինտերնացիոնալի տեսաբանները: Պրոլետարիատի հետամնաց և բուրժուազիայից կերակրվող մանր-բուրժուական խավերն էին և մնում են վորպես պրոլետարիատի վրա բուրժուական ազդեցության տարածողներ: Ինչպես պրոլետարիատի չարքերի անընդհատ լրացումը մանր-բուրժուական տարրերով, այնպես էլ մանր-բուրժուական ազդեցությունները ժամանակավոր, պատահական յերևույթներ չեն, այլ մշտական և անխուսափելի ուղեկիցներ՝ կապիտալիզմի զարգացմանը: «Կապիտալիզմը ծնվել է և չարունակ ծնվում է մանր արտադրություններից, գրում էր Լենինը 1908 թ*): Ծիշին խավերի մի ամբողջ չարք անխուսափելիորեն նորից ծնունդ է առնում կապիտալիզմից... Այդ նոր մանր արտադրողները նույնպես անխուսափելիորեն նորից չքվում են պրոլետարիատի չարքերը: Միանդամայն բնական է, վոր մանր-բուրժուական աշխարհահայացքը նորից և նորից ներս է սողում բանվորական լայն շրջանները: Միանդամայն բնական է, վոր այդպես պիտի լինի և լինելու է մինչև պրոլետարական հեղափոխության պրեպսեխանները, քանի վոր մեծ սխալ կլիներ մտածել, թե պրոլետարական հեղափոխության իրականացման համար անհրաժեշտ և ազգաբնակության մեծամասնության լիակատար պրոլետարացումը»:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԾԱՂԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԸ ՑԵՎ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

Մնալով կայուն յերևույթ, ռեվիզիոնիզմն առանձին ուժով հայտարերվեց և հայտարերվում է՝ այսպես կոչված՝ կապիտալիստական ծաղկման եպոխաներում: Դասակարգային աշխատակցության բուրժուական տեսաբանները ծագել են կապիտալիզմի զարգացման հենց «խաղաղ» եպոխայում:

Այդ ժամանակ բուրժուազիան ձգտում է ռեֆորմների միջոցով բանվոր դասակարգին հաշտեցնել կապիտալիզմի հետ և թուլացնել նրա հեղափոխական պայքարը: Այս հեչտացնում է բուրժուական տեսաբանների (ինչպես օրինակ՝ պատմական և սոցիալ-հոգեբանական չկայի և այլն) ազդեցությունը պրոլետարիատի վրա: Այս պատճառով, ռեվիզիոնիզմը ծագում է կապիտալիզմի հենց ծաղկման և առանձնապես արագ զարգացման ու իմպերիալիզմի առաջին տարիներին անցնելու եպոխայում: Ծաղկման եպոխայում ավելի հեշտ է տատանվող խավերին դեր ընձեռել, քանի վոր կապիտալիզմը կայուն է, ճգնաժամերն անցել են և թե՛ «խորտակման տեսությունը» («Zusammenbruch theorie») պրոլետարական հեղափոխության անհրաժեշտության և անխուսափելիության տեսությունը՝ «կանոնի» է:

ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ՀԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՑԵՎ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Իր գոյության ամբողջ ընթացքում ռեվիզիոնիզմը հանդես է եկել զանազան փիլիսոփայական և քաղաքական-տնտեսական կերպարանքներով: Իր եյությամբ, սակայն, նա մնում էր և մնում է գիտակից թե անգիտակից մի ձգտումն՝ աղավաղելու պրոլետարիատի տեսությունը և հարմարեցնելու նրան բուրժուազիայի չահերին, պրոլետարիատի դասակարգային պայքից նրան դարձնելու պրոլետարիատին և նրա հետևից գնացող աշխատավոր մասսաներին բուրժուազիայի գաղափարական ազդեցության, և ի վերջո սրա քաղաքական և տնտեսական չահագործական տիրապետության յենթարկելու մի գենք: Ռեվիզիոնիզմն ստրատեգիայի այլ ձևերից տարբերվում է նրանով, վոր նա հենց պրոլետարական իդեոլոգիայի դիմակով է հանդես գալիս: Պրոլետարական ուսմունքի (մարքսիզմի-լենինիզմի) վերանայումը (ռևիզիան), վորը փաստորեն հանգում է այդ ուսմունքից հեղափոխական բովանդակությունը վտքահանելուն, ռեվիզիոնիզմի տեսաբանների կողմից միչտ էլ հանդես է բերվել վորպես ձգտումն՝ ուղղելու, լրացնելու, հիմնավորելու մարքսիզմը, նրան դնելու փիլիսոփայական բազայի վրա կամ թե մտցնելու նրան իրական կյանքին՝ վերացնելով նրանից այս կամ այն, ռեֆորմիզմի համար անհասու կողմը:

Բոլոր ռեվիզիոնիստները վազ թե ուշ բուրժուական տարի և բուրժուական հակահեղափոխության գիրկն են ընկնում: Այդ մենք տեսանք Հանդիսնա Տրոցկու: Տրոցկին այժմ ԱՄՀ Միության և պրոլետարական հեղափոխության ամենաինտեգրի թշնամին է: Նույնը կարելի չե ասել նաև ալ Թեզման մասին, վոր ամեմանակցվում է բուրժուական և մանր-բուրժուական վիճաբարբանքներին: Մարքսիզմը մի հոյակապ գիտական աշխարհահայացք է. ուստի, ամեն մի չեզոքն մարքսիզմից հանդիսանում է չեզոքն գիտական ըմբռնողությունից, գիտական մանիզմից, հանդիսանում է դավաճանություն պրոլետարիատի չահերին:

90-ական թվերին նեոկանտյան և ռեֆորմիստական զաղափարները թափանցեցին մարքսիստների չքջանը, վորպես Մարքսի «բննադատություն» և ձգտումն՝ «ռեվիզիայի յենթարկելու» նրա ուսմունքը, նրա հեղափոխական եյությունը վատթելու նպատակով: Այս ռեվիզիոնիստական հոսանքի իր առանձնապես պարզորոշ ձևակերպումը գտավ Բերնշտեյնի, Դավիդի, Հերցի և 90-ական թվերի վերջին գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մի չարք ուրիչ զործիչների տեսական և քաղաքական յելույթների մեջ: Այս հոսանքը, վոր բերնշտեյնիանություն անունն է կրում, միջազգային նշանակություն ուներ, քանի վոր նա հակառական ազդեցություն ունեցավ այլ յերկրների և առանձնապես Ռուսաստանի բանվորական չարժման անկայուն տարրերի վրա: Ներկայումս, գրում էր Լենինը 1902 թ., անդլիական ֆաբրիականները*), ֆրանսիական միլիտերիալիստները**), գերմանական բերնշտեյնիանները, ռուսական քննադատները՝ սրանք բոլորը մի ընտանիք են, սրանք բոլորը մեկը մյուսին զովում է, մեկը մյուսից սովորում և միասին զինվում «հզոր մարքսիզմի» դեմ:

---

*) Ֆաբիականները — մի ընկերություն է, հիմնված 1883 թ. Սիդնեյ և Բեատրիսա Վերբերի, Շոուի, Ուելսի և ուրիշների կողմից, վորի նպատակն էր հասարակության հետզհետե վերակառուցումը՝ պարլամենտական պայքարի և դասակարգային աշխատակցության միջոցով:

**) Միլիտերիալիզմ — սոցիալիստների մուտքը բուրժուական միներություններ մեջ: Առաջին «սոցիալիստը», վոր 1899 թվին մտավ այդպիսի միներության մեջ (Վալդեկ Ռուսոյի միներությունը), Միլլերանն էր. ուստի հաճախ ասում են նաև «միլլերանիզմ»:

ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՁԵՎԱԿԵՐՊՎԵԼՈՒ ՅԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ինչո՞ւ հենց Գերմանիան դարձավ ձևակերպված ռեվիզիոնիզմի օրրանը։ Պատճառը կապիտալիզմի և իմպերիալիզմի աճումն էր այնտեղ 70—90-ական թվականներին, վորը գերազանցեց Յեվրոպայի այլ յերկրների կապիտալիզմի աճումը։ Այդ աճումը մի կողմից առաջացրեց կազմակերպված բանվորական շարժման աճում և մարքսիզմի գաղափարների տարածում, իսկ մյուս կողմից՝ հակապրոլետարական շրջաններում ձգտում առաջացրեց մարքսիզմն աղավաղելու։ Բանվորական վերնաշերտի դրության մի փոքր բարելավումը և մինչ 1890 թ. սոցիալիստների դեմ օրենքի ճնշման տակ գտնվող սոցիալիստական կուսակցության լեգալիզացիան գերմանական սոցիալ-դեմոկրատիան ընտելացնելու միջոցներից մեկն էր։

Գերմանական սոցիալ-դեմոկրատիան 90-ական թվականներին աճեց և աշխարհի խոշորագույն և համեմատաբար ավելի կազմակերպված սոցիալիստական կուսակցությունը դարձավ։ Գերմանական պրոֆմիությունների (վորոնց անդամների թիվը նույնպես անընդհատ աճում էր) վրա նրա ազդեցությունը հսկայական էր։ Սակայն, աճման այդ յերևույթներին զուգընթաց արդեն 90-ական թվականների միջին սկսեց զգացվել կուսակցության հեղափոխական վոգու թուլացումը։ Սոցիալիստական կուսակցության պարլամենտական գործունեությունը, վոր համարվում էր պրոլետարական պայքարի միջոցներից մեկը, վորպես ագիտացիայի և պրոլետարիատին՝ սոցիալական հեղափոխության համար պատրաստելու մի զենք, փաստացին սկսեց կլանել կուսակցության համարյա բոլոր ուժերը և խախտել նրա գաղափարական հիմունքները։ Ընկնելով մերձավորագույն գործնական նպատակների հետևից՝ կուսակցությունն աստիճանաբար համակվում է ռեֆորմիզմով։ 90-ական թվերի կեսերին այդ արտահայտվում էր առանձնապես կուսակցական այն ճգնաժամով, վոր ծագեց ագրարային հարցի շուրջը։ Փոխանակ գյուղում ագիտացիա մղելու և գրավելու գյուղացիական այն տարրերին, վորոնք կարող են պրոլետարական պայքարում բանվոր դասակարգի հետևից գնալ, կուսակցության մի քանի առաջնորդների և տեսաբանների կողմից առաջարկվում էր կուսակցության ծրագիրը հարմարեցնել գյուղացիական մակարդակին՝ գյուղացիների ընտրական ձայները գրավելու համար, նաև այն նկատառումով, վոր Մարքսի ուսմունքը, թե խոշոր տնտեսությունները մանր տնտեսություններին կլանում են — ճիշտ չէ գյուղատնտեսության բնագավառի նկատմամբ։ Սա արդեն մարքսիզմի ռեվիզիա յեր։

Բեռնշտեյնին մնում էր միայն տեսականորեն հիմնավորել այն։

Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը տեղի էր ունենում այն ժամանակ, յերբ դեռ գոյություն ունեյին ճորտատիրությունը և ինքնակալությունը, յերբ բուրժուազիան չափազանց թույլ և հետամնաց էր։ Բուրժուական ինտելիգենցիան, վոր բուրժուազիայից ավելի առաջավոր խավն էր, ձգտելով սահմանափակել ինքնակալությունը և ճորտատիրությունը, վոր մեծ չափով արգելք էր հանդիսանում կապիտալիզմի թափին, կարող էր ուղղությունը վերցնել միայն բանվորական շարժման, և վոչ թե բուրժուական թույլ ազդեցիայի և մանր-բուրժուական անանկացած նարոդնիկականության վրա։ Վոր չափով առաջացան բանվորական շարժումը միանգամից անցավ հեղափոխական մարքսիզմի դրոշի տակ և վոր չափով առաջ մարքսիզմն ապացուցում էր Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման պատմական անխուսափելիությունը, այդ չափով բուրժուական առաջավոր ինտելիգենցիան «ընդունում էր» մարքսիզմը, բայց ձգտում էր հարմարեցնել այն բուրժուազիայի շահերին և վոչ պրոլետարիատի, վորը կապիտալիզմի նույն զարգացման ծնունդն էր ու կազմակերպածը։ Այստեղից ծագում առավ լեգալ մարքսիզմն իր նեոկանտյան դրույթներով և արտադրություններով (Ստրուվե, Բուլգակով, Բերդյաև), իր՝ Բուլգակովյան տեսությամբ, գյուղատնտեսության զարգացման հատուկ ուղիների մասին, վոր փոխառած էր գերմանական ռեվիզիոնիստներից՝ Հերցից, Դավիդից, Բեռնշտեյնից և մյուսներից։ Այստեղից են՝ մանր-բուրժուական աղավաղումները կուսակցության և բանվորական շարժման ներսում, եկոնոմիզմը, [illegible], բունդիզմը և մինչև իսկ զուբատովշչինան, վորոնք ծագել և ընդարձակ ծավալ են առել հենց մանր-բուրժուական արտադրության [illegible] (գյուղական տնայնագործ՝ հյուսիս-արևմտյան, Լեհաստանում և այլն)

§ 79. ԲԵՌՆՇՏԵՅՆՅԱՆ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչն է բեռնշտեյնականության եությունը։ Փիլիսոփայական տեսակետից Բեռնշտեյնը և ռեվիզիոնիստական մի շարք այլ տեսաբաններ (Ֆորլենդեր, Ադլեր, Ստրուվե և այլն) ձգտում եյին մարքսիզմին Կանտի կրիտիկական փիլիսոփայության նման մի հիմք հորինել, պնդելով, վոր մարքսիզմին պակասում է փիլիսոփայական հիմնավորումը։ Նման պնդումը, թե մարքսիզմը զուրկ է փիլիսոփայական հիմնավորումից, մի անամոթ սուտ է, քանի վոր մարքսիզմը մի հոյակապ գիտական աշխարհհայացք է, կանգնած՝ դիալեկտիկական մատերիալիզմի հաստատուն հիմունքի վրա։ Բեռնշտեյնը և այլ ռեվիզիոնիստները հրաժարվում եյին հեղափոխական դիալեկտիկական մատերիալիզմից և քարշ եյին գալիս «բուրժուական պրոֆեսորական գիտության պոչից։ Պրոֆեսորները... կծկում եյին հազար անգամ ասված տերտերական սոր բամբասանքները փիլիսոփայական մատերիալիզմի դեմ, և ռեվիզիոնիստները «գիջողաբար» ժպտալով, փսփսում եյին (բառ առ բառ վերցնելով վերջին ձեռնարկից), թե մատերիալիզմը վաղուց «հերքված» է։ Պրոֆեսորները նվաստացնում եյին Հեգելին՝ անվանելով նրան «սատկած շուն», և իրենք իդեալիզմ քարոզելով (միայն թե հազար անգամ ավելի սոր և գռեհիկ, քան Հեգելինը, արհամարհաբար թոթվում եյին ուսերը՝ դիալեկտիկայի մասին խոսք լինելիս։ Ռեվիզիոնիստներն էլ նրանց հետևից թաղվում եյին գիտության փիլիսոփայական գռեհկացման ճահիճը, «խորամանկ» (հեղափոխական) դիալեկտիկան «պարզ» և խաղաղ եվոլյուցիայով փոխարինելով»*)։ Բեռնշտեյնը, ինչպես և ուրիշ շատ ռեվիզիոնիստներ, վորոնք հանդես յեկան հետագայում, հաշիվ էր տեսնում Հեգելի հետ վոչ թե նրա իդեալիզմի համար, այլ նրա դիալեկտիկայի, այսինքն՝ հենց այն բանի համար, վորը մարքսիզմի կողմից ընդունվել և կատարելագործվել է վորպես պրոլետարիատի զենք, այն է՝ մատերիալիստական դիալեկտիկայի, վորովհետև, Բեռնշտեյնի կարծիքով, միայն դիալեկտիկական մեթոդն էր, վոր Մարքսին հրեց և ձգեց «հեղափոխական ցնորքների ուղիի վրա»։

Ռեվիզիոնիզմի մանր-բուրժուական մտածողությունը յերբեք չէր կարող բարձրանալ և հասնել մարքսյան դիալեկտիկայի ըմբռնմանը, վորպես իրականության հակասությունները, հասարակական կեցության հակասություններն արտացոլող մտածողության մեթոդ։

ԿԱՆՏԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Բեռնշտեյնականությունը (ինչպես և ռեվիզիոնիզմի շատ ուրիշ տեսակները) մարքսիզմին Հեգելի տեղ Կանտն է հրամցնում։ Ի՞նչով է հմայում ռեվիզիոնիստներին Կանտի կրիտիկական փիլիսոփայությունը։ Իր համաձայնողականությամբ, մատերիալիզմն իդեալիզմի, ռացիոնալիզմի եմպիրիզմի, գիտությունը հավատի հետ հաշտեցնելու ձգտումով, զատորոշելով նրանց կիրառման բնագավառները։ Կանտը խոստովանում է, վոր մեր գիտակցությունից դուրս իսկապես վոր գոյություն ունի վորոշ օբյեկտիվություն, «իրեն իրենները» (նոումենների) աշխարհ։ Սրանում արտահայտվում է Կանտի մատերիալիզմը, վորովհետև մատերիալիզմը, ինչպես գիտենք, պնդում է արտաքին աշխարհի օբյեկտիվությունը։ Ինքը՝ Կանտը՝ ամեն կերպ համոզում էր, թե ինքն իդեալիստ չէ։ «Իդեալիզմը, գրում էր նա իր Prelegamena ներում, այն պնդման մեջ է, թե այլ եյակներ չկան, բացի մտածող եյակները. բոլոր այլ իրերը, վորոնք մենք ըմբռնում ենք, պիտի լինեյին մտածող եյակների պատկերացումներ միայն, պատկերացումներ, վորոնց չեյին համապատասխանի այդ եյակներից դուրս գտնվող առարկաներ։ Ընդհակառակը, յես պնդում եմ, թե իրերը տրված են մեզ վորպես մեր արտաքին զգայարաններից դուրս գտնվող առարկաներ. սակայն, այն մասին, թե ինչպիսի կարող են լինել այդ իրերն ըստ ինքյան, մենք վոչինչ չգիտենք. մեզ հայտնի յեն միայն յերևույթները, այսինքն՝ այն պատկերացումները, վորոնք առաջացնում են այդ յերևույթները մեր մեջ՝ ազդելով մեր արտաքին զգայարանների վրա։ Ուրեմն, համենայն դեպս յես ընդունում եմ, վոր մեզնից դուրս գտնվում են մարմիններ, այսինքն՝ իրեր, վորոնք ըստ ինքյան մեզ բոլորովին անհայտ են, բայց վորոնց մենք գիտենք մեր այն պատկերացումների համաձայն, վորոնք առաջանում են մեր մեջ, նրանց՝ մեր արտաքին զգայարանների վրա գործած ազդեցություններից։ Նրանց մենք նշանակում ենք «մարմին» բառով. մի բառով, վորը վերաբերում է, ուրեմն, այն յերևույթին, վոր առաջացրել է մեզ

*) Լենին, Մարքսիզմ և ռեվիզիոնիզմ, հ. X մ. 1. հրատ. 1-ին։

ջինանոթ, բայց այնուամենայնիվ գոյություն ունեցող առարկան։ Կարելի՞ է այս էջը չիշմ անվանել։ Այս ուղղակի հակապատկերն է իդեալիզմի»։

Մահաչ, կանտ ընդունում է, վոր «իրն ինքնին»—նրան անճանաչելի չեն մեզ ճանաչողության չնթակա չեն միայն երևույթները (ֆենոմենները)։ Այսպիսով, գոյություն ունի իրիկ աշխարհ՝ «իրն ինքնին»-ների աշխարհը և երևույթների աշխարհը։ Այդ աշխարհները միմյանց հետ չեն կապակցված, անջատված են անճանաչելիության անթափանցելի անդրպատով։ Ապա ինչպե՞ս ենք ճանաչում երևույթները։ Այստեղ կանտն աշխատում է հաշտեցնել եմպիրիզմը ռացիոնալիզմի հետ։ Նա ասում է. ճանաչողության բովանդակությունը մենք ստանում ենք փորձից, զգայնությունից, բայց կապակցությունները և հարաբերությունները (ժամանակ, տարածություն, պատճառականություն) չենք ճանաչում զգայությունների միջոցով, այլ նրանք ապրիորի ձևեր են, վորոնք հատուկ են ճանաչողության։ Նյութական իրերի հատկությունները, վորակները պոկվում են իրերից և տեղափոխվում են գիտակցության մեջ. փորձը նույնպես անջատվում է օբյեկտից. նա գտնում է ամբողջովին սուբյեկտիվ, բացատվում է ժամանակի տարածության և պատճառականության օբյեկտիվ նշանակությունը։ Այս բոլորն իդեալիզմ է։

Կանտի ըմբռնողությունը ձգտում էր հաշտեցնել դիտությունը հավատի հետ։ Իսկապես, չիրն ճանաչելի երևույթների աշխարհի կողքին գոյություն ունի անճանաչելի իրերի աշխարհ, և չիրն ժամանակը, տարածությունը և պատճառականությունը ապրիորի ձեր են, ապա այդ նշանակում է, վոր ժամանակը, տարածությունը և պատճառականությունները վոչ մի առնչություն չունեն «իրն ինքնին»-ների։ «Իրն ինքնին»-ների աշխարհում տիրում է բացարձակ ազատություն և հավիտենականություն, ուրեմն և հոգու անմահություն։ Ըստ Կանտի՝ այդ աշխարհում գոյություն ունի նաև աստված։ Այսպիսով, կանտը, վոր կանգնած էր իր ժամանակի բնագիտության և առհասարակ գիտության ամենալայնքի մակարդակի վրա և բնության պատկերները (ըստ Կանտի «երևույթների աշխարհը») բացատրելու համար դիմում էր դիտական տեսությունների և պրիոմների, դառնում է ոգնաստեղի և կրոնապաշտ մի մարդ «իրն ինքնին»-ների աշխարհի առջև։

Կանտը՝ ինքն էլ խոստովանում էր այդ։ «Մաքուր բանականության քննադատության»-ի 2-րդ հրատարակության իր առաջաբանի մեջ նա գրում է. «Ցնս չեմ կարող մինչև իսկ յենթադրել, վոր կան աստված, ազատություն և անմահություն, վորոնք անհրաժեշտ են իմ բանականության գործնական նպատակների համար, առանց այն բանի, վոր դրա հետ միասին չզրկեմ սպեկուլյատիվ բանականությունն էր չափազանց հավակնություններից թափանցելու նկատմամբ։ Ուրեմն, յես պետք է վոչնչացնեի դիտությունը, վորպեսզի տեղ բանալ հավատի համար»։

ՌՆՎԻԶԻՈՆԻՍՏՆԵՐԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՆՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ տեսնենք, թե ինչպես Բերնշտեյնը և մյուս ռևիզիոնիստները կատարեցին իրենց ուրացությունը Մարքսի փիլիսոփայությունից։ Նրանք, իհարկե, չէին ասում, թե այդ ուրացությունը կատարվել է դասակարգային չհերի, բուրժուազիայի չհերի տեսակետից։ Ընդհակառակը, նրանք ապացուցում էին, թե «բանականությունը» և այդ պահանջում (Կանտ, Շմիդտ, Սորուվե), թե այդ են պահանջում պրոլետարիատի չհերը։ Բերնշտեյնը, խոստովանելով դիալեկտիկայի միքանի առավելություններ, միաժամանակ պնդում է, թե Մարքսն ու Ենգելսը նրանից սխալվեցին, վոր դիալեկտիկայով առաջնորդվեցին, վոր արտահայտում է «երկիմաստության», վորովհետև նրա այո-վոչ և վոչ-այո, այո-այո և վոչ-վոչ-ի փոխարեն դնելը, նրա հակադրությունների փոխադարձ անցումները, քանակության անցնելը վորակի և ուրիշ դիալեկտիկական դեղեցկությունները չարունակ արգելք են հանդիսանում ընդունված փոփոխությունների նշանակությունը պարզ ըմբռնելուն»։ Բերնշտեյնն, ի միջի այլոց, դիալեկտիկային և հանցավոր բռնում այն բանի համար, վոր Մարքսը վորպես թե չափազանցնում էր պատմական զարգացման պրոցեսի արագությունը։ Բանի վոր Մարքսը խոսում էր կապիտալիստական հասարակության զարգացման մասին, և քանի վոր նա չարժման արագությունը հասկանում էր վորպես կապիտալիզմի մոտակա կործանում, ապա այդ խիստ անդուրեկան էր Բերնշտեյնի համար. ուստի, նա դիալեկտիկան հայտարարում է վնասակար և վտանգավոր։ Նույնպիսի «հեղհեղությամբ» հաշիվ էր տեսնում դիալեկտիկայի հետ մեր հայրենի ռևիզիոնիստ Սորուվեն, վորը հայտարարում էր, թե

«քանակությունը բոլորովին չէր կարող», այսինքն՝ քանակությունը վորակին անցնել չի կարող։ Չեյին խնայում դիալեկտիկային նաև մյուս ռևիզիոնիստները։

Չեյին խնայում նրանք նաև մատերիալիզմին։ Թե՛ Բերնշտեյնը, թե՛ Կոնրադ Շմիդտը հրաժարվում են մարքսյան մատերիալիզմն ընդունելուց։ «Մաքուր, կամ աբսոլյուտ մատերիալիզմը ճիշտ նույնքան սոլիպսուալիստական է, որում է Բերնշտեյնն իր «Սոցիալիզմի պրոբլեմները» դրքում, վորքան և մաքուր կամ աբսոլյուտ իդեալիզմը։ Բերկուսն էլ յենթադրում են, թեկուզ և տարբեր տեսակետներով, թե՝ մատերիան ու կեցությունը նույնանման են (իդենտիկ են)։ Վերջիվերջո նրանք ատրեներվում են արատահայտության ձևերով միայն։ Ընդհակառակը, նոր մատերիալիստները սկզբունքորեն նույնքան վճռական դեմ են կանտի տեսակետի վրա, ինչպես այդ արավ խոշորագույն բնագետներից մեծամասնությունը»։ Այսպես ասելոմն, «մաքուր մատերիալիզմը» հանգում է իդեալիզմին, և Բերնշտեյնը կոչում է՝ «հե՛տ, դեպի կանտը», վորի տեսակետին են կանգնում «նոր մատերիալիստները», այսինքն՝ Բերնշտեյնի, Կ. Շմիդտի և ուրիշների նման եկլեկտիկները։

ԲԵՐՆՇՏԵՅՆՅԱՆ ՆԵՈԿԱՆՏՅԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԱՍՏԱՂԸ

Այստեղից էլ ուղիղ ճանապարհ է տանում դեպի մատերիալիզմի խառնուրդ իդեալիզմի հետ, դեպի կանտյան դուալիզմը։ Կանտի փիլիսոփայությունը 18-րդ դարի վերջին կապիտալիզմի և ֆեոդալիզմի հաշտեցման իդեոլոգիան էր։ Մինչդեռ ֆրանսիական մատերիալիզմը ֆրանսիական հեղափոխական բուրժուազիայի իդեոլոգիան էր, վոր ամենայն վճռականությամբ գեմ էր դուրս յեկել ազնվականությանը և յեկեղեցուն։ Կանտի փիլիսոփայությունը պրմանական դևռևս թույլ և անվճռական բուրժուազիայի իդեոլոգիան էր, վորը դժգոհ էր ֆեոդալական կարգերից, ուստի և հուզեր մի փոքր քննադատել միջնադարյան իրավական և փիլիսոփայական հասկացողությունները, բայց բացարձակ պայքարի չէր յենում հին աշխարհի դեմ, վորովհետև Գերմանիայում այն ժամանակ սոցիալական հարաբերությունները տակավին բավականաչափ սրված չէին։ Վերադարձը դեպի Կանտ 19-րդ դարի վերջին կրկնություն էր թշնամի դասակարգերը՝ պրոլետարիատն ու բուրժուազիան՝ հաշտեցնելու փիլիսոփայական մանյովրի մի ուրիշ հիմքի վրա, հաշտեցում, վորի նպատակն էր պրոլետարիատը յենթարկել բուրժուազիային, վորի նպատակն էր ազատարար դասակարգի առաջնորդների ֆիլիստերական ձգտումները յենթարկել չահագործող և ճնշող դասակարգի կապիտալիստական միտումներին։ «Հե՛տ, դեպի կանտը» բուրժուական լողունգը դարձավ դասակարգային պայքարի վճռական տեմպերից վախեցած և դասակարգային աշխատակցության կողմը բնազդաբար բռնած մանր-բուրժուական տարրերի լողունգը՝ բանվորական չարժման մեջ։ Ուստի, մարքսիզմի ռևիզիան, վոր ձեռնարկվել էր վորպես թե մարքսիզմը «փիլիսոփայական հիմունքով» «ամբացնելու», չէր կարող սահմանափակվել միայն մարքսիզմի փիլիսոփայության ռևիզիայով։

ԲԵՐՆՇՏԵՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Տեսնենք, թե ինչո՞վն է կայանում Բերնշտեյնական ռևիզիոնիզմի «սոցիոլոգիան»։ Բերնշտեյնը և նրա կողմնակիցները վիճում էին մարքսիզմի հիմնական քաղաքատնտեսական այն դրույթյան դեմ, թե՝ կապիտալիստական հասարակության մեջ մանր արտադրողները վոչ թե ուշ քայքայվում են և իջնում պրոլետարիատի չարքերը և, վոր չնորհիվ դրա՝ հասարակությունը բաժանվում է յերկու հիմնական դասակարգի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի, վորոնց միջև դասակարգային հակասությունները ավելի ու ավելի սրվում են (Ռևիզիոնիստները, փաստերին հակառակ, ապացուցում էին, վոր մանր արտադրողները (առանձնապես գյուղատնտեսության ասպարիզում) վոչ միայն կարող են դիմանալ, այլև աճում են։ Սեփականատերերի թիվը վոչ միայն չի նվազում, այլև աճում է — աճում է բացարձակապես և հարաբերաբար։ Ցնրե սոցիալ-դեմոկրատիայի գործունեությունը և հույսերը կախված լինելին միայն նրանից, թե սեփականատերերի քանակը նվազում է, ապա նա կարող էր իրապես հանդիսա քնել, սակայն այդ միանգամայն ճիշտ չէ։ Սոցիալ-դեմոկրատիայի հույսերը կապված են վոչ թե հասարակության հարստության նվազման, այլ ավելացման հետ։ Այստեղից՝ յերկու հիմնական յեզրակացություն. 1) պրոլետարիատի և բուրժուազիայի միջև կա մանր մուրժուազիա («միջին դասակարգեր»՝ Բերնշտեյնի դարձվածքով), վորը կապիտալիզմի պրոցեսով կորստի չի մատնվում, այլ ընդհա-

դառակը, ամուր և տարաձնդվում է, դառնալով ավելի ու ավելի կայուն մի սոցիալական ուժ, որը բթացնում է դասակարգային հակասությունների սրվածությունը։ 2) Հատարտության չահերը և սեփականատերերի չահերը նույնն են, վորովհետև հատարտական հարբերության ամուրը նույնանում է բուրժուական սեփականատիրության հետ։ Այստեղից պետք է յեղրակացնել, վոր կապիտալիստական կուտակումը (վոր ներկայացնում է բուրժուական սեփականության մարքսիստ ամուրը) նույնն է, ինչ վոր հատարտական կուտակումը. ուստի և սա հատարտության չահերի դեմն է։ Այստեղ մարքսիզմը վոչ միայն վերանայվում է, այլ ուղղակի հերքվում է, փոխարինվում ամենատարր վուլգար-բուրժուական քաղաքատնտեսությամբ։ Այստեղից էլ բղխում է ռեվիզիոնիստների բացատրումը Մարքսի ուսման՝ դասակարգային հակասությունների ամման, ճղնաժամերի, կապիտալիստական հատարտության վիման (կատաստրոֆայի տեսության), սոցիալական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին։ Այստեղից էլ բղխում է ռեֆորմիզմի և սոցիալ-իմպերիալիզմի ծրագիրը։

§ 80. ՊԱՅՔԱՐ ԲԵՐՆՇՏԵՅՆԱԿԱՆ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՅԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Պայքարն ռեվիզիոնիզմի դեմ ավարտվեց (և ուրիշ կերպ չեր էլ կարող ավարտվել), հնգափոխական մարքսիզմի տեսական փայլուն հաղթանակով։ Մի շարք բանվորական կուսակցություններում բերնշտեյնականությունը դատապարտվեց։ Առանձնապես մեծ նշանակություն ուներ հաղթանակը Գերմանիայում և Ռուսաստանում։

Գերմանիայում՝ բերնշտեյնական ռեվիզիոնիզմի սրբանում, թեպետև իմպերիալիզմի ավելի արագ եր զարգանում, քան այլ յերկրներում, բայց նա դեռ այնպիսի բարձր մակարդակի չեր հասել, ինչպես, որինակ՝ Անգլիայում, և դեռևս չեր կարողացել առեղծել բանվորական արիստոկրատիայի զգալի կադրեր, դեռևս չեր կարողացել կազմվել զորեղ քաղաքական բյուրոկրատիա. հեղափոխական պայքարի մոտիվները դեռ չեյին դադարել հնչելուց. դեռևս չեյին մոռացվել հալածանքները բանվորական շարժման և սոցիալ-դեմոկրատական նկատմամբ։ Այնուամենայնիվ, դատապարտելով բերնշտեյնականությունը (զանազան վերապահումներով և յերկիմաստ ձևակերպումներով), գերմանական սոցիալ-դեմոկրատիան գլխի չընկավ զոնե իր շարքերից հեռացնելու բերնշտեյնին և նրա կողմնակիցներին, վորոնք հետագա տարիներին շարունակում եյին քայքայել կուսակցությունը։ Ֆրանսիայում միլլերանի ժամերին դատապարտվեց։ Անգլիայում մարքսիզմի իդեաներն ակսեցին զգալի ազդեցություն ձեռք բերել հենց այդ ժամանակ, այսինքն՝ 20-րդ դարի սկզբին։ Պայքարը ռեվիզիոնիզմի դեմ մեծ հաջողություն ունեցավ առանձնապես Ռուսաստանում։ Հեղափոխական բանվորական շարժման ալիքը, վոր բարձրացավ 20-րդ դարի սկզբին արդյունաբերական այն ծաղկումից հետո, վորը «տնտեսական» իլյուզիաներ ծնեց և վերջացավ արդյունաբերական դեպրեսիայով*),— բանվորական շարժման ճանապարհից ավելց, մաքրեց և՛ լեզալ մարքսիաններին (վորոնք, պիտի ասել, հենց իրենք եյին փախչում հեղափոխություններից և բանվորական շարժումից), և՛ «եկոնոմիստներին», և՛ ռարոչեդևեցներին, և՛ նման ուրիշներին, ճիշտ և, հետո ռեվիզիոնիզմը վերածվեց մենշևիզմի կերպարանքով, իսկ ավելի ուշ մախիզմի դառնալ հիմնաքարն իրկունքությունների։ Սակայն այս հաղթանակը մենք կարող ենք հաշվել վորոշ եղած մարքսիզմի զարգացման պատմության մեջ, քանի վոր «ռեվիզիոնիստների դեմ այդ պայքարը... մինչդասային սոցիալիզմի տեսական մոքի նույնպիսի արդյունավոր աշխուժություն առեղծեց, ինչպես քսան տարի առաջ Ենգելսի և Դյուբրինգի բանավիճը» (Լենին)։ Ցավ յերբեք պատահականություն չե, վոր հենց հաստատված հեղափոխության յերկիրը, վորտեղ պրոլետարիատն առաջին քաղաքական ուժն եր, առաջ քաշեց տեսաբաններ, վորոնք իրենց ուսերի վրա վերցրին ռեվիզիոնիզմի դեմ պայքարելու ամբողջ ծանրությունը։ Առաջին դնդակ արձակողը բերնշտեյնական ռեվիզիոնիզմի պայքարում Պլեխանովն եր, վոր հանդես յեկավ մի կարուկ բողոքով Բերնշտեյնի՝ «Սոցիալ-դեմոկրատական պայքարի և հատարտական հեղաշրջման մասին» հոդվածի դեմ, վորտեղ վերջինս կատաժի դեմ յեղեքտիկում կատաստրոֆայի տեսությունը Zusammenbruchtheorie լեռնը քարտմանում է՝ փլուզման տեսություն») Սակայն ամեն դեպքի ռեվիզիոնիզմի դեմ պայքարի ամբողջ կոմպանիան տարան Պլեխանովը և Լենինը։

*) Դեպրեսիա—ճնշման վիճակ, անկման վիճակ։

ՊԼԵԽԱՆՈՎԻ ՅԵՎ ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ՝ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՁԱԿԱՏՈՒՄ

Փիլիսոփայության ճակատում, բերնշտեյնականության դեմ պայքարի թռնվեցին հատկապես Լենինը և Պլեխանովը։

Պատկին, վոր այդ չրջանում հանդես յեկավ բերնշտեյնական ապորտունիզմի դեմ հատուկ դրքով, հարձակվում եր հարցի բացատրական տնտեսական և քաղաքական դատողությունների վրա, բայց զանց եր առնում հարցի փիլիսոփայական կողմը (հետագայում նա պետք եր, թե՛ մարքսիզմը կարող է մի ցավել ամեն մի փիլիսոփայական ուսմունքի հետ)։

Պլեխանովը բերնշտեյնականության վրա հարձակվում եր ամենից ավելի մատերիալիզմի պաշտպանության տեսակետից. նա համարյա միանգամայն անտես է անում մատերիալիստական դիալեկտիկան և հենց մատերիալիզմի ըմբռնման մեջ չատ մոտ է կանգնած ֆեյերբախի և Զերնիշևսկու դիրքերին։ Նա չկարողացավ բարձրանալ և հասնել անդրադարձման տեսության լենինյան ըմբռնողությանը, վոր վորոշեց և հաստատեց մարքսիզմի մեջ դիալեկտիկայի և ճանաչողության տեսության միասնությունը։ Այս նվազեցնում է նրա՝ ռեվիզիոնիզմի քննադատության արժեքը։ Սակայն այդ չի խանգարում ընդունելու Պլեխանովի պր

«Ի՞նչ անել»-ի մեջ։ Մի չարք, վոչ միայն ծրագրային, այլև կազմակերպչական և տակտիկական դրույթյուններ լենինի մոտ ամենուրեք և միշտ հաստատված են մատերիալիստ-դիալեկտիկական փիլիսոփայական հիմունքի վրա։

Ընդամենը իր միքանի անձինս, վոչ-դիալեկտիկական դատողություններին՝ գլեխանովը կարողացավ ապացուցել (ֆրանսական մատերիալիստների ուսմունքի և Մարքսի ու Ենգելսի մատերիալիստական հայացքների վերլուծման միջոցով), վոր ռևիզիոնիստական այդ դատողությունները միանգամայն աղավաղում են մատերիալիզմի ըմբռնումը։ Մատերիալիզմը վոչ թե կեցության և մտածողության նույնության մեջն է (ինչպես այդ մատերիալիզմի վրա եք փաթաթում բերնչտեյնը), այլ նրանում, վոր «հիմնական սկիզբ համարում է բնությունը» (նիգելը) և այն, վոր կեցությունը նախորդում է մտածողությանը, վորն առաջանում է կեցությունից։ Լիակատար չափչփման չենթարկվեց նա այսպես կոչված «նոր մատերիալիզմը», վորը կանգնում է «սկզբունքորեն և նույնքան վճռականապես կանոի տեսակետին, ինչպես այդ արավ ժամանակակից նշանավոր բնագետների մեծամասնությունը» (Բերնշտեյն)։ Անիմաստ բան է հենց կանոի բաժանումը բնության՝ անճանաչելի «իրն ինքնին»-ների աշխարհի և ճանաչելի երևույթների աշխարհի։ «Ի՞նչ է երևույթը։ Այդ՝ մեր գիտակցության այն վիճակն է, վոր առաջացել է «իրն ինքնին»-ի մեզ վրա կատարած գործողության։ Այսպես է ասում կանտը։ Այս սահմանումից հետևում է, վոր վոչնչ երևույթ չի կարող առանց նախապես նշանակում և նախատեսել՝ այն գործողությունը, վոր մեզ վրա ցույց կտա «իրն ինքնին»-ը։ Այժմ՝ հարց. կարո՞ղ ենք մենք նախատեսել վորևե երևույթ։ Պատասխանը՝ ոչ հարկե, այո՛։ Այս մեզ երբաշխավորում է տեխնոլոգիա գիտությունը։ Իսկ այդ նշանակում է, վոր մենք կարող ենք նախապես իրն ինքնին»-ի վրա ազդող գործողություն։ Այդ երեք մենք նախատեսենք հիշյալ իրերի միքանի գործողություններ, ապա ուրեմն մենք կգիտենանք նրանց միքանի հատկությունները։ Իսկ երբ մենք գիտենք նրանց միքանի հատկությունները, ապա ուրեմն մենք վոչ մի իրավունք չունենք նրանց անճանաչելի անվանելու»*)։

«Իրն ինքնին»-ի և երևույթների միջև անջրպետ չկա։ Չկան «իրն ինքնին»-ներ, վոր երևույթների մեջ չարտահայտվեին, և չկան երևույթներ, վորոնք մատերիայի շարժման հետևանք չլինեին։ Ուրեմն և չկա երկու աշխարհ, ինչպես այդ դուրս է գալիս կանտից... Ցավ այդ միտնական աշխարհը մենք ճանաչում ենք շնորհիվ մեր ամենօրյա պրակտիկի գործունեության, վորը մեկը մյուսի հետևից բաց է անում իրերի հատկությունները։

Կանտի պնդումը, թե պատճառականությունը «պարիսրի ձև» է, մեր գիտության կողմից հերքված է, վորը չի կարելի կիրառել «իրն ինքնին»-ի աշխարհի նկատմամբ (քանի վոր այս անճանաչելի է), մի իդեալիստական պնդում է, վոր հակասում է հենց իր՝ կանտի պնդումին, թե՝ «իրն ինքնին»-ը, անհրաժեշտ պայման է մեր զգայությունների առաջ բերող «իրն ինքնին»-ը, ապա այդ նշանակում է, վոր նրանք են պատճառ զգայությունների։ Իսկ եթե նրանք պատճառ են, ապա ուրեմն՝ չի կարելի ասել, թե պատճառականության կատեգորիան նրանց մասին չի տարած։ Հետևաբար, հետևողական մատերիալիզմը բացառում է այն միտքը, թե՝ աշխարհն անճանաչելի է և պատճառականության կատեգորիան նրա նկատմամբ անկիրառելի։ Այսպիսի ըմբռնումը միայն է վճռակի է գիտության և գործողության համար զենք տալու։ Իսկ բերնչտեյան-կանտյան «մատերիալիզմը» լիակատար անուժության և դատապարտում է՝ինչպես աշխարհի ճանաչողության նույնպես և գործողության բնագավառում։ Նա ուղի է բանում վոչ թե գիտության, այլ հավատի համար։ Այս պատճառով էլ նա մերժվեց պրոլետարիատի և նրա կուսակցության կողմից։

ՊԱՅՔԱՐԸ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ ՑԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՑԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Եկոնոմիկայի և քաղաքականության հարցերի չուրջը յեղած պայքարը բերնչտեյնականության դեմ՝ ստանում եր վոչ միայն Պլեխանովը, այլև կաուցկին և այն ժամանակվա ռեֆորմիստական ուրիշ տեսաբաններ ու գործիչներ։ Այստեղ հաղթությունը հաղթանակ եր և՛ ավելի հեշտ, քան փիլիսոփայական ֆրոնտում, քանի վոր կապիտալիստական յերկրների տնտեսական և քաղաքական եվոլյուցիայի թվերն ու փաստերը համազգեցուցիչ

*) Պլեխանով, — կ. Շմիդտը Մարքսի և Ենգելսի դեմ հ. XI.

կերպով մերկացնում էին ռևիզիոնիստական մտահղացումների ամբողջ տգեղությունը։ Ապացուցվեց, վոր չնայած մանր արտադրությունը բավական յերկար կարող է պահպանել իր վաղորմելի «ինքնուրույն» գոյությունը՝ նրանում աշխատող մանր արտադրողները և նրանց ընտանիքներն աշխատում են արշալույսից վերջալույս, հեռանում են վատ, զրկում են իրենց ամենաանհրաժեշտից և այլն, այնուամենայնիվ նրանց այդ գոյությունը, վաղ թե ուշ վերացվում է խոշոր արտադրության ճնշման տակ։ Ռևիզիոնիստական տեսությունը, թե ճգնաժամերի ժամանակին անցել է, խորտակեց ինքը՝ իրա կանաբերությունը՝ ծագկման չրջանին հաջորդող դաժան ճգնաժամով։ Կապիտալիստական մեննշեվիզմի չնորհների հակայական զարդացումը մի կողմից ապացուցում եր Մարքսի դատողության ճշտությունը կապիտալի համակենտրոնացման անխուսափելիության մասին և բերնչտեյնականության սնոտիության մասին՝ կան պնդման առաջ մյուսին դասակարգերի հաստատվելու և ամրապնդվելու մասին, մյուս կողմից՝ հերքեց ռևիզիոնիստական տեսությունը կապիտալիստական մի մասին։ «Գործարանները և տրեստները, միացնելով արտադրությունները, միաժամանակ բոլորի աչքերի առջև ուժեղացնում են արտադրության անարխիան, պրոլետարիատի անապահովությունը և կապիտալի լուծը, այսպիսով սրելով դասակարգային հակասությունները մինչ այդ չտեսնված աստիճան։ Վոր կապիտալիզմը դեպի փլուզումն է գնում, ինչպես քաղաքական և անտեսական առանձին կրիզիսների իմաստով, այնպես և ամբողջ կապիտալիստական հասարակարգի լիակատար խորտակման իմաստով, այդ առանձնապես ակնբախ կերպով և առանձնապես լայն չափերով ցույց տվին հենց նորագույն հակա արտասահմանները*)։

Նույնատակաբար խորտակվեց նաև բուրժուազիայի առաջավոր խավերի հետ մերձեցման տեսությունը։ Համաբայ բոլոր փորձերում քանվորական չարժման աճումը բուրժուական գեմոկրատիայի կողմից զգաստի և բացարձակ հալածանքի մատնվեց։ Զարդացման ռևիզիոնիստների հույսերը դասակարդային համաձայնության մասին։ «Միության» ներ, համաձայնությունների, բլոկների փորձը սոցիալ-ռեֆորմատորական լիբերալիզմի հետ՝ Անգլիատանում, լիբերալ ռեֆորմիզմի (կադետներ) հետ առուսական հեղափոխության մեջ՝ համազեցուցիչ կերպով ցույց տվեց, վոր այդ համաձայնությունները միայն բթացնում են մասսաների գիտակցությունը, չուժեղացնելով, այլ թուլացնելով նրանց պայքարի հեղափոխական նշանակությունը, կապելով պայքարողներին պայքարելու ավելի քիչ ընդունակ, ավելի յերերուն և դավաճանող տարրերի հետ։ Ֆրանսական միլերանիզմը — ռևիզիոնիստական քաղաքական տակտիկայի կիրառման լայն, խոպտես ազդային մասշտաբով կատարված ամենախոշոր փորձն այնպիսի պրակտիկական դնահատական տվեց ռևիզիոնիզմին, վոր ամբողջ աշխարհի պրոլետարիատը յերբեք չի մոռանա**)։

Մի խոսքով, ռևիզիոնիզմի գրոհը մարքսիզմի և բանվորական չարժման դեմ՝ այդ նշանակեց չրջանում՝ ներսից առաջին հարձակման չրջանում, հետ մղվեց։ Մարքսիզմն այդ պայքարից դուրս յեկավ ամրապնդված և նոր փորձով ու նոր ուժերով հարստացած։

§ 8։ ՄԵՆՇԵՎԻԶՄԸ ՑԵՎ ՊԼԵԽԱՆՈՎԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՈՒ ՏԵՍԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Ռևիզիոնիստականության տեսական չախչախումը, սակայն, չվերացրեց այն պատճառները, վորոնք մարքսիզմն աղավաղելու և նրան տիրապետող դասակարգի շահերին հարմարեցնելու ձգտումն եյին առաջ բերել։ Ուստի, ռևիզիոնիզմը չեր կարող ուղիներ չվորոնել դեպի քանվորական չարժման սիրտը՝ սոցիալիստական կուսակցությունները։ Այդ ուղիները գտան եյին։ Հիմքում, դրանք ռևիզիոնիզմի գործնական ուղիներն եյին այդ ժամանակ, վորոնց այդ կարելի չեր և հնչա եր առանց վնասի համատեղել հեղափոխական-մարքսիստական ֆրազի հետ։

ՑԵՎՐՈԳԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԱՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՄԵՋ «ՄԱՐՔՍԻԶՄԻ» ՑԵՎ ՓՈՆԴԱՏԱՑԱԿԱՆ ՈՂՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԶՈՒԳԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ռևիզիոնիզմի գործնական օրինակ կարող է ծառայել յեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի և մասամբ ռուսականի (մենշևիկների) քաղաքական գործունեությունը։ Պաշտոնական մարքսիզմի իրական արդեն խոր արմատներ եր ձգել յեվրոպական և մասնավորապես ռևիզիոնիզմի իրականում արդեն խոր արմատներ եր ձգել յեվրոպական և առաջին սոցիալ-դեմոկրատիայի մեջ։ Յեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի մեջ (մասնավորապես

*) Լենին,—Մարքսիզմ և ռևիզիոնիզմ. հ. XI, մ. 1. էջ 57

**) Լենին,—Նույն տեղը, էջ 59։

վից ռեվիզիոնիզոտական տեսաբաններն ու ոպորտունիստական դործիչները հենց այնպես էլ չհետացվեցին) ռեվիզիոնիզմն արտահայտվեց պլեխանովյան «տաքտիկական ոպորտունիզմի» ձևով: (Այսպես և արտահայտվել Լենինը Պլեխանովի մասին), որը ի հարկե տեսական ապատոտունիզմի արմատներ ուներ: II Ինտերնացիոնալի մինչպատերազմյան պատմությունը քիչ վկայություններ չի տալիս պաշտոնապես ընդունված մարքսիստական տեսության և հակամարքսիստական ոպորտունիստական պրակտիկայի այդ համատեղման մասին: Մինչև իսկ հիմա, երբ սոցիալ-դեմոկրատիան վաստորեն «բուրժուազիայի երրորդ կուսակցությունն» է դարձել, երբ նա ռեվիզիոնիստական մերժված դաստղություններն իր տեսությունն ու ծրագիրը ե դարձրել, երբ նա այն տեսաբանները (Կաուցկի, Հիլֆերդինդ, Բաուեր և այլն), որը առաջ պայքարում էին ռեվիզիոնիզմի դեմ, յուրաքանչյուր քայլափոխի ստիպված են իրենց նախկին հակառևիզիոնիստների ճամասարհի վրա,—մինչև իսկ այժմ սոցիալ-դեմոկրատական շատ տեսաբաններ և գործիչներ չարունակում են իրենց «մարքսիստ» և մինչև իսկ «ձախ մարքսիստ» անվանել...

ՄՆՇԵՎԻԶՄ

Այս տեսակետից ամենի բնորոշ և ուսական մենշևիկների քաղաքական վարքագիծը: Մենշևիկները դործում էին ուսական առաջին հեղափոխության չիկացած ժամանակ: Այդ պայմաններում նրանք միանդամայն կատարվելին, չեն հանդես դալին վորպես ռեվիզիոնիզմի բացարձակ կողմնակիցներ, ինչպես իրենց ժամանակին տապալվեցին լեգալ մարքսիստները, «Նաչալոմիստները» և ուրիշները, վորոնք բացարձակորեն չէին եղ մարքսիզմի դեմ: Այս ժամանակաշրջանի մենշևիկները խոսքով ընդունում էին մարքսիստական տեսությունը, (դիալեկտիկական մատերիալիզմը, «կուտատորիալ» տեսությունը, պրոլետարիատի դիկտատուրան), իսկ գործով նրանք բուրժուազիայի չահերին համապատասխան քաղաքականություն էին տանում, քանի վոր այդ քաղաքականությունն իսկապես ուներ բուրժուական հեղափոխության չահերը: Պատերազմի ժամանակ մենշևիկները վերջնականապես հեռացան մարքսիզմից, իսկ պատերազմից և ուսական մեծ հեղափոխությունից հետո նրանք վոչ միայն գործնական մասնակցություն ցույց տվին պրոլետարիատի դեկտատուրայի դեմ հակահեղափոխական յեղուլթներում, այլև յեվրոպական մենշևիզմի հետ միասին ղեկավարեցին հեղափոխական մարքսիզմի դեմ:

ՊԼԵԽԱՆՈՎ–ՏԵՍԱԲԱՆԻ ՑԵՎ ՊԼԵԽԱՆՈՎ–ՓԱՂԱՓԱԳԵՏԻ ՄԻՋԵՎ ՓԱՌԱԿՏՈՒՄ ՉԿԱ

Ճշմարիտ է՝ հեղափոխական տեսությունը ասնում է դեպի հեղափոխական պրակտիկա, բայց և ճշմարիտ է, վոր ոպորտունիստական պրակտիկայի հիմքում ընկած է ոպորտունիստական (համենայն դեպս մինչև ծայրը չհասցրած հեղափոխական) տեսություն: Այժմ մենք կարող ենք միանդամայն անսխալ հաստատել, վոր դերմանական սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստական պրակտիկայի տակ թաղնված եյին վո՛չ միայն ռեֆորմիստական տեսությունը և կոնքրետ Շմիտի «գնաոիոլոդիական սխոլաստիկան», այլև այն ժամանակվա «ձախ» կաուցկիստական բարեհոդությունը. մի բարեհոդություն, վորը խորթ և իսկական հեղափոխական տեսությանը: Ճիշտ է. այդպես էլ մնց համար միանդամայն պարզ է, վոր ուսական մենշևիզմի «տակտիկական ոպորտունիզմի» տակ թաղնված եր Պլեխանովի և մենշևիզմի մյուս տեսաբանների վոչ բավարար հետևողական հեղափոխական տեսությունը: Գալով այն հանդամանքը, վոր Պլեխանովը ուսս. հեղ չարժման տեսաբաններից մեկը դարձավ, պատճառ յեղավ, վոր նրա փիլիսոփայական դործունեությունն ե՛լ ավելի հեղափոխական և հետևողական լիներ, քան II Ինտերնացիոնալի մյուս տեսաբաններինը: Ուսաց Լենինը լիակատար հիմք ուներ ասելու իր «Մարքսիզմ և Ռեվիզիոնիզմ» հոդվածում, թե՝ «մեկ մարքսիստը, վոր ռեվիզիոնիստների հերյուրած անասելի զրպարտություններ ջընջապատությունը ավեց, դա Պլեխանովն եր»: Լենինն իրավունք ուներ հետագայում (1920 թվին, պրոֆմիությունական դիսկուսիայի ժամանակ), դրելու, վոր Պլեխանովի փիլիսոփայական աշխատությունները լավագույնն են մարքսիզմի միջազգային դրականության մեջ և վոր՝ մի կաքելի լիովին գիտակից կոմունիստ դաստիարակելու այն բոլորը, ինչ գրել է Պլեխանովը փիլիսոփայությունից: Ճշմարիտ է, վոր II Ինտերնացիոնալի տեսաբանների գրածներից լավագույնը Պլեխանովինն է, ճշմարիտ է, վոր այդ լավագույնից պետք է յուրացնել շատ բան, այն՝ ինչ վոր մնում է «մարքսիզմի յերկաթե ֆոնդը», բայց ճշմարիտ է նաև այն, վոր Պլեխանովն ուներ շատ սխալներ և չեզոքներ մարքսիզմի

փիլիսոփայական դծից և վոր Լենինը դեռ XX դարի սկզբին շատ անդամ հանդիմանում եր Պլեխանովին մատերիալիստական դիալեկտիկան ապավաղելու, դիալեկտիկական մատերիալիզմը վուլդարիզացիայի յենթարկելու, սոֆիստիկային հակվելու, մարքսիզմը դռեհացնելու և այլն մեջ: Չե՞ վոր այն Պլեխանովը, վոր 1880 և 1890 թվերին հանդես եկավ վորպես հեղափոխական մատերիալիստ, դիալեկտիկի, ամեղ բանվորական չարժման ամենաապաղնդավոր տեսաբան մարտիկ՝ հանուն մարքսիզմը ընդդեմ նեոկանտության, անարխիզմի և ուրիշ ամեն տեսակի մանր-բուրժուական հոսանքների,—հենց այդ Պլեխանովը դարձավ ուսս սոցիալ-դեմոկրատիայի ամենից մեծ թեկ տեսաբանը, (հենց այդ Պլեխանովը դարձավ ամենամանկ, յերբ սոցիալ-դեմոկրատիան զդալի չափով տիրապետել եր բանվորական չարժմանը), մենշևիզմի, վորի քաղաքական ապիտիկան ընդհանուր վոչինչ չուներ դիալեկտիկական մատերիալիզմի տրամադրության հետ: Պլեխանովյան մտածողության բոլոր թեթրքացանները (հետևողական մարքսիզմի տեսակետից), վորոնք առաջ աննկատելի եյին, այժմ, պատրաստի յերևան յեկան և դումարվեցին վորպես սխալների մի սիստեմ: Եվ միանդամայն ճիշտ չեն մենշևիկող իդեալիստները (Դեբորինի, Կարեև, Ստեկի և ուրիշների) պնդումները, թե՝ Պլեխանով-տեսաբանը մի բան է, իսկ Պլեխանով-քաղաքագետ՝ ուրիշ: վա՛չ, Պլեխանով-տեսաբանի և Պլեխանով-քաղաքագետի միջև պատահում չկա:

ՊԼԵԽԱՆՈՎԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ձեր ներկայացրած Պլեխանովը հանդես յեկավ վորպես թոնդ մատերիալիստ, բայց մատերիալիստ՝ Ֆեյերբախ–Չերնիշևսկու դպրոցի: Պլեխանովի համար Ֆեյերբախն ու Չերնիշևսկին որտահայտում են «մատերիալիստների ամբողջ ուսմունքը սուբյեկտի և օբյեկտի մասին»: Իսկ ինչո՞ւմն է կայանում այդ ուսմունքը: Նրանում, վոր սուբյեկտն ու օբյեկտը «միասին» դիտելով նախ քան բացատրելս նատուրալիստական, որդանիզմի բիոլոդիական հատկություններից դուրս են

գնահ մեջ։ Քանի նատուրալիստորեն ըմբռնված սուբյեկտի համաք օբյեկտը դրսևորվում է միայն իր արտաքին հատկությունների կողմից, վորոնք մատչելի չեն առանձին մարդու անմիջական դիտողության։ Այստեղից է բղխում այն, վոր Պլեխանովը (Ջերնիշևսկուն հետևելով) հատկության դաղափարը, վոր դրսևորվում է ուրիշ առարկաների նկատմամբ ունեցած հարաբերությունների մեջ (օրինակ՝ ծանրություն, ճնշում և այլն) նուլեցնում է վորակի դաղափարի հետ, վորն արտահայտում է առարկայի ներքին կառուցվածքը։ Վորակի ներքին բնույթը կորչում է։ Միայն կարող է ճանաչել առարկայի միայն արտաքին հատկությունները, և վոչ էությունը։ Ուստի Պլեխանովը սիրով մխնում է ֆրանսիական մատերիալիստներ՝ Հոլբախին և Լամետրիին, վորոնք չնեղաչդում են, թե մատերիայի վոչ էությունը և վոչ էլ իսկական բնությունը» (Հոլբախ) իմ մատերիաները և մարմինները (Լամետրի) չեն կարող մատչելի լինել մարդու ճանաչողությանը։ Պլեխանովին այս և դաղափարի հետևողականության քննադատության յելակետ։ Նա յելնում էր, ինչպես ասացինք վերևում, Կանտի աղնոստիցիզմի դեմ այն տեսանկյունից, թե՝ «ճանաչել ուվյալ իրը հենց նրանում է ճանաչել նրա հատկությունները»։ Ուրեմն, Պլեխանովը կանգ աղնոստիցիզմի վրա հարձակվում էր հենց աղնոստիցիզմի դիրքերից։

Լենինը, վորի համար «վորակն իրի կամ յերևույթի վորոշումն է» (Լենինյան Ժողովածու, IX, յեր. 291) և վորի համար վորակը հանդես է գալիս վորպես ստեղծող հակադրությունների միասնության իմացության պրոցեսում, չէր կարող չդատապարտել Պլեխանովի աղնոստիցիզմը։ «Պլեխանովը, ասում է Լենինը, (Լենինյան Ժողովածու, Հատ. IX յեր. 127), քննադատում է կանտականությունը և աղնոստիցիզմը ամենից ավելի մատերիալիստական տեսակետից, քան դիալեկտիկ-մատերիալիստականից»։

Պլեխանովն ընդունում էր Հեգելի դիալեկտիկան և դիալեկտիկական մատերիալիզմը։ Նրան ոդտակել բերին Մարքսի և Ենգելսի աշխատությունները, վորոնք նա լավ դիտեց և վորոնց վրա նա սովորել էր։ Նա նույնիսկ այդ տեսակետից քննադատում էր Ֆրանսիական մատերիալիստներին մետաֆիզիկին։ Միաժամանակ նա չէր կարողանում հրաժեշտ տալ ֆետիշիզմաքրիստոնեությանը և մարդաբանական տեսակետին. սա առնչում էր յերկուսության և ստատանումներ։ Նա, մի կողմից, ասպացուցում է, վոր իմացաբանության և կուլտուրական պատմության միջև կա կապ, իսկ մյուս կողմից, նա այնպես էլ չհաղթահարել դիալեկտիկական մատերիալիզմի իմացաբանությունը, այնպես էլ չըմբռնեց, վոր իրերի էության ճանաչողությունը հիմնված է ճանաչողության մատերիալիստական և պատմական բնույթի վրա։

Քանի վոր Պլեխանովյան սուբյեկտի և օբյեկտի հարաբերության իմացաբանության սուբյեկտը մնում է դուրս արտաքին, նա մատերիալիստորեն անհետևողական է և անցք է բանում իդեալիստական կոնցեպցիաների համար։ Այդպիսի կոնցեպցիա յե համապատասխանում և հերոդլիֆների տեսությունը (կամ այսպես կոչված հերոդլիֆական մատերիալիզմը)։ Պլեխանովի կարծիքով, իրերը չեն անդրադառնում մեր գիտակցության մեջ, այլ միայն համապատասխանում են զգայություններին։ Քանի վոր յերևույթները դուրս են կանգնում օբյեկտի զործողությամբ սուբյեկտի վրա, ապա մենք ստիպված ենք ընդունել, վոր բնության օբյեկտները վոչ միայն սուբյեկտիվ, այլ և օբյեկտիվ նշանակություն ունեն, այսինքն՝ մեր մարդը չի ստեղծում, այն ժամանակ սուբյեկտի մեջ իդեականների փոխհարաբերությունը համապատասխանում և նրանից դուրս դտնված փոխադարձ հարաբերություններին*)։

Զգայություններն, ուրեմն, նման չեն այն օբյեկտներին, վորոնք դուրս են կոչում այդ զգայությունները. բայց օբյեկտի մեջ կատարվող յերաքանչյուր փոփոխությունը համապատասխանում և նրա գործողության փոփոխությանը սուբյեկտի վրա։ Այսպիսի հակադրությունը միանգամայն համաձայնում է Սպենսերի աղնոստիցիզմին, վորը բացատրում է իրերի նպատակային (ադեկվատ) ճանաչողությունը և խոստովանում, վոր յերևույթները նմանատապատասխանում են միայն ինքնին իրերին (ինչպես օրինակ՝ վորոշ լար համապատասխանում է վորոշ չափավիրով գծած շրջանի վորոշ տեղին), բայց հակասում է Ենգելսի և Լենինի հակացոդությանը, վորոնք զգայությունների մեջ տեսնում են իրերի պատճենը, լուսանկարը, պատկերը և վորոնք «իրի ինքնին» հարաբերությունը, յերևույթը դիտում են վորպես լրիվի հարաբերությունը վոչ լրիվին, պարզինը՝ վոչ պարզին, մոդելինը՝ իրին, «իրի ինքնին» և յերևույթների մեջև Պլեխանովը տեսնում և անցկացնում, վորովհետև «իրի ինքնիները» կարող են ճանաչվել վոչ այլ կերպ, քան սուբյեկտիվ ձևերի մեջ

*) Պլեխանով. «Մատերիալիզմ թե՞ կոնտականություն», հատ. XI.

ջով, իսկ վերջիններս արտաքերում են իրերը վոչ այնպես, ինչպես դան։ Իսկ ի՞նչ բաներ են մեր պատկերացումների իրերի ձևերի և հարաբերությունների մասին։ Պլեխանովը պատասխանում է. «Ներանք ամենի բան չեն, քան հերոդլիֆներ, բայց այս հերոդլիֆները ճիշտ են նշանակում ձևերն ու հարաբերությունները»։ Այս տեսությունը մատերիալիստական տեսություն է, վորքան նա ընդունում է, վոր սուբյեկտի յուրաքանչյուր պատկերացմանը համապատասխանում և օբյեկտ, բայց նա դիալեկտիկական չե (ուրեմն և հետևողական մատերիալիստական չե), վորչափ նա վերջնում է ճանաչողությունից օբյեկտին անդադար մոտենալու հնարավորությունը։

1905 թվին Պլեխանովը (ննդելսի «Լյուդվիգ Ֆեյերբախի» յերկրորդ հրատարակության «Նախաբանում») հրաժարվեց «հերոդլիֆներ» տերմինից, բայց այն տեսությունը, վոր բխում էր դիալեկտիկական մատերիալիզմի իմացության տեսության պլեխանովյան սխալ ըմբռնումից, Պլեխանովն ըստ էության չհաղթահարեց։ Ինչպիսի՞ն էլ լինեն արտաքին առարկաները ըստ ինքյան,—դրում է Պլեխանովը «Նախաբանում» յերկրորդ հրատարակության մեջ, անկախ մեր գիտակցությունից,—նրանք մեր տպավորությունները նրանց մեջ լինեն պայմանական նշաններ միայն,—այնուամենայնիվ նշանների մեր զդացած նմանությունները իրերին և տարբերությունները համապատասխանում են իրական նմանությանը և տարբերությանը։ «Ինչպես տերմինի դեմ առարկելով հանդերձ, Պլեխանովն ընդունում է համապատասխանության տեսությունը։

Պլեխանովը դիալեկտիկան բացատրում է սուբյեկտիվ հոդեբանորեն, «գլխավորը, ինչպես և նախ, իսկ վերջինը և մեր պատկերացումների իրերի ձևերի և հարաբերությունների մասին։ Պլեխանովը պատասխանում է. «Ներանք ամենի բան չեն, քան հերոդլիֆներ, բայց այս հերոդլիֆները ճիշտ են նշանակում ձևերն ու հարաբերությունները»։ Այս տեսությունը մատերիալիստական տեսություն է, վորքան նա ընդունում է, վոր սուբյեկտի յուրաքանչյուր պատկերացմանը համապատասխանում է օբյեկտ, բայց նա դիալեկտիկական չե (ուրեմն և հետևողական մատերիալիստական չե), վորչափ նա վերջնում է ճանաչողությունից օբյեկտին անդադար մոտենալու հնարավորությունը։

Պլեխանովը դիալեկտիկան բացատրում է սուբյեկտիվ հոդեբանորեն, «գլխավորը, իսկ և պրոցեսը միշտ սուբյեկտիվ է, վորովհետև իմացության պրոցեսը վոչ այլ ինչ է, քան վորոշ տպավորությունների ծագման պրոցես սուբյեկտի մեջ»։ Տրամաբանական հակադրությունները նայվում են այստեղ պրոցեսից դուրս, այն ինչ դիալեկտիկական տրամաբանության հնարավորությունը հնարավորում է մատերիալ օբյեկտիվ իրականության հակասությունների մասին վերարտադրության պրոցեսը։ Սուբյեկտիվությունն առանում է վոչ միայն հոդեբանական, այլ տրամաբանական և պատմական բացատրություն։ Ըստ Լենինի, վոր տալիս է սուբյեկտիվության ըմբռնման դիալեկտիկ-տրամաբանական ըմբռնումը, իմացության տեսության դառնում է մեթոդոլոգիա, տրամաբանություն։ Իմացության տեսության տրամաբանության հակադրությունների մեջ (իմացության աստիճանների մեջ) գլխավորությունը դրսևորվում է և հնդիրեա դիալեկտիկական զարդացման օբյեկտները՝ իրենց հեռանկարով և զարգացման մեջ։ Պլեխանովը դիալեկտիկան դիտում է իմացության տեսության վորպես զիտական մեթոդ (կամ նրանց մեկնում է մեխանիկորեն)։ Այդ հակասում է իրականությանը,—իմացության (կամ նրանց մեկնում է մեխանիկորեն)։ Այդ հակասում է իրականությանը,—իմացության բնական ուղին դիալեկտիկական պրոցեսի օբյեկտիվ օրինաչափությունն է և վերարտադրման։ Ուստի Լենինի համար դիալեկտիկան հենց մարքսիզմի իմացության տեսությունն է։

Պլեխանովը խորթ մնաց դիալեկտիկային, վորպես «փիլիսոփայական դիտության» (Լենին)։ Հակադրությունների միասնությանը չի հանդիսանում նրա համար վորպես իմացության օրենք և օբյեկտիվ աշխարհի օրենք։ Հակադրությունների միասնականության բացարտությունը նրա մոտ սառոբաբերվում է և հասցվում մինչև «որինակների զումարի» (Լենին)։ Պլեխանովն ընդհանուր առմամբ չատ քիչ է դրել դիալեկտիկայի մասին։ Նրա մոտ գիտական վերացական բնույթ է կրում, մինչդեռ Լենինի մոտ դիալեկտիկայի հայեցությունը հենց առարկայի հակասության մեջն է։

Ենդելսի այն պնդման առթիվ («Լյուդվիգ Ֆեյերբախի» մեջ), թե քիմիական և օրգանական յերևույթները չեն կարող հանդեցնել մեխանիկական յերևույթներին, Պլեխանովը դրում է. «կարելի յե նկատել, յերբ կուզեք, վոր՝ թե՛ քիմիան և թե՛ բիոլոգիան վերջ ի վերջո կհանդեն մոլեկուլյար մեխանիկային»։ Մեխանիստները, մատերիալիստական դիալեկտիկայի դեմ իրենց պայքարում, ոդտագործում էին Ենդելսի այդ պլեխանովյան ձևակերպումը։

Քանի վոր Պլեխանովը չէր հասկանում դիալեկտիկան վորպես տեսություն իմացության և տրամաբանության կատեգորիաներ, վորպես օբյեկտիվ աշխարհի իմացության առաջնանները։ Ցավ քանի վոր Պլեխանովը չեր հասկանում հակադրությունների միասնության օրենքը, վորպես դիալեկտիկական կոնկրետ պրոցեսի օրենք, նա չեր կարող տալ քննադատությունը, վորպես դիալեկտիկական զարդացման, վորը նաև իմացության, ասելիքության և հիմնական օրենքյանը փորձել տրամաբանության, վորը նաև իմացության, ասելիքության և հիմնական օրեն-

ու վարչամ և իրենք պարզացման պրոցեսից դուրս, կոնկրետ չարժամից դուրս: Նա հենց այնպես առհասն և գծում իմացության ընդհանրամում դիալեկտիկական տրամաբանության և ֆորմալ տրամաբանության միջև, տալով վերջինիս «առանձին առարկաների» ընդհանրությունը, մինչդեռ Լենինը ֆորմալ տրամաբանության հիմնական պահանջությունը միանգամայն ճիշտ կերպով հենում է իմացության հետևությունից այդ հարված լինելու մեջ, այդ՝ դեպի օբյեկտիվ ճշմարտությունը, դեպի մտածողության ճշտերի և կոնկրետ իրականության համապատասխանության ունեցած անտարբերության մեջ:

ՊԼԵԽԱՆՈՎԻ ՍԽԱԼՆԵՐԸ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԶՄԻ ՓԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

Պլեխանովի փիլիսոփայության հիմնական մեղքը՝ ֆեյերբախականությունը, վորն իմացությունը կարում է կոնկրետ պատմական պրոցեսից՝ իր խորը կնիքն և դրել նաև մենշևիզմի մեթոդոլոգիայի վրա: Լենինը դեռևս 1902 թ. իր «Նկատողություններ Ռ-Ռ-ի ծրագրի Պլեխանովի առաջին պրոյեկտի մասին»-ի մեջ մատնանշում է, թե Պլեխանովը կատարյության հիմնական խնդիրները ֆորմալ կերպով դուրս և բերում հենց զարգացած կապիտալիզմի հասկացողություններից, առանց դիտելու պրոցեսն իր բոլոր կոնկրետության մեջ: Մենշևիզմ-պլեխանովյան այդ հակապատմականությունը, պատմական կոնկրետ խառնվածքը չհասկանալը, մենշևիզմի քաղաքական մեթոդոլոգիան, բանվորական չարժման և հասարակական հեղափոխության ամենանշանակալից արդելակը դարձրին: Մենշևիզմը, ինչպես և բոլշևիզմը, ճիշտ էր վորոշում այդ հեղափոխության բնույթը՝ վորպես բուրժուական հեղափոխության. սակայն, անտես առնելով նրա կոնկրետ պատմական դծերը (վոր նա հաստատում է մի չերկրում, վորտեղ բուրժուազիան հեղափոխական-քաղաքական տեսանկյունից թառամել և ավելի վաղ, քան ծագնել կարողանալը, վոր՝ պրոլետարիատը հեղափոխության մեջ բացառիկ դեր է խաղում, և այլն)՝ մենշևիզմը պնդում էր, վոր այս հեղափոխությունը պիտի ընթանա իր բուրժուական ամբողջ մաքրությամբ, ինչպես «յուրաքանչյուր բուրժուական հեղափոխություն»: Մենշևիզմը պրոլետարիատին և աչխատավոր մասսաներին դեղորյինացնելուն իր ինքնարերան կոնկրետ պատմական կացության նկատմամբ:

Մենշևիզմի հիմնական դիծը ֆորմալիզմն է: «Դատողությունների այն յեղանակը,— ասում է Լենինն իր «Փակելուելիզմի զարգացումը Ռուսաստանում» աչխատության յերկրորդ հրատարակության առաջաբանի մեջ,—վոր չատ անգամ պատահում է ալ թևի սոցիալ-դեմոկրատների մեջ՝ Պլեխանովի գլխավորությամբ, այնինչ՝ ձգտում կոնկրետ հարցերին պատասխաններ վերնելու մեր հեղափոխության հիմնական բնույթի մասին ընդհանուր ճշմարտության զարգ տրամաբանական զարգացման մեջ,—դա մարքսիզմի զռնհկացումն է, ամբողջական ծաղրանք դիալեկտիկական մատերիալիզմի հասցեին»: Ձևականորեն այն նախադրյալներից, թե հեղափոխությունը բուրժուական է, կարելի չի յեղրակացության հանել լիրբեալ բուրժուազիայից ոժանդակելու մասին, և մենշևիկները, Պլեխանովի գլխավորությամբ, դրա մասին զոռում էին ամեն յեղանակով և այդ անում էին, փոխարեն մի կոպիտ զառնալով լիբերալ բուրժուազիային, իսկ Լենինը նշում էր, վոր ֆորմալիզմը վտանգին բանվոր դասակարգի շահերի դավաճանության ծածկոց կարող է դառնալ: «Բուրժուական հեղափոխության մեջ սոցիալ-դեմոկրատիան չի կարող դուգակցել բուրժուազիան գեմոկրատիային,—այսպես և Պլեխանովի և նրա մաերմիների հիմնական միտքը. սրանից ամենևին և ուղղակի յեղրակացնում են, թե կադետներին պիտի աջակցել: Իսկ մենք ասում ենք. Ընդհակառակը նիշտ է, բայց յեզրակացությունը՝ բանի պետք չէ. քանի վոր դեռ պետք է պարզել՝ ինչ կուսակցություններ և հասանքներ ավելի մոտենային պայքարելու ընդհանուր ուժ, բուրժուական-դեմոկրատիայի ուժն են արտահայտում» (Լենին):

Դիալեկտիկան և հակադրությունների միասնության որենքը չհասկանալն արտահայտվում է մենշևիզմի մեջ հեղափոխության ներքին ուժերը և պրոցեսի ներքին հակասությունները չբռնելու մեջ:

Պլեխանովի և մենշևիկների մոտ դիալեկտիկան փոխարկվում է (ինչպես Լենինն էր ասում) սոֆիստաբանության:

Մենշևիզմի ամբողջ պատմության, նրա ռեակցիական և ծրագրային տատանումների մեջ կարելի չեր հետախուզել հեղափոխական մարքսիզմի հետևողական դիրքերից անհակասական հետևանքներ արմատները (և այդ մի չնորհակալ խնդիր կլիներ հետախուզողի համար), բայց այն, ինչ վոր մենք ասացինք, լիովին բավական է՝ Պլեխանովի՝ (և ուրիշների) մարքսիզմից ոչ-մարքսիստական չեղումները և մենշևիզմի քաղաքական մեթոդոլոգիայի մեջ ինչ-որ կապը պարզելու համար:

Տրոցկիզմի, վորպես մենշևիզմի մի այլատեսակության, մեթոդոլոգիայի մասին մենք կխոսենք հետքեւում՝ այ թեզման և տրոցկիզմի տեսական արմատները պարզաբանելի մեջ:

§ 82. ՄԱԽ-ԲՈԳԴԱՆՈՎՑԱՆ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄ

Մախ-բոգդանովյան ռեվիզիոնիզմը ծագեց բոլշևիկյան կուսակցության չարքերում: Սակայն այդ բոլորովին չի նշանակում, վոր մախիզմը և բոգդանովշչինան բոլշևիկյան կարգի յերևույթներ են (ինչպես այդ ներկայացնում են մի քանի դերբոլինյաններ, մոռանալով, վոր մարքսիզմի մախիստական ռեվիզիայի ներկայացուցիչների մեջ կային և մենշևիկներ՝ Յուշկևիչ, Վալենտինով և ուրիշներ): Մախ-բոգդանովյան ռեվիզիոնիզմն ամեց 1905 թ. հեղափոխության պարտությունից հետո առաջացած մանր-բուրժուական տատանումների հողի վրա, տրամատական լինակլիդնցիայի՝ մարքսիզմից և բանվորական չարժումից հեռանալու հողի վրա, լիկվիդատորության հողի վրա:

Ռեվիզիոնիստական այս ուղղության՝ վոր ձգտում էր «լրացնել» մարքսիզմը Ավենարիուսի եմպերիոկրիտիցիզմով, Մախի հայտնություններով—առաջնորդը և տեսաբանը եմպերիոկրիտիցիզմով, Մախի հայտնություններով—առաջնորդը և տեսաբանը դառնալ Ա. Ա. Բոգդանովն էր, մի խոշոր հեղափոխական դործիչ, բոլշևիզմի խոշոր աչխատավորներից մեկը, կռ-ի անդամ, «բոլշևիստների», «ուղղվիստների» և «ձախ» հակախատավորների մեկը, վորին Լենինյան այլ տարրերի լիդեր: Դեռ 1899 թվին նա հրատարակեց մի գրքույկ՝ «Ինուբյան վրա պատմական հայացքի հիմնական տարբերը», վոր դրսևորում էր նրա՝ մարքսիզմից հեռանալու հակումը (նա այն ժամանակ տարվում էր Ոստվալդի եներգետիկական փիլիսոփայությամբ): Նրա հետևյալ աչխատություններն ավելի ու ավելի ցայտուն կերպով յերևան հանեցին նրա այդ թեքումը: Լենինը նույնիսկ դեմից (1902—1903 թ. թ.) Պլեխանովին և Լ. Ի. Ակսելրոդ-Որթոդոքսին՝ առաջարկելով հանդես գալ մարքսիզմի նոր, բոգդանովյան քննադատության դեմ: Սակայն, 1905 թվի հեղափոխության ժամանակաշրջանի ճակատամարտերի բոցի մեջ,—ճակատարտեր, վորոնց Բոգդանովը մասնակցում էր բոլշևիկների և Լենինի կողքին,—փիլիսոփայական ատրճանշություններն առայ չեյին խոչնդում: Բոգդանովյան ռեվիզիոնիզմը ձևակերպվեց վորպես տեսություն և քաղաքական գիծ՝ արդեն 1905 թվի հեղափոխությունից հետո: Այդ ժամանակ եյ ամենից ավելի դինվեցին ռեվիզիոնիզմի այս նոր աչխատեսակության դեմ Լենինը, Պլեխանովը և ուրիշները, քանի վոր այս աչխատությունը՝ լուրջ վտանգ եր դառնում պրոլետարիատի կուսակցության և նրա՝ հանուն աչխատանքի ազատության վարած պայքարի համար:

ԱՎԵՆԱՐԻՈՒՍԻ (ԵՄՊԵՐԻՈԿՐԵՏԻԶՄ) ՑԵՎ ՄԱԽԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մարքսիզմը, Բոգդանովի կարծիքով, սխալ մարքսի «մատերիալիստական մետաֆիզիկայից» և լրացվի բոգդանովյան «եմպերիոմոնիզմի» (տե՛ս ներքևը) իմացության տեսությամբ, վոր կազմվել եր Ավենարիուսի և Մախի (մասամբ և Կանտի) ուսմունքներից հողի վրա, վորոնց Բոգդանովը չանում եր մի կերպ կապել մարքսիզմի հետ: Սրա համար եյ մեզ հարկավոր է ընդհանուր գծերով ծանոթանալ այդ ուսմունքների հետ:

Ավենարիուսի եկլեկտիկական փիլիսոփայական սիստեմի էությունը կայանում է հետևյալ նախադրյալների մեջ. 1) դիտական բոլոր կատեգորիաները և հասկացողությունները ծագում են մարդու՝ միջավայրին հարմարվելու հողի վրա և պայմանավորվում են պատմության կոնկրետ բիոլոգիական սկզբունքով, վորն արտահայտվում է իմացության պրոցեսում ուժերի տնտեսության ձգտելու («ուժերի չափի սկզբունք») մեջ: 2) իմացությունը կապված է մարդկանց մտքերի հանրագումարից, արտահայտություններից գումարից կազմվում է հասարակական գիտական փորձը: Հետևաբար, Ավենարիուսը փորձի մեջ տեսնում է միայն սուբյեկտը (նրան, ով զրում է, «տնտեսում», արտահայտում է), բայց չի տեսնում օբյեկտը՝ դիտության իրական առարկան:

Աբստրակտ առարկայի բացատրումը Մախն իր փիլիսոփայության կենտրոնական հիման է դարձնում: Ինչպես և Ցուշը և Բերկլին, նա չի ընդունում, թե մենք վստահ ենք չենք կարող ընդունել, բայց մեր զգայություններից «վոչ թե առարկաներն են զգայություն առաջ բերում,—ասում է Մախը,—այլ ելեմենտների կոմպլեքսները (զգայությունների կոմպլեքսները)

(քը) են մարմին կազմում։ Ցնթե մարմինները ֆիզիկոսին թվում են ոչ այլ ինչ, քան իրական բաներ, իսկ հելեմենտները՝ նրանց վարկենական անդողիկ արտացոլում, ապա նա չի նկատում այն, որ բոլոր մարմինները տրամաբանական խորհրդանշաններ են հելեմենտների կոմպլեքսների (զգայությունների կոմպլեքսների) համար»*)։ Այն պատկերացումը, թե մեր զգայություններին համապատասխանում են մեզնից դուրս գտնվող առարկաներ, առաջանում է, ըստ Մախի, նրանից, որ մեր զգացմունքները դործում են մեզ մոտ նիմակ (մենք տեսնում ենք նրան, բայց չենք չոչափում, չենք հոտոտում. հոտոտում ենք, բայց չենք տեսնում, չենք լսում, և այլն)։ Այնինչ՝ իսկապես գոյություն ունեն միայն այն, որ մի բան են՝ մեր զույնի, հնչյունի և այլն զգայություններից դուրս։ Իմացության աղբյուրը Մախի համար «փորձն» է, որը նա հակադրում է ոչ թե որպես սուբյեկտի (առարկան պատկերացնողի) և օբյեկտի (այն առարկայի, որ զգայություն առաջացնողն է) միասնություն, այլ բացառապես որպես սուբյեկտիվ յերևույթ։ «Ոչ ինչը» դուրս է անի բացառապես որպես «տես» պատկերացում։ Ոչ ինչ, բայի մեր ապրումները չեն. մնացած բոլորը մտացածին է, մետաֆիզիկա։ Մախիզմը, հետևաբար, ըստ իր եյության քիչ բանով է տարբերվում Բերկլիի սուբյեկտիզմից**)։ Սակայն Մախը և մախիստները մերժում եյին՝ թե իրենք սուբյեկտիստ են։ Ավելին, նրանք հայտարարում եյին, որ իրենք են, որ «ճշդրիտ գիտության» իսկական ներկայացուցիչներ են և մետաֆիզիկայի անհաշտ թշնամիներ։ Նրանց կարծիքով՝ հենց մատերիալիստներն են մետաֆիզիկներ։ Լենինն այսպես է տալիս մախիստների քննադատականը մատերիալիստների վերաբերմամբ. «Մատերիալիստները ելնում են մեզ, ընդունում են ինչ որ անբմրռնելի անճանաչելի՝ «իրի ինքնին», մատերիա՝ փորձից դուրս մեր ճանաչողությունից դուրս։ Նրանք ընկնում են իսկական միստիցիզմի մեջ, թույլ տալով ինչ որ հանդերձյալ, մեր փորձի և իմացության սահմաններից դուրս բանի գոյության։ Բացատրելով՝ որպես թե մատերիան ազդելով մեր զգայարանքների վրա, զգայություններ է առաջացնում, մատերիալիստները հիմք են ընդունում ինչ-որ «անհայտ»-ը, քանի որ իրենք էլ մեր ճանաչողության միակ աղբյուր համարում են մեր զգացմունքները։ Մատերիալիստներն ընկնում են «իանատականության» մեջ (Պլեխանովը թույլ է տալիս «իրն ինքնին»-ների գոյությունը, այսինքն՝ իրերի, որ մեզ պատկերացություն են), նրանք «յերկվացնում են» աշխարհը, քարողում են դուալիզմ, քանի որ յերևույթների հետևում նրանց մոտ կա նույնպես «իրինքնին», զգայմունքների անմիջական ավյալների հետևը՝ ինչ-որ ուրիշ բան, ինչ-որ ֆետիշ, «հուռթ», արտոյատ, «մետաֆիզիկայի» աղբյուր, կրոնի յերկվորյակ («ասուրը մատերիա», ինչպես ասում է Բազարովը)»***)։ Այս հանդիմանությունների մեջ ավելի քան վստահ տեղ, արտահայտում է դիալեկտիկական մատերիալիզմի բոլորովին չըմբռնելը և մախիստների ավելի վատացրած, աղավաղած կանոնականությունը։ Մինչդեռ դիալեկտիկական մատերիալիստի համար՝ գոյություն ունեցող աշխարհը յերևան է գալիս, իսկ յերևացող աշխարհը գոյություն ունի,— մախիստները յենթադրում են, որ՝ յեթե ընդունենն մատերիայի գոյությունը (գոյություն ունեցող աշխարհը), ապա անհրաժեշտ է ընդունել նրա կողքին մի ուրիշ աշխարհի ևս (յերևութական աշխարհ)։ Ա՛ա կանոնական ըմբռնողություն է, այն էլ վատացրած կանոնական ըմբռնողություն, որովհետև դուրս է գցվում այն, ինչ որ ուղիղ է կանոն մոտ, այն է՝ մատերիայի գոյությունն ընդունելը։

Մեր ռևիզիոնիստներին դերողը մոխիզմի մեջ այն բանն եր, որ այնտեղ խոցաբյունը դիտվում է որպես սոցիալական հարմարումն, որպես ձգտումն տալու համեմատաբար ավելի մաքուր նկարագիր փորձի, որ կատարվում է ուժի նվազուցին ապահովման պարագայում։ Սրա մեջ նրանք մախիստական փիլիսոփայության «սոցիալական» բնույթի և խորը դիտականությունն են տեսնում։ Այնինչ իրականում Մախի փիլիսոփայությունը խորապես հակասոցիալական է, քանի որ նա «տես»-ի կողքին չի ընդունում «ոչ տես», և խորապես ոչ գիտական է, քանի որ գիտական և հանդիսանում ոչ թե իրերի նկարագիրը, այլ նրանց

*) Մախ. «Զգայությունների վերլուծությունը». ռուս. թարգմ. Կոտլյար, յեր. 88. հրատ. Սկիրմունտ.

**) Սոլիպսիզմ—(լատիներեն բառից, որ նշանակում է «ինքը», «միակ»)—մի ուսմունք է, այն մասին, թե իրական է միայն մտածող «տես»-ի պատկերացումը, և որ դրանից դուրս աշխարհ իրապես գոյություն չունի։

***) Լենին,—«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», հ. X, եջ 10. հրատ.

գոյատևությունը, նրանց պատճառականությունը և այլ կապակցությունները, որոնց ճշտությունն են մտնում են ընդլայն մեջ տեսնել Մախը (իսկ նրա հետևից և նրա աշակերտները)։

Մախը ևս չի տեսնում զգայություններից դուրս։ Նրա համար աշխարհը «տարրերի» զգայությունների կոմպլեքս է։ Փորձի այդ տարրերը նույնպես են հոգեբանական և ֆիզիկական չորքերում։ Կարմիրը մարմինների մեջ և կարմրի զգայությունը փորձի նույնպես տարրեր են։ Հոգեկանը և ֆիզիկականը, ըստ Մախի, զգայություն ունեն վորպես յերկու իրավահավասար չորքեր, վորոնց մեջ միասնություն չկա։ Մախիզմը, հետևաբար, չի հաղթահարում ֆիզիկականի և հոգեկանի յերկվությունը, թեև ասում է՝ Մախը վորպես բնագետ, հաճախ այս կամ այն յերևույթի բացատրության ժամանակ այն ճիշտ ըմբռնման հողի վրա յի կանգնում, վոր հոգեկանն արտացոլում է ֆիզիկականը, վոր առաջինը կախում ունի յերկրորդից։ «Ոչորոշության թվով ֆիզիոլոգների և ժամանակակից հոգեբանների հետ միասին,—ասում է Մախը,—յես համոզված եմ, վոր կամքի յերևույթները հասկանալի պիտի դառնան միմիայն որպանական-ֆիզիկական ուժերի մինոցով»։ Այս մատերիալիստական տեսակետ է, վորի վրա Մախը կանգնում է ընդհանուր աֆհեհաոդականության, վորով մախիզմը չարունակաբար մեղանչում է։ Մախիզմը սուբյեկտիվ իդեալիզմի մի տեսակն է։ Վերևում մենք չատ անգամ ապացուցել ենք իդեալիստական աշխարհընդունման վոչ գիտականությունը, և անկարոդությունը բնության և հասարակության վորևե յերևույթ բացատրելու մեջ։ Մախիզմն իրեն ներկայացնում է վորպես գիտության փիլիսոփայություն, բայց հենց ինքը՝ բնագիտության մախիստական ամեն մի պատկերացում։ Բնագիտությունը հաստատում է տիեզերքի գոյությունը մինչև յերկրի կազմվելը, յերկրի գոյությունը՝ մինչև նրա վրա որդանական մարմինների առաջանալը, որդանական ձևերի գոյությունը՝ մինչև այդ ձևերից ծագող և զարգացող այնպիսի որդանիզմները, վորոնք կարող են գիտակցության կրողներ լինել, ևաթող գոյություններ։ Սրան, իհարկե, բոլորովին չի կպչում Մախի ըմբռնումը, վոր «ոչ զգայություններ ունենալ

սոցիալապես կազմակերպված փորձ»*): Սա հաքսլեբասիսանոց սուբյեկտիվ իդեալիզմ է, քեպեռ ինքը՝ Բոգդանովը հայտարարում էր, թե եմպիրիոմոնիզմը դուրս չունի վոչ մատերիալիզմից, վոչ էլ իդեալիզմից հետ, քանի վոր թե՛ հոգին և թե՛ մատերիան նրա համար էլեմենտների կոմպլեքսներ են միայն. իսկ ամեն մի էյություն և ամեն մի դերիվատ՝ անրոլանպակ տերմիններ են, դատարկ աբստրակցիաներ**);

Բոգդանովն ընդունում է «զարդացումը», հակառակ մետաֆիզիկայի: Սակայն ինչ է հասկանում զարդացում ասելով: Վո՛չ այն, ինչ-վոր հասկանում են մարքսիստները, այլ այն, ինչ-վոր վեռեզևում է մախիստական ըմբռնման մեջ: Զարդացումն անցումն է փորձի սահրին, ելեմենտների քաոսի մեջ կրչող աստիճաններից դեպի վերին՝ հոգևկան և ավելի վերին՝ ֆիզիկական փորձը: Հետևաբար, հոգևկանը, նախադրում է ֆիզիկականին: Սա պատճառն իդեալիզմ է, թեև Բոգդանովն իր սիստեմն անց էր կացնում «մատերիալիզմի տակ. իսկ ինչ համար բնությունը՝ սկզբնական է, հոգին՝ յեկզրոդական» (Լենին). Ֆիզիկականը «բարձր է» հոգևկանից: Բայց այստեղ բանը դրանում չէ, թե ի՞նչն է «բարձր», ինչը՝ «ցածր», այլ նրանում, թե վորն է սկզբնական ընդունում է հաղեկանը, նրանից է բղխեցնում բնությունը և ապա արդեն բնությունից՝ սոլորական մարդկային գիտակցությունը: Դուրս է գալիս, վոր այդ սկզբնական «հոգևկանը» չարաշահ մի մեծալ աբստրակցիա չէ, վոր թագնում է աստվածաբանությունը: Որինակ, ամեն մեկիս գիտե, թե ինչ բան է մարդկային իդեան, սակայն իդեան առանց մարդու և մինչև մարդը, իդեան վերացականության մեջ, աբսոլյուտ իդեան իդեալիստ Հեգելի աստվածաբանական հնարովի սուտն է: Այնեն վոք գիտե, թե ինչ բան է մարդկային զգայությունը, սակայն զգայությունն առանց մարդու, մինչև մարդը, ցնդաբանություն է, մեռած՝ աբստրակցիա, իդեալիստական անիմաստություն (Նոնսենս): Հենց այդպիսի իդեալիստական նոնսենս է աբքսում Բոգդանովը»***):

Բոգդանովյան ըմբռնումն օբյեկտիվը դարձնում է հարաբերական դադափար. այն, ինչ վոր այսօր հանրային նշանակություն ունի, կարող էր յերեկ վոչ հանրանշանակ լինել կամ վաղը կարող է դառնալ վոչ-հանրանշանակ: Այս տեսակետից անիմիզմն իր ժամանակին արտահայտում էր օբյեկտիվություն, իսկ կոպերնիկոսի հայտնադործությունը՝ թե յերկիրը պտտվում է արևի չուրջը, օբյեկտիվություն չէր արտահայտում, քանի վոր այն ժամանակի սոցիալապես կազմակերպված փորձը ամուր կերպով կանգնած էր յերկրի անշարժության և կենտրոնական դիրք ունենալու տեսակետի վրա: Այս «ողղամիտ անհեթեթություն էր», ինչպես ասում էր Լենինը: Սակայն, այս հետևողական եմպիրիոմոնիզմի տեսակետն է, վորն ընդունում է, թե ֆիզիկական մարմինն օբյեկտիվ բնույթ է ստանում «աստիճանաբար», սոցիալական փորձի կազմակերպման հետ միասին: Այստեղից էլ այն, վոր թե՛ ժամանակը, թե՛ տարածությունը, թե՛ պատճառականությունը դիտվում է վոչ վերպես բնության մեջ մեր դիտակցությունից դուրս մի բան, այլ մեր մտածողության տեղծած փորձի մեջև (կանոն իդեալիզմը): Այստեղից էլ Բոգդանովի բացատումն օբյեկտիվ ճշմարտության. վոչ թե ճշմարտություն է այն, ինչ վոր համապատասխանում է իրականությանը (ինչպես մտածում են մարքսիստները), այլ այն, ինչ վոր սոցիալապես նշանակություն ունի տվյալ եպոխայում (և ինչ վոր կարող է սոցիալապես նշանակություն ունենալ այլ եպոխայի համար...):

Այս բոլորը վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմի հետ: Բոգդանովի համար «հասարակական կեցությունը և հասարակական դիտակցությունը բուն իմաստով նույնանման են»: Իսկ յերե այդպես է, ապա ուրեմն տեղից չարժվել չի լինի, քանի վոր սոցիալական ճշմարտության միակ չափանիշ ծառայում է տվյալ հասարակության կոլեկտիվ դիտակցությունը և ամեն մի ձգտում դեպի այլ հասարակության ձևեր՝ սուբյեկտիվ ուտոպիա է: Այս տեսակետից ճշմարիտ պիտի լիներ անիմիզմը, ճշմարիտ եր կաթոլիկությունը, ճշմարիտ եր աբրահամական հասարակության դիտակցությունը, ճշմարիտ եր կապիտալիզմի և ամեն մի ղոյություն ունեցող հասարակության իդեոլոգիա, իսկ վոչ ճշմարիտ հեղափոխական և սոցիալիստական ձգտումները:

*) Բոգդանով, «Եմպիրիոմոնիզմ» էջ 36
**) Նույն տեղը, էջ 21
***) Լենին,—Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ հատ. X յեր. 1-ին

Ահա թե ինչպիսի հետադիմական հետևանքներ եր բերում Բոգդանովի տեսությունը: Բեվ իզուր չեր, վոր մախ-բոգդանովյան ինտելիգենցիայի (վորն իր զգալի մեծամասնությամբ դուրս եր յեկել հեղափոխական և նույնիսկ բուրժուական չարժման բարրիկադի մյուս կողմն անցավ:

Պ. ՑՈՒՇԿԵՎԻՉԻ ԵՄՊԻՐԻՈՍԻՄՎՈԼԻԶՄԸ

Ռեակցիայի ժամանակաշրջանը Բոգդանովի եմպիրիոմոնիզմին ազդակից մի շարք հասանքներ ծնեց: Այդ հոսանքներից մեկն եր իմպերիոսիմվոլիզմը, վորի առաջնակայացուցիչը Պ. Ցուշկևիչն եր: Իմպիրիոսիմվոլիզմը սուբյեկտիվ իդեալիզմի այլասերություններից մեկն եր, քանի վոր այդ ըմբռնողությունն իրական եր համարում միայն այն, վոր գոյություն ունի մարդկանց գլխում: «Մեր առջև,— գրում եր Ցուշկևիչը Պետրոգրադի «Աչխարհի պրոբլեմը» դրքի իր առաջաբանում,—բազմապիսի անհատական փորձեր կան, մասամբ միմյանց նման, մասամբ՝ տարբեր. մեր առջև և նույնպես այդ նմանությունների հողի վրա ստացված փորձի կոլեկտիվ սիստեմը, աչխարհի սոցիալական պատկերը: Աչխարհի այդ սոցիալական պատկերը, հասկանալի չե, «բաբանյուռա» չե. նա փոփոխվում և դիտության աղողության հետ, վորչափով անընդհատ ընդարձակվող կոլեկտիվ փորձը մեր առջև նորանոր տարրերություններ, բայց և նորանոր և ավելի խորը նմանություններ է բաց անում ահատական զանազան փորձերի միջև»: Բայց, վորքան էլ փոքր է մարդկային արտոլյուտ գաղափարն աչխարհի մասին, այդ գաղափարը մեր աչքին իր հատուկ նշանակությունն ունի աչխարհի անհատական պատկերների կողքին: Հենց այդ էլ մենք վիա չենք կանչում, յերբ խոսում ենք «իրականը»-ի, «անկախ»-ի, «օբյեկտիվ»-ի և այլն մասին: Եմպիրիոսիմվոլիզմը կեցություն համարում է զգայությունները, նրանց սեջ յեղած ֆունկցիոնալ հարաբերությունները և եմպիրիոսիմվոլները, այսինքն՝ մտքերն իրականության մասին, վորոնց, սակայն, չի համապատասխանում վորևե, դիտակցությունից դուրս դտնվող մի իրականություն:

Պլեխանովն իր ժամանակին Պետրոգրադի տեսությունը, վորից Ցուշկևիչը փոխ եր առել իր գլխավոր մտքերը, անվանում եր վախկոտ իդեալիզմ, «Աչխարհի պատկերը», ինչպես ասացինք, մտածվում եր վորպես օբյեկտիվ միայն այն պատճառով, վոր այդ պատկերը պտնվում եր չատ մարդկանց գլխում. սա իդեալիզմ է, մինչդեռ Պետրոգրադը, իսկ նրա հետից և Ցուշկևիչը, բողոքում եյին աչխարհը վորպես պատկերացում ըմբռնելու դեմ,

ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԱՍՏՎԱԾԱՎՈՐՈՆՈՒՄ

Բոգդանովչչինայի հետ գաղափարապես կապված եր աստվածաչինարարության գրաքան-փիլիսոփայական հոսանքը, վորին գլխավորում էյին Լունաչարսկին, Բազարովը և ուրիշները: Աստվածաչինարարությունը չանում եր ստեղծել մի կրոն՝ առանց աստծու, հակառակ աստվածավորանման, վորը կրոնական-փիլիսոփայական մի հոսանք եր բուրժուական արմատական ինտելիգենցիայի մեջ, և ձգտում եր գտնել մի այնպիսի աստված, վոր գոյություն ունի «Աստվածաչինարարները» — ընդհակառակը պատրաստվում էյին միայն մարդու կոլեկտիվ կարողություններից ստացված «հատուցել» գործնական բանահանության պահանջները, այսինքն՝ մարդու կարոտը «յերջանկության»,—գրում եր Լունաչարսկին,—չեն կարող գոյություն չունեցող հայտարարվել, վոչ էլ պիտության լուծվել. սակայն այստեղից յեզրակացություն հանել, թե նրանք միշտ էլ կրավարարվեն առակներով, վորոնք անհերքելի չեն միայն նրա համար, վոր նրանք բնակալել են դպրական աչխարհի տաճաններից դուրս,—այս նշանակում է՝ մարդկությանը վոչու ազդատության վիճակում տալ»[1]): Աստվածաչինարարները հետևարար, չեն հավատում դիտության կարողությանը (վորով նրանք, իհարկե, չատ հեռու չեն մարքսիզմից) և չեն էլ ուզում կրոն՝ ստեղծել: Սակայն կրոնը հարկավոր է, քանի վոր նա,—համաձայնում է Լունաչարսկին Ֆեյերբախի հետ,— մարդու մեջ թագնված դանձերի հանդիսավոր հայտագործումն է, մարդու ներքին խորհուրդների ընդունելը, նրա սիրո գաղտնիքների բաց խոստովանությունը: Աստվածաչինարարներն ատանց աստված կրոն կազմակերպելու իրենց ձգտման մեջ ինքնուրույն չեյին. դրա մասին յերազում եր դեռ Ֆեյերբախը: Ինչպես այս առթիվ գրում է. «Վերջապես բնության մատերիալիստական ըմբռնման հիմունքի վրա իսկական կրոն կազմակերպել՝ Ֆեյեր-

**) Ս. Լունաչարսկի, — «Կրոնը և սոցիալիզմը» մաս 1-ին 1908 թ.

քաղը նմանվում է մի մարդու, որ կլճռներ, թե նորագույն քիմիան իսկական ալքիմիա է։ Ցնթե հնարավոր է կրոն առանց աստծու, ապա և հնարավոր է ալքիմիա առանց փիլիսոփայական քարի»։ Ցեվ իսկապես աստվածաշնչարարները չկարողացան դիմանալ «աստծուն թաղելու» դիրքի վրա. ինչ էլ անում էին, էլի աստված տակից դուրս էր գալում։ Նկարագրելով մարդկային բանականության և տեխնիկայի հսկայական հաջողությունները, Լունաչարսկին գրում է. «Ցեվ տեսնելով հանճարի հաջողությունները՝ չե՞նք ասում, արդյոք, ո՞վ է սա, որին փոթորկալից ծովն անգամ հնազանդվում է... Չե՞նք զգում, արդյոք, ինչպես ամրապնդվում է ծնված... աստվածը»։

Մախիստների և բոգդանովչանների նման՝ աստվածաշնչարարներն էլ աշխարհն ընդունում էին որպես սոցիալապես կազմակերպված փորձի արդյունք։ Պարզ է, որ կրոնն էլ կոլեկտիվ գիտակցության մեջ է։ Անհատ աստծու փոխարեն գրվում է կոլեկտիվը։ Աստվածաշունչներն էլ, ինչպես և բոլոր ռեվիզիոնիստները, ջանում էին մարքսիզմին միացնել նրա համար խորթ մի բան. ներկա դեպքում — կրոն՝ առանց աստծու։ Սա ամենաանհեթեթ փիլիսոփայական մի ձեռնարկություն եր, որպիսին չէր կարող երբևիցե մտածվել եր, որովհետև կրոնը, ինչպիսի կրոն էլ լինի, մարքսիզմի հետ ոչ միայն ընդհանուր ոչինչ չունի, այլև նրա հետ լիակատար և անհաշտ հակասության մեջ է։ Մարքսը և Ենգելսը շարունակ և ամենուրեք պայքարում էին կրոնի և կրոնական այլևայլ պատկերացումների դեմ։ Սա հասկանալի է դարձնում, թե ինչու Լենինն այնքան կատաղի պայքար եր մղում ռեվիզիոնիզմի այս նոր այլասեռակության դեմ։ Լենինը գրում եր. «Աստվածաշնորհումը տարբերվում է աստվածաշնչարարությունից... ոչ ավելի, քան դևդին աստանան կապույտ աստանայից։ Նոսկ աստվածաշնորհման մասին ոչ նրա համար, որ արտահայտվեց բոլոր տեսակի աստանանների և աստվածների դեմ, ամեն տեսակի դաղափարական դիակնապղծության դեմ... այլ՝ կապույտ աստանան սև աստանայից դերադասելու համար,— սա հարյուր անգամ ավելի վատ է, քան բոլորովին չհոսելը։ Ոչ անձնական, այլ հասարակական տեսակետից, ամեն կարգի աստվածաշնչարարություն հենց սկզբային ինքնաթեստն է բուն մեչչանականության, փխրուն քաղքենիության, ֆիլիստերների և յերազական ինքնաքքման և հուսահատված ու հոգնած մանր բուրժուաների։

ՄԱԽԻՍՏԱԿԱՆ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՑԵՎ ԼԵՆԻՆԻ ԴԵՐՆ ԱՅԴ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Վերևում ասածից հետո դարմանալի չէ, որ մի կողմից՝ բոլոր այդ ռեվիզիոնիստական աղավաղումները հեղափոխությունից և բանվորական շարժումից հետու հրեցին նախկին սոցիալիստական ինտելիգենցիայի մի զգալի խմբակ և որ, մյուս կողմից՝ բայշևիզմն ամենավճռականորեն դատապարտեց այդ աղավաղումները (մինչև իսկ Բոգդանովին հեռացրեց կուսակցությունից)։ Մախիստական, ռեվիզիոնիզմի և բոգդանովչինայի պայքարի դլուխ կանգնած եր Լենինը, որի յերկերն աչքի եյին ընկնում իրենց առանձին ուժով և պայծառությամբ։ Բոգդանովչինայի դեմ դուրս յեկան նույնպես Ահակրոդը, Դերբորինը և Պլեխանովը։ Պլեխանովը, որը Բոգդանովին, Ճուչկևիչին Լունաչարսկուն և ուրիշներին բանավեճային հոդվածների մի չարք նվիրեց, միանգամայն աչքառու արեց Ինր ֆիլիկայի կամ, ավելի ճիշտ, նոր ֆիլիկայի մեջ վորոշ դժրոցի՝ մախիզմի՝ ժամանակակից իդեալիստական փիլիսոփայության ուրիշ այլասեռակություններ հետ ունեցած կապի» հարցը (Լենին)։ Պլեխանովը մեծ ուշադրություն եր դարձնում իմացության տեսության վրա, բայց ամենափոքրիկ ուշադրություն անգամ չեր դարձնում բնագիտության վրա։ Այնինչ՝ այն ճգնաժամը, որ 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին տեղի եր ունեցել բնագիտության, գլխավորապես ֆիզիկան (ճգնաժամ՝ կապված հին ատոմիստական տեսության խորտակման հետ, մատերիայի պահպանման տեսության հետ և այլն), ֆիզիկոսների մի վորոշ մասին (Պուանկարե, Մախ, Պիրսոն և ուրիշներ) հրեց դեպի մատերիայի գոյության բացառման ուղին, իսկ մյուս մասին՝ դեպի մի ուղի, որ տանում եր մեխանիստական մատերիալիզմից դեպի դիալեկտիկական մատերիալիզմը։ Լենինն եր հենց, որ իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» նշանավոր գրքով մարքսիստական փիլիսոփայության գանձարանը մտցրեց այն նորը, որն ապնում է նոր բնագիտության՝ ազատագրվելու մեխանիստական իդեալիստական գաղափարների ազդեցությունից և կանգնելու դիալեկտիկական մատերիալիզմի միակ ուղիղ ճանապարհի վրա։ Լենինը ցույց տվեց, որ այն փաստը, որ ատոմը բաժանելի դուրս յեկավ և որ առաջվա մատերիան, էլեկտրականությունը և յերերը հաջողվում է վերածել միայն էլեկտրականության և յերի

(գոքովհետև բանից դուրս յեկավ, որ ատոմը ինչ-որ բան է, նման անատոման փոքր արեգակնային համակարգության, որի ներսում դրական էլեկտրոդի չուրջը չարժվում են բացասական էլեկտրոնները),— սա բոլորովին չի նշանակում, թե «մատերիան անհետացավ», քանի որ «մատերիայի միակ հատկությունը, որի ընդունելու հետ կապված է փիլիսոփայական մատերիալիզմը, օբյեկտիվ իրականություն լինելու, մեր գիտակցությունից դուրս գոյություն ունենալու հատկություն նե»։ Այս տեսակետից՝ վոչ թե մատերիան է կորել, այլ կորել է այն սահմանը, մինչև վորը մենք մինչև այժմ գիտեյինք մատերիան։ Մեր գիտությունն ավելի խորն է գնում։ Լենինը ծաղրում է բոգդանովյան խոստովանությունն «իրերի անփոփոխելի եյության» մասին, անփոփոխելի էլեմենտների մասին, համարելով այդ մետաֆիզիկական, հակադիալեկտիկական մատերիալիզմ, քանի որ «դիալեկտիկական մատերիալիզմը պնդում է՝ մատերիայի և նրա հատկությունների մասին յեղած ամեն մի գիտական մտքի մոտավոր և հարաբերական բնույթը, բնության մեջ բացարձակ սահմանների բացակայությունը, չարժվող մատերիայի մի դրությունից մյուսը փոխվելը»։ Այստեղից բղխում է այն, որ նոր ֆիզիկան, որը համոզվել է մետաֆիզիկական մատերիալիզմի խորտակման մեջ, ուժգին նեսվում է դեպի իդեալիզմ, գլխավորապես այն պատճառով, որ ֆիզիկոսները դիալեկտիկա չգիտեն։ Վոչնչացնող քննադատության յենթարկեց Լենինը չարժումն առանց մատերիայի պատկերացումը (հակառակ Ենգելսի, որը պնդում եր, թե չարժումն առանց մատերիայի անհնար է) և Ավենարիուսի էներգետիկ տեսությունը (որով տարվում եր Բոգդանովը մինչև իր հրապարակելը Մախով), որը պատճերացնում եր էներգիան առանց նրա կրոնի՝ մատերիայի, պատճառաբանելով՝ որպես թե բնությունը պարտավոր չե կազմված լինել յենթակայից և առարկայից»։ Լենինն ապացուցում եր, որ այս տեսությունը վերացնում է վոչ թե յենթական, այլ զգայության օբյեկտիվ աղբյուրը, քանի որ «մատերիայի՝ վորպես յենթակայի՝ մտքով վերացնելը բնությունից — նշանակում է լուսյան թուլացրել միտքը վորպես յենթակա»։ Այդ ժամանակաշրջանի զանազան փիլիսոփայական և բնագիտական տեսությունների բազմահարուստ մատերիալի վրա Լենինը ցույց տվեց, որ համարյա բոլոր կուլտուրական յերկրներում բնական գիտությունների մեջ կա յերկու հիմնական ուղղություն՝ իդեալիստական (գերմանական ենգելիզմ, անգլիական սպիրիտուալիզմ, ֆրանսիական ֆիզիկիզմ և այլն), որ ծագել է վերջիս հետևանքը այն բանի, որ ֆիզիկոսները չեն կարողացել բարձրանալ մետաֆիզիկական մատերիալիզմից մինչև դիալեկտիկական մատերիալիզմը, և «բաբերաբյին-մատերիալիստական» ուղղություն, որ տանում է դեպի միակ ուղիղ փիլիսոփայությունը. վոչ ուղղակի, այլ գիտգաղներով, վոչ գիտակցորեն, այլ տարերայնորեն, առանց պարզ տեսնելու իր վերջնական նպատակը, այլ նրան չոչափելով, մատենալով, յերերվելով։ Ժամանակակից ֆիզիկան յերկունքի մեջ է։ Նա ծնում է դիալեկտիկական մատերիալիզմը»...

Իր այս աշխատության մեջ Լենինը նչել և Պլեխանովի մի չարք սխալները. ի միջի այլոց նրա «հիերոգլիֆական մատերիալիզմի» սխալ լինելը, հիմնավորել և մի չարք նոր դրույթներ, որոնց չեր չոչափել Պլեխանովը (որինակ՝ փիլիսոփայության կուսակցականության մասին) և այլն։ Լենինը, հետևաբար, մարքսիստական փիլիսոփայական միտքը գրել է ավելի բարձր աստիճանի վրա, քան Պլեխանովը։ Նա այդ միտքն առաջ է չարժել և ավել նրան պայքարի մի անգնահատելի զենք մարքսիզմի հետագա վուլգարիզատորների և աղավաղողների՝ մեխանիստների և ուրիշների դեմ։ Լենինի փիլիսոփայական յերկերը, որ վճռական դեր եյին կատարում այն ժամանակվա փիլիսոփայական վեճերի մեջ, նույնպես դեր են կատարում և այժմ՝ մեր նախկայի փիլիսոփայական վեճերի մեջ։

Ընկ. Ստալինը, մատնանչելով Լենինի այդ չրջանի փիլիսոփայական յերկերի ահագին նշանակությունը, բնորոշեց այդ դերը վորպես մարքսիստական մտքի զարգացման մի նոր, ավելի բարձր աստիճան։

Վոչ այլ վոք, քան Լենինը,—ասում է ընկ. Ստալինը 1924 թվին իր՝ Լենինիզմի հիմունքների մասին դասախոսություններում,*)—հանճն առավ կատարել ամենալուրջ խնդիրը, այն է՝ ամփոփել մատերիալիստական փիլիսոփայության վերաբերյալ համեմատաբար ավելի կարևորն այն բոլորից, ինչ վոր տվել և գիտությունն ընդհատից մինչև Լենինն անցած ժամանակաշրջանում, ինչպես և մարքսիստների չրջանում հակամատերիալիստական հոսանքների բազմակողմանի քննադատությունը։ Ենգելսն ասում եր, որ մատերիալիզմը

*) Ստալին, — «Լենինիզմի հիմունքները», եջ 26· 1931 թ. հրատ 7-րդ·

Ջնայած, որ ուղղափառ մարքսիստները ևս չնայած որ Բոգդանովի տեկտոլոգիական իդեալները լայն չափով չաոարածվեցին, այնուամենայնիվ բոգդանովչչինայի ազդեցությունն արտահայտվո մ է հետագա եվոխայի մեխանիստական-ռեվիզիոնիստական հոսանքների վրա։ Բուխարինի և ուրիշների մեխանիստական աշ-ոպորտունիստական կոնցեպցիայի մեջ մենք հանդիպում ենք, ինչպես տեսանք, բոգդանովյան և դյուրինգյան հավասարակշռության տեսության, ամեն դույնի մեխանիստների մոտ մենք հանդիպում ենք Բոգդանովի վորոնումներին՝ մատերիայի «անփոփոխ եյության», մի պրոցեսը մյուսին վերածելուն, քանակական մոտեցմանը, վորակային փոոբերությունների բացատմանը, բոգդանովյան սիստեմատիզմին և ֆորմալիզմին և այլն։ Բոգդանովի ազդեցության տակ մեզ մոտ մի ժամանակ ծաղկում եր պրոլետկուլտականությունը. այդ ազդեցության տակ կազմվեցին Բուխարինի պատմական մատերիալիզմի կոնցեպցիան և մեխանիստական կոնցեպցիան քաղաքատնտեսության մեջ։ Դասակարգերի և դասակարգային պայքարի աշ ոպորտունիստական ըմբռնման մեջ մենք հադիպում ենք բոգդանովյան դասակարգային տեսության ազդեցությանը։ Բոգդանովչչինային մենք հանդիպում ենք կրոնական հավատալիքների ծագման մասին բուխարինյան ըմբռնման մեջ և այլն։

Վերջին տարիներս մենք վկա չենք և մասնակից այն հաջող պայքարին, վոր տարվում է մեխանիստական մատերիալիզմի, բուխարինյան աշ իդեոլոգիայի և նրանց մեջ ներծծված բոգդանովյան մորիների դեմ. Այդ ճակատում տարած հաղթանակը հաղթանակ է նաև բոգդանովյան ռեվիզիոնիզմի դեմ։

§ 84. ՄԵԽԱՆԻՍՏԱԿԱՆ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄ

Մարքսիզմի հաղթանակը, վոր ավարտվեց մոտ 90-ական թվերին, ինչպես տեսանք վերևում, բուրժուական և մանր-բուրժուական տեսաբանների մեջ ձգտում առաջ բերեց մարքսիզմն աղավաղելու, նրան ընտելացնելու և վորձաուելու։ Մենք տեսանք նույնպես, վոր ռևիզիոնիզմը, ինչ կարգի էլ լինի, իր նետերն ուղղում է գլխավորապես դիալեկտիկական մատերիալիզմի և մատերիալիստական դիալեկտիկայի դեմ։ Նույնպիսի ռևիզիոնիստական ձրգտումներ և փորձեր պիտի առաջ բերեր նաև բայլևիզմ-լենինիզմի—«իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների ժամանակաշրջանի հեղափոխական մարքսիզմի»—հաղթանակը (Ստալին)։ Ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի չարքերում ռևիզիոնիզմն անելիք չունի. այստեղ բացարձակ գերպով հաղթանակել են նեոկանտականությունը և այլ բուրժուական տեսություններ, վորովհետև սոցիալ-դեմոկրատիան գլորվեց մինչ այն աստիճանը, վոր անվերապահորեն անցավ բուրժուազիայի կողմը. նա գլորվեց մինչև սոցիալ-ֆաշիզմ։ Իսկ մեր չարքերում՝ պրոլետարիատի հեղափոխական կուսակցության չարքերում, ռևիզիոնիզմը դեռևս կարող է բուրժուազիային սպառնալ։ Ահա թե ինչու հենց մեր չարքերում մենք փորձեր ենք տեսնում մատերիալիստական դիալեկտիկայի ռևիզիայի և աղավաղման. փորձեր՝ վոր արտահայտում են կուսակցության և՛ մեր հասարակայնության մեջ յեղած, պրոլետարիատին խորթ, գլխավորապես մանր-բուրժուական պրոլետարիատը և բուրժուազիայի գաղափարախոսությունների միջև յերերվող խավերի չափերը և տրամադրությունները։ Մարքսիզմ-լենինիզմի մեխանիստական ռեվիզիան իր փիլիսոփայական արմատներով գնում, հասնում է մինչմարքսյան մեխանիստական մատերիալիզմին և ձգտում ավելի հետևողականորեն և բազմակողմանիորեն աղավաղելու մարքսիստական փիլիսոփայությունը և նրա հետ միասին նաև պրոլետարական տակտիկան։ Այս պատճառով էլ նա փիլիսոփայական հիմունք է գտնել գանազան հակահեղափոխական և հակապրոլետարական ոպորտունիստական հոսանքների, գլխավորապես աշ ոպորտունիզմի համար։

Ահա՛ թե ինչու մենք վերջին տարիներս այնպիսի կատաղի պատերազմ հայտարարեցինք մեխանիստական ռեվիզիայի դեմ։ Ահա թե ինչու մենք հարկ

ունեինք նոր կերպարանք տանա յուրաքանչյուր նոր մեծ հայտնագործության հետ միասին։ Հայտնի է, վոր այդ խնդիրը կատարեց իր ժամանակի համար վոչ այլ վոք, քան Լենինը իր նշանավոր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքում։ Հայտնի է, վոր գլխավորը, վոր սիրում եր ծաղրել Լենինին փիլիսոփայության նկատմամբ «անհոդություն» ցույց տալու համար, չհամարձակվեց մինչև իսկ լրջորեն ձեռնարկել այդ խնդրի կատարմանը։

ԲՈԳԴԱՆՈՎԻ ՏԵԿՏՈԼՈԳԻԱՆ

Իմպերիալիստական պատերազմից մեկուկես—յերկու տարի առաջ սկսած հեղափոխական չարժման վերելքը նպատակ քաղաքականության և փիլիսոփայության մեջ բոգդանովյան գծի լիակատար ջախջախմանը։ Հիասթափվելով իր «փիլիսոփայությամբ» մարքսիզմը «հարստացնելու» փորձի հաջողությունից, Բոգդանովը վորոշեց «հարստացնել» մարքսիզմը «կազմակերպչական գիտությամբ» տեկտոլոգիայով, վորը նա զարգացրեց իր յեռահատոր աշխատության մեջ (առաջին հատորը լույս տեսավ 1913 թ.)։ Մատնանշելով Մարքսի այն թեզիսը, թե՝ փիլիսոփաները մինչև այժմ բացատրում եյին աշխարհը, այնինչ խնդիրը նրանումն է, վոր փոփոխեն այն, Բոգդանովն առաջարկում եր դեն ձգել փիլիսոփայությունը վորպես «դիտողական գիտություն» և փոխարինել այն կազմակերպչական կառուցողական գիտությունով՝ տեկտոլոգիայով, վորի խնդիրն է՝ աշխարհը դարձնել մի կազմակերպված ամբողջություն, վորպիսին նա առաջ իրապես չի յեղել։ Մենք այստեղ տեսնում ենք հին բոգդանովյան եմպիրիոմոնիզմի կրկնությունը. աշխարհի մեջ չկա օբյեկտ աշափություն և կարդ. սրանք փորձի մեջ են մտցվում մեր մտածողության կողմից, վորը կազմակերպում է աշխարհը մի ամբողջ շարք ձևերի՝ ժամանակի, տարածության, պատճառական կապակցության և այլն՝ ողնությամբ։ Մարդկությունն իր ամբողջ գործունեության մեջ գործ ունի փորձի էլեմենտների զանազան կոմպլեքսների հետ։ Այդ էլեմենտների միացումը կազմակերպչական պրոցեսի յելակետն է կազմում. դիմադրությունն արդյունքն է այն կազմակերպության, վորը մենք տալիս ենք սիստեմին։ Հետանալով կոնկրետ-փիլիսոփայական բնավորությունից, պետք է փոխարինել նրանց խորհրդանշաններով և նրանց կապն արտահայտել վերացական սխեմայով։ «Այդ սխեման մենք կհամեմատենք ուրիշ նման ձևով ստացած սխեմաների հետ և այս միջոցով կմշակենք տեկտոլոգիական ընդհանրացումներ, վորոնք գաղափարներ են տալիս կազմակերպությունների ձևերի և տիպերի մասին»։ Ցերևույթների մարքսիստական ուսումնասիրությունը, վոր կայանում է նրանց իրենց կոնկրետությամբ հասկանալու մեջ, փոխարինվում է բովանդակությունից զուրկ վերացական ունիվերսալ սխեմաներով, վոր կարելի չե կիրառել անսահմանորեն բազմազան դեպքերի նկատմամբ, ինչպես բնության, նույնպես և հասարակության զանազան պրոցեսների ճանաչողության նկատմամբ։ Տեկտոլոգիայի մեթոդը կապված է մեխանիստական տեսակետի հետ։ Մարքսի և Ենգելսի դիալեկտիկան փոխարինվում է հավասարակշռության տեսությամբ, իսկ հակադրությունների միասնությունը հասկացվում է վորպես միմյանց հակառակ ուղղված դրական և բացասական ուժերի մեքենական զուգահեռ։ Բոգդանովն այստեղ փաստորեն չի դուրս յեկել իր նախկին իդեալիստական դիրքերից։ Նա առաջվա պես փորձը հասկանում է վոչ վորպես օբյեկտի և սուբյեկտի միասնություն, այլ վորպես բացառապես սուբյեկտիվ ապրում։ Նա, առաջվա պես, աշխարհի օբյեկտիվությունը փոխարինում է կազմակերպող գիտակցությամբ և կոնկրետ աշխարհի մեծ բազմազանությունը՝ ունիվերսալ սխեմաներով։ Նրա համար, առաջվա պես, հասարակական կեցությունը նույնանման է հասարակական գիտակցությանը։ Եկոնոմիկան նրա համար էական և իդեոլոգիական պրոցեսի սահմանային չրջան է։ Դասակարգերն իրենց ծագումով պարապես են վոչ թե այն բանին, թե՝ նրանք սիրում կամ չեն սիրում արտադրության միջոցներին, այլ՝ կազմակերպչական փորձի սիրանալու այս կամ այն աստիճանին. սա դասակարգերի՝ իդեալիստական տեսություն է, վոր համակված է պրոլետարիատի՝ հանուն անդասակարգ հասարակության վարած պայքարի պրոլետկուլտյան հասկացողությամբ. դասակարգերի վոչնչացումը, ըստ այս տեսության, կարող է կատարվել վոչ թե արտադրության միջոցների համայնացման միջոցով, այլ կազմակերպչական փորձի համայնացման՝ պրոլետարական կուլտուրա ստեղծելու միջոցով։

և ոչուտ ենք համարում այստեղ ընդհանուր գծերով բացատրել և քննադատել մեխանիստական կոնցեպցիան, թեպետ և այս գրքի շատ տեղերում, դանադան հարցերի առթիվ, կանդ ենք առել մեխանիստական դրույթների քննադատության վրա:

XVI—XVIII ԴԱՐԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՅԵՎ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԵԽԱՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ

Իսկ ի՞նչ բան է մեխանիստական մատերիալիզմը: Մեխանիստական մատերիալիզմը գիտական–փիլիսոփայական մի ուսմունք է, որն աշխարհի բոլոր բազմազանությունը մեխանիկայի որենքներին է հանգեցնում: Աշխարհը կազմված է հսկայաթիվ բացարձակապես անբաժանելի, բոլորովին անփոփոխելի և նույնանման (նշանակում է՝ անլորակ) մասնիկներից՝ «աշխարհաշենքի աղյուսիկներից»: Իսկ վո՞րտեղից են առաջվում իրերի վորակական տարբերությունները:—Քանակային փոփոխություններից: «Աղյուսիկների» զանազան քանակությունը և նրանց տարածական զանազան խմբավորումը, նրանց զանազան տեղափոխություններն են հենց ստեղծում աշխարհում առաջացող վորակային փոփոխությունները: Այս տեսակետից՝ յուրաքանչյուր ամբողջություն նույնանման մասնիկների հասարակ գումարն է. որդանիզմը՝ բջիջների գումարն է, տունը՝ աղյուսների, հասարակությունը՝ մարդկանց, և այլն: Ուստի, իմացականության ճիշտ մեթոդ կարող է լինել անալիզը, ամբողջի վերլուծությունը իր նույնանման մասերի և նրանց հատկություններին ուսումնասիրությունը: Որգանիզմը, հետևաբար, կարող է հասկացվել իր բաղկացուցիչ բջիջների հատկություններից. հասարակությունը՝ իր բաղկացուցիչ մարդկանց հատկություններից, և այլն: Այս տեսակետը XVIII դարի մատերիալիստներն անց են կացնում բավական հետևողականորեն ոչ միայն բնական, այլև հասարակական գիտությունների մեջ: Ադամ Սմիթն, որինակ, աշխատում եր փոխանակային հասարակության և ապրանքային արտադրության որենքները բացատրել այն առանձին մարդկանց հատկություններով, վորոնք, վորպես թե «բնական ապրանքարտադրողներն» են հանդիսանում:

Այս նկատառումներից յելնելով՝ մեխանիստական մատերիալիստներն հաշվում եյին, թե կարելի յե բարդ յերևույթները վերածել պարզի (քանի վոր նրանց մեջ կա միայն քանակական տարբերություն). որինակ՝ բիոլոգիական որենքները՝ մեխանիկայի որենքներին. հասարակության որենքները՝ բիոլոգիայի և մեխանիկայի որենքներին, և այլն:

Մեխանիստական աշխարհայացքի սաղմերը կարելի յե գտնել դեռևս հին դարերի ատոմիստական ուսմունքների մեջ. բայց նրա ծաղկումը պետք է վերագրել միայն կապիտալիզմի բուռն զարգացման դարաշրջանին (XVI—XVIII դ.դ.), յերբ մեխանիստական մատերիալիզմը դարձավ հիմք և դենք բուրժուական գիտության զարգացման: Նրա խոշորագույն ներկայացուցիչներ եյին՝ Կեպլերը, Կալիլեյը, Դեկարտը, Հոբբսը, Բոյլը, Նյուտոնը՝ անգլիական և ֆրանսական մատերիալիստները և ուրիշները: Այս եպոխայում մեխանիստական մատերիալիզմը խոշոր դեր խաղաց վորպես բեակցիա մինչնազարյան սխոլաստիկայի և կրոնական խավարամոլության դեմ: Նա բուրժուազիայի իդեոլոգիական զենքն եր ֆեոդալական աշխարհի դեմ վարած իր պայքարում: Սակայն սա բուրժուազիայի մատերիալիզմն եր, ուստի և ստացավ բուրժուական իդեոլոգիային «սահմանափակության սպեցիֆիկ գծերով» (Ենգելս): Այս մատերիալիզմը մետաֆիզիկական մատերիալիզմ եր, այսինքն՝ ոտար եր դիալեկտիկային և համիտենական, անփոփոխ և անձեռնմխելի յեր հայտարարում ինչպես իրերը և բնության յերևույթները, այնպես և վորոշ, բուրժուազիային մոտիկ և անհրաժեշտ կարգերն ու ինստիտուտները (ինչպես՝ մասնավոր սեփականության ինստիտուտը):

Այստեղից պարզ է, վոր յեթե մեխանիստական մատերիալիզմն իր ժամանակի համար հսկայական մի քայլ եր դեպի առաջ, ապա՝ մեր ժամանակի համար, յերբ համաշխարհային պատմության առաջաբեմում հանդես է գալիս պրոլետարիատն իր միակ դիտական աշխարհայացքով՝ դիալեկտիկական մատերիալիզմով,—մեխանիստական մատերիալիզմը դառնում է հետադիմական քայլ, վոր կոչ է անում պրոլետարական պայքարից դեպի բուրժուազիայի հետ դաշտիարական աշխատակցություն: Ահա թե ինչու Մարքսը, Ենգելսը և Լենինն ամենավճռական կերպով ատհամանգվում եյին մեխանիստական մատերիալիզմից:

ՅՈՒՍԱՂՅԱՆ ԴԱՏՈՏՈՂՈՂԱՅԻ ՎՅՈՒՀՍՏԻՁՆՈՎ

Ժամանակակից մեխանիստներն իրենց դիալեկտիկական մատերիալիստներ են անվանում. սակայն նրանք դիալեկտիկայի հետագոզության մեջ ոչինչ բովանդակություն են դնում, վորը միանգամայն խորթ է մարքս–լենինյան ըմբռնմանը: Մարքսը, Ենգելսը և Լենինը դիալեկտիկայի տակ հասկանում եյին մատածողության և կեցության որենքների մասին մի դիտություն. «դիտություն՝ ինչպես արտաքին աշխարհի, այնպես և մարդկային մատածողության չարժման ընդհանուր որենքների մասին» (Մարքս): Իսկ ինքը՝ դիալեկտիկայի տնտեսությունը որթոդոկսալ մարքսիզմի համար կայանում է հետևողությունների միասնության մեջ: «Կարմ՝ դիալեկտիկան կարելի յե սահմանել վորպես ուսմունք հակադրությունների միասնության մասին: Սրանով կընդգրկվի դիալեկտիկայի հոտիզր» (Լենին): Դիալեկտիկական հակադրությունների տակ Լենինը հասկանում եր վոչ միայն փոխադարձաբար միմյանց բացառող, այլև պայմանավորող հակադրությունները (բուրժուազիան վոչ միայն բացառում է պրոլետարիատը, այլև ընդունում է, քանի վոր առանց պրոլետարիատի դոյության՝ անհասկանալի յե բուրժուազիայի դոյությունը, և այլն):

Հենց հակադրությունների այդպիսի միասնականությունն է, վոր պատճառ է հանդիսանում ամեն մի չարժման: Այստեղից հետևում է, վոր ճանաչել պրոցեսները նշանակում է ճանաչել նրանց՝ ինքնաչարժման մեջ: Իսկ ինչպե՞ս են հասկանում մեխանիստները դիալեկտիկան: Նրանք չեն համաձայնում մարքս–լենինյան ըմբռնմանը:

1. Մինչդեռ Մարքսի, Ենգելսի և Լենինի համար արտաքին աշխարհը (կեցությունը, որ'ենքը) և մարդկային մատածողությունը (գիտակցությունը, սուբ'ենկտը) գանազան իրեր են, հակադրություններ են, վորոնց մեջ դիալեկտիկական միասնականություն կա, մեխանիստները նույնացնում են այդ գաղափարները: «Միտքը... նյութերի չարժում է կամ իրերի միացում»—դրում է մեխանիստ Ջ. Յեյլինը: Դիալեկտիկական մատերիալիզմի ընդունած՝ հակադրությունների—սուբ'ենկտի և որ'ենկտի—միասնության տեղ հավասարության նշան է դրվում: Վուլգար մատերիալիզմը, վոր ամեն ինչ հանգեցնում է որ'ենկտին, նույնպիսի թշնամի յե դիալեկտիկական մատերիալիզմին, ինչպիսին իդեալիզմն է, վոր ամեն ինչ հանգեցնում է սուբ'ենկտին...

2. Մեխանիստներնել խոսում են հակադրությունների միասնության մասին, բայց հակադրություններ ասելով նրանք հասկանում են միայն փոխադարձաբար միմյանց բացառող, բայց վոչ միմյանց պայմանավորող հակադրությունները: Ըստ Դյուրինգի, Բոգդանովի և Բուխարինի հակադրությունների ատկ հասկացվում են միմյանց դեմ ուղղված ուժերը: Դիալեկտիկական հակադրությունների միասնականությունը, փոխադարձ ներթափանցումը, փոխարինվում է մերթ հակադրությունների նույնությամբ, մերթ տարբեր կողմեր ուղղված ուժերի պայքարով:

3. Մեխանիստներն, այս պատճառով չարժումը պատկերացնում են վորպես «տարբեր կողմեր ուղղված ուժերի անտագոնիզմի» հետևանք (Բուխարին): Շարժման աղբյուրը տեղափոխվում է իրերից դուրս: Սա մեխանիկան չարժում է, վոր հանդիսանում է մարմնի տեղափոխումը տարածության մեջ հարվածի, այսինքն՝ արտաքին ուժի ազդեցության տակ: Մեխանիստները չարժման բոլոր ձևերը հանգեցնում են մեխանիկական չարժման: Ինքնաչարժման գաղափարն ոտար է նրանց:

4· Ասածիցս պարզ է, որ մեխանիկաները ընդունում են՝ կամ նույնություն, կամ տարբերություն: Նույնության և տարբերության միասնության ըմբռնումը, դիալեկտիկական հակասության (որը նույնն է թե՝ նույնության և տարբերության միասնությունը) ըմբռնումը նրանց անմատչելի է. խակ առանց սրան դիալեկտիկա չկա: «Միության յերկուացումը,—գրում է Լենինը,—և հակադիր մասերի ճանաչումը դիալեկտիկայի էությունն է»:

5· Դիալեկտիկան եապես փոխարինվում է մեխանիկայով: Մեխանիստներից նրանք, ովքեր ավելի հետևողական են, ուղղակի ընդունում են այս: Ի. Ի. Ստեպանովը մի քանի տարի առաջ գրում էր. «Ներկա ժամանակի համար բնության դիալեկտիկական ըմբռնումը կոնկրետացվում է հենց վորպես մեխանիստական ըմբռնում: Այս էլ հենց վերադարձ է Մարքսի, Ենգելսի և Լենինի դիալեկտիկական ամտերիալիզմից դեպի մինչմարքսյան մեխանիկական մատերիալիզմը (յեթե վոչ վուլգար մատերիալիզմը):

ՎՈՐԱԿԻ ՑԵՎ ՔԱՆԱԿԻ ՄԵԽԱՆԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՑԵՎ ՀԱՆԴԵՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մեխանիստներին մինչմարքսյան մեխանիստական մատերիալիզմին մոտեցնում է նաև վորակի և քանակի մեխանիստական ըմբռնումը: Դիալեկտիկական մատերիալիստները վորակի մեջ տեսնում են առարկայի այնպիսի վորոշություն, չնորհիվ վորի առարկան «այն է, ինչ վոր է. կորցնելով վորակը՝ նա դադարում է այն լինելուց, ինչ վոր է» (Հեգել): Հետևաբար, վորակը ենթակա առարկայի բնության մեջ, վորը վորակ ունի, որ՝նկատիվ գոյություն ունեցող ինչվոր ռեալ բան է.«վորակը կոնկրետ կեցության հետ անքակտելիորեն կապված վորոշություն է» (Հեգել): Այնինչ՝ մեխանիստները բացառում են վորակի կատեգորիայի որ՝նկատիվությունը: Նրանց համար որ՝նկատիվորեն գոյություն ունեն միայն քանակային հարաբերությունները, վորոնց և հանգեցնում են վորակային տարբերությունները: Բոգդանովը (վորից մեխանիստները քիչ բան չեն վոխ առել) հայտարարում էր նույնիսկ, թե «վորակ» տերմինը «անպայման ֆաղքենիական տերմին է, վորը վոչ մի դիտական արժեք, վոչ մի դիտական նշանակություն չունի»: Մի չարք մեխանիստներ մոտավորապես նույնն էին ասում: Կեցության բազմորակությունը,—ասում էին նրանք,—իսկապես, մեր իմացության բազմորակությունն է: Դուրս է գալիս, վոր կեցությունն ըստ ինքյան անբազմորակ է, վոր իրականության մեջ չկա վորակ և վոր նա միայն մեր գիտակցության մեջ է: Մենք արդեն գիտենք, վոր այդպիսի ըմբռնումը յումիմ է, սուբ՝նկատիվ իդեալիզմ: Այսպես մեխանիստական մատերիալիզմը փաստորեն հանգում է իդեալիզմին: Մենք արդեն գիտենք, վոր մեխանիստները պատահականության հարցում էլ հանգում են սուբ՝նկատիվ իդեալիզմին:

Վորակային բոլոր տարբերությունները, մեխանիստական ըմբռնման համաձայն, հանգում են քանակայինին: Սա ընդում է սահմանը չարժման զանազան ձևերի, զանազան վորակների միջև: Վերացվում է չարժման առանձին ձևերի սպեցիֆիկ օրենքների իմացության անհրաժեշտությունը: Մեխանիկայի և բիոլոգիայի միջև, բնության և հասարակության միջև և այլն չկա ակզբունքային տարբերություն: Սա իհարկե ընդհանուր վոչինչ չունի դիալեկտիկական ըմբռնման հետ, վորի համար «չարժումը չի հանգում միայն կոպիտ մեխանիկական մի չարժման, պարզ տեղափոխության. մատերիայի չարժումը՝ այդ նույնպես ջերմություն ու լույս է, էլեկտրական և մագնիսային լարվածություն, քիմիական միացում և տարրալուծում, կյանք և վերջապես գիտակցություն» (Ենգելս): Դիալեկտիկների համար, վորոնք վորակային տարբերությունները չեն հանգեցնում քանակայինին, չարժման տարբեր ձևերը վորակապես տարբեր են և ունեն իրենց սպեցիֆիկ օրինաչափությունները. մեխանիկական չարժումը նրանց համար չարժման մի ձևն է միայն, ամենապարզ ձևը: Իսկ մեխանիստների մոտ, վորոնք բացառում են վորակը վորպես իրականություն, չարժման բոլոր ձևերը ձուլվում են ի մի՝ մեխանիկական չարժման: Մեխանիստները մի հետադարձ են կատարում դեպի բուրժուական մատերիալիստների մեխանիստական մատերիալիզմը, մասնավորապես դեպի Հոբսը, վորը սահմանում էր չարժումը վորպես «տեղի անընդհատ փոփոխություն, այսինքն՝ մի տեղը թողնելը և մյուսին հասնելը»: Վերևում մենք ցույց տվինք, թե ինչպես մեխանիստները, հավատարիմ իրենց ըմբռնման, վոր բարդ յերևույթները կարելի է «հանգեցնել» պարզի, ձգտում են բնության օրենքները տեղափոխել հասարակության վրա, ցանկանում են՝ հասարակության զարգացման օրենքները դուրս բերել էներգիայի պահպանման օրենքից և այլն:

ՄԵԽԱՆԻՍՏՆԵՐԻ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ

Ինչպես դիտենք, մատերիան անբաժանելի է չարժումից, քանի վոր չարժումը մատերիայի գոյության ձևն է, նրա հիմնականատրիբուտը (հատկությունը): Պարզ է, այս պատճառով, վոր չարժման մեխանիստական աղճատած ըմբռնումը կապվում է մատերիայի հենց աղճատած ըմբռնման հետ: Ցուրաքանչյուր դիալեկտիկի համար. «մատերիայի միակ հատկությունը, վորի հետ կապված է մատերիալիզմը, մեր գիտակցությունից անկախ օբյեկտիվ իրականություն լինելն է» (Լենին). իսկ մեխանիստների համար մատերիան տվյալ փիզիկական վորոշությունն է՝ XVIII–րդ դարի մատերիալիստների համար ատոմն է, մեր ժամանակի մեխանիստների համար՝ ելեկտրոնը: Մատերիայի փիլիսոփայական սահմանումը հանդում է փիզիկականի (մատերիայի փիլիսոփայական և փիզիկական ըմբռնումների մասին ավելի մանրամասն խոսել ենք վերևում): Բացի այն, վոր մատերիայի փիզիկական սահմանումը բոլորովին վերացնում է սոցիալական մատերիան՝ սոցիալական օբյեկտիվությունը, վորը փիզիկական բնություն չունի՝ նա չի արտահայտում նաև փիզիկական աշխարհի օբյեկտիվությունը: Նա հանգում է մատերիայի վերջին, անլուծանելի, իրեն նույնանման (անփոփոխ) մասնիկին: Այս միանգամայն համաձայնում է XVI—XVIII դարերի մեխանիստական մատերիալիստների ըմբռնմանը, վորոնք ընդունում էին, թե աշխարհը կազմված է նույնանման և անփոփոխ «ադյուսկերից»: Սակայն այս վոչինչ ընդհանուր չունի մարքսիզմ–լենինիզմի հետ: Դեռևս Ենգելսը գրում էր, վոր ատոմը սահման չի, ինչ–վոր անփոփոխելի բան չի և չարունակ իրեն նույնանման չի: Նա այդ գրել է ատոմիստական տեսության հենց ծագման ժամանակաշրջանում, յերբ մեր մեխանիստների բուրժուական նախորդներն ատոմի մեջ բոլոր իրերի սահմանն էին տեսնում: Լենինն, ավելի ուշ, գրում էր. «Ատոմի քայքայումը, նրա անսպառականությունը, չարժման բոլոր ձևերի փոփոխականությունը չարունակ յեղել է դիալեկտիկական մատերիալիզմի ենթակը»: Այժմ մեր գիտելիքների դրությունն այնպես է, վոր ֆիզիկան տարրալուծել է ատոմը ելեկտրոններից, բայց այդ վոչ մի իրավունք չի տալիս ելեկտրոնը վերջին ամենամանր նույնանման մասնիկը համարելու. մեր գիտելիքների հետագա զարգացումն անվիճելի կերպով կրերի այն հետևանքին, վոր մենք ի վիճակի կլինենք ելեկտրոնն էլ տարրալուծելու: Այստեղից՝ անվիճելի է, վոր մեխանիստների պնդումը «առաջնա–ակիզը» մատերիայի մասին, «սկզբնական» մատերիայի մասին, «մատերիայի մասին՝ վորպես այդպիսին», վորը վորպես թե գոյություն ունի մեզ համար զգայապես, ինչպես ելեկտրոնները լիակատար հակասության մեջ է դիալեկտիկական մատերիալիզմի նկատմամբ, քանի վոր մատերիան վորպես այդպիսի՝ ինչ–վոր անվորակ բան է, այնինչ՝ իսկական առարկաները յերբեք անվորակ չեն լինում»:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Քանի վոր դիալեկտիկան փոխարինվում է մեխանիկայով, ինքնաչարժումը՝ մեխանիկական չարժմամբ, դիալեկտիկական հակասությունը՝ հակադիր ուղղության ուժերի հակամարտությամբ, ապա ուրեմն միանգամայն անխուսափելի է դառնում այն տեսությունը, վոր բոլոր պրոցեսները բա-

ցատրում են վորպես ուժերի հավասարակշռության և այս հավասարակշռության խախտման հետևանք: Վուլգար մատերիալիստի և մարքսիզմի հակառակորդ Դյուրինգը գրում եր դեռ 70-ական թվերին, վոր հակադիր ուղղություններով միմյանց դեմ հակամարտող ուժերի անտագոնիզմը բնության և նրա յերևույթների մեջ բոլոր գործողությունների հիմնական ձևն է»: Բոգդանովը, առանց թաղցնելու, հավասարության նշան եր դնում դիալեկտիկայի և կազմակերպչական պրոցեսի մեջև. «վորոնք գնում են... տարբեր տենդենցների պայքարի ճանապարհով»: Իսկ ընկ. Բուխարինը զարգացրեց այդ հակադիալեկտիկական նախադրությունները և զարձրեց հավասարակշռության մի բարեձև ոպորտունիստական տեսություն: «Աչքաթող չում կան,—գրում է նա իր «Պատմական մատերիալիզմի տեսության» մեջ, տարբեր ուղղություններով միմյանց դեմ ուղղված ուժեր: Միայն բացառիկ դեպքերում վորոշ մոմենտ նրանք հավասարակշռում են միմյանց. այն ժամանակ մենք ունենք անդորրության վիճակ, այսինքն՝ այդ ուժերի ներկան պայքարը քողարկվում է: Բայց բավական է միայն, վոր վտիտի ուժերից մեկը, այն ժամանակ, իսկույն ևեթ ներքին հակասությունները դրսևորվում են, տեղի չի ունենում հավասարակշռության խախտում, և յեթե մի վարկյան նոր հավասարակշռություն է վերականգնում, այսինքն՝ ուժերի նոր ներդաշնակման դեպքում, սա դրվում է նոր հիմքի վրա: Հենց այստեղ մենք տեսնում ենք այդ պրոցեսի ձևերը. դրանք են՝ առաջին՝ հավասարակշռության վիճակ, յերկրորդ՝ այդ հավասարակշռության խախտում, յերրորդ՝ այդ հավասարակշռության վերականգնումը՝ նոր հիմքերի վրա»:

Ընկ. Բուխարինը չի տեսնում ներքին հակասությունները. նա այդ հասկությունները փոխարինում է ուժերի արտաքին ընդհարմամբ: Այստեղից էլ նրա մի շարք ոպորտունիստական յեզրակացությունները հասարակության ըմբռնման վերաբերմամբ: Նրա համար՝ բոլոր հասարակական հասկությունները վորոշվում են «սիստեմի և միջավայրի*) հարաբերությամբ... վորովհետև սիստեմի բոլոր դրությունները նրա չարժման հիմնական ձևերը, (անկում, կանգառում, զարգացում) վորոշվում են այդ հարաբերությամբ»: Ուրեմն՝ ամեն ինչ վորոշվում է, վերջին հաշվով, վոչ թե հասարակության ներքին վիճակով, այլ նրա վրա բնության ազդեցությամբ: Կապիտալիստական հասարակության (կապիտալիստական սիստեմի) վերաբերմամբ այդ նշանակում է կապիտալիզմի ներքին հակասությունների անտեսելը և վճռական դերը տեղափոխելը կապիտալիստական սիստեմների (պետությունների) միջև յեղած արտաքին հակասությունների վրա: Կազմակերպված կապիտալիզմի տեսության փիլիսոփայական հիմնաքարումն էլ հենց այս է:

Կարելի չե հեշտ ապացուցել, վոր ընկ. Բուխարինի ոպորտունիստական մի շարք մտքերը՝ քաղաքականության հարցերի շուրջը բղխում եր նրա փիլիսոփայական աղճատումներից, դիալեկտիկական հավասարակշռության տեսությամբ և դիալեկտիկական մատերիալիզմը վուլգար մեխանիստական մատերիալիզմով փոխարինելուց: Այդ մենք ապացուցեցինք այս գրքի զանազան տեղերում:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ՝ ՎՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԲԱՑԱՍՈՒՄԸ

Մենք համոզվեցինք, վոր ռեվիզիոնիստական զանազան հոսանքները կամ վիճում եյին մարքսիզմի փիլիսոփայության՝ դիալեկտիկական մատերիալիզմի դեմ և փոխարինում նրան պրոլետարիատին և մարքսիզմին խորթ մի փիլիսոփայությամբ, կամ մնում եյին (ինչպես որինակ Կաուցկին) անտարբեր, չեզոք՝ մարքսիզմի փիլիսոփայական կողմի նկատմամբ: Մեխանիստական ռեվիզիան «խորացրեց» ռեվիզիոնիզմի այդ դիծը. նա առհասարակ բացասում է մարքսիզմի համար վորևե փիլիսոփայության անհրաժեշտությունը: Սա՝ խոսքով միայն: Իրականության մեջ այս հանգում է մեխանիստներին մարքսիզմի փիլիսոփայությունը վուլգար մատերիալիզմի և սուբյեկտիվ իդեալիզմի բուրժուական փիլիսոփայական կոնցեպցիաներով փոխարինելուն:

Մեխանիստները կարծում են, վոր «մարքսիզմի փիլիսոփայություն», «բնագիտության փիլիսոփայական յեզրակացություններ» և այլն տերմինները իրենց դարն անց են կացրել, վոր փիլիսոփայությունը պետք է կրոնի հետ միասին չքացել մարքսիզմից դուրս, վոր փիլիսոփայությունը (նշանակում է և մարքսիզմի փիլիսոփայությունը) պետք փոխարինել ժամանակակից բնագիտությամբ: «Մարքսիզմի համար,— գրում եր հանգուցյալ Ի. Ի. Մտեպանով Սկվորցովը,—գոյություն չունի ինչ-վոր փիլիսոփայելու բնագավառ, վոր զատված և առանձնացված լիներ դիտությունից. մատերիալիստական փիլիսոփայությունը նրա համար բնագիտության վերջին և ավելի ընդհանուր յեզրակացություններն են»: Այս բացարձակ կերպով հակասում է Լենինի այն պնդմանը, թե «առանց փիլիսոփայական հիմնավորման վոչ մի բնական դիտություն, վոչ մի մատերիալիզմ չի կարող դիմանալ բուրժուական իդեաների դրոհին և բուրժուական աշխարհայացքի վերականգնմանը»: Այս՝ հակասում է նաև Մարքսի պնդմանը, թե «փիլիսոփայությունը դառնում է պրոլետարիատի զենքը»: Այս՝ հակասում է նույնպես իրերի փաստական դրությանը: Բնագետների ահագին մեծամասնությունը խոստովանում է կամ սուբյեկտիվ իդեալիզմը, կամ լավագույն դեպքում՝ «տարերային մատերիալիզմը», այսինքն՝ մեխանիստական մատերիալիզմը, բայց վոչ դիալեկտիկականը: Ուստի հավասարության նշան դնել մարքսիզմի փիլիսոփայության և ժամանակակից բնագիտության միջև՝ նշանակում է մարքսիզմի մեջ խցկել բուրժուական փիլիսոփայությունը՝ վուլգար մատերիալիզմը կամ սուբյեկտիվ իդեալիզմը: Այս նշանակում է՝ մերժել մարքսիզմի՝ ժամանակակից բնագիտությունը դեկավարելու իրավունքը: Այս՝ նշանակում է՝ զրկել պրոլետարիատին նրա պայքարի և չինարարության ամենահզոր զենքերից մեկից—դիտության մարքսիստական մեթոդոլոգիայից: Պրոլետարիատն իհարկե լիակատար չափով պիտի ոգտվի բնագիտության նվաճումներից: Ավելին, նա չի կարող իր աշխարհայացքը ձևակերպել, իր հեղափոխական տեսությունը ձևակերպել առանց բնության իսկական դիտության, ևս առավել առանց ժամանակակից դիտությունները յուրացնելու: Լենինն, ավելի քան մարքսիզմի այլ տեսաբաններն, իր ուշադրությունը դարձնում եր բնագիտության նորագույն նվաճումների և տեսություններին վրա. ուստի կարելի չե ասել, վոր լենինիզմի՝ վորպես մարքսիզմի բարձր ատիճանի՝ ամենակարևոր գծերից մեկն է և այն բացառիկ ուշադրությունը դեպի ժամանակակից բնագիտությունը և այն դիալեկտիկական մոտեցումը բնագիտության, վորը մենք հանդիպում ենք Լենինի մոտ:

Աչխարհի իսկական ճանաչողությունը հարկավոր կլինի աշխատավոր հասարակության ամեն ժամանակ, նաև կոմունիզմի ժամանակ: Հարկավոր կդա և մարքսիստական փիլիսոփայությունը, վոր հանդիսանում է ընդհանուր մեթոդոլոգիա, «դուռ ուսումնք մտածողության մասին» (Ենգելս): Ուստի, մի քանի մեխանիստների պնդումը, թե փիլիսոփայությունը հարկավոր է առայժմ՝ մինչև կոմունիզմի իրականացումը և վոր նա կոմունիզմի ժամանակ ավելորդ կդառնա, այս ամենամեծ անհեթեթություն է և հակասում է այն բոլորին, ինչ վոր սովորեցրել են Մարքսը, Ենգելսը և Լենինը:

§ 85. ՄՆՆՇՆԵՎԻԿՈՂ ԻԴԵԱԼԻԶՄԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱ

Մեխանիստների հետ մղած պայքարի մեջ դեբորինականները մեխանիզմի վրա հարձակվում եյին այնպիսի դերքերից, վորոնք Մարքս-Լենինյան չեյին և վորոնք բաղա դարձան մենշևիկա-իդեալիստական ռեվիզիայի համար: Այս ռեվիզիային վերջին տարիներս մենք հանդիպել ենք տեսության զանազան բնագավառներում՝ քաղաքատնտեսության, դրականագիտության, պատմության և փիլիսոփայության մեջ:

*) Սիստեմի տակ ընկ. Բուխարինը հասկանում է հասարակություն, իսկ միջավայրի տակ՝ բնություն:

ՄԵՆՇԵՎԻԿՈՂ ԻԴԵԱԼԻԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ռեվիզիոնիզմի այս այլազանության սոցիալական բազան զարմանք կազմող ամենաբազմազան տարրերը, որոնք մեզ մոտ վերականգնման չրջանում որոշ աճում ստացան և որոնք տնտեսության և մարդկանց ու կառավարչական ապարատի մեջ գրավեցին մի չարք դիրքեր: Մի խոսքով, ուր ազգարնակչության ահագին մեծամասնության կազմում եր մանր-բուրժուազիան և ուր յերկրագործական տնտեսության համարյա վողջ մասսան կազմված եր մանր սեփականատիրական (և մասամբ կուլակային) տնտեսություններից, ուր քաղաքում ևս կար մանր-արդյունաբերական (և մասամբ մասնավոր կապիտալիստական) ձեռնարկությունների նշանավոր քանակություն,—այդպիսի յերկրում հող կար կապիտալիստական տարրերի որոշ զարգացման համար. չնայած պրոլետարական պետության ձեռքում իշխող բարձունքների առկայությունը: Հող կար նաև այդ պայմաններում կապիտալիստական տարրերի պայքարին՝ իրենց պահպանմանը, ամրապնդմանը և նույնիսկ այն տնտեսական-քաղաքական պայմանների զարգացմանը, որոնց ժամանակ հնարավոր և կապիտալիստական սկզբունքների գոյությունը և նույնիսկ զարգացումը: Այդ տարրերի պայքարն արտահայտվեց (և պիտի արտահայտվեր) ոչ միայն քաղաքական գործողություններում (որոնց մասին մենք խոսեցինք այս գրքի դանազան տեղերում), այլև իդեոլոգիական ինքնապաշտպանության և հարձակման մեջ: Պրոլետարիատի պրիմատուրայի պայմաններում, որը բոլոր տեսակի իշխող բարձունքները տվել և մարքսիզմ-լենինիզմին, մեզ մոտ պահվող չահագործող դասակարգերի իդեոլոգիական պայքարը չեր կարող չընդունել ընդհանրապես մանր-բուրժուական տեսություններն ի մասնավորապես մարքս-լենինյան տերմինոլոգիայով պճնված մենշևիկական տեսությունների ձև: Մենշևիկող իդեալիզմն ել մենշևիկական տեսությունների, II Ինտերնացիոնալի տեսությունների չարունակության ամենից նուրբ և քողարկված ձևն է և պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններին ամենից չատ հարմարվողը: Ռեվիզիոնիզմի այս այլազանության մեջ մենք գործ ունենք իդեալիզմի հետ, այն չափով, որ չափով մենք այստեղ հանդիպում ենք ձևի խմանը բովանդակությունից, հեգելականությանը, հեգելյան դիալեկտիկային, որը չի մշակվել ու վերածվել (ինչպես այդ պահանջում եր Լենինը) մատերիալիստական դիալեկտիկայի: Մենք այստեղ գործ ունենք մենշևիկող իդեալիզմի հետ (այլ ոչ թե ուղղակի մենշևիզմի հետ). որչափով այստեղ չկան մենշևիկական հայացքների ուղղակի և բացահայտ ձևավորումներ, բայց կա II Ինտերնացիոնալի տրադիցիաների վերակենդանացում՝ պրակտիկայից տեսության խղում, քաղաքականությունից և սոցիալիստական չինարարության կարևորագույն խնդիրներից փիլիսոփայության խղում, ապոլիտեկության և անկուսակցականության գիտության մեջ և այլն:

ԴԵՐՈՐԻՆՑԱՆ ԽՄԲԱԿԻ ՀԵԳԵԼԱԿԱՆՈՒԹՈՒՆԸ

Մարքսիզմի իդեալիստական ուռիզիան արտահայտվեց ամենից առաջ հեգելականության մեջ, որը հայտարարվեց իմացության տեսության և մատերիալիստական դիալեկտիկայի մշակման հարցերում: Հեգելականության տակ հարկավոր է հասկանալ ոչ թե հեգելյան դիալեկտիկայի բնդհանրապես ուսումնասիրությունն ու կիրառումը, այլ նրա ուսումնասիրությունն ու կիրառումը առանց քննադատության ու վերամշակման: Լենինը, ինչպես մենք արդեն գիտենք, պրոլետարական կուլտուրայի ձևավորման և զարգացման ամենաանհրաժեշտ պայմանը համարում եր բուրժուական ժառանգության ոգտագործումը: Իսկ առանձնապես կարևոր և նույնիսկ վճռական նա համարում եր հեգելյան դիալեկտիկայի ուսումնասիրությունը և յուրացումը, բայց նա պահանջում եր վերամշակել բուրժուական գիտության յուրացրած նյութը, վերամշակել և ջնջադատական վերաբերմունք ունենալ դեպի նա: Այս բանը նա պահանջում եր նաև հեգելյան դիալեկտիկայի վերաբերմամբ: Նա խոսում եր «մատերիալիստական տեսակետից Հեգելի դիալեկտիկայի սիստեմատիկ ուսումնասիրության» մասին: «Մարտական մատերիալիզմի նշանակության մասին» իր հոդվածի մեջ (գրած 1923 թ. և տեղեկված «ПОД ЗНАМ. МАРКСИЗМА» ամսագրի մեջ) Լենինը գրել է. «Հենվելով այն բանին, թե ինչպես է Մարքսը կիրառել մատերիալիստորեն հասկացած Հեգելի դիալեկտիկան, մենք կարող ենք և պիտի մշակենք այդ դիալեկտիկան բոլոր կողմերից, տպագրել ամսագրի մեջ Հեգելի գլխավոր յերկերից հատվածներ, մեկնաբանել նրանց մատերիալիստորեն, բացատրել Մարքսի մոտ դիալեկտիկայի կիրառման նմուշներով, ինչպես նաև տնտեսական ու քաղաքական հարաբերությունների մեջ դիալեկտիկայի այն նմուշներով, որոնցիսի նմուշներ հիչ չի տալիս նորագույն պատմությունը, առանձնապես ժամանակակից իմպերիալիստական պատերազմը և հեղափոխությունը: Այսպես ուրեմն, մարքսիստ-լենինիստի համար խնդիրը հանդիսանում է ոչ թե Հեգելի դիալեկտիկայի ուսումնասիրությունն որպես այդպիսին—դիալեկտիկան դիալեկտիկայի համար, այլ ուսումնասիրել այն մատերիալիստորեն պրոլետարիատի ու աչխատավոր մասսաների պայքարի ու չինարարության կոնկրետ իրականության կիրառումով: Ղեբորինականները չեն անում թե՛ մեկը և թե՛ մյուսը: Նրանց ամբողջ աչխատանքը համարյա բացառապես պատկում եր Հեգելի «Լոգիկայի գիտության» չուրջը, կրում եր բացառապես վերակացական բնույթ, համարյա ոչ մի կապ չուներ ժամանակակից քաղաքական ու տնտեսական խնդիրների՝ պրոլետարիատի դասակարգային պայքարի և նրա սոցիալիստական չինարարության հետ և Հեգելից հեռուն չեր գնում չե թե դեպի Մարքսը, Էնգելսը և Լենինը, այլ և նույնիսկ դեպի Ֆեյերբախը: Մատերիալիզմի տարրերի մեքենայական միավորումը Հեգելի չվերամշակված դիալեկտիկայի հետ դեբորինականների աչխատությունների մեջ չեր կարող իհարկե թեկուզ չնչին չափով առաջ չարժել դիալեկտիկական մատերիալիզմի գործը, ընդհակառակն, ստացվեց իդեալիստական տարրերով մատերիալիզմի որոշ աղրոտում: Իսկ բնկ. Դեբորինը դիալեկտիկական մատերիալիզմի մասին նույնիսկ խոսում է որպես «բնության ու պատմության մատերիալիստական հասկացողության հետ Հեգելի դիալեկտիկական մեթոդի սննդեղի» մասին, մոռանալով, որ Հեգելի դիալեկտիկական մեթոդը իդեալիստական է և հանդիսանում է ոչ որ այդ պատճառով, նրան պարզապես միացնելով մատերիալիզմին, դիալեկտիկական մատերիալիզմ չի ստացվի... Ճիշտ է, բնկ. Դեբորինը մյուսպես խոսում է մատերիալիստական դիալեկտիկայի կարևորության մասին, բայց իրոք նա դրա տակ հասկանում է «բնդհանրական մեթոդաբանություն», որը «սպիտի թափանցի բոլոր կոնկրետ ու էմպիրիկ գիտություններ, որոնցհետև հանդիսանում է այսպես կոչված գիտությունների հանրահաչիվը (ալգեբրան), որը ներքին կապ է մտցնում կոնկրետ բովանդակության մեջ»:)*

Մտցնել կապը դրսից՝ դրանից արդեն սուբյեկտիվ իդեալիզմի հոտ է փչում, թեպետ և բնկ. Դեբորինը չուսպում է պարզաբանել, որ բնության իրեն մեջ կապ կա... Համենայն դեպս մենք բնկ. Դեբորինի մոտ յերբեք չենք գտնում այնպիսի ձևակերպումներ, որոնք խոսեն այն մասին, թե դիալեկտիկայի օրենքները հանդիսանում են նյութական բնության օրենքների անդրադարձումը, հանդիսանում են մեր իմացության աուտիճաններ: Իսկ չե որ միայն անդրադարձման տեսությունն է հնարավորություն տալիս մատերիալիստորեն հասկանալու դիալեկտիկայի հիմնական օրենքները:

Դիալեկտիկայի փոխարեքսումը «մարքսիստական մեթոդոլոգիայի», հակադրությունների միասնության օրենքի հասկացումը որպես հակադիր մոմենտների պարզ փոխադարձ ներգործություն, դիալեկտիկական մեթոդի խղումը նրա մատերիալիստական (կամ իդեալիստական) բնութագրից և դեբորինականության մի չարք սխալ դրույթները, այս ամենը զարմանում է

*) Դեբորին. Դիալեկտիկա և բնագիտություն, էջ 31

նրան իդեալիստական բնույթ ունեցող վիլիսոփայական և սոտեսա-քաղաքական ռևիզիոնիզմի տեսակներից մեկը և մերժեցնում է նրան Պլեխանովի փիլիսոփայական սխալներին ու մենշևիզմի քաղաքական մեթոդոլոգիային։

ՊԼԵԽԱՆՈՎԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՅԵՎ ԴԵՐՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՏԻԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՆՇԵՎԻԶՄԻ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՅԻՆ

Պլեխանովի սխալ դրույթներին դերորինականությունը ամենից շատ մերձեցնում է անդրադարձման տեսության անտեսասոությունը։ Դերորինականները հանցանքը կարելի չէ համարել միայն, որ նրանք գնահատում են Պլեխանովին՝ որպես մարքսիզմի տաղանդավոր տեսաբան (այդպես դնահատել են նրան ինքը Լենինը և պրոլետարիատի տեսությունն ուսումնասիրող բոլոր լենինիստները), այլ այն, որ նրանք վերագնահատում են նրան և առանց քննադատության ընդունում են նրա բոլոր դրույթները, նույն թվում նաև նրա սխալ դրույթները, որոնք (ինչպես մենք տեսանք վերևում) հիմք դարձան մենշևիզմի քաղաքական մեթոդոլոգիայի համար։ Դերորինը Պլեխանովից վերցնում է այն, որ վերջինս մոտ հանդիսանում է ամենավատը, այն է՝ ջատագովական (ապոլոգետիկ) վերաբերմունքը դեպի Փեյերբախը, իմացության տեսության մեջ մարդաբանական սկզբունքի ճանաչումը, սուբյեկտ-օբյեկտ պրոբլեմի լուծումը պատմական և հեղափոխական իրականության դուրս։ Հայտարերելով, որ Փեյերբախի սկզբունքը համբողջովին դիալեկտիկական է», ընկ. Դերորինը սքողում է Փեյերբախի ու Մարքսի միջև յեղած տարբերությունը և անտես է առնում պրակտիկայի վորակապես տարբեր ձևերը։ Այստեղից էլ բղխում է դերորինականության վոչ հեղափոխականությունը, ապոլիտիկությունը և մենշևիկական տեսքերը։

Ընկ. Դերորինի իմացության տեսության խղումը դիալեկտիկայից, նրա խոստովանությունը, որ «իմացության տեսությունը կատարել է վորոշ պատմական դեր և կարող է հետաքրքրական», նրան ազդակցում է վոչ թե վորոշ պատմական դեր և կարող է հետաքրքրական», նրան ազդակցում է վոչ թե Հեգելի, Մարքսի, Ենգելսի և Լենինի ճիշտ դրույթների հետ, այլ Պլեխանովի սխալ դրույթների հետ։ Իսկ մարքսիստական-լենինյան հակացությունը Հեգելի դրույթը դիալեկտիկայի, լոգիկայի և իմացության տեսության միասնության մասին ընդունում է այն տարբերությամբ միայն, որ այդ միասնությունը մարքսիզմը տեսնում է մատերիալիստական հիման վրա։

Ճշմարտության հետևողությունը, որ հատկանշում է Պլեխանովի փիլիսոփայությունը, Դերորինականությունը վոչ միայն ընդունում է, այլ և խորացնում է այն։ Սա—ուրիշ մոմենտների հետ միասին—հանդիսանում է շատ կարևոր մոմենտ մենշևիզմի մեթոդոլոգիայի մեջ և տալիս է դերորինականության մենշևիկող իդեալիզմի բնույթ։

ԼԵՆԻՆԻՆ ԹԵՐԱԳՆԱՀԱՏԵԼԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԻԶՄԸ ՎՈՐՊԵՍ ՄԱՐՔՍԻԶՄԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆ ԶԸՆԴՈՒՆԵԼԸ

Վերևում բոլոր ասածներից պարզ և դառնում, թե ինչու դերորինականները թերագնահատում են Լենինին, վորպես փիլիսոփայի, չեն ճանաչում լենինիզմը մարքսիզմի փիլիսոփայության առանձին բարձրադույն ետապը։ Ընկ. Կարևը համարում է, վոր լենինիզմը մարքսիզմ է միայն պրակտիկայում և վոր նա չի հանդիսանում «մարքսիզմի մեջ նոր դարաշրջան»։ Ընկ. ընկ. Դերորինը, Լուպոլը, Ստենը և ուրիշ մենշևիկող իդեալիստները հետևում են մոտավորապես նույնպիսի հայացքի։ Նրանց համար Լենինը՝ «պրակտիկ է», և լավագույն դեպքում՝ «Պլեխանովի աշակերտը» կամ նրան չարունակողը։ Այս կողմից նրանք տիրահռչակ Ռյազանովից հետևն չեն գնում, վորը բացառում էր լենինիզմի գոյության իրավունքը։ Նրանք բան նյության համաձայնվում են տրոցկիստական տեսաբան Ց. Պ. Պրեորրաժենսկու հետ, վորը ճանաչում է, թե Մարքսի դիալեկտիկական մեթոդը լրենից ներկայացնում է ինչ-վոր ավարտված մի բան և այդ պատճառով Լենինը կարող էր միայն «պաշտպանել» ու «կիրառել» այն, և այ թեքումի տեսաբան ընկ. Բուխարինի հետ, վորը յենթադրում է, թե լենինյան մեթոդոլոգիան վերադարձ է միայն դեպի մարքսիզմը, ճևավորված դեռ «եպոննեների» առաջ՝ 1848 թվի հեղափոխության նախնյում։ Ինչպես դերորինականները, այնպես և մեխանիստները սիրում են հաճախ պատկերացնել գործն այնպես, վոր Պլեխանովը և Լենինը «լրացնում են միմյանց»։ Համեմատաբար վաղուց արդեն, 1924 թվին, յերբ Լենինի վրա բոլշևիկյան մեքանի չրջաններում նայում էին վորպես «աշակերտի» ու «պրակտիկի» միայն Ստալինն էր, վոր գնահատեց Լենինին վորպես մարքսիզմը նոր (թեպետ և մարքսիզմի հյությունից բղխող) գաղափարներով հարստացնող փիլիսոփայի և լենինիզմը, վորպես մարքսիզմի նոր աստիճան։

Ի՞նչ նոր բան է ավել Լենինը և լենինիզմը։ Ընկ. Ստալինը պատասխանում է. «Լենինիզմը իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների նախորյակի մարքսիզմ է»։ Լենինը պրոլետարիատի փիլիսոփան էր, վոր հասկացել էր ամբողջ կապիտալիստական սիստեմի՝ տնտեսական բազիսից մինչև իդեոլոգիական վերնաշենքերի՝ ճգնաժամի վողջ խորությունը իմպերիալիզմի նախորյակում։ Նա վոչ միայն թափանցեց իմպերիալիզմի տնտեսական ու քաղաքական հյության մեջ, այլ և առաջինը բացեց մարքսիստների դիալեկտիկորեն այն մեթոդոլոգիական ճգնաժամը, վորը կրում է դիալեկտիկների ամենից բնագիտությունը, դիալեկտիկները, վորոնք չեկին տեղավորվում իդեալիստական կամ մեխանիստական մեթոդոլոգիայի չրջանակներում։ Նա ցույց տվեց ժամանակակից բնագիտության համար յելքի ճանապարհը՝ այդ փակուղուց դեպի դիալեկտիկական մատերիալիզմ։ Նա տվել է հակաիմպերիալիստական հոսանքների բոլշևիկյան քննադատությունը, վորանց հետ այժմ էլ հարկ է լինում պայքարել։ Նա առաջին պլանի վրա չէ քաշել այն, վոր Պլեխանովը թողել էր սոփերի տակ, այն է հեգելյան դիալեկտիկան, բայց միևնույն ժամանակ նա պահանջել է նրա մատերիալիստական վերամշակումը և ցույց է տվել այդ վերամշակման ուղիները։ Նա անդրադարձման տեսությունը տարել է իմացության իսկական մատերիալիստական դիալեկտիկայի բնագիտի։ Դիալեկտիկայի, լոգիկայի և իմացության տեսության միասնության նրա բմբռնությունը, հակադրությունների միասնության հարցի՝ վորպես մատերիալիստական դիալեկտիկայի հյության՝ նրա մշակումը, մատերիալիստական դիալեկտիկայի մի չարք հարցերի վերաբերյալ նրա խորը դիտողությունները, փիլիսոփայության կուսակցականության նրա հիմնավորումը, փաստական իրականության բոլոր հարցերի նրա դիալեկտիկական-մատերիալիստական մեկնաբանությունը և շատ ուրիշ բաներ, այս ամենը լենինիզմը դարձնում է հոսանք մարքսիզմի զարգացման մեջ՝ վորպես պրոլետարիատի փիլիսոփայություն։ Այս փաստի անհակացումը, վոր յերբեմն են բերում բոլոր յերանգի ոպորտունիստները, միանգամայն համաձայնում է մեր մեծ բուռն հոսանքի նրանց անհակացման հետ, մի հոսանք, վորը պրոլետարիատի առաջ դնում է մեծագույն հեղափոխական խնդիրներ՝ դործողության ու մտածողության բոլոր ասպարեզներում...

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԶՄԻ ՀԱՐՑԵՐԸ, ՍԽԱԼ ԴՐՈՒՄ ՅԵՎ ՓԱՂԱՓԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Դերորինականության ապոլիտիկությունը առանձնապես ուժեղ կերպով արտահայտվում է դերորինյան տեսաբանների անտարբերության մեջ դեպի պատմական մատերիալիզմի հարցերը։ Դերորինականները ամենից շատ արտահայտվել են իմացության տեսության և դիալեկտիկայի հարցերի վերաբերյալ։ Դա շատ լավ կլիներ, յեթե նրանք ընթանային Լենինի հետքով և կատեին, ինչպես այդ անում է նա, բոլոր փիլիսոփայական հարցերը կոնկրետ հեղափոխական իրականության հետ, բայց նրանք խորշում էին այդ իրականությունից, մնում էին նրա կոմնանկի հանդիսատեսները, այդ պատճառով էլ նրանք տեսության մեջ համարյա չէին չոչափում հասարակական կարդի հարցերը։ Իսկ այն սակավ դեպքերում, յերբ նրանք արտահայտում էին այդպիսի հարցերի վերաբերյալ, նրանք համարյա միշտ

ընկնում եյին մարքսիզմի աղավաղման մեջ: Իմպերիալիզմի պրոբլեմը ընկ. Դեբորինը մեկնաբանել է կաուցկիական ձևով, թեպետ և այդ մեկնաբանությունը քողարկվում եր լենինյան քաղվածքներով: Պրոլետարիատի դիկտատուրան քննարկվում եր, վորպես ինչ-վոր վերացական և վերակառուցման շրջանի ակտուալ խնդիրներից մեկուսացած մի բան: Դասակարգերը մեկնաբանվում են տրոցկիստական ձևով: Պրոլետարական կուլտուրայի և կուլտուրական հեղափոխության հարցերը բացատրվում են մենշևիզմի, տրոցկիզմի և աջ ոպորտունիզմի վոգով: Բարոյականության հարցերը քննարկվում են մետաֆիզիկորեն՝ կաուցկիական ըմբռնողության վոգով և այլն:

Այս ամենը չեր կարող դեբորինականներին չտանել դեպի մի շարք քաղաքական սխալներն ու թեքումները:

ՊԱՅՔԱՐ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԻ ՎՐԱ

Այս հիմք տվեց Համ. Կ(բ)Կ Կենտկոմին վորոշելու, վոր «Под знам. марксизма» ամսագիրը գլխավորող դեբորինյան խմբակը յեղել է «միանգամայն սխալ դրումից, վորը բղխում է լենինյան ետապի վորպես մարքսիզմի փիլիսոփայության զարգացման մեջ նոր աստիճանի անհասկացումից» և վոր այդ խմբակը «խզելով փիլիսոփայությունը պրակտիկայից, չանցկացնելով հասարակական կյանքում փիլիսոփայության ու բնագիտության կուսակցականությունը... վերակենդանացրել է II Ինտերնացիոնալի ամենավնասակար տրադիցիաներից ու դոգմաներից մեկը՝ խզումը տեսության ու պրակտիկայի միջև, դլորվելով մի շարք կարևորագույն հարցերի մեջ մենշևիկող իդեալիզմի դիրքերի վրա»: Միևնույն ժամանակ Կենտկոմը մատնանշում է մեխանիցիզմի հետ «Под знам. марксизма» ամսագրի մղած պայքարի վրա, վորպես վորոշ նվաճում: Այդ պատճառով էլ Կենտկոմը վորոշում է, վոր պայքարը պետք մղել յերկու ճակատի վրա. «մարքսիզմի մեխանիստական ռևիզիայի դեմ վորպես ժամանակակից շրջանի գլխավոր վտանգի դեմ, ինչպես և մարքսիզմի իդեալիստական աղավաղման դեմ, ընկ. ընկ. Դեբորինի, Կարևի, Ստենի և ուրիշների խմբակների դեմ»: Մենշևիկող իդեալիզմի կուսակցական փիլիսոփայության մերկացումը վոչ միայն չի նշանակում մեխանիստական ռևիզիայի հետ մղած պայքարի թուլացումը, վոր հանդիսանում է աջ ոպորտունիզմի տեսական բազան, այլ և պարտավորեցնում է ուժեղացնել պայքարը մարքսիզմ-լենինիզմի այդ ռևիզիայի հետ վորպես տվյալ ետապում գլխավոր վտանգի հետ: Փիլիսոփայական ճակատում կուսակցությունը հաղթանակող դուրս կգա՝ միասնական ու տեսականապես ամուր միաձուլված՝ այն ժամանակ միայն, յերբ նա վճռական պայքար կմղի ռևիզիոնիզմի բոլոր այլադանությունների հետ:

§ 69. ԱՋ ԹԵՔՄԱՆ ՅԵՎ ՏՐՈՑԿԻԶՄԻ ՏՆՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպես ընդհանուր փիլիսոփայական պրոբլեմների, այնպես և պատմական մատերիալիզմի պրոբլեմների քննարկման ժամանակ մենք արդեն շոշափեցինք այն հայացքները, վորոնք հատուկ եյին աջ թեքումին ու տրոցկիզմին: Մենք տեսանք, վոր աջերի ու տրոցկիստների լենինյան գծի դավաճանությունը քաղաքականության ու պրակտիկայի մեջ կապված է նաև մեթոդոլոգիական բնագավառում մարքսիստական-լենինյան դիրքերից հեռացման հետ: Մեզ մնում է այստեղ միայն ամփոփել ասածները:

Սկսենք տրոցկիզմի տեսական հիմքերի բնութագրումով:

Ինչո՞ւմն է կայանում տրոցկիզմի եյությունը: Ամփոփելով տրոցկիզմի հետ մղած պայքարը, ընկ. Ստալինը XVI կուսհամագումարում իր քաղհաշվետվության մեջ հետևյալ կերպ է բնորոշել տրոցկիզմի այդ եյությունը:

«Տրոցկիզմի եյությունը նախ և առաջ կայանում է մեր յերկրի բանվոր դասակարգի և գյուղացիության ուժերով ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման հնարավորության բացասման մեջ... Տրոցկիզմի եյությունը կայանում է, յերկրորդ, գյուղի սոցիալիստական շինարարության գործում գյուղացիության հիմնական մասսային ներքաշելու հնարավորության բացասման մեջ... Տրոցկիզմի եյությունը վերջապես կայանում է կուսակցության շարքերում յերկաթե դիսցիպլինայի անհրաժեշտության բացասման մեջ, կուսակցության ներսում ֆրակցիոն խմբավորումների ազատությունը ճանաչելու մեջ, տրոցկիստական կուսակցության կազմակերպման անհրաժեշտությունը ճանաչելու մեջ»:*)

Տրոցկիզմի մատնանշած դրույթներից առաջինը հանգչում է II Ինտերնացիոնալի լիդերների կողմից այլանդակված այսպես կոչված «արտադրողական ուժերի» տեսության վրա: Ըստ Տրոցկու, «Սոցիալիստական տնտեսության իսկական վերելքը Ռուսաստանում հնարավոր կդառնա Յեվրոպայի կարևորագույն յերկրներում պրոլետարիատի հաղթանակից հետո միայն», քանի վոր իբր թե վճռական գործոնը հանդիսանում է «արտադրողական ուժերի մակարդակը»: «Արտադրողական ուժերի» այս այլանդակված տեսության համաձայն, նոր սոցիալիստական արտադրական հարաբերությունները յերևան են գալիս վորպես տարերային արդյունք, վոր ավտոմատիկորեն ջոկվում է արտադրողական ուժերի համապատասխան կացությամբ: Արտադրական հարաբերությունները հնազանդորեն հետևում են արտադրողական ուժերին, գտնվելով նրանց հետ մեքենայական պատճառական առնչության մեջ: Բացասվում է հեղափոխական դասակարգի դերը վորպես մեծագույն արտադրողական ուժի, բացասվում է տնտեսության զարգացման համար տվյալ տնտեսական սիստեմի վճռական նշանակությունը:

Տրոցկիզմն այլանդակում է մարքսիզմը նույն այն յեղանակով, վորպիսի յեղանակով այլանդակում եր Բերնշտեյնը, այն է՝ խարդախությամբ փոխելով Մարքսի, Ենգելսի դետերմինիզմը «մեխանիզմով», այն տարբերությամբ միայն, վոր Բերնշտեյնը, չխզելով «դետերմինիստական» հասկացողությունը «մեխանիստական» հասկացողության հետ, բացորոշ ըմբոստացավ մարքսիզմի դեմ, մեղադրելով նրան ֆատալիզմի մեջ, իսկ տրոցկիզմը, դուրս գալով մարքսիզմի դրոշի տակ, նույնացնում է «դետերմինիզմը» «մեխանիզմի» հետ և կանգնում է ֆատալիզմի հողի վրա:

Սկզբնապես մի քանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած, կապիտալիստական յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին Լենինի թեզին Տրոցկին հակադրում է իր թեզը, թե սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է միայն վորպես Յեվրոպայի մի քանի հիմնական յերկրների (Անգլիայի, Ռուսաստանի, Գերմանիայի) հաղթանակ, միացած Յեվրոպայի միացյալ նահանգների մեջ: Տրոցկու մոտ այս կապված է այն հաստատման հետ, վոր մի յերկիրը համաշխարհային տնտեսության սիստեմի մեջ «աշխարհագրական տերմին» է միայն և իրենից վոչ մի ռեալ բան չի ներկայացնում: Այսպիսով յենթադրվում է, վոր նույնիսկ այն յերկիրը, ուր հաստատված է պրոլետարիատի դիկտատուրա, դեռ դուրս չի ընկնում իմպերիալիստական շրջանից, իմպերիալիստական զարգացման օրինաչափությունների վոլորտից: Անցողիկ շրջանի օրինաչափությունները նույնացվում են համաշխարհային իմպերիալիզմի օրինաչափությունների հետ, բացասվում է այդ յերկրի տնտեսական ինքնուրույնությունը, ճանաչվում է միայն նրա տնտեսական կախումը ուրիշ յերկրներից: Տրոցկիզմին հատուկ իրերի ըմբռնողության վերացականորեն՝ սխոլաստիկ և ձևականորեն՝ տրամաբանելու յեղանակը դուրս է գալիս այստեղ իր վողջ պարզությամբ: Իրերը մտածվում են իրենց աբսոլյուտ կեցության մեջ, աբսոլյուտ սահմանազատման մեջ, վորպես փոխադարձաբար բացառող հակադրություններ միայն: Քանի վոր տրված է մի յերևույթի կախումը մյուսից, ապա նշանակում է անհնարին է ինքնուրույնությունը: Համաշխարհային կապերը պարզեցնում են և իջեցնում են մինչ մետաֆիզիկական միակողմանիությունը: Իսկ դիալեկտիկան ուսուցում է, վոր ինչ վոր բանը ռեալ կերպով գոյություն ունի իր հակադրության հետ միասնության մեջ: «Պետք տարբերել,—ասում

*) Քաղված է Ստալինի «Լենինիզմի հարցերից»

և ընկ. Ստալինը,—յերկրներից վոմանց կախումը մյուսներից և այդ յերկրների տնտեսական ինքնուրույնությունը։ Առանձին ժողովրդատնտեսական միավորների բացարձակ անկախության բացառումը դեռ չի նշանակում և չի կարող նշանակել այդ միավորների տնտեսական ինքնուրույնության բացառում»։*)

Վերցնելով «ինքնուրույնության» և «կախվածության» բնորոշումներն իրենց բացարձակ հակադրության մեջ, Տրոցկին գործը հանգեցնում է այն բանին, վոր մեր ժողովրդական տնտեսությունը հենց կախման մեջ է կապիտալիստական չրջապատից, վերածելով «այդ կախվածությունը կապիտալիստական համաչխարհային տնտեսության հետ մեր տնտեսության մեջ» (Ստալին) ու այդ կերպ չեղվում հավասարակշռության տեսության դիրքերի վրա, վորը զարգացման աղբյուրը փոխադրում է դուրս՝ չրջակա միջավայրի մեջ։ Բացառվում է ավյալ իրի ներքին բնության, ներքին որինաչափության դերը, իրի, վորը վորոշ կերպով առանձնահատուկ է դարձնում դրսի ազդեցությունը։

«Մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության բացառումը, ինչպես հայտնի յե, Տրոցկին կապում է իմպերիալիզմի եպոխայում զարգացման անհավասարաչափության լենինյան որենքի ուղղակի ռեվիզիայի հետ, մի ռեվիզիա, վոր չփոթում է կապիտալիզմի որոք զարգացման անհավասարաչափությունը կապիտալիստական յերկրների զարգացման մակարդակի միջև յեղած տարբերության հետ» (Ստալին)։ Տրոցկիզմն այսպես դարձյալ սայթաքում է «այդ իսկ տեղում», մատնելով իր դիալեկտիկորեն մտածելու անընդունակությունը, չհասկանալով հակադրության անցնելու դիալեկտիկական որենքը։ Այսպես ուրեմն տրոցկիզմը, հավատարիմ ձևական-տրամաբանական չարքային, հաստատում է, վոր առանձին յերկրների հավասարեցման ճամբը կապիտալիզմի որոք թուլացնում է զարգացման անհավասարաչափությունը և այստեղից այն յեղրակացությունն է անում, թե «ճիշտ չէ, վոր կապիտալիստական զարգացման անհավասարաչափությունը իմպերիալիստական եպոխայի սկզբից առաջ փոքր ևր»։ Իսկ դիալեկտիկան ուսուցում է, վոր չարժումն ընթանում է հակադրությունների միջոցով ըստ Ֆորմուլայի՝ «բաժանում միացման համար», վոր ինչ վոր բան առաջացնում է իր հակադրությունը։ Այսպես ուրեմն «հավասարեցումը իմպերիալիզմի չրջանում զարգացման անհավասարաչափությունն ուժեղացնելու պայմաններից մեկն է... Տեխնիկայի անասելի զարգացումը և կապիտալիստական յերկրների զարգացման մակարդակի մեջ ուժեղացող հավասարեցումը հնարավորություն են ստեղծել և հեշտացրել են մի քանի յերկրների մյուսներից թռիչքաձևման առաջացումն գործը, պակաս հզոր, բայց արագ զարգացող յերկրների կողմից ավելի հզոր յերկրներին ասպարեզից դուրս քշելու գործը»։**) Սրանից նույնիսկ պարզաքի հոտ է փչում։ Իսկ մինչդեռ այս «հակասական ֆորմուլան անդրադարձնում է մարքսյան դիալեկտիկայի այն կենսական ճշմարտությունը, վորը բայլևիկներին հնարավորություն է տալիս վերցնելու ամենաանտանելի ամրոցները»։***)

Անցնենք այժմ տրոցկիզմի եյության կազմող յերկրորդ կետին։

Գյուղում սոցիալիստական չինարարության գործի մեջ գյուղացիության հիմնական մասսային ներքաշելու հնարավորության բացառումը տրոցկիզմի կողմից արտահայտում է, մի կողմից, անհավատություն դեպի պրոլետարիատի ուժերը և ընդունակությունները, մյուս կողմից՝ անհավատություն դեպի գյուղացիական չարժման հեղափոխական հնարավորությունները։ Քննարկելով գյուղացիությունը վորպես հետադիմական հոծ մի մասա, տրոցկիզմը անտես է անում կապիտալիզմի զարգացման ներքին-հակասական բնույթը, վորը ավյալ դեպքում արտահայտվում է այն բանի մեջ,

*) «Ոպոզիցիայի մասին» ժողովածու, 535

**) Ստալին, «Ոպոզիցիայի մասին», էջ 515—516.

***) Ստալին, XVI կուսհամագումարի քաղաքականությունը.

թե կապիտալիզմը պահպանում է մանր ապրանքային արտադրության գոյության հիմքը, վորչափով նա արթադրծում ու պատսպարում է մանավոր տնտեսության սկզբունքը վոտնձգություններից և դրանով էլ անում է հետադիմական տենդենցները գյուղացիության մեջ, բայց միևնույն ժամանակ բանդում է մանր ապրանքային արտադրության հիմքը, վորչափով կապիտալի զարգացումը բերում է մանր արտադրողին կործանման և բայբայում, դրանով էլ առաջացնելով ու զարգացնելով հեղափոխական տենդենցները գյուղացիության մեջ։ Պատմության մատերիալիստական հասկացողության բացակայությունն էլ, վոր պարտավորեցնում է մարդկանց հասարակական գիտակցությունը յեզրակացնել նրանց հասարակական կեցությունից, նրանց պոլության տնտեսական պայմաններից, խանգարում է Տրոցկուն տեսնել գյուղացիության հեղափոխական հնարավորությունները և հասկանալ, վոր «գյուղացիության հիմնական մասսայի արմատական չահերը ամբողջովին և լիովին զուգադիպում են պրոլետարիատի չահերին...այդ պատճառով էլ իրենց կատարյալ արտահայտությունն են գտնում պրոլետարիատի ծրագրի մեջ, խորհրդային կառավարության ծրագրի մեջ» (Ստալին)։

Բացատրելով գյուղացիության իր հետևից տանելու պրոլետարիատի ընդունակությունը, տրոցկիզմը դրանով հենց նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրան բուրժուազիայի դիկտատուրայի հետ, դիտելով պրոլետարիատի դիկտատուրան ևս վորպես փոքրամասնության դիկտատուրա մեծամասնության վրա և վերածելով նրանց միջև վողջ տարբերությունը բացահայտ ու դիմակավորված դիկտատուրայի միջև յեղած արտաքին տարբերության։

Յելնելով ամբողջությամբ մենչևիկյան դիրքերից, վորոնք բացառում են գյուղացիության հեղափոխական հնարավորությունները, բայց առաջարկելով այնուամենայնիվ չսպասել իշխանության վերցնելուն, մինչև վոր պրոլետարիատը յերկրի մեջ աղգարնակչության մեծամասնությունը կկազմի, այլ վերցնելով բայլևիկներից հեղափոխական պայքարի կոչը,—տրոցկիզմը դրանով յերևան է հանում միայն իր եկլեկտիկ բնույթը, վորն իր սկզբունքային հիմնավորումն և ստացել կուսակցության ու նրա զարգացման վրա Տրոցկու ունեցած հայացքների մեջ։ Տրոցկիզմը բացառում է կուսակցության մեջ յերկարեե դիսցիպլինայի անհրաժեշտությունը, պնդելով նրա մեջ ֆրակցիոն խմբավորումների ազատության վրա։ Կուսակցության միաձուլության լենինյան սկզբունքին, կառուցված ինքնաքննադատության և կուսակցության մեջ առաջացած ներքին հակասությունների հաղթահարման հիման վրա, տրոցկիզմը հակադրում է կենտրոնականության եկլեկտիկ դաշտավարը, հակասությունների ազատ կենակցությունը՝ հակադրությունների անկզբունք «միավորումը», հակասությունների սոփեստական խաղը։ Հակասությունների այս խաղը մատնանշել է դեռ Մարքսը վորպես մի դիծ, վոր հատուկ է հենց մանր բուրժուայի եկլեկտիկ բնույթին. «Մանր բուրժուան կազմված է՝ «մի կողմից» և «մյուս կողմից» բաներից։ Այդպես է նա իր տնտեսական չահերի մեջ, ուստի և նա այդպես է նաև իր քաղաքականության մեջ, իր կրոնական, դիտական ու գեղարվեստական հայացքների մեջ... Նա կենդանի հակասություն է։ Իսկ յեթե նա, ընդհանրի, Պրուդոնի նման, մի փիչ արամիտ մարդ է, ապա նա չուտով սովորում է իր սեփական հակասություններով խաղալ և ձևել նրանցից, ըստ ժամանակի, անցապատելի, բարձրադոչ, յերբեմն ամոթալի, յերբեմն էլ փայլուն պարադոքսներ։ Գիտական շաղատանությունը և քաղաքական կոմպրոմիսի վոգին անխզելի կերպով կապված են այդպիսի տեսակետի հետ»*) (ընդգծումը մերն է։—Հեղինակներ)։

Իր վողջ կոնցեպցիայի մեջ տրոցկիզմն անց է կացնում բուրժուական տեսակետ, մերթ քողարկված համաչխարհային հեղափոխության հաղթանակի «հեղափոխական», մերթ էլ քողարկված «ներքին կուսակցական դեմոկրատական» ֆրազայով։ «Պարտվողականությունը գործնականում վորպես

*) Մարքս—«Փիլիսոփայության աղքատացումը»

բովանդակություն, «ճախ» ֆրազաներն ու «հեղափոխական–ավանդույթներ» *տական պլյոմները՝ վորպես ճև, վորը քողարկում և ռեակցիա է անում պարտվողական բովանդակությունը, այսպես է տրոցկիզմի երևույթներ»* (Ստալին):

Բացելով մանր–բուրժուական «հեղափոխական» ֆրազայի մեթոդոլոգիական արմատները, Լենինը գրում է. «Ուժերի հարաբերակցության մասին, ուժերի հաշվառման մասին մեր ֆրազաները «ճախ են»... վորովհետև նրանց մոտ առանձնապես քիչ է պրոլետարականը և առանձնապես շատ է մանր–բուրժուականը... չեն կարողանում մտածել... Սրա մեջ է մարքսիզմի երևույթը, իսկ նրանք «երևույթյան կողքովն են անցնում»: «Չեն կարողանում մտածել»՝ այս նշանակում է կոնկրետ–պատմական մոտեցման բացակայություն, վերացական–իդեալիստական սխեմատիզմի առկայություն: Այստեղից էլ բղխում է տրոցկիզմի համար բնորոշ թռչելը անմիջական աստիճանների վրայից, վոր կազմում է պերմանենտ հեղափոխության, նրա տեսության և նրա վողջ տակտիկայի հոգին: Այստեղից՝ խզումը մասսաներից, նրանց իր հետևից տանելու անընդունակությունը: Համապատասխան կերպով՝ ամենախորն անհավատություն պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիական մասսաների ստեղծագործական ուժերի մեջ, նրանց նկատմամբ աղայական–նիհիլիստականի փոխվող վերաբերմունք, և դրա համար միանգին քաղբենիական լինդիվիդուալիզմ, էննադատաբար մտածող անհատի պաշտամունք, հակված դեպի վերավարչականացումը և այլն:

Այսպես է տրոցկիզմն իր, այսպես կոչված, նախնական զգեստավորումով և իր բոլոր վերապրեստավորումներով: Տրոցկիզմի այս գծերը մենք ամենաբացահայտ կերպով տեսնում ենք «ճախլիկ» տարրերի մոտ, վորոնք այս կամ այն ձևով վերարտադրում են տրոցկիստական ու կիսատրոցկիստական մոտիվները: Այսպիսի սուբյեկտիվ հոգեբանության համար, վորը «լոպպազանում և պարծենում է», վառ որինակ կարող են ծառայել «ճախլիկները»—Ստենի, Շացկինի և ուրիշների մոտերս կատարած բոլոր յեղուլթները:

Քննադատաբար մտածող անհատի պաշտամունքն իր ուղղակի և բացահայտ արտահայտությունը դտնում է Ստենի ազդարարման մեջ, թե կոմյերիտականի մտանձնյա փորձն առաջնություն (պրիմատ) ունի անցյալի և ներկայի մելիոնների փորձի վրա, վոր մարմնացել են մեր կուսակցության գլխավոր գծի մեջ: Դեպի մասսաների փորձն ունեցած այս ազդայական–նիհիլիստական վերաբերմունքն արմատավորվում է այստեղ մենշևիկող իդեալիզմի այն փիլիսոփայական հայացքների մեջ, վորոնք կոնկրետ պատմական մոտեցումին դերադասում են վերացական ընդհանրությունների աշխարհը: «Այստեղ քննադատությունն իր կատարելության մեջ հասնում է վերացականության այնպիսի բարձունքների, վորտեղից նրան միայն իր մտքի սեփական ստեղծագործությունները և ամեն իրականության հակասող ընդհանրականություններն են պատկերանում վորպես «ինչ վոր» կամ ավելին՝ վորպես «ամեն ինչ»: Բանվորը վոչինչ չի ստեղծում, վորովհետև նա ստեղծում է միայն «առանձնականը», այսինքն ղգայական, չոշափելի, անբան և քննադատության դուրկ առարկաները, վորոնց տեսքը միայն սարսափեցնում է մաքուր քննադատությանը, վողջ իրականը, վողջ կենդանականն անքննադատական է, «մասսայական է» և այդ պատճառով «վոչինչ է», և միայն քննադատական քննադատության իդեալական, ֆանտաստիկ ստեղծագործություններն են «ամեն ինչ»: Այս խոսքերը գրել է Մարքսը «Սրբազան Ընտանիքի» հասցեին ուղղված, բայց նրանք դեռ չեն կորցրել իրենց թարմությունը և կարող են կիրառելի լինել վորպես վառ բնութագիր հեղյան ընդհանրականությունների ու տրոցկիստական «ազատ քննադատության» դուդորման համար՝ հանձինս «ճախլիկների», վորոնց սիրաշահել է մենշևիկող իդեալիզմը:

Հարկավոր է նշել, վոր, չնայած այն բանին, վոր կուսակցությունը շատ տարիների ընթացքում հարկադրվել է անողոք կերպով պայքարելու տրոցկիզմի հետ և վոր այդ պայքարն առանձնապես անողոքացավ նեպի շրջանում, փիլիսոփայական դեկավարության հավակնություն ունեցող

դեբորինյան խմբակը մինդամայն չեր դնում փիլիսոփայական ճակատում տրոցկիզմի հետ պայքարելու պրոբլեմը:

Ավելին դեռ, դեբորինյան խմբակի մի քանի ականավոր ներկայացուցիչները (մասնավորապես ընկ. Սաենը) ապացուցում էին, վոր տրոցկիզմը մեթոդոլոգիա անգամ չունի, վոր տրոցկիզմը չի բարձրացել առանձին տեսության բարձրունքին և վոր այդ պատճառով փիլիսոփաներն այդտեղ բան չունեն անելու, բան չունեն քննադատելու: Այս դատողությունների մեջ պարզ յերևում է դեբորինականության վողջ ձևականությունը և պրակտիկայից տեսության վողջ կտրվածությունը: Տրոցկիզմի մեջ մենք չունենք ձևականորեն չարադրված «ուսմունք», գրված բաժիններով, գլուխներով և պարագրաֆներով—նշանակում է վոչ մի մեթոդոլոգիա չկա և չի յել կարող լինել, իսկ այն, վոր տրոցկիզմը բանվորական շարժման պրակտիկայում չատ տարիների ընթացքում տեղ ուներ վորպես մենշևիկական ռեվիզիոնիզմի յուրատեսակ մի հոսանք, այդ բանի հետ դեբորինականները գործ չունեն: Կարծես թե բանն այն է, վոր տրոցկիզմը տեսական խորություն ունի՞ թե վոչ, և վոչ թե այն, վոր տրոցկիզմը վորոշ սոցիալական բաղա յե ունեցել, վոր նա բանվոր դասակարգի պայքարի ու շինարարության համար վորոշ վտանգ է ներկայացրել և վոր նա տարրալուծում է մտցրել բանվոր դասակարգի մի քանի խավերի և կոմկուսի մի քանի միջևխավերի մեջ:

Դեբորինականների այս փիլիսոփայական անտարբերությունը դեպի տրոցկիզմի մեթոդոլոգիան բացատրվում է վոչ միայն նրանով, վոր ընկ. Դեբորինի խմբակից մի քանի փիլիսոփաները վորոշակի հետևորդներ են (Սաեն, Կարև) տրոցկիզմին այլև դեբորինյան մենշևիկող իդեալիզմի վողջ մեթոդոլոգիայով: Նրան (մենշևիկող իդեալիզմին) ոտար է գիտության լենինյան կուսակցականությունը, այդ պատճառով էլ դեբորինականները «վոչ դեհական» են համարվում պայքարի դենքերի ընտրության մեջ, փիլիսոփայական դենքերը մի մոմենտում, յեր ամբողջ կուսակցությունը պայքարում է տրոցկիզմի հետ:

Տրոցկիզմի մեթոդոլոգիական հիմունքների վերլուծությունը մեզ ցույց տվեց, վոր Տրոցկին պարզ արտահայտված մեխանիստ է, այն առանձնահատկությամբ, վոր նրա մեխանիստական մեթոդոլոգիան վերածում է սուբյեկտիվ իդեալիզմի:

Դիմենք այժմ աչ թեզման տեսական հիմունքների ամփոփմանը: «Աչ ուկլոնիստների մասին, ասել է ընկ. Ստալինը XVI կուսհամագումարում արած իր քաղհաշվետվության մեջ, չի կարելի ասել, վոր նրանք չեն ընդունում ԽՍՀՄ սոցիալիզմի կառուցման հնարավորությունը... Բայց... նրանք կարծում են, վոր սոցիալիզմը կարելի յե կառուցել լենյան, ինքնահոսով, առանց դասակարգային պայքարի, առանց հարձակման կապիտալիստական տարրերի վրա: Նրանք կարծում են, վոր կապիտալիստական տարրերը կամ իրենք կմահանան, կամ թե կներաճեն սոցիալիզմին... Աչ ուկլոնիստների մասին չի կարելի ասել նաև, վոր նրանք բացատում են գյուղում սոցիալիզմի կառուցման գործի մեջ գյուղացիության հիմնական մասսային ներդրավելու հնարավորությունը... բայց նրանք կարծում են, վոր գյուղին սոցիալիզմի ռելսերի վրա կարելի յե վերադրել լենյան, ինքնահոսով, առանց դասակարգային պայքարի»:

Այսպիսով աչ թեզման եությունն անցողիկ չրջանում դասակարգային պայքարի բացատման մեջն է, կապիտալիստական տարրերի (կուլակի) սոցիալիզմին խաղաղ ներաճման և այդպիսով դասակարգային պայքարի մարսման հաստատման մեջ: Այս թեզն ամենաբարդ կերպով կապված է մարքս–լենինյան մեթոդոլոգիայի ու պատմական տեսության հիմունքների ապավալման հետ:

Կապիտալիստական տարրերի սոցիալիզմին խաղաղ ներաճման տեսությունը ներդաշնակ զարդացման բուրժուական տեսություն է, վորը հակադրվում է դիալեկտիկական մատերիալիզմի՝ հակադրությունների պայքարի միջոցով զարդացման մասին յեղած ուսմունքին: Զարդացման հենց այդպիսի ներդաշնակ ուղի հաստատելու համար հիմք ծառայում է այստեղ աչ ոպոր–

ստամոքսային հյութերի արտադրությունը, ինչպես նաև ենթաստամոքսային գեղձի հյութի արտադրությունը։ Ուտելիքի մարսողության ընթացքում ստամոքսի պատերի մկանների կծկումների շնորհիվ ուտելիքը խառնվում է ստամոքսահյութին, ինչի հետևանքով ուտելիքի մեծ մասը վերածվում է հեղուկ զանգվածի, որը կոչվում է քիմ։ Քիմը ստամոքսից աստիճանաբար անցնում է աղիներ, որտեղ ենթարկվում է հետագա մարսողության։

Ստամոքսահյութի քիմիական կազմը և հատկությունները։ Ստամոքսահյութը անգույն, թափանցիկ հեղուկ է, որի խտությունը 1,002—1,007 է։ Ստամոքսահյութի չոր մնացորդի մեջ կան անօրգանական նյութեր (աղաթթու, կալիումի, նատրիումի, կալցիումի, մագնեզիումի աղեր) և օրգանական նյութեր (սպիտակուցներ, ֆերմենտներ)։ Ստամոքսահյութի pH-ը 0,8—1,5 է։ Ստամոքսահյութի հիմնական ֆերմենտներն են պեպսինը, որը սպիտակուցները քայքայում է մինչև պեպտոններ, և ռենինը, որը կաթի սպիտակուցի՝ կազեինի վրա է ազդում։ Ստամոքսահյութի մեջ կան նաև լիպազ ֆերմենտը, որը ճարպերը քայքայում է մինչև գլիցերին և ճարպաթթուներ, ամիլազ ֆերմենտը, որը օսլան քայքայում է մինչև մալթոզ, և ինվերտազ ֆերմենտը, որը եղեսպակի շաքարը քայքայում է մինչև գլյուկոզ և ֆրուկտոզ։ Ստամոքսահյութում կան նաև ֆերմենտներ, որոնք ազդում են ճարպերի վրա։ Ստամոքսահյութի մեջ կան նաև մանրէներ, որոնք ոչնչացնում են ուտելիքի հետ ներթափանցած հիվանդություն առաջացնող մանրէները

համար մղվելիք պայքարը: Մենք այստեղ, ինչպես և սրոցկիզմի մեջ պարզ ուենինք դյուղացիության նկատմամբ պրոլետարիատի զեկավար դերի թացատման հետ՝ այն տարբերությամբ, որը սրոցկիզմը վերացնում է պրոլետարիատի այդ զեկավար դերը՝ նրա «անհնարավորության» պատճառով, իսկ այլերը վերացնում են նրան «անկարևորության» պատճառով: Ներկու դեպքերում էլ մեթոդոլոգիական արմատը միևնույն բանն է. դյուղացիության բնույթի մատերիալիստական ճնշարկման անտեսումը, բնույթի, որը վորոշվում է հասարակության մեջ նրա բռնած դրության:

Հավասարակշռության այդ իսկ տեսությունը և նրա հետ կապված յեվերությներին հատուկ ներքին հակասությունների բացատումը դրված է նույնպես կազմակերպված կապիտալիզմի տեսության հիմքում, որը վորոշում է ալ թեքման դիրքերը կոմինտերնի հարցերի մեջ: Այսպիսով հավասարակշռությունների տեսությունը դուրս և գալիս այն ունիվերսալ համաշխարհային սխեմայի դերում, որը գործադրվում է բոլոր յերևույթների վերացմամբ և բոլորին յենթարկում իրեն: Ալ սոցիոտունիզմի քաղաքականությունն ու տակտիկան կապված է հավասարակշռության մեխանիստական տեսության հետ՝ վորպես իր ամենից շատ ընդհանուր տեսական հիմունքի հետ: Այս և պատճառներից մեկն է, վոր մեխանիցիզմը տվյալ ետապում դառնում է գլխավոր վտանգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ XI ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նիգին, *Անտի-Դյուրինգ* Մ—Լ 1930 թ.
Պլեխանով, *Ընտիր ժողովածու*, հատ. XI
Պլեխանով, Materialismis militans Մ—Լ 1930.
Լենին, *Մարքսիզմ և ռևիզիոնիզմ*, Ընտ. ժողով. I հրատ. հատ. XI, մասն I.
Լենին, *Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ*.
Լենին, *Ի՞նչ անել*.
Ստալին, *Լենինիզմի հարցերը*, Մ—Լ 1931 թ.:
«Под знаменем марксизма» № 10—12 1930 թ.,
կենտկոմի վորոշումը: Փիլիսոփայության դիսկուսիայի արդյունքները (Կ.Պ.Ի փ. և բ. բջջի բյուրոյի բանաձևը).
«За поворот на философском фронте», *ժողովածու, պրակ առաջին*, Մ—Լ 1931

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZSFSR—Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

NL01433З8
<< Արգելոց գրադարան